«Աստծո հետ Դեմ առ Դեմ»-ծրագրին առընչվող Ընդհանուր Հարցերի Պատասխաններ

Ի՞նչ է «Աստծո հետ Դեմ Առ Դեմ»-ը

Աստծո հետ Դեմ առ Դեմ-ը տասնհինգ շաբաթյա աշակերտության ուսուցման ծրագիր է, որը օգնում է ձեռք բերել անմիջական կապ մարդ եւ Աստված հարաբերության մեջ:

Ճանապարհ, որն առաջնորդում է Հիսուսին անձնապես ճանաչողությանը

Հաղորդակցություն, որը մեր քայլերն են՝ Նրա հետ ամենօրյա սերտ ընկերության մեջ

Գործիք՝ աշակերտելու եւ աշակերտողներ պատրաստելու համար:

Ինչպե՞ս է գործում Աստծո հետ Դեմ առ Դեմ-ը:

Իդեալական Մոդելը՝

- Հանդիպել շաբաթը մեկ՝ տասնհինգ շաբաթներ շարունակ:
  - Ինչո՞ւ տասնհինգ շաբաթ:
    - Ասում են, հարկավոր է տասնհինգ շաբաթ, որպեսզի այդ օրինակը մեր կյանքերում ձեւավորվի եւ հաստատվի, որպես կենսակերպ:
- Ինչո՞ւ հաջորդող շաբաթներ:
  - Որպեսզի պահպանվի դրդիչ ուժը:
- Յուրաքանչյուր բաժնին հատկացնել երկու ժամ:
  - Ինչո՞ւ երկու ժամ եւ ոչ պակաս:
    - Սովորաբար երկու ժամ է հարկավոր ամբողջ նյութին անդրադառնալու համար եւ հնարավորություն տալ բոլորին մասնակցելու եւ սովորելու ինչպե՞ս կատարել այն ամենը, ինչ մենք կոչ ենք անում անել:
- Հանդիպել փոքր խմբով՝ մեկ առաջնորդի եւ վեցից ոչ ավել աշակերտի հետ:

Ի՞նչ անել, եթե չկան վերը նկարագրված իդեալական գործոնները:

Կարող եք հարմարեցնել իրավիճակին, սակայն անել այնպես, որ անդրադառնաք ամբողջ նյութին եւ աշակերտները հասկանան ինչպես կիրառել այդ ճշմարտությունը:

Որոշ օրինակներ, որոնք անց են կացվել *Աստծո հետ Դեմ առ Դեմ* ծրագրով, ոչ իդեալական հանգամանքներում:

Երկու անգամ դասավանդել ենք փոքր խմբերում, որտեղ մասնակցում էին ավելի քան յոթանասուն մարդ: Այն տեւեց ութ շաբաթ, յուրաքանչյուր խմբի հետ հանդիպելով շաբաթը երկու անգամ:

Մի անգամ, վարեցինք մեկ շաբաթյա արագացված կուրսեր «Աստծո հետ Դեմ առ Դեմ» ծրագրով, եւ մեր ամբողջ երեսուն ժամյա դասերը ավարտեցինք հինգ օրում:

Եթե միայն 12-շաբաթ հնարավորություն ունեք աշակերտելու համար, ապա կարող եք առաջին ինը մասերը դասավանդել շաբաթը մեկ անգամ եւ յուրաքանչյուր դասին հատկացնել երկու ժամ: Իսկ վերջին երեք հանդիպումները, երկու ժամի փոխարեն հատկացնել երեք ժամ, եւ յուրաքանչյուր հանդիպում վարել երկու դաս:

Օրինակ՝

10-րդ հանդիպում - դասավանդիր տասներրորդ եւ տասնմեկերորդ դասերը:
11-րդ հանդիպում - դասավանդիր տասներկուերորդ եւ տասներեքերորդ դասերը:
13-րդ հանդիպում - դասավանդիր տասնչորսերորդ եւ տասնհինգերորդ դասերը:

Միակ նպատակը **- իրավիճակին հարմարեցնելն է՝ այնպես որ չզոհաբերեք Աստծուն հարկավոր ձեր ժամանակն առանց զորեղ աշակերտներ եւ աշակերտողներ պատրաստելու**:

Բայց հիշիր **- իդեալական մոդելը՝ տասնհինգ հաջորդող շաբաթն է, շաբաթական երկու ժամով:**

Ի՞նչ անել, եթե աշակերտված մարդիկ չեն աշակերտում:

Շարունակեք աղոթել եւ քաջալերել նրանց, որպեսզի աշակերտեն, բայց հիշեք, որ ***մենք անում ենք այն Սուրբ Հոգու զորությամբ եւ առաջնորդությամբ, եւ արդյունքը թողնում ենք Աստծուն:*** Նա է, որ լուսավորում է նրանց մտքերը եւ լցնում սրտերը աշակերտելու ցանկությամբ:
Մնացեք հավատարիմ Աստծո պատվիրանին եւ ինքներդ ձեզ, աշակերտելով նրանց եւ հետո Աստծո սահմանած ժամանակի մեջ կտեսնեք դրանց արդյունքները:

ՓՈԽԱՆՑԱԳԻՐ

ՈԿԼՈՀՈՄԱՅԻ ՄԿՐՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԼԽԱՎՈՐ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Պատիվ եմ ունեցել մոտ 15 տարի ծառայել Օկլոհոմայի Նորդվեստ Մկրտական Եկեղեցում, որպես հովիվ: Իմ հովվության վաղ ամիսներին եկեղեցու անդամների մեջ նկատեցի մեծ հոգեւոր աճ: Ծառայելու իրենց նվիրվածությունը, աղոթելու ջերմեռանդությունը եւ Աստծո հետ իրենց քայլելու ցանկությունը վկայում էին միայն այդ մասին: Համեմատելով այլ եկեղեցիների հետ մեր եկեղեցու անդամների նվիրվածությունը շատ ավելի խորն էր:

Ինձնից շատ քիչ ժամանակ պահանջվեց գտնելու այդ հոգեւոր հասունության աղբյուրը: Նորդվեստ եկեղեցին օրհնված է եղել հոգեւոր հովիվներով, ովքեր քարոզել են Աստծո խոսքը, եւ դա անշուշտ նպաստել է մարդկանց հոգեւոր աճին: Այնուամենայնիվ, ես համոզված եմ, որ պատճառներից ամենամեծն այն էր, որ հարյուրավոր անդամներ անցել էին «Աստծո հետ Դեմ առ Դեմ» աշակերտության ծրագիրը: Այս դասընթացները, որոնց հեղինակներն են Ջերրի եւ Մարիլին Ֆայնը, հիմնված էին մեր եկեղեցու անդամների իրական կյանքի պատմություններ վրա: Ջերրի եւ Մարիլին Ֆայնը եղել են աստվածատուր և պարզ հոգեւոր առաջնորդներ, ովքեր իրենց կյանքը նվիրել են մարդկանց աշակերտ դարձնելու գործին: «Աստծո հետ Դեմ առ Դեմ»-ը բխում է կյանքի փորձից, կյանքը կտրականապես փոխելու որոշումից եւ եկեղեցում ներգրավվելուց:

Ես ունեցել եմ բացառիկ հնարավորություն տեսնելու Դեմ առ Դեմ-ի ազդեցությունը մեր անդամների կյանքում: Ես տեսել եմ մարդկանց կյանքերի դրամատիկ փոփոխությունը, ովքեր սերտել են այս դասերը:
Դեմ առ Դեմ ծրագիրը պարունակում է այն, ինչ պետք է պարունակի աշակերտության ծրագրում: Այն մարդկանց դարձնում է հասուն, կայուն եւ հավասարակշիռ քրիստոնյաներ: Այս աշակերտության ծրագրի հիմնական նպատակն է՝ սովորեցնել մարդկանց քայլել Քրիստոսի հետ սիրո եւ սերտ հարաբերության մեջ, ամեն օր աղոթել, կարդալ, պահել եւ կիրառել Աստծո Խոսքը: Դեմ առ Դեմ-ը մատչելի է: Այն կազմված է այնպես, որ մարդիկ որեւէ խնդիր չունենան այն ուսուցանելու համար: Այն լավ արդյունք է ունենում փոքր խմբերում կամ առանձին առանձին (դեմ առ դեմ)-ի դեպքում: Այն, անհատի կյանքում այնպիսի ազդեցություն է թողնում, որ նրանք մեծ ուրախությամբ կիսվում են իրենց շրջապատի մարդկանց հետ:

Մեր նպատակն է, որ յուրաքանչյուր եկեղեցու անդամ անցնի «Դեմ առ Դեմ»-ի դասերը: Ես միշտ հավատացել եմ, որ երբ մարդիկ հաստատապես ներգրավվում են Խոսքի եւ աղոթքի մեջ՝ նրանց կյանքում դրվում է անսասան մի հիմք: «Դեմ առ Դեմ» ծրագիրը տվել է Նորդվեստ եկեղեցուն աննկարագրելի օրհնություններ:

Ջերրի եւ Մարիլին, երբ մշակեցին այս դասընթացները, չգիտեին թե ինչպես կօգտագործի այն Աստված: Այժմ, «Աստծո հետ Դեմ առ Դեմ»- ը օգտագործում են ամբողջ աշխարհում՝ տալով հասուն աշակերտներ: Այս դասընթացների շնորհիվ օրհնվել են թե՛ պատանիներ, թե՛ ուսանողներ, թե՛ ծառայողներ եւ թե այլ մարդիկ:

Իմ մեծագույն խորհուրդն է՝ օգտագործել այս աշակերտության նյութը:

Անտոնի Լ. Ջորդան գործադիր-տնօրեն

Պարունակություն

Ընդհանուր հարցերի պատասխաններ ----------i
Աստծո հետ Դեմ առ Դեմ-ի փոխանցագիր ----------iii
Պարունակություն ----------vii
Ուղերձ ----------ix
Ներածություն ----------1
Ակնարկներ առաջնորդելու Աստծո հետ Դեմ առ Դեմ ծրագիրը խմբակներում----------3
Աշակերտության ընդհանուր պատկերը----------5
Կոչ - Պտուղ բերել ----------11
Մաս 1----------13
Մաս 2 ----------27
Մաս 3 ----------37
Մաս 4 ----------45
Մաս 5 ----------55
Մաս 6 ----------69
Մաս 7 ----------83
Մաս 8 ----------93
Մաս 9 ----------105
Մաս 10 ----------123
Մաս 11 ----------135
Մաս 12 ----------145
Մաս 13 ----------153
Մաս 14 ----------163
Մաս 15 ----------175

ՈՒՂԵՐՁ

Աստծո հետ Դեմ առ Դեմ-ը ստեղծված է մեր ծնողների, երեխաների, թոռնիկների, մեր ապագա սերունդների՝ եւ բոլոր նրանց համար, ովքեր պատրաստ են նվիրել իրենց կյանքը աշակերտներ պատրաստելու գործին, որոնք էլ իրենց հերթին իրենց աշակերտներին կուսուցանեն:

Մեր այս «Առաջնորդի Ուղեցույց» եւ «Աստծո հետ Դեմ առ Դեմ» գրքերում, կարող եք գտնել բազմաթիվ սկզբունքներ, որոնց միջոցով Աստծո օրհնությունը կգտնեք: Մտորեք դրանց շուրջ՝ կիրառելով այն ձեր կյանքում: Մենք քաջալերում ենք, որպեսզի քայլեք՝ աչքերը Հիսուսին հառած, թույլ տալով Սուրբ Հոգուն ձեր կյանքը ղեկավարել: Թույլ, տուր նրան, որ յուրաքանչյուր օր առաջնորդի ձեզ: Ձեր կյանքի բռնած ճանապարհին՝ Աստծո խոսքով եւ աղոթքով ձեր կյանքի կենտրոնը զիջեք Հիսուսին, իսկ մնացած ամեն բան թող Նրա շուրջ պտտվի: Թող ձեր վճռական նպատակը Հիսուսին խորապես եւ անձնապես ճանաչելը լինի: Սկսեք սերտել Աստվածաշունչը, եւ շուտով կտեսնեք, որ Աստվածաշունչն է ղեկավարում ձեզ: Կյանքդ նվիրիր այն ամենին, ինչը հավիտենական է: Ճանաչեք Աստծուն, քանի որ Նա՝ է հավիտենական: Լցրու կյանքդ Աստծո Խոսքով՝ Աստվածաշնչով, քանի որ դա՝ է հավիտենական: Աշակերտեցեք մարդկանց շահելով նրանց Քրիստոսի համար եւ սովորեցրեք նրանց քայլել Աստծո հետ, քանի որ մարդու հոգի՛ն է հավիտենական: Քայլեք այս սկզբունքների համաձայն, եւ կդառնաք մի հայելի, որով Հիսուս կարտացոլվի բոլոր ձեզ շրջապատող մարդկանց: Կյանքիդ ուղին անցիր աշակերտ պատրաստելով: Դա լավագույն եղանակն է, որ կարող եք ցուցաբերել ձեր սերը Հիսուսի եւ մարդկանց հանդեպ:
Հիսուսն է մեր օրինակը: Երբեք մի հուսալքվեք: Հիսուս մեր հույսն է: Նա Աստված է: Նա տիրում է ամեն բանում զորությամբ: Նա հավատարիմ է եւ վերադառնալու է շուտով:

Քրիստոսի սիրով,

Ջերրի եւ Մարիլին Ֆայն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խրախուսում ենք, որ «*Աստծո հետ Դեմ առ Դեմ*»-ը ձերը դարձնեք: Մի հովիվ, որին աշակերտել էի, ասաց. «Նախկինում, ես խոսում էի Աստծո հետ Դեմ առ Դեմ-ի մասին, որպես Ջերրի և Մարիլինի կողմից գրվածքի, բայց այժմ այն դարձավ իմը»:

Դուք կարող եք ազատ օգտագործել հեղինակի կողմից գրքում հիշատակված լուսաբանումները եւ պատմությունները, բայց կարող եք նաեւ օգտագործել ձեր իսկ լուսաբանումները եւ պատմությունները: Իրականում մենք քաջալերում ենք այդպես անել: Երբ օգտագործեք ձեր պատմությունները եւ պարզաբանումները աշակերտության ընթացքում, Դեմ առ Դեմ-ը կդառնա ձեզ ավելի հարազատ:

Մենք աղոթում ենք, որպեսզի վստահեք Աստծուն, եւ որպես հավատարմության նշան առ Հիսուս, աղոթում ենք, որ գործածեք բոլոր աստվածաշնչյան սկզբունքները, որոնք պարունակում են «*Աստծո հետ Դեմ առ Դեմ*»-ի մեջ:

Աստված օրհնե ձեզ: «Գնացե՛ք եւ աշակերտեցե՛ք»:

ԱԿՆԱՐԿՆԵՐ «Աստծո հետ Դեմ առ Դեմ»-Ը ԽՄԲԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այս ակնարկներն այն բաներն են, որոնք որպես առաջնորդներ սովորել ենք խմբակներում, ավելի քան երեսուն տարվա ծառայության ընթացքում:

1. Մեկ կամ մինչև վեց աշակերտ միևնույն խմբում ընդունելի է: **Մեկ խմբում չորս աշակերտ հավանաբար իդեալական օրինակ է, քանի որ.**

- Յուրաքանչյուրը դասին մասնակցելու բավարար ժամանակ ունի:
- Խմբի անդամները սովորում և քաջալերում են միմյանց:
- Խմբի մասնակիցները կարող են լինել աղոթքի ընկերներ:

2. Սկզբում, երբ սկսեցինք աշակերտել, որոշ ժամանակ հանդիպում էինք միայն մեկ աշակերտի: Դրա առավելությունն այն էր, որ մենք կարողացանք նրանց մասնակից դարձնել մեր կյանքի եւ ծառայության գործունեությանը: Հիշեք, որ Աստծո հետ Դեմ առ Դեմ-ը ոչ միայն ուսուցողական է, այլ այն պետք է նաև կիրառել:
3. Ավելի հարմար է, որ տղամարդն աշակերտի տղամարդուն, իսկ կինը՝ կնոջը: Եթե հարկ է, որ տղամարդը կամ կինը դասավանդի հակառակ սեռի ներկայացուցչին, ապա ուշադիր եղեք, որ դասերը կայանան խմբակում: Երբեք միայնակ մի դասավանդեք հակառակ սեռի ներկայացուցչին, բացառությամբ այն դեպքերի, եթե նրանք ամուսիններ են:
4. Եթե հնարավոր է հանդիպեք տնային մթնոլորտում՝ խանգարող հանգամանքներից խուսափելու համար: Հանգիստ, տնային մթնոլորտն ավելի արդյունավետ է:
5. Յուրաքանչյուր դասին հատկացրեք երկու ժամ, թեպետ հնարավոր է որոշ դասերի համար ավելի քիչ ժամանակ պահանջվի:
6. Եթե որոշել եք մի փոքր սնվել խմբով, ապա դա թող լինի պարզ և ոչ ժամանակատար: Բավական է օրինակ՝ սուրճ, թեյ կամ հյութ:
7. Կիրառեք այն, ինչ դասավանդում եք: Հիշեք, որ և՛ Աստված, և՛ ձեր աշակերտները հետեւում են ձեզ:
8. Մի անհանգստացեք և անհամբերություն մի դրսևորեք, եթե ձեր տված հարցից հետո որոշ ժամանակ լռություն տիրի: Թույլ տվեք աշակերտներին հասկանալ, որ բոլորովին բնական է մինչ պատասխան տալը մտածելը: Հնարավոր է, կարիք ունենաք ավելի հասկանալի դարձնել հարցադրումը:
9. Դասավանդեք հնազանդությամբ: Աշակերտները պետք է տեսնեն, որ դուք, ինչպես և նրանք, ունեն հոգևոր աճի կարիք:
10. Աշակերտության մեր նպատակն այն է, պատրաստել այնպիսի աշակերտներ, ովքեր պատրաստ կլինեն նվիրելու իրենց կյանքերն աշակերտելու համար: Այս նպատակին հասնելու լավագույն եղանակը, դա հնարավորինս փոքր խումբ ունենալն է (վեց կամ ավելի քիչ անհատ):

Աշակերտության Ընդհանուր Պատկերը

*Եվ մոտենալով Հիսուս ասաց, «Երկնքի եւ երկրի վրա ամբողջ իշխանությունը ինձ տրվեց: Դրա համար **գնացեք եւ աշակերտ դարձրեք** ամբողջ ազգերը, մկրտելով նրանց հանուն Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու, եւ սովորեցրեք նրանց պահել այն, ինչ ձեզ պատվիրեցի...»(Մատթ. 28:18-20):*

Մատթեոս 28:18-20-ը *պարզապես* պատվեր չէ: Այն *իսկապես* մի մեծ պատվեր է, եւ այն *մեզ* է ուղղված: Յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալ պարտավոր է աշակերտ պատրաստել, ներառելով հետևյալ հինգ սկզբունքները՝

- **Գնացեք** - Մենք չպետք է նստենք և սպասենք, որ մարդիկ գան մեզ մոտ: Մե՛նք պետք է գնանք իրենց մոտ, և գնանք հատուկ նպատակով:
- **Ավետարանեք** - Ովքե՞ր էին նրանք, որոնց մկրտելու էին Հիսուսի աշակերտները: Նրանք այն նորադարձներն էին, որոնց առաջնորդել էին դեպի Հիսուս (նրանց ավետարանել էին Հիսուսի աշակերտները):
- **Մկրտեցեք** - Այս նորադարձները պետք է իրենց մկրտությամբ անմիջապես ցույց տային իրենց հնազանդությունը, որպես Հիսուսի հետևորդներ,:
- **Սովորեցրեք** - Այս նորադարձները պետք է սովորեին ինչպես ճանաչել Աստծուն, սիրել Նրան, ծառայել Նրան և քայլել Նրա հետ կատարյալ հնազանդությամբ:
- **Բազմացեք** - Այս աշակերտները պետք է դուրս գային հատուկ առաքելության: Նրանք խորապես համոզված էին, որ պետք է հոգևոր պտուղ տան, և ոչ միայն պարզապես աշակերտեն այլ նաև՝ աշակերտողներ պատրաստեն:

Սա ճշմարիտ է յուրաքանչյուր սերնդի, յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի համար:

Կազմը - Հիսուս և ճշմարիտ Աշակերտները

Ովքե՞ր են ճշմարիտ Աշակերտները

- Ինչո՞ւ ենք օգտագործում ***ճշմարիտ աշակերտներ*** արտահայտությունը: Հովհ. 6:66-ում կարդում ենք, որ *«դրանից հետո, Իր աշակերտներից շատերը ետ դարձան եւ այլևս նրա ետևից չգնացին»: Այն փաստը, որ նրանք լքեցին Հիսուսին, հաստատում է, որ ճշմարիտ աշակերտներ չէին (1Հովհ. 2:19):*
- ***ճշմարիտ աշակերտը***, Սուրբ Հոգուն կյանքը հանձնելու Հիսուսին ավելի ու ավելի նմանվելու անհագ ցանկություն է ունենում: «...մենք կարող ենք լինել հայելիներ, որոնք կարտացոլեն Տիրոջ փառքը, եւ Սուրբ Հոգու ներգործությամբ Իր փառքն արտացոլելով մենք ավելի ու ավելի Տիրոջ նման կդառնանք » (2 Կորնթ.3:18):
- ***ճշմարիտ աշակերտի*** կյանքը լինում է դինամիկ: Դինամիկ կյանքը ենթակա է մշտապես փոփոխությունների: Մենք կամ շարժվում ենք

առաջ՝ ձեռք բերելով հոգևոր աճ ու հասունություն, կամ շարժվում ենք ետ՝ հեռանալով Աստծուց:

Ճշմարիտ աշակերտության մեջ...

- **Հիսուս ղեկավար է, իսկ մենք կատարողներ:** Նա է, ով անհավատին դարձնում է աշակերտ և հետո դարձնում նրան աշակերտ պատրաստող: Թեև Նա ասաց, «գնացե՛ք և աշակերտեք», դա նշանակում է, որ մենք պետք է պարզապես համագործակցենք Նրա հետ և դառնանք Նրա դեսպանները (2Կորնթ. 5:20): Մենք պետք է լինենք այնպիսին, որ Նա մեր միջոցով տա Իր պատգամն ու սերն աշխարհին:
- **Հիսուս միակ կատարյալ աշակերտողն է և մեր ուսուցիչն ու օրինակը:** Մենք սովորում ենք հետևելով ոչ միայն Նրա խոսքերին, այլ Նրա գործերին: Հիսուս պատվիրեց մեզ աշակերտել (Մատթ. 28:19): Չնայած Նա չի օգտագործել «պատրաստեք աշակերտ-դարձնողներ» արտահայտությունը, սակայն այստեղ նշված են երեք իրավիճակներ, որոնք առնչվում են այդ ճշմարտության հետ.
    1. Հիսուս պատրաստեց աշակերտ պատրաստողներ, քանի որ Իր աշակերտներն սկսեցին աշակերտել մարդկանց:
    2. Մատթեոս 28:20-ը խոսում է նոր աշակերտների ապագա սերնդի մասին: Հիսուս ասաց, «Պատվիրեք նրանց, որ հնազանդվեն իմ խոսքերին, որոնք ձեզ ասացի» ճիշտ այն խոսքերից հետո, երբ Նա ասաց, «Գնացե՛ք եւ աշակերտեցեք»:Հովհ.8:31-ը նկարագրում է ասելով, ճշմարիտ աշակերտը նա է, ով հավատում է Նրան, մնում Իր խոսքի մեջ ու հնազանդվում դրան: **Երբ մենք հնազանդվում ենք աշակերտել եւ այդ աշակերտները նույնպես հնազանդվում են աշակերտել, ապա մենք աշակերտ-աշակերտողների ենք պատրաստում:**
    3. Պողոսը հասկացել էր աշակերտության այս սկզբունքը: Որպես օրինակ, նա վստահեց Տիմոթեոսին ասելով. «Եվ այն բաները, որոնք ինձանից լսեցիր, հանձն՛իր հավատարիմ մարդկանց, որոնք էլ կկարողանան ուրիշներին սովորեցնել» (2 Տիմոթ.2:2):

Աշակերտելու Ցանկությունը

Ինչո՞ւ աշակերտել:

- Հիսուս պատվիրեց մեզ աշակերտել (Մատթ. 28:18-20):
- **Առանց Հիսուսի մարդիկ անհույս են,** «...դուք, որ հեռու էիք Քրիստոսից ...զատված Աստծո մարդկանցից... առանց Աստծո և առանց հույսի» (Եփես. 2:12):

Աշակերտության Գործընթացը

Աշակերտ **ասելով հասկանում ենք, ոչ միայն անձնավորություն, այլ նաև մի գործընթաց: Հիսուս ինչպես կանչեց, այնպես էլ պատվիրեց ներգրավվել այս գործընթացի մեջ:**

- Աշակերտության գործընթացի պտուղն աշակերտն է: Այդ գործընթացն ամբողջովին կախված է Աստծո զորությունից: Երբ մենք ասում ենք, որ «աշակերտել» ենք որևէ մեկին, ի նկատի ունենք, որ Աստված թույլ է տվել մեզ ներգրավվել այդ գործընթացի մեջ:
- Մենք պետք է շարունակենք աճել, հասունանալ և ավելի նորոգվել, որպեսզի Աստծո ձեռքերում ավելի օգտակար լինենք (Հռովմ.12:1-2), «բնավորությամբ ուժեղ և ամեն բանի պատրաստ» (Հակոբ.1:4):
- Պողոսն այնպիսին էր, ով երբեք չէր հուսահատվում, փոխարենը ձգտում էր լինել այնպիսին, ինչպիսին Աստված էր ուզում, որ նա լիներ: «Ես դեռ այնպիսին չեմ, ինչպիսին որ պետք է լինեմ, սակայն ամեն ջանք գործադրում եմ մեկ բանի համար, որպեսզի մոռանամ անցյալն ու նայեմ ապագային: Նպատակը դիտելով ջանում եմ հասնել վերջնակետին և ստանալ մրցանակը, որ Աստված Քրիստոսի միջոցով կանչում է երկնքից» (Փիլիպ.3:13-14):

Ո՞րն է իմ պարտականությունը եւ ո՞րն է Սուրբ Հոգու պարտականությունը աշակերտության գործընթացում:

- **Իմ պարտականությունը հետևյալն է՝**
  - Լինել հասանելի ---- «Արի՛ ինձ [Հիսուսի] մոտ», և «սովորի՛ր ինձանից [Հիսուսից]» (Մատթ.11:28-29):
  - Լինել Աստծո առաջնորդության ներքո ---- «...ընծայիր անձդ Աստծուն» (Հռովմ.6:13): Թող Նա լինի ձեր կյանքի Տերը այսօր:
  - Մնալ Հիսուսի մեջ (Հովհ.15:4):
  - Ապրել Իր Խոսքի մեջ և հնազանդվել Նրա պատվիրաններին (Հովհ.8:31):
  - «Միշտ ուրախ եղեք, անդադար աղոթեք և գոհություն մատուցեք ամեն պարագայում ...» (1Թեսաղ.5:16-18):
  - Անձդ ուրացիր, վերցրու ամեն օր խաչդ և հետևիր Հիսուսին (Ղուկ.9:23):
  - Լինել Հիսուսի դեսպանը (2Կորնթ.5:20): Լինել Նրա վկան (Գործք.1:8):
  - Աշակերտիր Տիրոջ **զորությամբ** --- Նա ուղարկում է մեզ Իր զորությունով: (Մատթ.28:18-20):

- Որդեգրիր Հիսուսի **Ծրագիրը** --- գնա և հաղորդիր Նրա պատգամը (Մատթ.28:19-20):
- Վստահիր Հիսուսի **Խոստումին** --- «Ես ձեզ հետ եմ» (Մատթ.28:20):
- Վազիր սահմանված ճանապարհով (1Կորնթ. 9:24-27):

  - Նպատակ ունենալ հաղթել:
  - Լրջորեն մարզվել:
  - Լինել նպատակասլաց:
  - Լինել կարգապահ և անձնուրաց:

- **Սուրբ Հոգու գործն է.**
  - Լուսավորել միտքը (1Կորնթ. 2:12-14):
  - Սրտերը համոզել (Հով.16:8-11):
  - Բնակվել մեր մեջ (Հռովմ.8:11):
  - Սովորեցնել մեզ (Հովհ.14:26):
  - Մխիթարել մեզ (Հովհ.14:16):
  - Օգնել մեզ (Հռովմ.8:26):
  - Առաջնորդել մեզ (Հովհ.16:13):
  - Լիազորել մեզ (Միքեա.3:8):
  - Պտուղ տալ մեր մեջ (Գաղատ.5:22-23):

Աշակերտ պատրաստողների արդյունքը և Աշակերտողների պատրաստողները

Ինչպե՞ս է անհատը կամ եկեղեցին դառնում աշակերտ պատրաստող կամ աշակերտողներ պատրաստող:

- **Հիսուսի օրինակին նայելով:**
- **Հիսուսի պատկերը տեսնելով**
- **Նպատակը - զոհաբերել կյանքերը աշակերտ պատրաստելուն,**
- _____

ովքեր իրենց հերթին պատրաստ կլինեն աշակերտ պատրաստել:

- **Հետևել Հիսուսի օրինակին:**
- **Կրկնել գործընթացը:**

Տարիներ առաջ մի գրքույկ կարդացի «Հիսուսն ինչպե՞ս էր պատրաստում առաջնորդներ», որի հեղինակն էր Ճապոնիայում միսիոներ Դոկտոր Վ. Մաքսֆիլդը: Ես երբեք չեմ մոռանա այն եզրահանգումը, որ գրված էր առաջնորդներ պատրաստելու վերաբերյալ, որը ճշմարիտ է նաեւ աշակերտ պատրաստելու համար: Նա գրել էր. «**Եթե ուզում եք Հիսուսի նման արդյունք ունենալ, պետք է պարզապես նմանվել Հիսուսին եւ լինել այնքան Նրան մոտ, որ որոշ մարդիկ ձեզ տեսնելով կարողանան նմանվել Իր պատկերին: Դա շատ պարզ է»:**

Դու կարող ես դառնալ

ՃՇՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏ,

ԱՇԱԿԵՐՏ ՊԱՏՐԱՍՏՈՂ,

ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՂ ՊԱՏՐԱՍՏՈՂ:

Աստված ձեզնից դա է ցանկանում!

Պարզապես արեք ձեր քայլը:

Աստծո կոչը ուղղված մեզ ---
Բերել մնայուն պտուղ

Աստվածաշնչի ամենամեծ պատգամներից մեկն այն է, երբ **Հիսուս հիշեցնում է, որ Նա ընտրեց մեզ, որպեսզի գնանք և բերենք այն պտուղը, որը կմնա:**

Ոչ թե դուք ընտրեցիք ինձ, ապա ես ընտրեցի ձեզ և նշանակեցի, որ գնաք և պտուղ թողնեք, և ձեր պտուղը մնա: (Հովհ.15:16):

Թողնու՞մ եք արդյոք հավիտենական պտուղ:

Ինչպե՞ս կարող ենք հավիտենական պտուղ բերել:

Հիսուս եզրափակեց հավիտենական պտուղ բերելու միտքն ասելով՝ «Գնացե՛ք և աշակերտեցեք» (Մատթ. 28:19): Աշակերտ պատրաստել նշանակում է, գնալ, ավետարանել, մկրտել և ուղարկել այդ աշկերտներին, որպեսզի գնան և բազմանան (աշակերտեն):

Աշակերտությունը դա այն է, թե ինչպես ես բազմանում քեզ տրված Աստծո ծառայության մեջ:

Եթե մենք մահանայինք 1970թ.-ին, ապա երկնքում մեր ծառայությունների արդյունքից շատ քիչ մարդիկ կլինեին, քանի որ, թեև մենք կիսվում և վկայում էինք մարդկանց Քրիստոսի մասին այնուամենայնիվ մենք չէինք աշակերտում: Մենք այդ դեպքում շատ քիչ մնայուն պտուղ կունենայինք: Քանզի 1970թ.-ից սկսած մենք մեր կյանքը ներդրել ենք ոչ միայն Քրիստոսի մասին վկայելու համար, այլ աշակերտելու և աշակերտողներ պատրաստելուն: Այժմ նրանք, ում աշակերտել ենք մենք, աշխարհով մեկ սփռված աշակերտում և մնայուն պտուղներ են թողնում Քրիստոսի համար: Թեև մենք մեռնենք, Աստծո ծառայությունը, որ մեզ էր վստահված, տարեցտարի պիտի բազմապատկվի, քանի որ այդ աշակերտված մարդիկ դեռ շարունակելու են աշակերտել նաև այլ մարդկանց: Մենք պարզապես հասկացել էինք այն, ինչ Հիսուս արեց երկրի վրա եղած ժամանակ և որոշեցինք նվիրել մեր կյանքը այն բանին, ինչ Նա արեց՝ առաջնահերթությունը տալով աշակերտությանը:

Այստեղ ներկայացված է մի ծրագիր, որն ավելի արդյունավետ կդարձնի **հավիտենական պտուղ** թողնելը, միայն այն դեպքում, եթե **կամենում եք այդ ծրագիրն իրականացնել:**

Ամեն տարի նվազագույնը մեկ խումբ աշակերտիր: Ամեն տարի կազմիր երկուսից վեց հոգանոց խումբ և դասավանդիր «Աստծո հետ Դեմ առ Դեմ» աշակերտության դասընթացները: Դասերը թող լինեն շաբաթը մեկ՝ տասնհինգ շաբաթ շարունակ: Յուրաքանչյուր դասի տևողությունը երկու ժամ:

Շարունակեք հանդիպումներն ամիսը մեկ անգամ՝ յոթ ամիս շարունակ: «Դեմ առ Դեմ» ծրագիրն ավարտելուց հետո, ամիսը մեկ՝ յոթ ամիս շարունակ հանդիպեք նրանց հետ մեկ մեկ քաջալերելու և տեղեկանալու՝ արդյո՞ք կիրառվում են այդ աշակերտության դասընթացները կյանքում, թե ոչ:

Բազմացեք: Խրախուսեք նրանց, որ գնան և հնազանդվեն Հիսուսի պատգամին, «Գնացե՛ք և աշակերտեցեք» **բերելով հավիտենական պտուղներ** \Մատթեոս 28:19\:

Առաջնորդի ուղեցույց

հեղինակի նկատողություններով...Դաս 1

1. Սկսե՛ք աղոթքով:
2. Ողջունե՛ք բոլորին:
3. Յուրաքանչյուրին տվեք ուսուցման ծրագիր:

Բացատրություն: Բացատրեք և ցուցադրեք աշակերտներին, ինչպես օգտագործել ծրագիրը: Չկարծե՛ք, թե ամենքն ամեն բան գիտեն:

- Սա սովորական գիրք չէ, որ սկզբից մինչև վերջ պարզապես պետք է կարդալ:
- Ծրագիրը բաղկացած է հետևյալ 7 բաժիններից.

Ներածություն (9-46էջեր)
Ընթերցում (47-72էջեր)
Խորհում (73-78 էջեր)
Աղոթք (70-79 էջեր)
Ուսումնասիրություն (87-232էջեր)
Սերտողություն (233-238էջեր)
Հանձնարարություն (239-286էջեր)

- Յուրաքանչյուր էջի դրսի կողմից՝ եզրին, սև քառակուսի թղթի վրա նշված է, թե տվյալ էջը ո՞ր դասին է պատկանում:

Տեսողական պատկեր. Պատկերացրեք, որ այդ գրքի յոթ մասերը տան յոթ սենյակներ են:

- Նյութի իսկ ուսումնասիրության ընթացքում ամեն օր ավելի շատ սենյակներ կայցելենք :

էջերի համարակալումը. էջերի համարները կարող եք տեսնել յուրաքանչյուր էջի ներքևում:

Յուրաքանչյուր էջի քննարկման դասի որոշումը՝ դասը, որի ընթացքում քննարկվելու է տվյալ էջը նշված է յուրաքանչյուր էջի դրսի կողմում:
Հարց. Չեռնարկն օգտագործելու վերաբերյալ կա՞ն հարցեր:

4. Ընթերցեք և քննարկեք «**Խոստումներ, որոնք ես պարտավորվում եմ կատարել** ողջ աշակերտության դասընթացի ընթացքում» \էջ 11\ դասը և քաջալերեք նրանց գրանցել տվյալ ամսաթիվը և ստորագրել այդ խոստումների տակ:

Բացատրություն. կարևոր է, որ նրանք, ում սովորեցնում եք, իրենց իսկ օգտի համար իրենց նվիրեն աշակերտմանը: Դրանով իսկ նրանք ավելի պարտավորված կլինեն մինչև վերջ մասնակցել դասերին: Ամենամեծ օրհնությունը վայելում են նրանք, ովքեր դասերին մասնակցելով ամեն օր ավարտում են իրենց տրված հանձնարարությունը:

Քաջալերանք. Առաջին դասի վերջում քաջալերեք, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ իր դասարանից որևէ մեկին որպես աղոթքի ընկեր ընտրի: Դրանով, նրանք կարող են աճել եւ դժվարին պահերին միմյանց աջակցել իրենց աղոթքներով:

5.Կարդալ և քննարկել **«Քանզի իմ միակ նպատակն է ճանաչել Նրան»**

Պատմություն. Պողոսը, երբ Փիլիպեցիներին նամակ էր գրում, գտնվում էր Հռոմի բանտում: Բանտի սենյակը, որտեղ Պողոսն էր բանտարկված, շատ փոքր էր: Այն չուներ ո՛չ պատուհան, ո՛չ դուռ և ներսում բոլորովին մութ էր: Բանտարկյալը սենյակ էր իջեցվում առաստաղի մի փոքր անցքից: Սենյակի մի անկյունում կար մի սյուն, որի վրա էլ, հավանաբար, բանտարկյալին էին շղթայում: Պատերը ճեղքված քարերով էին շարված, որոնցից մեկում բացակայում էր մի քար, որտեղ և ննջատեղի էր: Այտնեղ ցուրտ, խոնավ և հավանաբար լի էր առնետներով: Չնայած այս դժվարին և վտանգներով լի վիճակին, Պողոսին չէր հուզում իր ազատվելու խնդիրը և նա ձգտում էր լոկ ավելի խորը և մոտ ճանաչել Քրիստոսին, քան երբևիցե:
Բացատրություն. Հունարենում *ճանաչել* բառն ունի ոչ միայն մտավոր գիտելիքներ ունենալու նշանակությունը, այլ նաև սերտ «ինտիմ» հարաբերություն ունենալը:

- Տիտոս 1:16 «Նրանք խոստովանում են, ճանաչում են Աստծուն, բայց իրենց գործերով ուրանում են՝ դառնալով պիղծ ու անհնազանդ և ամեն բարի գործի անպիտան»:

Հարցեր. Խնդրեք աշակերտներին գրել հետևյալը 9-րդ էջում:

Հիսուսին ճանաչելու վերաբերյալ չորս հարցեր.

1. Եթե ոչ այստեղ, ապա որտե՞ղ:
2. Եթե ոչ այսպես, ապա ինչպե՞ս:
3. Եթե ոչ հիմա, ապա ե՞րբ:
4. Եթե երբեք, ապա ինչո՞ւ:

Նկատողություն. Երբեմն աշակերտները, երբ սկսում են ընտելանալ հոգևոր կարգ ու կանոնին, ինչպես օրինակ՝ Սուրբ Գիրք կարդալը, խորհելը, սերտելը, մտորելն ու աղոթելը, նրանց ուշադրությունը կենտրոնանում է ավելի շատ կարգ ու կանոնի, քան Հիսուսի վրա: Արդյունքում, ոմանք շեղվում են ճանապարհից՝ և դադարում Աստծո համար արդյունավետ լինելուց: Դրա համար, յուրաքանչյուր շաբաթ մենք այս համարը կվերանայենք, որպեսզի.

1. **Մեր աչքերը կենտրոնանան Հիսուսին և** միմիայն Հիսուսին: Որպեսզի այն հիշեցնի մեզ, որ **մեր նպատակը Նրան ճանաչելն է:**
2. Հիշեցնի մեզ, որ միայն **կարգապահությունը չէ մեր վերջնանպատակը: Դա պարզապես միջոց է, որ Աստված տվել է մեզ Հիսուսին ճանաչել** խորը, սերտ և անձնական հարաբերությամբ: Մենք կիրառում ենք այդ կարգ ու կանոնը Հիսուսին ճանաչելու համար:

Բացատրություն. Փորձառությունից գիտենք, որ հոգևոր կարգ ու կանոնի կիրառումը Աստծուն ճանաչելու ընթացքում առաջացած ուրախությունը շատ բաներով առավել է, քան մեր կողմից դրսևորված ցանկացած եռանդ:

Օրինակ՝

- Սիրահարվածների համար միասին լինելն ու միմյանց ճանաչելը ծա՞նր գործ է արդյոք:
- Կամ արդյո՞ք ծանր բան է երեխային կամ թոռնիկին գիրկդ առնելը:

3.Խորհեցեք այս զորավոր ճշմարտության մասին, որպեսզի այն թղթից փոխանցվի ձեր միտքը և ապա՝ սիրտը: **«Որպեսզի Աստված կերպարանափոխի մեզ Հիսուսի նմանությամբ»:**

6. Կարդալ և քննարկել **«Իմ կյանքի գլխավոր նպատակները»** \էջ 12-13\

Հարց. Խնդրեք յուրաքանչյուր աշակերտին թվարկել սեփական կյանքի մի քանի նպատակ:

Բանալի բառեր. Մեր նպատակին հասնելու համար պետք է ծանոթ լինենք հետևյալ բառերին՝ **հեռացնել** և **կենտրոնանալ:** Աստծո հետ քայլել նշանակում է ճանապարհից հեռացնել բոլոր ոչ կարևոր բաները և կենտրոնանալ այն ամենի վրա, ինչը Աստված համարում է կարևոր: Մեզնից շատերը անում են ճիշտ հակառակը՝ անտեսում են այն, ինչ Աստված կարևոր է համարում և կենտրոնանում են Աստծո համար անկարևոր բաների վրա:

Այժմ ժամանակն է կենտրոնանալ **մեր կյանքի գլխավոր նպատակների** վրա: Ուշադիր եղեք, որ դրանք անդրադառնան այն ամենին ինչ հավիտենական է և ոչ երբեք՝ ժամանակավորին: Աստված ցանկանում է օգտագործել այս նպատակները մեզ կերպարանափոխելու համար, բայց մենք պետք է պատրաստ լինենք թողնելու անկարևորն ու կենտրոնանալ կարևորի վրա: **Յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյայի անհագ ցանկությունները պետք է լինեն հետևյալները՝**

1.**Ճանաչել Նրան հետևյալ չորս ձևերով.**

- Աստիճանաբար, սերտ, անձնապես և խորապես
- Ընդունել և հառել Հիսուսի հրաշալի պատկերին
- Յուրքանչյուր օր զգալ այն գերբնական ուժը, որ Նրան հարություն տվեց մեռյալներից:
- Կիսել Նրա տառապանքները, քանզի դրա միջոցով է, որ Աստված կերպարանափոխում է մեզ Հիսուսի նմանությամբ:

2.Փառավորել Նրան

- (Ա Կորնթ. 10:31) համարում շրջանակի մեջ առեք «ամեն բան Նրա փառքի համար արեք» բառերը:
- Փառավորել նշանակում է «պատվել և մեծարել»:
- Սա պետք է լինի մեր յուրաքանչյուր մտքի, խոսքի, վերաբերմունքի և գործողության մեջ:
- Նույնիսկ մեր կենցաղում և պարզ բաների մեջ, ինչպիսիք են՝ ուտելը և խմելը, կարող ենք և պետք է փառավորենք Հիսուսին նաև դրանց միջոցով:
- Հովհ. 17:4-ում, Հիսուս փառավորեց Հորն Իր բացարձակ հնազանդությամբ:

- Այն ցույց է տալիս, որ Աստված հատկապես փառավորվում է մեր հնազանդության միջոցով:

  Քաղվածք. «Կյանքն Աստծուց տրված մի նվեր է, որն օգտագործվում է Նրա փառքի համար» --- Ջոն Մակ Արթուր կրտսեր:

3. **Մեր կամքը և բնավորությունը դարձնել Նրա նման:**

   Նրա Կամքի նման--- Երբ հասնում ենք այնտեղ, որտեղ մեր վստահությունն առ Աստված այնքան մեծ է, որ Իր կամքն ավելի ենք ցանկանում, քան մերը, նշանակում է ձեռք ենք բերել Աստծո կամքը:

- Մատթ. 26:39-ում տեսնում ենք մի գեղեցիկ օրինակ: Հիսուս աղոթում և խնդրում էր Հորը, «*Եթե հնարավոր է հեռացրու ինձանից այս բաժակը, բայց ոչ թե իմ, այլ թող Քո կամքը լինի*»
  - Սա հավանաբար Հիսուսի ունեցած ամենադժվար որոշումն էր, քանի որ *այդ բաժակը* ներկայացնում էր մեղքը, ամոթը և Հոր Աստծուց բաժանումը, որի պատճառը մեր մեղքերն էին: Դա նշանակում է՝

    - Հիսուս պետք է վերցներ մեր բոլորի մեղքը Իր վրա և վճարեր դրանց դիմաց խաչի վրա: Մտածեք այդ մասին: Նա երբեք մեղք չէր գործել և անիրավության պատճառով չէր գրգռել Աստծո բարկությունը:

    - Իր հնազանդությունն ստիպեց, որ համաձայնվի կրել մեր մեղքերն Իր վրա, որը կբաժաներ Նրան Հոր Աստծուց: Մտածեք այդ մասին: Հիսուս երբեք չէր բաժանվել Հորից:

- Հիսուս ասաց, «Ոչ թե իմ, այլ Քո կամքը լինի»: Դրանով Նա ցույց տվեց, որ մենք միշտ պետք է մեր կամքից ավելի ցանկանանք Աստծո կամքը:

Նրա բնավորության նման--- Քայլ առ քայլ, Աստված կերպարանափոխում է մեզ Իր պատկերի նման հետևյալ ձևերով՝

- **Սրբությամբ.** Կատարյալ մաքրություն կյանքի ցանկացած

ասպարեզում, սովորելով ապրել Նրա նման՝ մինչև որ ժամը կգա երկինք գնալու:

- **Ճշմարտությամբ.**

    - Հռովմ. 10:10, «Մարդ հավատում է ճշմարտությանը»:
    - Դա ոչ թե մեր, այլ Իր ճշմարտությունն է: Տիտոս 3:5; Փիլիպ.3:9; Հռովմ. 10:3; Մատթ. 6:33; Բ Կորնթ. 5:21; Հռովմ. 3:21-22:

    - **Պատմություն:** Երբ տղաներս փոքր էին, նրանք կոդերի մի գիրք պատվիրեցին: Երբ այն տեղ հասավ, տեսանք, որ բոլոր էջերը լի են խառը տառերով, որոնց միջև հեռավորությունն ընդհանրապես պահպանված չէր, այնպես, որ ոչինչ հնարավոր չէր կարդալ: Բայց գրքի հետ միասին կար նաև մի թափանցիկ կարմիր թիթեղ, որը հնարավոր էր դարձնում գրքի ընթերցումը: Թիթեղի միջոցով ցանկացած էջին նայելիս հնարավոր էր լինում կարդալ գրվածը, քանի որ միայն անհրաժեշտ տառերն էին երևում: Այդ ինձ հիշեցրեց Աստծո ճշմարտությունը: Այդ կարմիր թիթեղն ինձ հիշեցրեց խաչի վրայի Հիսուսի արյունը, որը թափվեց ինձ համար: Եվ այն օգնեց ինձ հասկանալ, որ եթե ես ընդունել եմ Հիսուսին, որպես Տեր և Փրկիչ, եթե նույնիսկ մեղանչեմ, Հայրը տեսնում է ինձ Հիսուսի արյան միջով, որ մաքրեց իմ մեղքերը: Ու թեև մեղանչեմ, Նա ինձ արդար է տեսնում, քանի որ իմ մեղքերը քավվեցին խաչի վրա Հիսուսի զոհաբերած արյամբ, որ մահացավ իմ փոխարեն:

- 2 Կորնթ. 3:18---այս համարը մեզ անսահման հույս է տալիս: Յուրաքանչյուրս կարող ենք լինել մի հայելի, որը Տիրոջ փառքը կարտացոլի: Մենք պարզապես պետք է թույլ տանք (Հռովմ. 6: 13), Աստծուն ղեկավարել մեր կյանքի յուրաքանչյուր վայրկյանը, այնպես որ Նա կարողանա ազատ

գործել մեր մեջ, մեզ իր նմանությանն ավելի ու ավելի մոտեցնելով, և մեզ որպես հայելի օգտագործի, որտեղ Ինքն Իրեն կարտացոլի: Ինչ հրաշագործ է Աստված:

- Հռովմ. 12:2

  - «*Մի կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով*» արտահայտությունը կարող է հնչել նաև այսպես «*թույլ մի տուր որ քեզ շրջապատող աշխարհը ճնշի քեզ*»:
  - «Նորոգեք ձեր մտքերը» արտահայտությունը բացատրական Աստվածաշնչում մեկնաբանված է, «բայց ձեր վրա առեք, (կերպարանափոխվեք), նոր գաղափարներով և նոր վերաբերմունքով վերանորոգված կատարյալ միտքը...»:

    - **Մեր կյանքի գլխավոր Նպատակները** փնտրելու բուռն ցանկությունը, մեր միտքը նորացնելու մի այլ ձև է:
    - **Նոր վերաբերմունք** փնտրելու բուռն ցանկությունը մտքերը նորացնելու մի այլ ձև է: Փիլիպ. 2:5-8-ը ասում է, «Ձեր վարմունքը պետք է լինի Հիսուսի նման»: Այստեղ այդ վերաբերմունքն է նկարագրված

      - «նա իր անձը ցածր դասեց»

      - «իսկական ծառա դարձավ»

      - «խոնարհվեց»

      - «հնազանդվեց դատապարտվել մահվան, այն էլ խաչի մահվան»

      - Հավանաբար նոր վերաբերմունքներից ամենամեծը կարելի է համարել **խոնարհումը,** քանզի. «Տեր, ես կհնազանդվեմ: Միայն թե դու խոսիր»: Սա Պետրոսի պատասխանն էր Հիսուսին ասելով. «Քո խոսքի համար կանեմ» (Ղուկ.5:5):

- Խոնարհումն օգնում է ծայրահեղ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելուն:

Պատմություն. Ռումինիայում իմ աշակերտության դասընթացների ժամանակ մի հովիվ ինձ մի մարդու մասին պատմեց: Այդ մարդը կոմունիստական ժամանակաշրջանում ապրող մի քրիստոնյա էր և աշխատում էր ավտոկանգառներում: Նա խոստացել էր ամեն գնով Քրիստոսի խոնարհ ծառան լինել: Մի օր իր տաս կոմունիստ տնօրենները մոտենում են իրեն և ասում, որ նա կամ պետք է հրաժարվի քրիստոնյա լինելուց կամ էլ իրեն կհեռացնեն աշխատանքից: Եվ աշխատանք չունենալու պատճառով նա կարող էր հայտնվել բանտում, սակայն մարդը պարզապես հաջողություն է մաղթում և շարունակում է իր ճանապարհը: Նա խոստացել էր խոնարհաբար ծառայել Աստծուն Իր խոսքին, և Աստված արդեն խոսել էր նրա հետ ասելով, որն է ավելի կարևոր՝ Աստվա՞ծ, թե աշխատանքը: Նա այնքան լավ աշխատող էր, որ նրա տնօրենները ետ կանչեցին նրան և թույլատրեցին շարունակել իր աշխատանքը: Այդ մարդը երբեք էլ այլ պաշտոնի չարժանացավ, սակայն նրա սիրտը լցված էր խաղաղությամբ և ուրախությամբ, գիտակցելով որ նա հավատարիմ մնաց Հիսուսին:

Հարց. Կյանքի գլխավոր նպատակները կարդալուց և քննարկելուց հետո հարցրեք աշակերտներին՝ ինչպե՞ս կարող են իրենք կիրառել այդ երեք նպատակները, որոնք կօգնեն իրենց ամեն անգամ ճիշտ որոշումներ կայացնել:
Պատասխան. Կյանքի բոլոր խաչմերուկներում, երբ բախվում ենք որոշում կայացնելու անհրաժեշտությանը, պետք է ինքներս մեզ հետևյալ երեք հարցերը տանք.

1. Ո՞ր ընտրությունը կօգնի ինձ Հիսուսին ավելի լավ ճանաչել:
2. Ո՞ր ընտրությունը կօգնի ինձ Հիսուսին ավելի փառավորել:
3. Ո՞ր ընտրությունը կօգնի ինձ իմ կամքն ու բնավորությունը Հիսուսին նմանեցնել:

Հետո կատարենք այն ընտրությունը, որը հիմնված է **մեր կյանքի գլխավոր նպատակներին** հասնելու վրա:

7. Կարդալ և քննարկել **Դասի Պատկերը \էջ 14**

Բացատրություն. Ապրելաոճի մասին խոսելիս, շատ կարևոր է ամեն օր կատարել «Աստծո հետ Դեմ առ Դեմ» դասընթացների հանձնարարությունները: Շատ կարևոր է ամեն օր կատարել, քանի որ մենք ոչ միայն փորձում ենք ուսուցանել ճշմարտությունը, այլ զարգացնել այնպիսի ապրելաոճ, որը Հիսուսին կարտացոլի:

Բացատրություն. Խոսելով ծրագրից, որին պետք է հետևենք «Աստծո հետ Դեմ առ Դեմ» դասընթացներն անցնելիս, կարևոր է հասկանալ, որ **Հիսուս աշակերտեց նրանց հետևյալ կերպ՝**

- **Հիսուս ներկայացրեց ծրագիրը:**
- **Հիսուս բացատրեց ինչու:** Մատթ. 4:18-19-ում պատվիրեց նրանց հետևել Իրեն: Ինչո՞ւ: Որպեսզի դարձնի նրանց այնպիսիք, ովքեր իրենց կյանքը կնվիրեն մարդկանց որսալուն:
- **Հիսուս ցույց տվեց նրանց ինչպես:** Մարկ.1:35 համարներում, Հիսուս ցույց տվեց իր աշակերտներին, թե ինչպես առանձնանալ Աստծո հետ վաղ առավոտյան հանգիստ ու խաղաղ վայր փնտրելով, որտեղ Հոր ու Իր խոսակցությունը չէր ընդհատվում: Նա վաղ առավոտյան գնում էր Հայր Աստծո հետ հանգիստ զրուցելու: Հիսուս ընդգծեց ամեն օր Աստծուն ժամանակ տրամադրելու կարևորությունը՝ աշակերտների և մեզ համար:

- **Հիսուս ուղղորդեց նրանց:** Մատթ.28:19-20 համարներում տեսնում ենք, որ երբ արդեն աշակերտների խումբը կազմված էր, Հիսուս անմիջապես ուղարկեց նրանց աշակերտելու: Յուրաքանչյուր ճշմարիտ աշակերտ պետք է մտածի աշակերտ պատրաստելու մասին, որոնք էլ իրենց հերթին կկարողանան աշակերտել: Դրա համար, Հիսուսի նման մենք ևս պետք է ուղարկենք նրանց (այդ նոր աշակերտներին) աշակերտ պատրաստողներին աշակերտելու:
- **Հիսուս հետևեց նրանց:** Մատթ.26:38 համարում Հիսուս ասաց Պետրոսին և Զեբեդիոսի երկու որդիներին, «մնացեք այստեղ և զգոն եղեք»: Մատթ.26:40,43,45 համարներում Հիուս Հորը երեք անգամ միայնակ աղոթելուց հետո վերադարձավ և հետևեց նրանց:

8. Կարդալ և քննարկել **Խոսք, որ բերում է խաղաղություն \15-16 էջ\:**

Բացատրություն. «Խոսք, որ բերում է խաղաղություն»-ը ձեզ հնարավորություն կտա հասկանալ երկու շատ կարևոր բաներ՝

- Արդյո՞ք յուրաքանչյուր աշակերտ վստա՞հ է իր փրկության վրա:
- Ձեր աշակերտները կասկածի տա՞կ են առնում արդյոք Աստծո խոսքը, թե ամուր կանգնած են Նրա խոստման վրա:
- Երբեմն քրիստոնյաները Աստծո համար դադարում են արդյունավետ լինել, քանի որ սատանան շարունակ փորձում է փրկության վերաբերյալ նրանց հոգին կասկածներով լցնել: Աստված ուզում է, որ մենք վստահ լինենք որ փրկված ենք և ապրենք խաղաղությամբ: Նա մեզ ասաց, որ մենք վստահաբար իմանանք, որ փրկված ենք (1Հովհանն. 5:13): Եթե կասկածում ենք Աստծո Խոսքին, ապա կասկածի տակ ենք առնում Նրա էությունը: Մենք պետք է ամուր կառչենք Նրա խոսքից:
  - Դուք կարող եք ձեր աշակերտներին տալ Ավետարանչության Պայթյունին վերաբերվող հետևյալ երկու հարցերը՝
    1. Ձեր հոգևոր կյանքում հասե՞լ եք արդյոք այն կետին, որ վստահ լինեք, որ եթե այսօր մահանաք երկինք եք գնալու:
    2. Ենթադրենք այսօր մահացաք և հիմա կանգնած եք Աստծո առջև և Նա ասում է ձեզ, «ինչո՞ւ պետք է թույլ տամ, որ Իմ երկնային արքայությունը մտնես»: Ի՞նչ կպատասխանեք:

- Տարիների ընթացքում շատ ենք առիթ ունեցել տեսնելու մարդկանց, ովքեր ընդունել են Հիսուսին, որպես Տեր և Փրկիչ, երբ կիսվել ենք նրանց հետ հետևյալ համարներով՝ Հռովմ. 3:23, Հռովմ. 6:23, Հովի. 3:16, Հովի. 1:12, եւ Եփես. 2:8-9: Դրանք կարող են օգտակար լինել նաև ձեր աշակերտների համար:
- Շատ մարդիկ գտել են իրենց փրկության վստահությունը, երբ պատմել ենք մի մարդու վկայություն, թե նա այն ինչպես է փրկվել:

  Պատմություն: Սատանան այդ մարդու սիրտը փրկության վերաբերյալ կասկածներով էր լցնում: Եվ մի օր, երբ կարդում է Հովի. 5:24-ը, դուրս է գալիս և իրենց շենքերից մեկի հետևում մի փայտե ցից է խրում գետնին: Փայտի վրա գրում է Հովի. 5:24 համարը և այդ օրվա ամսաթիվը, հետո ծնկի է գալիս ու աղոթում, «Տե՛ր, ես վստահ չեմ փրկությանս համար, բայց եթե փրկված չեմ, ապա գիտեմ, որ ես մեղավոր եմ և Դու մահացար իմ մեղքերի համար: Ես պատրաստ եմ թողնել իմ մեղքերը և դառնալ դեպի Քեզ: Խնդրում եմ այժմ ներիր մեղքերս և բնակվիր սրտիս մեջ, որպես իմ Տեր և Փրկիչ: Տեր, գիտակցելով, որ Դու հավատարիմ ես և միշտ կատարում ես խոստումներդ, ես վստահում եմ Հովի. 5:24 խոսքի խոստումին: Շնորհակալ եմ Տեր»: Դրանից հետո, երբ սատանան կրկին փորձում էր փրկության վերաբերյալ որոշ կասկածներով լցնել նրա հոգին, նա գնում է այնտեղ, որտեղ խրել էր այդ ցիցը և ցույց տալով այն ասում է, «Սատանա՛, ես վստահում եմ Աստծո խոստմանը: Իմ փրկությունը եղել է այն օրը, որը տեսնում ես փայտի վրա»:

Բացատրություն. Մեկ ուրիշ պատճառ, որ կարևոր է կարդալ ու քննարկել «Խոսք, որ բերում է խաղաղություն» հատվածը:

Պատմություն: Երբեմն մենք սխալվում ենք մեր անհիմն ենթադրությունների պատճառով: Մի անգամ Մարիլինը աշակերտում էր մեր եկեղեցու կարկառուն օրիորդներից մեկին: Նա մի բնատուր առաջնորդ էր և մենք միշտ կարող էինք վստահել նրան: Երբ նրանք անցնում էին Աստծո հետ Դեմ

առ Դեմ ծրագիրը, թեև Մարիլինը երբեք այդպես չէր արել, սակայն որոշեց, որ այս հատվածը «խոսք, որ բերում է խաղաղություն» բաց թողնել, քանի որ այդ աղջիկը լավ քրիստոնյա էր երևում: Բայց հետո Մարիլինը զգաց, որ չպետք է բաց թողնի այն: Եվ թույլ տվեց, որպեսզի օրիորդն այդ հատվածը բարցրածայն կարդա: Կարդալու ընթացքում արցունքներն առատորեն սկսեցին հոսել և նա ասաց, «Մարիլի՛ն, ես երբեք այդ (վերստին ծնունդը) չեմ ապրել: Երբ ես փոքր էի, եղբորս ետևից գնացի բակ և այնտեղ ինձ մի քարտ տվեցին, որպեսզի լրացնեմ և հետո եղբորս հետ մկրտվեցի: Այդ օրվանից բոլորը կարծում են, որ ես քրիստոնյա եմ, թեև այսքան տարիներ ես գիտեմ, որ ես փրկված չեմ»: Հետո նրանք ծնկի եկան միասին մեր ննջարանում և նա ընդունեց Հիսուսին, որպես Տեր և Փրկիչ: Այդ կիրակի նա մկրտվելու հայտ ներկայացրեց եկեղեցի:

- Սա մեզ երկու բան սովորեցրեց.
  1. **Մի կարծեք**, որ բոլոր այն մարդկանց որոնց աշակերտում եք ճշմարիտ հավատացյալներ են:
  2. Երբ աշակերտում եք **երբեք բաց մի թողեք ուղեցույցի** որևէ հատված, քանի որ հնարավոր է խմբում ինչ-որ մեկը հատկապես այդ հատվածի կարիքը զգա:

Հրավեր: «Խոսքը, որ բերում է խաղաղություն»-ը վերջացնելուց հետո առիթ տվեք նրանց, ովքեր այդ խաղաղության կարիքն ունեն, մնան դասերից հետո կամ զանգահարեն ձեզ, որպեսզի իմանան ինչպես ձեռք բերել այդ խաղաղությունը: Մենք վստահ ենք, որ դուք կկարողանաք օգնել նրանց, ովքեր կընդունեն ձեր առաջարկը, տալով նրանց նախորդ էջերի հակիրճ բնութագիրը, սակայն եթե տատանվում եք, ապա պայմանավորվեք ձեր հովիվներից կամ ընկերներից մեկի հետ: Գնացեք այդ մարդու հետ ձեր հովվի կամ ընկերոջ մոտ և նրանք կօգնեն այդ մարդուն, որպեսզի նա խաղաղություն ձեռք բերի մեղքերի թողությամբ և Աստծո խոստմանը ամուր կառչելով:

- Շատ մարդիկ Հիսուսին ընդունել են, որպես կյանքի Տեր և Փրկիչ «Աստծո հետ Դեմ առ Դեմ» ծրագրի միջոցով:

Բացատրություն: «Խոսք, որ բերում է խաղաղություն» կարդալուց հետո բացատրեք աշակերտներին, որ այն ընդգծում է մի շատ կարևոր սկզբունք՝ առաջ քաշելով մի հարց:

Սկզբունքը--- *«Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ նա, ով լսում է իմ խոսքը և հավատում ինձ ուղարկողին, հավիտենական կյանք **ունի և** դատապարտության չի արժանանա, այլ կփրկվի մահից»* (Հովհ.5:24):

Կարևոր սկզբունք --- Հավատալ վստահել, և ամուր կառչել Աստծո խոսքից:

Հարց --- Արդյո՞ք Աստծո խոսքը՝ Աստվածաշունչը, դեր խաղում է իմ կյանքում:

9. Կարդալ և քննարկել **Մկրտություն** \17-18էջեր\

Բացատրություն: Նորադարձների համար հնազանդության առաջին քայլերից մեկը մկրտությունն է:

- Ղուկ.6:46-ը ասում է, «ինչո՞ւ եք Ինձ Տեր, Տեր կոչում, եթե չեք անում այն, ինչ ես եմ ձեզ ասում»:
  - Հիսուսն Ինքը պատվիրեց, որ բոլոր նորահավատները պետք է մկրտվեն (Մատթ.28:19):
  - Եթե Հիսուս մեր Տերը և Փրկիչն է, ապա պետք է հնազանդվել նրա պատվիրանին և մկրտվել:
- Եթե մկրտությունը մեր սրտերում արդեն տեղի ունեցած բաների վկայությունն է, և տարբերակում է մեզ որպես Քրիստոսի աշակերտներ, ապա նրանց, ովքեր մկրտվել են մինչ Հիսուսին որպես Տեր և Փրկիչ ընդունելը՝ պետք է խրատասեանք, որպեսզի մկրտվեն ևս մեկ անգամ: Այլապես հնարավոր է, որ նրանք այդպես էլ խաղաղություն չստանան, քանի որ Աստծո Խոսքն ասում է, որ փրկությունը գալիս է մկրտությունից առաջ:

10.Բացատրեք ինչպես օգտագործել «**Կոչ Մեկամսյա Ամենօրյա Աստվածաշնչի ընթերցման» \էջ 49**

Բացատրություն: Ամեն օր Աստվածաշունչ կարդալը կազմում է ապրելաոճի մի մաս, և սա ցանկանում ենք, որ աշակերտները կիրառեն իրենց կյանքում:

- **Գրել ---** Ամեն առավոտ մինչ Աստվածաշունչ կարդալն այս աղոթքն արա, «Տե՛ր, խնդրում եմ տուր ինձ իմաստություն, որպեսզի կարդամ և հասկանամ Խոսքդ» (Ղուկ.24:45):
- **Գրել ---** Ամեն առավոտ Աստվածաշունչը կարդալուց հետո այս աղոթքն արա, «Տե՛ր,

շնորհակալ եմ, որ այս առավոտ եղար ինձ հետ» (1Կորնթ. 29:13):

- Մատթ. 4:4--- «Բայց Նա պատասխանեց ու ասաց, գրված է, մարդ միայն հացով չի ապրում, այլ Աստծո բերանից դուրս եկող ամեն մի խոսքով»:
- Երեմիա 15:16 --- «Քո խոսքերը գտնվելուն պես ճաշակեցի ես, և Քո խոսքը սրտիս ցնծություն և ուրախություն եղավ; Քանի որ Քո անունով կանչվեցի, Ով Զորքերի Աստված»:
- Սաղմ.34:8 --- «Ճաշակեցեք և տեսեք, որ Տերը բարի է: Երանի նրան, ով վստահում է Նրան»:
- 2 Տիմոթ.3:16 --- «Ամբողջ գիրքը Աստծո շունչն է և օգտակար է սովորեցնելու, հանդիմանելու, շտկելու և արդարության մեջ խրատելու համար»:

11.Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Տնային Հանձնարարություններին \241-242 էջեր**

Կարդալ: Բարցրածայն ընթերցել և հարցնել: Համոզվեք, որ այն պարզ է բոլորին:

12.Բացատրեք ինչպես օգտագործել **Տնային Հանձնարարությունների Ստուգման** թերթիկները \էջ 273\

Բացատրություն --- Ասացեք աշակերտներին, «Երկրորդ դասից սկսած, յուրաքանչյուր դասից առաջ, դուք պետք է լրացնեք Տնային Հանձնարարությունների Ստուգման թերթիկը: Ամեն դասին ձեր առաջնորդը կստուգի և կգնահատի ամբողջ շաբաթվա ձեր տնային Հանձնարարությունները: Ամեն շաբաթ դուք պետք է լրացնեք հետևյալ տվյալները՝

- Անուն ազգանուն:
- Հաջորդ հանդիպման ամսաթիվ:
- **Սկիզբ -** Մինչ առաջադրանքին անցնելը գրանցեք ժամանակը և ապա սկսեք աղոթքով, խնդրելով Աստծուն, որպեսզի խոսի ձեզ հետ, երբ կարդում եք յուրաքանչյուր օրվա աստվածաշնչյան հատվածը:

Վերջ - Աստծո հետ Դեմ առ Դեմ ծրագրի այդ օրվա դասն ավարտվում է, երբ արդեն աղոթել եք, շնորհակալություն հայտնել Նրան Իր հետ անց կացրած ժամանակի համար:

13. Դասն ավարտեք աղոթքով:

1.Դասն սկսեք Աղոթքով:

Օրինակ՝ Աշակերտներին խնդրեք ծնկի գալ, ձեզ հետ միասին աղոթել և հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթեն:

2. Տվյալ օրվա «Տնային աշխատանքի ստուգման» թերթիկների ներքևում աշակերտները պետք է նշեն իրենց աղոթքի ընկերոջ անունը:
Ապա **ստուգեք** և **ստորագրեք** նրանց աշխատանքները: \էջ 273\:

Հաշվետվություն: «Տնային հանձնարարությունների» թերթիկների ամենօրյա ստուգումն աշկերտներին սովորեցնում է հաշվետվության կարևորությունը, ինչպես գրված է Հռովմ. 14:12: Այն նաև օգնում է առաջնորդներին տեսնել արդյոք աշակերտները կատարո՞ւմ են

- տնային աշխատանքները՝ կերտելով նոր ապրելաոճ, թե
- ձեր քաջալերանքի կարիքն ունեն:

3. Վերանայել Աշակերտության Իմ Ուխտը \էջ11\:

Քաջալերանք. Թույլ տվեք աշակերտներին, որ իրենք կատարեն և ամրագրեն իրենց ուխտն աշակերտելու վերաբերյալ, եթե իհարկե մինչ այդ դեռ չեն կատարել:

- Այս կերպ ավելի հավանական է, որ աշակերտներն ավելի ոգևորվեն, որպեզսի «Աստծո հետ Դեմ առ Դեմ» դասընթացն ավարտեն:
- Ամենաշատը կօրհնվեն այն աշակերտները, ովքեր ամեն օր կհաճախեն դասընթացներին և կկատարեն հանձնա-րարությունները:

4. Կարդալ **«Քանզի Իմ նպատակն է ճանաչել Նրան» \էջ 9\:**

Գրել եւ քննարկել. Խնդրեք աշակերտներին գրել 9-րդ էջի վերնամասում:
Հիսուս Քրիստոսին խորը, անձնապես և մոտիկից ճանաչելու համար հանդիսացող **խոչընդոտները՝**

1. Մտահոգություն
2. Հարստություն
3. Պատասխանատվություն
4. Հաճույքներ

Նկատողություն. Երբեմն աշակերտները, երբ սկսում են ընտելանալ հոգևոր կարգ ու կանոնին, ինչպես օրինակ՝ Սուրբ Գիրք կարդալը, խորհելը, սերտելը, մտորելն ու աղոթելը, նրանք սխալմամբ սկսում են կենտրոնանալ ավելի շատ կարգ ու կանոնի, քան Հիսուսի և միայն Հիսուսի վրա: Արդյունքում, ոմանք շեղվում են ճանապարհից՝ և դադարում Աստծո համար արդյունավետ լինելուց: Դրա համար, յուրաքանչյուր շաբաթ մենք այս համարը կվերանայենք, որպեսզի.

1. **Պահենք մեր աչքերը Հիսուսի և միմիայն Հիսուսի վրա և** հիշենք, որ **մեր միակ նպատակը Նրան ճանաչելն է:**
2. Հիշենք, որ **կարգ ու կանոնը վերջնանպատակ չէ: Դրանք պարզապես Աստծո կողմից տրված միջոցներ են, որոնք օգնում են մեզ էլ ավելի լավ ճանաչել Հիսուսին:** Մենք կիրառում ենք կարգ ու կանոնը, որպեսզի կարողանանք ճանաչել Նրան:

   Բացատրություն. Մեր կյանքի փորձը ցույց է տվել, որ երբ կիրառում ենք այդ հոգևոր կարգ ու կանոնը՝ նպատակ ունենալով ճանաչել Նրան, ապա ճշմարտության խոսքն ըմբռնելու ուրախությունն այնքան մեծ է լինում, որ այն արագորեն վերափոխում է *ես պետք է կամ ես պարտավոր եմ* միտքը, ինչն էլ իր հերթին խթանում է աշակերտության գործընթացը:

3. **Խորհենք զորավոր ճշմարտության շուրջ:** Թույլ տալ, որ այդ ճշմարտության խոսքը ներթափանցի մեր մտքերի մեջ և այնտեղից էլ դեպի մեր սրտերը շարժվի: Այդպես Աստված կկարողանա կերպարանափոխել մեզ դարձնելով մեզ Հիսուսի նման:

5. Քննարկել **Կրկնողության Հարցերը \էջ 242\:**

Բացատրություն.

- Թույլ տվեք մի քանի աշակերտ կարդան մեկական հարց և իրենք էլ պատասխանեն այդ հարցերին:
- Երբ հասնեն չորրորդ հարցին և պատմեն իրենց փորձը, դրանից հետո քաջալերեք նրանց, որ խոսեն մարդկանց Հիսուսի մասին և փոխանցեն այն, ինչ Նա սովորեցրել է իրենց:

6.Կարդալ և քննարկել **Կոչ Խորհրդածության \75-78\:**

Բացատրություն.

- Խորհելը՝ (մեդիտացիա) այն է, թե ինչպես ենք ճշմարտությունը մեր մտքերից մեր սրտերի մեջ

տեղափոխում: Քանի դեռ ճշմարտությունը մեր սրտերում տեղ չի գտել, այն ոչ մի ազդեցություն չի կարող թողնել մեր կյանքում: Դրա համար խորհրդածությունը կամ մեդիտացիան կարևոր դեր է խաղում ճշմարտությունը կիրառելու մեջ: (Հեսու.1:8):

- Շատ կարևոր է նաև աշակերտներին բացատրել, որ երբ մենք ասում ենք խորհել այդ հատվածի շուրջ, մենք չենք խնդրում այն մեկնաբանել:
  - Խորհելն ավելի անձնական բնույթ է կրում, քան պարզապես այդ հատվածը մեկնաբանելը: Այն ներ-կայացնում է հետևյալ հապավումը «**ԽՊԱ**», որը նշանակում է ուղիղ Աստծո հետ **Խ**որհել, **Պ**ատկերել եւ **Ա**ղոթել:
  - Խորհելը ճշմարտությունը դեպի մեր սիրտ է տեղաշարժում, որտեղ Աստված այդ ճշմարտությունը կիրառելով, կերպարանափոխում է մեզ Իր նմանությամբ և ձերբազատում է մեզ:
- Երբ աշակերտներին խնդրեք, որ այդ պատկերը մեկնեն, խնդրեցեք նրանց, որ սկսեն հետևյալ արտահայտությամբ «**Նկարում ես տեսնում եմ**»:
  - Վերջերս մեկն ինձ հարցրեց. «Արտահայտելու (պատկերելու) գաղափարը, որը առկա է Հին Կտակարանում, կա՞ որդյոք այդ գաղափարը նաև Նոր Կտակարանում»: Պատասխանը դրական է: 1Տիմոթ.4:15-ում հիշատակված *խորհել* բառը հունա-րենում նշանակում է «պատկերացնել» («Նոր Կտակարանի հունարեն բառարան» Ստրոնգի Լրիվ Աստվածաշնչի Սիմֆոնիա գրքում, էջ 47, համար 3191):
  - Երբ աշակերտներից մեկին խնդրեք անձամբ աղոթի և այդ պատկերն Աստծուն հանձնի՝
    - Երբեք մի ասեք, «Ձեր աղոթքն ինչպե՞ս կանեիք առ Աստծված»
    - Փոխարենն ասացեք, «**Այժմ աղոթի՛ր բարցրա-ձայն և տուր այն Աստծուն**»: Մենք պարզապես ցանկանում ենք լսել մեր աշակերտների աղոթքները:

Աստվածաշնչի շուրջ խորհելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

7. Կարդալ եւ քննարկել **Աղոթքի Կոչ \էջ 81-82**:

Բացատրություն.

- Եփես.6:18
  - **Ինչպե՞ս վերացնել անհանգստությունը**--- եթե չեք աղոթել դրա համար, ապա մի մտածեք դրա մասին:

- Աղոթեցեք ամենուր, ամեն պարագայում և յուրաքանչյուր բանի համար:

Պատմություն: Է.Ֆ. Հալոքս անունով մի քարոզիչ ամեն բանի համար աղոթում էր: Մի օր քարոզիչը բանկ գնալիս աղոթում էր, որ Աստված տեղ տա ավտոմեքենան բանկի մոտ կանգնեցնելու համար: Սակայն ազատ տեղ չկար և նա ևս մի քանի պտույտ արեց ճանապարհին՝ աղոթելով Աստծուն: Եւ այսպես մի քանի անգամ շարունակ, փորձերից հետո, վերջապես ավտոմեքենան կանգնեցրեց մոտակա փողոցի ներքևի մասում: Այն պահին, երբ նա ոտք դրեց մայթին, տեսավ այն կորուսյալ հոգուն, ում շաբաթներ շարունակ փնտրում էր: Նրան Աստծո խոսքը վկայելուց հետո, նա տեղում ընդունեց Քրիստոսին: Աստծո ծրագիրն այդ քարոզչի համար ավելի բարի էր, և նա պատրաստ էր ընդունել Աստծո ցանկացած որոշում: «...բայց ոչ թե իմ, այլ Քո կամքը թող լինի» (Մատթ.26:39):

Բացատրություն:

- 1Թեսաղ. 5:17
  - «Անդադար աղոթել»
    - Հարց է առաջանում, ինչպե՞ս աղոթել անդադար, եթե պետք է որոշ ժամանակ էլ ինչ-որ բաների վրա կենտրոնանալ:
      - **Լուսաբանում.** «Անդադար» աղոթքն ավելի լավ պատկերացնելու համար բերենք հետևյալ օրինակը: Պատկերացրեք ձեր միտքը ռետինե մի պարան է: Երբ կենտրոնացած եք ինչ-որ կարևոր հարցի վրա, ձեր միտքը սկսում է ձգվել: Երբ վերջացնում եք մտածել այդ հարցի վերաբերյալ կամ որոշում եք դադար առնել, բանն այն է, դադարո՞ւմ է ձեր մտքերում Աստծուն փառք, պատիվ և շնորհակալություն հայտնել: Աստծո հետ զրուցելը, աղոթելը, արդյոք դարձե՞լ է ձեր սրտի և մտքի մի մասը:

Բացատրություն

- «Մ» տառի կողքին, որը ներկայացնում է «մեծարել» բառը,
  - գրեք **երես**, քանի որ մենք փառաբանում ենք Աստծուն Նրա

երեսի համար, որովհետև Նրա Երեսը, որ Նրան է ներկայացնում՝

- Սուրբ է:
- Արդար է:
- Ճշմարիտ է:
- Սեր է:
- Հավատարիմ է:

Պատմություն: Մի գիշեր, մեր նախկին հովիվներից մեկը պատրաստվում էր կիրակնօրյա պատգամին: Նա սենյակում նստած սերտում էր պատգամը, երբ նրա փոքրիկ աղջիկը, որ հազիվ էր սկսել խոսել, բարձրացավ աստիճաններով և սկսեց թակել դուռը: Նա այնքան փոքր էր, որ չէր կարող դուռը բացել և շարունակ թակում էր: Վերջապես դուռը բացվեց և ներս մտավ: Հովիվը մի փոքր բարկացավ, քանի որ երեխայի աղմուկը թույլ չէր տալիս նրան կենտրոնանալ: Նա շրջվեց դեպի աղջիկը և խիստ ձայնով հարցրեց, «ի՞նչ ես ուզում»: Աղջիկը ցատկեց հոր գիրկը և ասաց, «**Ես ոչ մի բան էլ չեմ ուզում, ուղղակի ուզում էի ասել, որ քեզ շատ եմ սիրում** »: Նա թեև ճիշտ խոսել չգիտեր, սակայն գիտեր ինչպես արտահայտեր իր սերը:

- «Խ» տառի կողքին, որը ներկայացնում է **խոստովանել** բառը, գրեք հետևյալ բաները: *Ե՞րբ կարելի է խոստովանել մեր մեղքը:* Հետո գրեք պատասխանը: *Այն պահին, երբ գիտակցում ես քո մեղքը:* Ինչո՞ւ: *Որպեսի վերագտնես Աստծո հետ քո հաղորդակցությունը, որովհետեւ մեղքը բաժանում է մեզ Աստծուց:*
- «Գ» տառի կողքին, որը ներկայացնում է **գոհություն** բառը, գրեք «ձեռք», քանի որ մենք գոհանում ենք Նրան այն բաների համար, ինչ Նա արել, անում և դեռ անելու է մեզ համար:
  - Մեր ամենօրյա կյանքում ամեն բանի համար պետք է գոհություն մատուցենք Աստծուն: Մենք պետք է կերտենք գոհունակության վիճակ և սովորենք գոհություն մատուցել Աստծուն ամեն պարագայում, լինի դա քայլելու ժամանակ, թե ավտոմեքենա վարելու ընթացքում: Մենք պետք է խոսենք Աստծո հետ ոչ միայն, որպես մեր Տեր և Փրկչի, այլ նաև մեր լավագույն ընկերոջ:
- Նշենք, որ բարեխոսական աղոթքը աղերսանքի մի ձև է, որ խնդրում եք մեկ այլ անձի անունից:

8. Բացատրեք ինչպես օգտագործել «**Ամենօրյա Աղոթքի Կոչ**»-ը \83-86\:

Բացատրություն:

- էջի վերնամասում նշեք տվյալ օրվա ամսաթիվը, որտեղ ասվում է. «_____ ից»

- Հիսուս արժանի է Իր նկատմամբ մեր կատարյալ վստահությանը: Մենք պետք է հավատանք, որ Նա Իր սահմանած ժամանակում լսում և պատասխանում է մեր աղոթքներին և որքան նրան լավ ճանաչենք, այնքան ավելի կվստահենք Նրան:

- Մենք աղոթում ենք այնքան ժամանակ, միչև Աստծուց խաղաղություն ենք ստանում: Հնարավոր է խաղաղությամբ մնանք այդ հարցում, և մի քանի տարի անց միայն տեսնենք իրական պատասխանը: Այդ պարագայում, մենք շարունակում ենք ցույց տալ մեր գոհունակությունն ու մեծարումն առ Աստված աղոթքի պատասխանի համար:

- Այս պահին գրիր միայն աղոթքի քո ընկերոջ անունն այս էջի վրա և ամեն օր աղոթիր նրա համար: Մենք այս էջերի վրա միայն այն մարդկանց անունները կամ աղոթքի խնդրանքներն ենք ավելացնում, որոնց հենց Աստված է առաջնորդում: Հետո կտեսնենք, որ աղոթքի խնդրանքների գրանցման այս ձևը կատարում ենք մեր ցանկությամբ, այլ ոչ որովհետև պարտադրված ենք:

Պատմություն: Վերջերս ուրախացա, երբ մի մարդ, ում համար աղոթել էի երեսունյոթ տարի շարունակ գրեթե ամեն օր, աղոթեց և ընդունեց Քրիստոսին, որպես իր Տեր և Փրկիչ,: Երբեք մի հուսալքվեք:

9. Կարդալ եւ քննարկել **Ճշմարիտ Աշակերտի Երեք Կարևոր Հատկանիշները** \էջ 19\: **Թող որ** երեք աշակերտ ընտրեն տարբեր հատկանիշներ և ապա սկսեն այդ հատկանիշի շուրջ «Խորհել»: Հետո թույլ տվեք «Պատկերի» այն: Եվ ապա լսեք ինչպես են այդ ամենը Աղոթքով հանձնում Աստծուն <u>Մեծարելով, Խոստովանելով, Գոհանալով կամ Աղերսելով Նրան:</u>

Բացատրություն:

- Որպես կանոն բոլոր աշակերտները հետևորդներ և սովորողներ են, բայց Հովհ.8:31-ում գրված է **միայն հնազանդ հետևորդներն ու սովորողները կարող են լինել ճշմարիտ աշակերտներ:** Նրանք, ովքեր հեռանում կամ ճանապարհին ընկնելով կրկին չեն

հետևում Հիսուսին, ճշմարիտ աշակերտներ չեն (Հովհ.6:66; 1Հովհ. 2:19):

- Ղուկ. 9:23, «թող ուրանա անձը, վերցնի իր ամենօրյա խաչը և հետևի Ինձ»: Այն ավելի հասկանալի դարձնելու համար պատկերացրեք մեր սրտերում կա մի գահ և մի խաչ: Այս երկու բաներն են, որ առկա են մեր սրտերում: Եվ կա երկու ուժ, որ ցանկանում են տիրանալ այդ գահին, որոնք են՝ մեր հին Մեղավոր էությունը և Սուրբ Հոգին: Երբ մենք ցանկանում ենք, որ Սուրբ հոգին նստի մեր սրտի գահին, ապա մեր հին մեղավոր էությունը խաչին գամվելուց զատ այլ բան չի մնում: Այս անելով, մենք մեր անձն ենք ուրանում, մերժելով նրան տնօրինի մեր կյանքը և թույլ ենք տալիս, որ Սուրբ Հոգին ղեկավարի մեզ: **Սա կատարվում է կյանքում ոչ թե մեկ անգամ, այլ նաև ամենօրյա զարգացում է պահանջում:**

Լուսաբանում

Ճիշտ **Սխալ**





ՍՀ = Սուրբ Հոգի
ՀՄէ = Հին Մեղավոր էություն

- Մատթ. 11:29-ում լուծը աշխատելու համար է: Դրա համար, երբ ասում է, «վերցրու իմ լուծը և սովորիր ինձանից», նշանակում է, որ սովորելն ու հոգևորապես աճելն աշխատանք է: Պատկերացրեք երկու հոգի քաշում են մի լուծ և մյուս մեկը, ով տանում է մեզ հետ՝ Հիսուսն է: Նա օգնում է տանել մեր լուծը: Մենք պետք է պատրաստ լինենք գին վճարել սովորելու և հոգևորապես աճելու համար, քանի որ դա է Աստծո կամքը և կպարգևատրվեն նրանք, ովքեր կհնազանդվեն:

10. Բացատրեք ինչպես օգտագործել **Ամենօրյա Աստվածաշունչ Կարդալը (ԱԱԿ) \էջ 65-72** քննարկելով **Ամենօրյա Աստվածաշունչ Կարդալու Օրինակը (ԱԱԿՕ) \էջ 64:**

Բացատրություն:

- **Աստվածաշունչ կարդալիս Աստված կարող է ուղղակի** խոսել քեզ հետ և բացել այնպիսի ճշմարտություններ, որոնք Նա ուզում է, որ դու կիրառես քո կյանքում: Աստծո Խոսքը իր զավակներին ուղղված սիրո նամակ է: Սովորաբար կարդալով Աստծո Խոսքը՝ գտնում ես ճշմարտություններ, որոնք քեզ համար են: Կյանքի այլ ասպարեզներում, երբ լսում եք մի շատ կարևոր բան, սովորաբար գրի եք առնում, որպեսզի չմոռանաք: Չարժե՞ արդյոք գրի առնել այն, ինչ Աստված ասում է մեզ, որպեսզի հիշենք և կիրառենք մեր կյանքում:

Հետևյալ վեց կետերը կօգնեն ձեզ Աստվածաշնչի ընթերցումից առավելագույնը վերցնել:

1. Մինչև Աստվածաշունչ կարդալը, խնդրիր Աստծուն խոսել քեզ հետ

2. Կենտրոնացիր այն խոսքերի վրա, որոնք կարդում ես և թույլ մի տուր միտքդ այստեղ-այնտեղ թափառի: Կարդալու ընթացքում ձեռքի տակ թուղթ պահելը շատ արդյունավետ է, որպեսզի գրեք ձեր մտքին եկածը, մի թղթի կտոր ևս պահեք, որպեսզի գրեք այն, ինչ պետք է անեք այդ օրվա համար: Այդ անելով դուք չեք շեղվի ընթերցանությունից, ինչ որ բան մոռանալու մտավախություն չեք ունենա:

3. **Եղիր այնտեղ,** ինչ կարդում ես: Պարզապես պատկերացրեք ձեզ այն իրավիճակում, որի մասին կարդում եք և պատկերացրեք ձեր արձագանքը տվյալ պահին:

4. Անձնավորիր այն: Պատկերացրեք, որ Աստված նստած է ձեր դիմաց: Նայում է ձեր աչքերին և ձեր անունը տալով ասում է, «Սա հենց քո համար է»:

5. Գրեք այն, ինչ ձեզ է վերաբերվում, որպեսզի չմոռանաք, թե ինչ ասաց ձեզ Աստված:

6. Խորհեք այն բաների շուրջ, ինչ գրի եք առել:

Ամենօրյա Աստվածաշունչ Կարդալու Նշումների շուրջ խորհելը մեզ կօգնի ավելի լավ ճանաչել Աստծուն:

11.Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Հանձնարարություններին \էջ 243-244\:**

Դասարանում կարդալ. Ժամանակ տրամադրեք 243 –րդ էջի տնային հանձնարարությունները դասարանում կարդալուն, և համոզվեք, որ այն պարզ է բոլորին:

Դասարանում կարդալ. Ահա երկու պատճառ, որպեսզի ամեն առավոտ Աստծուն քո հանգիստ պահը տաս:

1. Հիսուս ցույց տվեց:

«Առավոտ կանուխ, երբ դեռ մութ էր, **Հիսուս արթնացավ,** թողեց տունը և **գնաց մի մենակյաց վայր և աղոթեց» (Մարկ.1:35):**

2. Խոսքը նշում է:

Փնտրել և վաղ բառերը Եսայ.26:9-ում և **վաղ** բառը Սաղմ. 63:1-ում եբրայերենում այն «շաքար» բառն է, որն ունի «վաղ առավոտյան ջանասիրաբար փնտրել» իմաստը: (Սթրոնգի Լրիվ Աստվածաշնչի Սիմֆոնիա, «Եբրայերենի և Չալդիի բառարան» էջ 114, համար 7836):

Այսպիսով կարելի է թարգմանաբար ասել՝

...Ես կփնտրեմ Քեզ առավոտ վաղ, ջանասիրաբար...(Եսայ. 26:9)

...Ով Աստված, Դու իմ Աստվածն ես, ես առավոտ վաղ ջանասիրաբար կփնտրեմ Քեզ...(Սաղմ. 63:1):

12. Դասն ավարտեք աղոթքով:

Օրինակ՝ Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ և գոհություն մատուցել Աստծուն, ձեզ միաբանելու և ձեզնից յուրաքանչյուրի հետ առանձին խոսելու համար:

1. Դասն սկսեք Աղոթքով:

> **Օրինակ**՝ Աշակերտներին խնդրեք ծնկի գալ, ձեզ հետ միասին աղոթել և հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթել:

2. Տվյալ օրվա «Տնային աշխատանքի ստուգման» թերթիկների ներքևում աշակերտները նշեն իրենց աղոթքի ընկերոջ անունը: Ապա ստուգեք և ստորագրեք նրանց աշխատանքները: \էջ 273\:

> **Հաշվետվություն:** «Տնային հանձնարարությունների» թերթիկների ամենօրյա ստուգումն աշկերտներին սովորեցնում է հաշվետվության կարևորությունը, ինչպես գրված է Հռովմ. 14:12: Այն նաև օգնում է առաջնորդներին տեսնել արդյոք աշակերտները կատարո՞ւմ են՝
>
> - տնային աշխատանքները՝ կերտելով նոր ապրելաոճ, թե
> - ձեր քաջալերանքի կարիքն ունեն:

3. Կարդալ **«Քանզի իմ Նպատակն է ճանաչել Նրան» /էջ 9-10/:** Աշակերտներից մեկը թող այս համարի Պատկերը տա, և իր անձնական աղոթքն Աստծուն հանձնի Մեծարելով Խոստովանելով Գոհանալով և Փառաբանելով նրան իր աղոթքով:

> «Կյանքի ամենակատարյալ բանը Աստծուն ճանաչելն է»:
> ---Բիլի Գրեհմ
>
> **Բացատրություն:** Աշակերտներին ցույց տվեք 10-րդ էջը, և նրանց ուշադրությունը հրավիրեք այս համարի չորս հետևյալ մասերին
>
> - Քաջալերեք նրանց յուրաքանչյուր օր կարդալ այդ համարի չորս մասերից մեկը և խորհել դրա շուրջ:
> - Հետո աշակերտներից մեկը թող Խորհի, Պատկերի և Աղոթի այդ մասերից մեկի շուրջ:

4. Քննարկել **Տնային Հանձնարարության Կրկնության Հարցերը \էջ 244\:**

Բացատրություն

- Մի քանի աշակերտների թույլ տվեք մեկական հարց կարդալ և պատասխանել:
- Երբ կարդան 244-րդ էջի 6-րդ հարցը և կիսվեն իրենց փորձառությամբ, քաջալերեք նրանց, որպեսզի գնան և պատմեն մարդկանց Հիսուսի մասին այն բաները, որոնք Տերը սովորեցրեց Իրենից:

5. Կարդալ և քննարկել **Հատկանիշներ, որոնք պետք է ունենան ճշմարիտ Աշակերտները \էջ 20\: Թող որ** չորս աշակերտ ընտրեն տարբեր հատկանիշներ և ապա **Խ**որհեն, **Պ**ատկերեն այն և **Ա**ղոքով Աստծուն հանձնեն՝ Մեծարելով Խոստովանելով Գոհանալով և Փառաբանելով Նրան իրենց աղոթքներում:

Բացատրություն

- Մատթ. 22:37-ը Հիսուսի խոսքերն են: Նա խոսում էր Աստծուն ամբողջ սրտով սիրելու մասին: Մենք պետք է սիրենք Նրան մեր իսկ սեփական կյանքից և ամեն ինչից առավել: Մենք պետք է ամբողջությամբ նվիրվենք Աստծուն:

  Պատմություն: Տարիների ընթացքում տարբեր շներ ենք պահել: Բայց նրանցից մեկը՝ անգլիական սաթերը, տարբերվում էր մեր հանդեպ ունեցած իր յուրահատուկ սիրով: Հաճախ շատ երկար սպասում էր պատուհանի մոտ, միայն թե գեթ մեկ ակնթարթ իր տիրոջը տեսներ: Երբ նա տեսնում էր իր տիրոջը, ուրախությունից սկսում էր ցատկոտել ու պոչը շարժել: Ոչ մի կասկած չկար, որ նա սիրում է իր նրան, և նրա սիրտն ամբողջությամբ իր տիրոջն էր պատկանում:

  - Աստված արժանի է, որ սիրենք Նրան մեր ամբողջ սրտով: Բոլորը պետք է տեսնեն, որ մեր սրտերը պատկանում են Աստծուն:

- Գործք. 17:11-ում տեսնում ենք մի խումբ մարդկանց, ովքեր պատրաստ են կյանքերը նվիրել ճշմարտությունն իմանալուն: Նրանք բաց էին Աստծո առաջ և պատրաստ էին սովորելու:

- Մատթ.11:28-ում հիշատակված «Եկեք ինձ մոտ» արտահայտությունը Հիսուսի կողմից սիրո առաջարկ է: Այժմ ժամանակն է արձագանքելու և հանձնվելու Նրան:

- Մատթ. 11:29,30-ը պարունակում է որոշ հետաքրքիր բառեր և արտահայտություններ:

- ***Լուծը***--- Լծով կապում են կենդանիներին, որպեսզի աշխատանք կատարվի, բայց քանի դեռ կենդանին լծված չէ, պիտանի չի իր Տիրոջ համար: Եթե ցանկանում ենք, որ Աստված օգտագործի մեզ, ապա պետք է պատրաստ լինենք սովորելու և հոժար կրելու այդ լուծը: Մի մեկնաբանող ասել է, «Լուծը թեթև է ու քաղցր, քանի որ այն կապված է Աստծո սիրով»:

- ***«Սովորեք ինձանից»*** --- 28 համարում ասվում է եկեք Հիսուսին և 29-ը համարն ասում է ինչու: Նա կանչում է մեզ, որպեսզի գնանք նստենք Նրա ոտքերի մոտ և սովորենք Նրանից:

- ***Հեզ***--- Այս համարում Հեզ բառը չի նշանակում «թույլ»: Թագավորների ժամանակաշրջանում, երբ մարդիկ կռվում էին ձիերի վրա, այդ ուժեղ և հզոր հովատակները (վորձ ձի) կոչվում էին «հեզ», որովհետև «հեզ» բառը նշանակում էր «իշխանության տակ»: Ձին գտնվում էր կատարելապես իր տիրոջ հսկողության տակ: Երբ մեր Տեր Հիսուսը լինի մեր կյանքերի կատարյալ տերը, մենք պատրաստ կլինենք սովորելու Նրանից և թույլ կտանք, որ նա օգտագործի մեզ ինչպես կամենա:

- Ղուկաս. 9:23---Եթե մեկը պատրաստ չէ անձը ուրանալ, ապա նա պատրաստ չէ սովորել Իրենից:

  - **Կրկնություն:** «Թող ուրանա իր անձը, ամեն օր վերցնի իր խաչը եւ հետեւի Ինձ»: Ամենալավ միջոցը հետևյալ նախադասությունը ավելի հասկանալի դարձնելու համար մեր սրտերում մի գահ և մի խաչ պատկերացնելն է: Այս երկու բաներն են, որ առկա են մեր սրտերում: Եվ կա երկու ուժ, որոնք ցանկանում են տիրանալ այդ գահին, որոնք են՝ մեր Հին Մեղավոր էությունը և Սուրբ Հոգին: Երբ մենք ցանկանում ենք, որ Սուրբ հոգին նստի մեր սրտի գահին, ապա մեր հին մեղավոր էությանը խաչին գամվելուց զատ այլ բան չի մնում: Այս անելով, մենք մեր անձն ենք ուրանում, մերժելով նրան տնօրինել մեր կյանքը և թույլ ենք տալիս, որ Սուրբ Հոգին ղեկավարի մեզ: **Սա կատարվում է կյանքում ոչ թե մեկ անգամ, այլ նաև պահանջում է ամենօրյա զարգացում:**

Լուսաբանում

Ճիշտ **Սխալ**





ՍՀ = Սուրբ Հոգի
ՀՄԷ = Հին Մեղավոր Էություն

6. Վերանայել **Կոչ Խորհրդածության \էջ 75-78\:**

Կրկնություն. Խորհրդածությունը ճշմարտությունը մեր ուղեղից դեպի մեր սիրտ է տեղաշարժում: Քանի դեռ ճշմարտությունը մեր սիրտ չի հասել, այն ոչ մի ազդեցություն չի կարող թողնել: Դրա համար **խորհրդածությունը էական դեր է խաղում ճշմարտությունը կիրառելու համար** (Հեսու 1:8):

- Երբեմն քրիստոնյաները ոչ այնքան հեռու են գտնվում իրական քրիստոնեական կյանքից, եթե միայն գլխի և սրտի միջև եղած հեռավորությամբ: Ինչո՞ւ: Որովհետեւ շատ ճշմարտություններ, որ կարծում ենք, թե սովորել ենք, դրանք միայն մեր ուղեղում են և չեն հասել մեր սիրտ: Սակայն բաղձալի պտուղը չի երևում միանգամից, և ճշմարտությունը մեր սիրտ է հասնում՝ մերը դառնալով միայն խորհրդածության շնորհիվ:
- **Օրինակ.** Դավիթն աղոթում էր Աստծուն Սուրբ Գրքի համարները որպես իր սրտի **ա**ղոթք, որը խորհրդածության էական մասն է: Այս սրտի աղոթքը Սաղմ. 60:10-12ում արտացոլում է իր **խ**որհումը եւ **պ**ատկերումը այն, ինչ Աստված ասել էր իրեն Հեսու 7:12 համարում:

Սուրբ գրային համարների խորհումն օգնում է ճանաչել Աստծուն:

7. Վերանայել **Աղոթքի կոչ-**ը \էջ 81-82\
Աշակերտներին **հիշեցնել**

- 1Թեսաղ. 5:16-18-ը ցույց է տալիս մեր աղոթքի վերաբերյալ Աստծո կամքի մի փոքրիկ մասը.
  - Միշտ ուրախ եղեք:
  - Անդադար աղոթեք:
  - Ամեն պարագայում գոհություն մատուցեք:
- Աղոթելը պետք է դառնա բնական, ինչպես շնչելն ու ուտելը:

- Հիսուսի յուրաքանչյուր ճշմարիտ աշակերտ պետք է ունենա աղոթքի ազդեցիկ կյանք:

Բացատրություն. Պատահական չէ, որ օգտագործում ենք **Մ**եծարել, **Խ**ոստովանել, **Գ**ոհանալ կամ **Խ**նդրել բառերն ըստ հերթականության: Այս հերթականությունը պահպանելու միակ նպատակն է հասկանալ, թե ինչպես մեր աղոթքի կյանքը կարող է դուրս գալ հաշվեկշռից, միաժամանակ օգնելով մեզ հասկանալու, թե ինչպես այն պահել հաշվեկշռի մեջ: Մեր աղոթքների 99%-ը հավանաբար կազմում են Աստծուն ուղված մեր աղերսանքները կամ խնդրանքները: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ խնդրել, բայց նաև ուսուցանում է մեծարել և գոհունակություն մատուցել Նրան, ինչպես նաև գիտակցելով խոստովանել մեր մեղքերն Աստծուն: Ի՞նչ եք կարծում, եթե մեր աղոթքների ավելի քան կեսը լիներ Աստծուն մեծարելը և գոհունակություն մատուցանելը, ինչպե՞ս կվարավեր Աստված:

Լուսաբանում. Որքան վիրավորական է ծնողի համար, երբ իր երեխան իրենից մշտապես ինչ որ բան է խնդրում ու երբեք նրա հանդեպ սեր կամ ջերմություն չի ցուցաբերում:

8. Կարդալ և քննարկել **Ամենօրյա Աստվածաշնչի Ընթերցման Նշումներ-ը \էջ 65-72\,** որոնք կատարվել են նախորդ շաբաթ:

- **Կիսվել** նշումներից մեկով:
- **Խորհել դրա շուրջ**
- **Պատկերել այն**:

Աշակերտներին հիշեցրեք, որ երբ ասում ենք պատկերել ինչ որ բան, ի նկատի չունենք, այն մեկնաբանել: Խնդրեք նրանց նկարագրել իրենց պատկերացումները՝ ասելով. «Այս նկարում ես տեսնում եմ»:

- **Աղոթել -** Այն հանձնել Աստծուն՝ **Խ**ոստովանելով, **Խ**նդրելով **Գ**ոհունակություն մատուցելով և **Մ**եծարելով Նրան: Ավարտելուց հետո քաջալերեք աշակերտներին:

Աստծո Խոսք կարդալը, նշումներ կատարելը և այդ նշումների շուրջ խորհելը կօգնի մեզ ճանաչել Աստծուն:

9. Կարդալ և քննարկել **Օգտակար Նշումներ \էջ 63**

Բացատրություն. Աստծո Խոսքը կարդալու ընթացքում լավ կլինի, եթե աշակերտներն իրենց առջև ունենան 63-րդ էջի վրա նշված չորս հարցերը: Դրա համար պետք է քաջալերել նրանց, այս հատվածը հաճախ վերանայելու համար:

10. Կարդալ և քննարկել **Կոչ Ամենօրյա Աստվածաշնչի ուսուցման \էջ 89-90\:**

Աշակերտներին **հիշեցրեք, որ** վաղվանից սկսած, հանգիստ ժամանակ տրամադրեն **«ուսուցում»** հատվածը կարդալու վրա:

- Այն ինֆորմացիան, որ Աստվածաշնչից ենք ստանում, մեր ուղեղում, պարզապես, որպես գիտելիք է մնում, քանի դեռ չենք խորհրդածել այն բաների շուրջ, ինչ կարդացել ենք:
- Խորհրդածությունը էական դեր է խաղում ճշմարտությունը կիրառելու համար: Խորհրդածության միջոցով Աստված կերպարանափոխում և ազատում է մեզ:

Աստվածաշնչյան դասընթացների ընթացքում բացահայտված ճշմարտությունների շուրջ խորհելը կօգնի մեզ ճանաչել Աստծուն:

11. Կարդալ, քննարկել եւ խորհել **Ո՞րտեղ ես Արժեք և Նշանակալիություն գտնում \էջ 44-46\:**

Բացատրություն. Երբ հասկանանք ինչու՞ ենք մենք արժեքավոր և նշանակալի, մեզ համար ավելի դյուրին կլինի մեր իսկ կյանքին Աստծո տեսանկյունից նայել:

Պատմություն Ամերիկայում մի հովիվ չէր կարողանում գիտակցել, թե ինչն էր դարձրել նրան նշանակալի: Երբ նա հինգ տարեկան էր, տղայի հայրը և հորեղբայրը սիրում էին դիտել նրան պարելիս: Նրանք հավաքվում էին և պարելու ընթացքում փող էին գցում նրա ոտքերի առջև: Թվում է դրանում բացասական ոչինչ չկար, սակայն վաղ տարիքից տղան սկսեց մտածել, որ նա կարող է նշանակալի լինել միայն այն ժամանակ, երբ ինչ որ բան է կատարում: Եվ այդ հետագայում իր կյանքի համար լուրջ խնդիր դարձավ:

- **Բացատրություն**
  - Մեր ծննդից երկու հազար տարի առաջ, երբ հնարավոր չէր մեր նշանակալիությունն ապացուցելու համար Հիսուս մեր մեղքերի համար մեռավ խաչի վրա, դրանով իսկ ապացուցելով, թե մենք որքան նշանակալի ենք նրա համար:
  - Այստեղ տեսնում ենք մի հրաշալի պատկեր: Մենք գիտենք, որ մեր մեջ արժանիքներ, արժեք կամ նշանակալիություն չունենք, սակայն որպես սիրո, շնորհքի և ողորմածության ապացույց Աստված կամեցավ, որ մենք լինենք գնահատված և նշանակալի: Նա ապացուցեց այդ ամենը մեր մեղքերի համար

գամվելով խաչին, մահանալով մեր փոխարեն: Ինչ հրաշալի է Աստված:

Լուսաբանում.

Այն թուղթը, որի վրա տպվում է թղթադրամը, չնչին արժեք ունի, սակայն երբ իշխանավորների կողմից այն արժեքավորվում է, այն դառնում է արժեքավոր: Նմանապես Աստված՝ ում պատկանում է ամբողջ զորությունն ու իշխանությունը, արժեքավորում է մեզ: Նա դարձնում է մեզ թանկարժեք, գնահատված և նշանակալի:

Եզրակացություն. թե ինչու ենք մենք նշանակալի

- **Աստված կամեցավ:** Դեռ սկզբից Նա ցանկացավ, որ մենք լինենք նշանակալի:
  - Եփես. 1:4 - *Ժամանակակից Նոր Կտակարան* Ռիչարդ Ֆրանս Վեյմաութ - «...Աշխարհի արարումից առաջ Նա Քրիստոսով ընտրեց մեզ որպես Իր սեփական ժողովուրդ...»
  - 2 Թեսաղ. 2:12 - «Աստված ի սկզբանե ընտրեց ձեզ փրկվելու Սուրբ Հոգով սրբվելով և ճշմարտությանը հավատալու»:

- **Աստված հաստատեց այն -** անցյալում, ներկայում և ապագայում:

  - **Անցյալ -** 2000 տարի առաջ Աստված ապացուցեց մեր արժեքը, գինը և նշանակալիությունը, տալով Իր միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որ մահանա խաչի վրա մեր մեղքերի համար:
    - Հովհ. 3:16 - «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ամեն ով որ Նրան հավատա՝ չկորսվի այլ հավիտենական կյանք ունենա»:

  - **Անցյալ, ներկա և ապագա -** Աստված հաստատում է մեր արժեքը, գինը և նշանակալիությունը իր սիրո Խոսքով:
    - Եսայ. 43:4-ը ապացուցում է, որ Աստված համարում է մեզ արժանի, գնահատված, նշանակալի և սիրում է մեզ,
    - «Քանի որ Իմ աչքերիս հաճելի եղար, պատվեցի քեզ և սիրեցի քեզ»: *Ռոթերհամ*
    - «Քանի որ իմ աչքերին արժանի եղար, ես քեզ պատվեցի և սիրեցի» *Հիմնական Անգլերենի Աստվածաշունչ*
    - «Այնքան գնահատված, այնքան պատված, այնքան սիրված...» *Կոնքս*

- Երկրորդ Օրինաց. 7:6-ը հաստատում է, թե ինչպես է Աստված վերագրում մեր արժեքը, գինը և նշանակալիությունը.
  - «Նրա թանկագին ունեցվածքը» *Մոֆաթ*
  - «Նրա թանկարժեք ժողովուրդը» *Թորա՝ Մովսեսի հնգամատյան:*

- **Անցյալ, ներկա և ապագա -** Աստված հաստատեց մեր արժեքը, գինը և նշանակալիությունն ապացուցելով, որ Նրա ծրագրերը բարի են մեզ համար:
  - Երեմ. 29:11 - «*Քանի որ գիտեմ այն ծրագրերը, որ պահել եմ քեզ համար, ասում է Տերը: Նրանք բարի են, այլ ոչ չար, որոնք հույս եւ ապագա կլինեն քեզ համար»:*

12. Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Հանձնարարություններին \էջ 245-246**:

Կարդալ: Ժամանակ տրամադրեք 245-րդ էջը դասարանում բարցրաձայն կարդալուն և համոզվեք, որ այն բոլորին է հասկանալի :

- **Քաջալերեք նրանց լինել հավատարիմ Աստծուն և ամեն օր հանգիստ ժամանակ հատկացնել Աստծո հետ առանձնանալու համար:**

13. Դասն ավարտեք աղոթքով:

Օրինակ՝ Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ և գոհություն մատուցել Աստծուն, ձեզ միաբանելու և ձեզնից յուրաքանչյուրի հետ առանձին խոսելու համար:

1. Դասն սկսեք Աղոթքով:

> **Օրինակ՝** Աշակերտներին խնդրեք ծնկի գալ ձեզ հետ միասին աղոթել և հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթել:

2. Տվյալ օրվա «Տնային հանձնարարությունների ստուգման» թերթիկների ներքևում աշակերտները նշեն իրենց աղոթքի ընկերոջ անունը: Ապա ստուգեք և ստորագրեք նրանց աշխատանքները: \էջ 275\:

> **Հաշվետվություն.** Ամեն օր աշակերտների տնային աշխատանքների ստուգումը վարժեցնում է նրանց Հռոմ.14:12 համարում սովորեցնող հաշվետվության սկզբունքներին:

3. Կարդալ **«Քանզի իմ նպատակն է ճանաչել Նրան»:** Աշակերտներից մեկին թույլ տվեք **պ**ատկերի այդ համարը և **ա**ղոթքով այն հանձնի Աստծուն: **Հիշեցրեք աշակերտներին կենտրոնանալ Հիսուսի վրա** *Եբրայ. 12:2:*

- Աշակերտներին թող այս մտքերը **գրեն** 9-րդ էջի վրա:
  - Ելից. 33:13 - Մովսեսի նպատակն էր ճանաչել Աստծուն:
  - Հովհ. 10:14 - Հիսուս ասաց, «Իմ ոչխարները ճանաչում են ինձ»:
- **Պատմություն:** *Պողոսի միակ նպատակը Հիսուսին ճանաչելն էր: Ինչպիսի՞ն է մեր վերաբերմունքը Հիսուսին ճանաչելու հարցում: Երբ մտածում եմ այդ մասին, ակամա հիշում եմ իմ երեք որսորդական շներին, որոնք իրենց բնավորությամբ բոլորովին տարբերվում էին մեկը մյուսից: Ըստ իս նրանք խորհրդանշում էին այն վերաբերմունքը, որոնք քրիստոնյաներն այսօր ունեն Հիսուսին, ճանաչելու, իրենց հոգևոր և Աստծուն ծառայելու կյանքի տեսանկյունից:*

  Նրանցից մեկը *«փոյնտեր» տեսակի մի շուն էր, որը մշտապես* ***որոշ հեռավորությունից հետևում էր ինձ:*** *Մեր միջև եղած հարաբերությունները ջերմ չէին, քանի որ իր տիրոջ նկատմամբ շունս որևէ հետաքրքրություն չուներ: Նա մշտապես առանձնանում էր և ինձ ոչ մի ուշադրության չէր արժանացնում, բացառությամբ իրեն հաճելի պահերի, երբ միասին գնում էինք որսորդության: Տեսնո՞ւմ եք որոշ նմանություններ որոշ քրիստոնյաների միջև:*

  Երկրորդը՝ *գերմանական կարճ մազերով «փոյնտեր» էր: Նա սիրում էր ինձ հետ* ***կարճատև խաղալ,*** *սակայն իր ժամանակի մեծ մասը անց էր*

կացնում ինձնից հեռու որոշ տարածության վրա: Երբ ինձ հաջողվում էր մեկ, թե երկու անգամ նրան շոյել և նա հեռանում էր: Նրան բացի «խփել և փախնել» փոխհարաբերությունից ուրիշ ոչինչ չէր հետաքրքրում: Նույնիսկ բակում, երբ ժամանակ ունեինք մեկս մյուսին ճանաչելու, նրան իրականում դա չէր հետաքրքրում: Այսպիսով մեր հարաբերությունը շատ մակերեսային էր և ոչ շատ նշանակալի: Տեսնու՞մ եք որոշ Քրիստոնյաների միջև նմանություն:

***Այս երրորդ** շունը փոքրիկ անգլիական «սեթեր» էր և մեր իսկական ուրախությունն էր: Նա մեզ շատ էր ուրախացնում: Երբ միասին որսի էինք գնում, նա ոչ միայն ուզում էր հոժար սրտով ծառայել ինձ, այլ անընդհատ իր սերն էր ցուցաբերում ինձ և ընտանիքի մյուս անդամներին: Նա կանգնում էր դռան մոտ և ինձ էր փնտրում, և երբ տեսնում էր ինձ, այնքան էր ոգևորվում, որ չէր կարողանում հանգիստ կանգնել: **Նա ապրում էր հանուն մեր միասին անցկացրած ժամանակի,** և մենք հրաշալի ժամանակ էինք անցկացնում: Ես ուրախ եմ ասելու, որ մեր կյանքի վրա ազդեցություն են ունեցել որոշ Քրիստոնյաներ, որոնք իրենց կյանքով եղել են Քրիստոսի հանդեպ ունեցած այսպիսի սիրո և նվիրվածության օրինակներ:*

Աստված սիրում է մեզ և մեր ընկերությանն է փափագում, բայց Նա մեզ այն չի ստիպում: Ժամանակն է հետևել այդ ընկերությանը:

Կրկնություն. Աշակերտների ուշադրությունը հրավիրեք 10-րդ էջին, թե ինչպես է համարը չորս կետերի բաժանվում:

- Թող որ նրանք ընտրեն համարի չորս կետերից մեկը և ամեն օր դրա մասին խորհեն:
- Այնուհետև լսեք, թե աշակերտներից մեկն ինչպես է **Խ**որհում, **Պ**ատկերում և համարի մի հատվածը աղոթքով Աստծուն հանձնում:

Նկատողություն. Երբեմն աշակերտները, երբ սկսում են ընտելանալ հոգևոր կարգ ու կանոնին, ինչպես օրինակ՝ Սուրբ Գիրք կարդալը, խորհելը, սերտելը, մտորելն ու աղոթելը, նրանք սխալմամբ սկսում են կենտրոնանալ ավելի շատ կարգ ու կանոնի, քան Հիսուսի և միայն Հիսուսի վրա: Արդյունքում, ոմանք շեղվում են ճանապարհից՝ և դադարում Աստծո համար արդյունավետ լինելուց: Դրա համար, յուրաքանչյուր շաբաթ մենք այս համարը կվերանայենք, որպեսզի.

1 **Պահենք մեր աչքերը Հիսուսի և միմիայն Հիսուսի վրա և** հիշենք, որ **մեր միակ նպատակը Նրան ճանաչելն է:**

2 Հիշենք, որ **կարգ ու կանոնը վերջնանպատակ չէ: Դրանք պարզապես Աստծո կողմից տրված միջոցներ են, որոնք**

օգնում են մեզ էլ ավելի լավ ճանաչել Հիսուսին: Մենք կիրառում ենք կարգ ու կանոնը, որպեսզի կարողանանք ճանաչել Նրան:

3 **Որպեսզի խորհենք այս համարի զորավոր ճշմարտությունների շուրջ,** որը կօգնի գրավոր խոսքին ներթափանցել մեր միտք և այնտեղից էլ շարժվի դեպի մեր սրտերը, **որպեսզի կերպարանափոխվենք Հիսուսի կերպարի համաձայն, դառնանք մի հայելի, որը կարտացոլի Տիրոջ փառքը:**

4. Կարդալ և քննարկել **Տնային Հանձնարարությունների Կրկնության Հարցեր \էջ 246\:**

Բացատրություն.

- Օգտագործելով 246 էջի չորրորդ հարցը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, որոնք Աստված սովորեցնում է նրանց:
- Թույլ տվեք աշակերտներից մեկը վկայի այն մասին, թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ կիսել Աստծուց ստացած ճշմարտությունները նրա հետ:

5. Քննարկել աշակերտների անցյալ շաբաթ կատարած **Ամենօրյա Աստվածաշնչյան Ընթերցման Նշումները \65-72\:** Նրանցից մի քանիսին առիթ տվեք՝

- **Խոսել** իրենց նշումներից մեկի մասին:
- **Խորհել** այդ մասին:
- **Պատկերել** այն:

  Հիշեցնել աշակերտներին, որ պատկերել ասելով նկատի չունենք, որ նրանք պետք է մեկնաբանեն այն: Խնդրեք նրանց սկսել իրենց պատկերացումները շարադրել պարզապես ասելով, **«Նկարում ես տեսնում եմ»:**

- **Աղոթել** «Մեծարելով», «Խոստովանելով», «Գոհանալով» և «Խնդրելով» Աստծուն իրենց անձնական աղոթքում:

  Բացատրել աշակերտներին, որ նրանք պետք չէ ասեն ձեզ թե ինչի համար կուզենային աղոթել, այլ պարզապես աղոթեն և այդ միջոցով դուք և խմբի անդամները առիթ կունենաք լսելու նրա աղոթքն առ Աստված:

Մեր Ամենօրյա Աստվածաշնչյան Ընթերցման Նշումների շուրջ խորհելը կօգնի ճանաչել Աստծուն:

6. Կարդալ և մանրամասն քննարկել Թույլ տուր, որ **Հիսուս Քրիստոս լինի մեր Կյանքի Տերը և Կենտրոնը:** Այս կարդալու ընթացքում պարբերաբար ընդհատեք՝ առիթ տալով աշակերտներին **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել:

էջ 91.

- էջի վերնամասում **գրել** - *Քրիստոնյայի կյանքում երկու ամենամեծ դժվարությունները՝*

1. Հավասարակշռություն - *Հավասարակշռության բանալին Քրիստոսակենտրոն լինելն է:*

Բացատրություն - Շատերը կարծում են *հավասարակշռությունը, դա իրենց ժամանակի բաշխումն է համապատասխանաբար ընտանիքի, աշխատանքի, եկեղեցու, հանգստի և այլնի միջև:* Աստծո համար հավասարակշռությունն ի հայտ է գալիս, երբ Քրիստոսը դառնում է մեր կյանքի կենտրոնը, իսկ մնացած ամեն բան պտտվում է Նրա շուրջ:

Լուսաբանում. Մի քանի տարի առաջ, եթե տանեիք ձեր ավտոմեքենայի անիվները ամրացնելու, ավտոմեխանիկը կհաներ ավտոմեքենայից անիվները և կտեղադրեր մի սարքի վրա: Առաջին բանը, որ նա պետք է աներ դրանք ամրացնելու համար, պետք է անիվները տեղադրեր տվյալ սարքի կենտրոնում: Այդպես է նաև քրիստոնեական կյանքում: Հավասարակշռությանը հասնելու համար չկա այլ միջոց, եթե ոչ միայն, Հիսուս Քրիստոսին մեր կյանքի կենտրոնում ունենալը, իսկ մնացած ամեն բան Նրա շուրջ պտտվելը: Եթե մեր կյանքում ամեն բան, դա կլինի ընտանիքը, աշխատանքը, եկեղեցին, հանգիստը, պտտվեն միայն Հիսուսի շուրջ, ապա դուք, որպես քրիստոնյա կգտնվեք հավասարակշռության հասնելու ճիշտ ճանապարհին:

2. Հետևողականություն - *Հետևողականության բանալին Քրիստոսի ղեկավարության ներքո լինելն է:*

Բացատրություն - Հետևողականության հասնում ենք, երբ **զիջում** ենք մեր կյանքի ղեկը Սուրբ Հոգուն և **ապրում** ենք իր վերահսկողության ներքո:

Մտածիր այդ մասին - Հիսուս հետևողական անմեղ կյանք ապրեց այս երկրի վրա: Նմանապես երբ Նա դառնում է մեր կյանքի ղեկավարը, մենք էլ պետք է չմեղանչենք: Մեր կյանքը

նման է մի հայելու, որն արտացոլում է կամ մեր հին մեղավոր էությունը կամ Քրիստոս, կախված այն բանից, թե ով է ղեկավարում մեր կյանքը:

- Պողոսը խոսելով հետևողականության մեր խնդրի մասին, վկայում է իր կյանքից ասելով,
  - Հռովմ. 7:15 - «Ես չեմ հասկանում թե ինչ եմ անում: Քանի որ անում եմ այն, ինչն ատում եմ, և չեմ անում այն, ինչը որ ես եմ ուզում»: Պողոսը պարզապես ասում է, որ երբ մեր կյանքի ղեկը Հիսուսի ձեռքերում չէ, անհնար է արտացոլել Քրիստոսին և ապրել հետևողական քրիստոնեական կյանքով:

- Մեր խնդիրն այն է, որ մենք շարունակում ենք խլել Աստծո ձեռքերից մեր կյանքի ղեկն այն ժամանակ, երբ արդեն հանձնել ենք ղեկը Նրան: Այդպես մենք մեղանչում ենք, որից Աստծո հետ մեր ընկերությունն է փչանում, մեր քայլերը անհետևողական են դառնում:
  - Մենք այս մասին մանրամասնորեն կխոսենք ավելի ուշ:

էջ 92.

- Առաջին պարբերության առաջին տողում նշված «Ես հոժարակամ զիջում եմ կյանքիս ղեկն Աստծուն» արտահայտությունը կանգնեցնում է մեզ մի շատ կարևոր որոշման առջև. Ո՞վ է լինելու այսօր իմ կյանքի տերը - ե՞ս, թե Աստված:

- Թույլ տվեք աշակերտներին Կողոս.1:15-19 համարի կողքին **գրել** հետևյալ մեջբերումները:

  - Հովհ. 5:23, Տիտոս 2:13, Փիլիպ. 2:6, Հովհ. 20:28, Կողոս. 2:9, Հովհ. 10:30, Հովհ. 1:3

Ինչո՞ւ Հիսուս պետք է լինի իմ Կյանքի Տերն ու Կենտրոնը \էջ 92, 97\:

էջ 93

- Ինչ որ մեկի Գ մասի բարձրաձայն կարդալուց հետո, պատմեք հետևյալ պատմությունը:

Պատմություն: 1 Կորնթ. 6:20 - « … Աստված բարցր գին վճարեց մեզ գնելու համար…»: Սա մի փոքր տղայի պատմություն է, ով ապրում էր մի մեծ լճի ափին: Տղան մի նավակ պատրաստեց և

ոգևորված գնաց լճի մոտ, այն դրեց ջրի վրա, որպեսզի տեսնի՝ ինչպես է լողում իր նավակը: Երբ նա դիտում էր, հանկարծ գետի մի ալիք նավակը ջրի մեջ խորտակեց և այն անհետացավ տղայի տեսադաշտից: Նա շատ տխրեց:

Մի քանի օր հետո, երբ գյուղում քայլելով անցնում էր մի խանութի կողքով, տեսավ է իր նավակը՝ դրված խանութի պատուհանին: Ոգևորված ներս մտավ և ասաց խանութի տիրոջը, «Պարո՛ն, պատուհանին դրված նավակն իմն է: Այդ ես եմ պատրաստել»:

Նա պատասխանեց. «Ցավում եմ, բայց ես վճարել եմ արդեն այդ նավակի համար մեկ այլ տղայի: Եթե ցանկանում ես կարող ես գնել այն»:

Տղան շտապեց տուն, վերցրեց իր փողը և վերադառնալով խանութ բռի մեջ պահած մետաղադրամները խանութպանին մեկնեց: Խանութի տերը վերցնելով առագաստանավը հանձնեց տղային: Տղան զգուշորեն առավ ձեռքերի մեջ և մոտենալով դռանը շշնջաց «Այժմ երկրորդ անգամ դարձար իմ նավակը: Ես պատրաստեցի քեզ և ինքս քեզ գնեցի»:

Սա մի հրաշալի պատկեր է, այն ինչ Հիսուս իրականացրեց մեր կյանքում: **Նա ստեղծեց մեզ և գնեց մեզ:**

էջ 94.

- Թույլ տվեք աշակերտներին **գրել** այս զորավոր աստվածաշնչյան համարների մեջբերումները:

  - Եսայի 45:22 համարի կողքին **գրել** հետևյալ մեջբերումը՝ Երկրորդ Օրինաց 7:9, որն ասում է, «… Քո տեր Աստվածը, Նա Աստված է»:

  - Հովհ. 10:30 համարի կողքին **գրել** հետևյալ մեջբերումները՝ Տիտոս 2:13, որն ասում է, «… մեր հրաշալի Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոս»:

էջ 95.

- Այս էջը կարդալուց հետո խնդրել աշակերտներից մի քանիսը **խ**որհեն, **պ**ատկերեն և **ա**ղոթեն Աստծուն այս համարների շուրջ:

- Խնդրեք աշակերտներին, նշումների աղյուսակի աջ մասում, որի կողքը լրացրել եք *հսկիչ* բառը, ներքևի մասում **գրել** 1Տիմոթ. 6:15 համարը:

  Աստված տիրում է ամեն բանի վրա զորությամբ: Դրա համար, ոչ մի բան չի կարող դիպչել մեր կյանքին, եթե միայն Աստված թույլ չտա: Եթե Աստված թույլ է տալիս, ապա խոստանում է, քանի դեռ մենք սիրում ենք Նրան և կանչված ենք Նրա նախասահմանության համաձայն, ամեն բան Նա կդարձնի բարու գործակից: *Հռովմ.8:28*

էջ 96.

- Խնդրել աշակերտներին 2 Տիմոթ. 2:13 համարի կողքին **գրել** այս արտահայտությունը՝

  Աստված պետք է իր խոստումը կատարի:

- Աստծո բնավորություններից մեկը հավատարմությունն է: Նա չի կարող հավատարիմ չլինել, քանի որ չի կարող ուրանալ Ինքն Իրեն: Դրա համար, Նա պետք է կատարի իր խոստումը: Կարող եք վստահ լինել դրանում:

- Մտածիր այն օրհնությունների մասին, քանզի Աստված հավատարիմ է: Եթե անգամ մենք 99.99 % հավատարիմ լինենք, սա կրկին նշանակում է, որ մենք այդպիսին չենք: Հավատարիմ նշանակում է 100% հավատարմություն և դա նշանակում է, որ Աստված անելու է, այն ինչ խոստացել է: Կարող եք վստահել Նրան:
- Խնդրեք աշակերտներին, էջի ներքևի մասում **գրել** հետևյալ արձանագրությունը՝

  Դրա համար, կյանքիդ ղեկն Աստծուն հանձնիր, բնակվիր Նրա մեջ և թույլ տուր, որ Նա դառնա կյանքիդ Տերը:

էջ 97.

- Խնդրել աշակերտներին Դ տառի կողքին **գրել** հետևյալ արձանագրությունը՝

Հավատքի կյանքը սա է՝ վստահել Աստծուն և ապրել Սուրբ Հոգու հսկողության ներքո:

- Խնդրեք աշակերտներին այս էջի ներքևի մասում **գրել** հետևյալ հարցերը՝

1. Թույլ կտա՞ս Հիսուս քո կյանքի Տերը ու կենտրոնը լինի այսօր:
2. Թույլ կտա՞ս Հիսուս դառնա քո կյանքի Տերն այսօ՛ր:

Աստվածաշնչյան դասընթացների ժամանակ սովորած ճշմարտությունների շուրջ խորհելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

7. Կարդալ, քննարկել և խորհել **Քաջալերվեցեք Տիրոջ մեջ \էջ 33-36\:** Հիշեցրեք հաճախ վերանայել և խորհել այս ճշմարտությունների շուրջ:

Բացատրություն: Երբ ավարտեք Չարլզ Սվինդոլի մեջբերումը, պատմեք հետևյալ պատմությունը:

Պատմություն: Տարիներ առաջ կոշիկի գործարանի մի վաճառականի ուղարկում են Աֆրիկա: Երբ վաճառականը նավից իջնում է, տեսնում է, որ այնտեղ բոլորը ոտաբոբիկ են: Նա անմիջապես հեռագրում է իր գործարանը և ասում, «Ինձ փող ուղարկեք, որպեսզի ետ վերադառնամ, քանի որ այստեղ ոչ ոք կոշիկ չի հագնում»: Այս մարդը տեսավ անհնար մի իրավիճակ:

Որոշ ժամանակ անց, նույն գործարանը ուղարկում է մեկ այլ վաճառականի Աֆրիկա: Երկրորդ վաճառականը իջնելով նավից տեսնում է բոլորին առանց կոշիկների են: Անմիջապես հեռագրելով կոշիկի գործարանը, ասում է, «Մի նավ կոշիկ ուղարկեք, որովհետև այստեղ ոչ ոք կոշիկ չունի»: Երկրորդ վաճառականը տեսավ հրաշալի մի հնարավորություն:

Երկու վաճառականներն էլ տեսան նույն բանը, սակայն մեկի համար այն անհնարին մի իրավիճակ էր, իսկ մյուսի համար՝ հրաշալի մի հանրավորություն:

- Մեր կյանքում անհնարին իրավիճակնե՞ր ենք տեսնում, թե՞ հրաշալի հնարավորություններ:
- Մենք բոլորս քաջալերվելու կարիք ունենք կյանքի որոշ պարագաներում: Դրա համար ասված է, «Քաջալերվեցեք Տիրոջ մեջ»:
  - Մենք կարող ենք քաջալերվել վերանայելով և խորհելով այս ճշմարտությունների շուրջ:
  - Մենք կարող ենք այս համարներով քաջալերենք մեր ընկերներին և նրանց, ովքեր ընկճվածության և հուսահատության մեջ են:

Կոչ: Քաջալերվեք, քանզի մեր շրջակայքը լցված է հրաշալի հնարավորություններով, որոնք վարպետորեն քողարկված են անհնարին իրավիճակների ետևում:

Եթե հաճախ մտածենք այս քաջալերական ճշմարտությունների շուրջ, այն կօգնի մեզ ճանաչել Աստծուն:

8. Աշակերտներին քաջալերեք ամեն առիթ օգտագործեն խոսելու մարդկանց Հիսուսի մասին և բաժնեկցել նրանց հետ այն, ինչ սովորեցնում է Աստված:

Բացատրություն: Մենք ցանկանում ենք օգնել աշակերտներին կյանքի յուրաքանչյուր հանգամանքներում և իրավիճակներում ազատ խոսել Հիսուսի մասին:

9. Աշակերտների ուշադրությանը հրավիրեք իրենց **Տնային Առաջադրանքներին \247-248\:**

Կարդալ: Բարձրաձայն կարդացեք 247-րդ էջը դասարանում և համոզվեք, որ բոլորին հասկանալի է:

Աշակերտներին քաջալերեք վաղ առավոտյան հանգիստ ժամանակ տրամադրել Աստծո հետ հաղորդակցվելու համար:

...Օ Աստված, Դու ես իմ Աստվածը: Ես կփնտրեմ Քեզ վաղ առավոտյան, ջանասիրաբար... *Սաղմ. 63:1*

10. Դասն ավարտեք աղոթքով:

Օրինակ՝ Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ և գոհություն մատուցել Աստծուն, ձեզ միաբանելու և ձեզնից յուրաքանչյուրի հետ առանձին խոսելու համար:

1.Դասն սկսեք Աղոթքով:

> **Օրինակ՝** Աշակերտներին խնդրեք ծնկի գալ ձեզ հետ միասին աղոթել և հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթել:

2. Տվյալ օրվա «Տնային աշխատանքի ստուգման» թերթիկների ներքևում աշակերտները նշեն իրենց աղոթքի ընկերոջ անունը: Ապա ստուգեք եւ ստորագրեք նրանց աշխատանքները: \էջ 276\:

3. Վերանայել **Իմ խոստումը Աշակերտ պատրաստելու համար \էջ 11\:**

> **Քաջալերանք.** Թույլ տվեք աշակերտներին, որ իրենք կատարեն և ամրագրեն իրենց ուխտն աշակերտելու վերաբերյալ, եթե իհարկե մինչ այդ դեռ չեն կատարել:
>
> - Դրանով աշակերտներն ավելի շահագրգռված կլինեն «Դեմ առ Դեմ» դասընթացներին մինչև վերջ մասնակցել
> - Ամենամեծ օրհնությունները կունենան այն աշակերտները, ովքեր կհաճախեն բոլոր դասերին և ամեն օր կկատարեն առաջադրանքները:

4. Կարդալ **Իմ Նպատակն է Ճանաչել Նրան \էջ 9-10\:** Թույլ տվեք, որ ինչ որ մեկը, **պ**ատկերի այս համարներից մի մասը և **ա**ղոթքով Աստծուն հանձնի **Մ**եծարելով, **Խ**ոստովանելով, **Գ**ոհանալով և **Խ**նդրելով Աստծուն, որպեսզի օգնի այդ հարցում: Աշակերտներին հիշեցնել կենտրոնանալ Հիսուսին / Եբրայերեն12:2/:

> **Ծրագիր:** Աշակերտներից մեկը մինչ բարձրաձայն կկարդա էջ 9-ը, խնդրեք նրանց անել հետևյալը՝
>
> - Փիլիպ. 3:10 համարում բոլոր **Նրան** և **Նրա** բառերը, վերցրեք շրջանակի մեջ:
> - Հետո խնդրել աշակերտներից մեկը բարձրաձայն կարդա Փիլիպ. 3:10-ը սակայն *Նրա* և *Նա* բառերը փոխարինել *Հիսուս* -ով:

- Հետո խնդրել աշակերտներից մեկը այս համարի մի մասի վերաբերյալ **խ**որհի, **պ**ատկերի և **ա**ղոթի, այն Աստծուն հանձնելով:

5. Կարդալ եւ քննարկել **Տնային Աշխատանքների Կրկնության Հարցեր \էջ 248\:**

Բացատրություն.

- Օգտագործելով չորրորդ հարցը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, որ Նա սովորեցնում է նրանց:
- Թույլ տվեք աշակերտներից մեկը վկայի այն մասին, թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ բաժնեկցել Աստծուց ստացած ճշմարտությունները մարդկանց հետ:

6. Քննարկել աշակերտների անցյալ շաբաթ կատարած **Ամենօրյա Աստվածաշնչյան Ընթերցման Նշումները \էջ 65-72\:** Նրանցից մի քանիսին առիթ տվեք՝

- **Խոսել** իրենց նշումներից մեկի մասին:
- **Խորհել** այդ մասին:
- **Պատկերել** այն:

  Հիշեցնել աշակերտներին, որ պատկեր ասելով նկատի չունենք այն մեկնաբանել: Խնդրեք նրանց սկսել իրենց պատկերացումները շարադրել պարզապես ասելով՝ **«Նկարում, ես տեսնում եմ»:**

- **Աղոթել** «Մեծարել», «Խոստովանել», «Գոհանալ» և «Խնդրել» Աստծուն, իրենց անհատական աղոթքով:

  Բացատրել աշակերտներին, որ կարիք չկա ասել թե ինչի համար կուզենային աղոթել, այլ պարզապես պետք է աղոթել և այդպես դուք և խմբի անդամները առիթ կունենաք լսելու նրանց աղոթքն առ Աստված:

Մեր Ամենօրյա Աստվածաշնչյան Ընթերցման Նշումների շուրջ խորհելը կօգնի ճանաչել Աստծուն:

7. Կարդալ և մանրամասն քննարկել **Հիսուս Քրստոս լինի մեր Կյանքի Տերը և Կենտրոնը \էջ 98-106\:** Այս կարդալու ընթացքում պարբերաբար կանգ առեք, առիթ տալով աշակերտներին **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել:

էջ 98.

Շատ կարևոր սկզբունք՝ Մատթ. 6:11-ը սովորեցնում է *ամենօրյա* կյանքով ապրելու սկզբունքը:

Ինչո՞ւ է Հիսուս մեզ սովորեցնում աղոթել, «Տուր մեզ այսօր մեր ամենօրյա հացը»: Ինչո՞ւ չի ասում տուր մեզ այս շաբաթ, այս ամիս, այս տարի կամ մեր ամբողջ կյանքի ընթացքում մեր հացը:

Պատասխան.

- Աստված կամենում է, որ մենք հասկանանք, որ Նա սիրում է մեզ և ցանկանում է վստահենք Նրան ամեն բանի համար ամեն օր: Նա միակն է, ով կարող է հոգալ մեր բոլոր կարիքները:
- Աստված ամեն օր մեր ընկերությանն է փափագում և Նա գիտակցում է, որ, եթե մեր ապաշխարության պահից մեզ տա այն ամենը, ինչի կարիքն ունենք կյանքում, ապա մեզանից շատերը ուղղակի այլևս չեն փնտրի Նրա ընկերությունը: Երկրի վրա մենք պարզապես չէինք ունենա այն լիարժեք կյանքը, որն ամեն օր ամեն բանի համար Հիսուսին վստահելով է:
- Աստծո նպատակը մեզ Ա կետից Բ կետը տեղափոխելը չէ կամ մեր այսօրվա վիճակից դեպի հասունություն: Նա ստեղծեց մեզ, որպեսզի վայելի մեզ հետ ընկերությունը, երբ քայլում ենք մեր այսօրվա վիճակից դեպի հասունություն: Սա օր առ օր, րոպե առ րոպե հարաբերություն է:

  Լուսաբանում: Հնարավո՞ր է փիղ ուտել: Այո՛- եթե այն ուտենք ժամանակին և մանր կտորներով:

  - Ինչպե՞ս ապրել հավատքի կյանքը: Ամեն օր քայլ առ քայլ:

  Հաստատում: Անհնարին ոչինչ չկա, նրանց համար, ովքեր վստահում են Աստծուն, ապրում են Նրա ղեկավարությամբ և կիրառում են Իր սկզբունքները:

  - Մենք պետք է սովորենք բաժանել մեր կյանքն ամենօրյա մասերի և ապա ապրենք ամեն օրը Հիսուսի համար:

Էջի ներքևում աղյուսակի մեջ, որտեղ պարունակում է բանաձևը, կան խորհելու արժանի **երկու կարևոր բառեր՝**

1 **Ուղղություն**

- Այստեղ, ուղղությունը չի նշանակում օրինակ՝ ավտոտեսուչի հրահանգները՝ «դու գնա այստեղ, իսկ դու այնտեղ»: Ոչ էլ տաքսի ծառայության դիսպետչերի տված ուղղությունն է, որ հեռախոսով վարորդին ուղղություն տալով ուղարկում է ինչ որ տեղ:
- Այստեղ նշված ուղղության տեսակը, նման է որսորդության ուղեկցողի կամ ճանապարհորդության ուղեկցողի, ով ուղղություն է տալիս առաջնորդելով և քայլելով մեզ հետ:
- Հիսուս մեզ ուղղություն է տալիս մնալով մեզ հետ: Նա երբեք չի լքում մեզ: *Եսայ. 41:10*

2. **Հաջողություն:**

- Չկա ավելի մեծ հաջողություն, քան **լինել ամեն օր, ամեն վայրկյան Աստծո կամքի կենտրոնում:**

էջ 99.

- Այս էջում տեսնում ենք ամենակարևոր սկզբունքներից մեկը, որ սովորեցնում է Աստծո Խոսքը:

  Սկզբունք - «Արդարը հավատքով կապրի»:

  - «… այն, ինչ արվում է առանց Աստծո հավանության համոզվածության, մեղք է»: *Հռովմ. 14:23*

    - Մենք պետք է ապրենք այն համոզմունքով, որ գիտենք, որ Աստված հավանություն է տալիս մեր այն մտքերին, վերաբերմունքին և գործողություններին, որոնք բխում են Նրա Խոսքից:

- Եթե Աստծո Խոսքում մի սկզբունք նշվում է նույնիսկ մեկ անգամ, նշանակում է այն շատ կարևոր է: Այս էջում Աստվածաշունչը հիշատակում է տվյալ սկզբունքը չորս անգամ: Այն պետք է, որ չափազանց կարևոր լինի Աստծո համար, որպեսզի մենք դա հասկանանք:

էջ 100.

- Երբ ինչ որ մեկը Հովհ.15:4-5 համարի վերաբերյալ պատասխան կտա, բացատրեք, որ *ոչինչ* բառը վերաբերում է այն փաստին, որ առանց Հիսուսի մենք անկարող ենք որևէ հավիտենական բնույթի բան անել: Մենք կարող ենք ազդել մարդկանց, բայց ոչ Աստծուն:

էջ 101.

- Հովհ.10:28 համարը կարդալուց և աղյուսակում Փ Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն պատասխանը լրացնելուց հետո, պատմեք հետևյալ պատմությունը:

  Պատմություն: Մի փոքրիկ տղա լողալով գնում էր դեպի գետի խորքը: Ջրի բարձրությունը մոտավորապես հասնում էր նրա գոտկատեղը: Հանկարծ անձրևի տարափ սկսվեց: Ափից կտորներ պոկվեցին և լցվելով գետը արագորեն բարձրացրին ջրի մակարդակը: Մանչուկը փորձում էր ափ հասնել, բայց ջուրը ծածկեց նրան և նա այլևս ի վիճակի չէր լողալ: Մի երիտասարդ, տեսնելով այս ամենը, նետվեց ջուրը: Գրկելով տղային նա լողաց դեպի ափ: Սակայն գետի հոսքը ուժգնանում էր և մակարդակը բարձրանում, ու այլևս անհնար էր լողալ և միաժամանակ մեկ ձեռքով պահել տղային: Այսպիսով նա ձեռքը այդ տղայից բաց թողեց և ասաց. «երբ քեզ մեջքիս դնեմ, բռնվիր իմ գոտիից»: Նա ամբողջ ուժով մինչև ափ հասնելը սկսեց լողալ: Այնտեղ տեսավ, որ փոքրիկ տղան իր հետ չէ: Ուժեղ հոսանքը քշել տարել էր փոքրիկին ջրի հատակը և նա խեղդվել էր:

  - Շնորհակալ եմ Տեր, որ իմ փրկությունը կախված չէ Քեզ ամուր բռնելու կարողությունից, այլ Դու խոստացար, որ բավական զորեղ ես, որպեսզի ինձ Քո ապահով բազուկների մեջ պահես:
  - Մենք ունենք հրաշալի և զորավոր Աստված, քանի որ երբ մենք խեղդվում էինք մեր մեղքերի մեջ, Նա եկավ մեզ փրկելու, և Նա չասաց. «Փորձությունները, դժվարությունները և անախորժությունները ձեր կյանքը կդարձնեն շատ դժվար, սակայն եթե Ինձանից ամուր բռնվեք միգուցե և կարողանամ ձեզ փրկել»:
    - Հիսուս ասաց, «*Ես նրանց հավիտենական կյանք կտամ և հավիտյան պիտի չկորսվեն, և ոչ ոք Իմ ձեռքից չի*

կարող նրանց հափշտակել» Հովհ.10:28:

- Եթե ինչ որ մեկը կամ ինչ որ բան կարող է խլել մեզ Աստծո ձեռքից, ուրեմն այդ բանն ավելի հզոր է, քան Աստված: Իսկ մենք գիտենք, որ Աստծուց հզոր չկա ոչ մի բան:

Հարց. Ի՞նչ տարբերություն կյանքի և լիարժեք կյանքի միջև:

Հրահանգներ.

- Պատասխանների արկղի ներքևում, որտեղ լրացրել եք Փ _Կ _ Թ_ ՈՒ Ն բառը, էջի ձախ կողմից դեպի աջ գծել ուղիղ մի գիծ:
- էջի աջ կողմում, գծի վրա գրել հետևյալը՝

Հովհ.10:10

- էջի աջ կողմում, գծի վրա նկարել մի սլաք՝ մեկը գծից դեպի վեր, մյուսը՝ ներքև:
- Դեպի վեր նայող սլաքի վերևում գրել՝

ԿՅԱՆՔ

- Դեպի ներքև նայող սլաքի ներքևում գրել՝

ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ

Օրինակ՝



Բացտրություն.

- Հիսուս ասաց, «Ես եկա, որ նրանք կյանք ունենան, և այն լինի ավելի լիարժեք» *Հովհ. 10:10:*
- Նրանք, ովքեր կհավատան Հիսուս Քրիստոսին փրկության համար, **կյանք** կունենան:
- Նրանք, ովքեր կվստահեն Հիսուս Քրիստոսին ամեն բանի համար, ամեն օր կունենան **լիարժեք կյանք:** Նրանք ամեն օր կվստահեն Հիսուսին փրկության, ազատագրության, զորության, մխիթարության, կարիքների, առաջնորդության և ներման համար:
- Քրիստոնյան վստահում է Հիսուսին **փրկության համար երեք ժամանակներում:**
  - **Անցյալ -** մենք **փրկվեցինք** մեր մեղքի պատժից:
  - **Ներկա -** մենք **փրկվում ենք** մեղքի զորությունից, եթե վստահենք Հիսուսին ամեն օր և զիջենք մեր կյանքի ղեկը Սուրբ Հոգուն:
  - **Ապառնի -** մենք **կփրկվենք** նույնիսկ մեղքի ներկայությունից, երբ հասնենք երկինք:

էջ 102.

- Երբ կարդաք Փիլիպ.4:19 համարը, խնդրեք աշակերտներին շրջանակի մեջ առնել *ամեն* բառը: Հետո պատմել հետևյալ պատմությունը՝

  Պատմություն. Գերի Սմալին երկու տարի շարունակ պայքարում էր բարկության դեմ, երբ վերջապես հաղթահարեց այն: Նա լրջորեն աղոթեց Աստծուն այս մեղքի համար, և վերջապես Աստված ցույց տվեց նրան այս խնդրի պատճառը: Նա իր կարիքները հոգալու համար մշտապես վստահում էր ինչ որ մեկին կամ ինչ որ բանին ավելի շատ, քան Աստծուն: Իսկ երբ կարիքները չէր բավարարվում, բարկանում էր: Աստված մի ծրագիր է դնում նրա մտքում, որպեսզի կարողանա ճիշտ վերաբերվել տվյալ հարցին և այդ պահից սկսում է կիրառել Աստծո ծրագիրը: Այժմ նա հաղթություն ունի բարկության վրա: Այն պահին, երբ նա զգում է, որ բարկանում է, պարզապես աղոթում է հետևյալ աղոթքը՝

Աղոթք --- «Տեր շնորհակալ եմ, որ գիտակցում եմ, որ բարկացած

եմ: Ես իմ կարիքները վստահում էի ինչ որ մեկին, փոխանակ պարզապես Քեզ վստահելու»:

- Այս աղոթքը օգտակար է կիրառել տարբեր պարագաներում: Դրա համար, եթե բարկությունը չէ ձեր խնդիրը, ապա պարզապես կարող եք *բարկություն* բառը փոխարինել մեկ այլ բառով: Եթե պայքարում ես վախի, մենակության, դառնության, լքվածության կամ այլ տեսակ մեղքի կամ խնդրի դեմ, պարզապես փոխարինիր *բարկություն* բառը տվյալ բառով:

էջ 103.

Բացատրություն.

- Տարիներ շարունակ Դեմ առ Դեմ-ի համահեղինակը կարդում էր Ղուկաս 17:5-9 համարները և մտածում, ինչո՞ւ Հիսուս չպատասխանեց աշակերտների սրտից բխած այս լրջամիտ հարցին: Հետո, մի օր նա հասկացավ, որ Հիսուս իրականում պատասխանել է իրենց հարցին՝ դաշտից վերադարձող ծառայի մասին պատմության միջոցով:

  Պատկերեք այդ տեսարանը --- Ծառան հոգնած, քրտինքի մեջ կորած, կեղտոտ, քաղցած ու ծարավ դաշտից տուն է վերադառնում: Նա իր կարիքները հոգալու, փոխարեն սկսում է իր Տիրոջ համար ճաշ պատրաստել և սպասվորություն անել:

  Պատասխանը պարզ է --- Եթե մենք հավատքի ավելի շատ կարիք ունենք, ապա պետք է **միշտ Աստծուն առաջին** տեղում ունենանք, եւ մեր հավատքը ավելի կաճի:

էջ 105.

- Երբ կարդաք և վերջացնեք երրորդ մասի առաջին պարբերությունը, կարդացեք հետևյալ պատմությունը՝

  Պատմություն: Մեղքը «Հիսուս Քրիստոսին մեր Կյանքի Տերը և Կենտրոնը, ինչպես նաև մեր կյանքի ղեկը նրան չհանձնելու ամենամեծ խոչնդոտը չէ միայն, որը նաև **միշտ շատ թանկ է արժենում:** Դկ. Ռ. Լի անունով հրաշալի մի քարոզիչ պատմում է այս պատմությունն իր «Մի օր կվճարես» հայտնի պատգամի մեջ: Նա Նյու Օռլեանում քարոզում էր ռադիոեթերով: Ամեն պատգամից հետո մշտապես մի զանգ էր ունենում, որով հեռաձայնողը կոպիտ եւ անպարկեշտ խոսքերով հարձակվում էր Դկ. Լիի վրա:

Վերջում ավելացնում էր ասելով, «Ձեզ հետ խոսում է կեղծված դատարանի թագավորը»:

Մի գիշեր, երբ Դկ. Լին արդեն պառկած էր մահճակալին, հիվանդանոցից զանգ ստացավ: Մի բուժքույր խնդրեց Դկ. Լիին գալ հիվանդանոց: Նա ասաց, «Այստեղ մի մահամերձ երիտասարդ կա: Նա խնդրեց, որ ձեզ հեռաձայնենք: Նա շարունակ միայն կրկնում է, որ ինքը «կեղծված դատարանի թագավորն է»: Դկ. Լին վեր կացավ, հագնվեց և անմիջապես գնաց հիվանդանոց:

Երբ հասավ հիվանդանոց, բուժքույրը զգուշացրեց նրան, «Չդիպչեք այդ մարդուն, որովհետև դեռ հայտնի չէ ինչպիսի հիվանդություն կարող է լինել»:

Երբ նա մոտեցավ մահճակալին, երիտասարդը հասկացրեց, որպեսզի մոտենա իրեն, քանի որ նա անկարող էր բարձրաձայն խոսել: Նա ասաց, «Դկ. Լի, այդ դուք եք շրջում ամբողջ երկրով մեկ խոսելով երիտասարդների հետ Հիսուսի մասին, այդպես չէ՞»:

Դկ. Լին պատասխանեց, «Այո՛»:

Երիտասարդը հազիվ լսելի ձայնով շշնջաց, «Ասա նրանց իմ անունից, որ սատանան վճարում է միայն կեղծ թղթադրամներ»: Այս խոսքերից հետո երիտասարդն առանց Հիսուսի և առանց հույսի, մեկնում է դեպի հավիտենականություն:

Լուսաբանում. Խոստովանել մեղքերը և հանձնվել Նրան:

- Չխոստովանված մեղքը Աստծուն հեռու է պահում մեր կյանքը վերահսկելուց: Դրա համար, **առաջին հերթին պետք է խոստովանենք մեր մեղքերը:**
- Ինչո՞ւ մեր մեղքերը խոստովանել, քանզի դրանով մենք նրա ընկերությունն ենք կորցնում:

  Բացատրություն. Սա հարմար առիթ է բացատրելու Աստծո հետ փոխհարաբերության և Աստծո հետ ընկերության միջև տարբերությունը:

  - Երբ մենք ընդունում ենք Հիսուս Քրիստոսին, որպես մեր Տեր և Փրկիչ, Աստված իր ապահով ձեռքերի մեջ է առնում մեզ, որտեղից ոչ ոք չի կարող մեզ խլել *Հովհ.10:28:* Մենք հավիտյան պատկանում ենք Աստծուն *Հովհ.1:12:* Աշխարհում ոչ մի զորություն չունի այդքան ուժ, որ կարողանա խլել մեզ Նրա

ձեռքերից, քանի որ Աստված ամենազորն է երկնքում և երկրի վրա *Մատթ. 28:18:* Այսպիսով, **փոխհարաբերության մեջ Աստված է պահպանում մեզ** մեր փրկության պահից *Հովհ. 5:24:*

- **Ընկերության մեջ, մենք ենք պահպանում Աստծուն:** Երբ մենք մեղանչում ենք, դրանով խզում ենք Աստծո հետ մեր ընկերությունը *Եսայ. 59:2:* Հիշեք, որ Աստված է, «կանչել քեզ "մեզ" Իր Որդու, մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետ ընկերության...» *1Կորնթ. 1:9:* Նա չի ցանկանում, որ այդ ընկերությունը խզվի: Դրա համար, երբ մեղանչում ենք, պետք է **անմիջապես խոստովանենք այդ մեղքը** *1Հովհ. 1:9* և կրկին հանձնենք մեր կյանքի ղեկը Աստծուն *Հռովմ.6:13:*

Լուսաբանում: Պատկերեք Աստծուն ձեռքերն առաջ պարզած: Աջ թևը խորհրդանշում է մեր փոխհարաբերությունը Աստծո հետ, իսկ ձախը՝ Աստծո հետ ընկերությունը: Իր աջ ձեռքում տեսնում ենք մեզ խաղաղ և ապահով հենված, քանի որ գիտենք, որ ոչ ոք չի խլի մեզ Նրա ձեռքից: **Մեր փոխհարաբերությունը ապահով է, քանի որ Նա է պահպանում մեզ:** Ընկերության մեջ տեսնում ենք Աստծո ձախ ձեռքը և մենք իբրև երեխաներ բռնել ենք Նրա մատները: Երբ մենք մեղանչում ենք, այդպիսով բաց ենք թողնում Նրա ձեռքը և հեռանում ընկերությունից: **Աստծո հետ մեր ընկերությունը ապահով չէ, այնպես ինչպես Աստծո հետ մեր փոխհարաբերությունը, քանզի ընկերության համար մենք ենք պատասխանատու և երբեմն ձախողվում ենք:**

Օրինակ.

- Մենք ունենք երկու որդի: Նրանք կարող են որոշել, որ ես չլինեմ նրանց հայրը: Այդպես կարող են դիմել դատարան և փոխել իրենց անունները: Կամ կարող էին ասել, որ ես նրանց հայրը չեմ: Սակայն *ես* այնուամենայնիվ մնում եմ նրանց հայրը, և ոչ ոք չի կարող փոխել այդ փաստը: Նույնիսկ անառակ որդին դեռևս իր հոր որդին էր *Ղուկ.15:11-32:* Նմանապես, երբ մենք **դարձանք Աստծո**

որդիները, մենք ընդմիշտ կմնանք Նրա որդիները *Հովհ.5:24:* **Սա փոխհարաբերության օրինակն է:**

- Իմ և իմ որդիների միջև **փոխհարաբերությունը** չի վերջանում, սակայն երբ նրանք ապստամբում են, դրանով մեր ընկերությունն է խզվում: Այնուամենայնիվ, խոստովանությանը հաջորդում է ներումը *1Հովհ 1:9:* Ինձ համար, որպես նրանց հայր, եթե նույնիսկ նրանց մեղքերը լինեն մուգ սև, երբ նրանք խոստովանում են և ներվում են, նրանք դառնում են ձյունի պես ճերմակ *Եսայ. 1:8:* Մեր ընկերությունը այսպիսով վերականգնվում է: **Սա ընկերության օրինակն է:**

- **Հաջորդ բանը, որ պետք է անենք, մեր կյանքի ղեկը Աստծուն հանձնելն է:** Ես անում եմ այսպես՝ ամեն առավոտ հանգիստ ժամանակ, պատկերացնում եմ նստած եմ ձիով հեծած մի կառքի մեջ: Ես օրն սկսել էի ձիավարի տեղում նստած՝ սանձափոկը ձեռքերիս: Հիսուսը նստած իմ կողքին: Ես տալիս եմ սանձափոկը Նրան և ասում, «Տե՛ր, այժմ հանձնում եմ սանձափոկը և կյանքիս ղեկը Քեզ, ղեկավարիր այսօրվա մնացած ժամերս: Խնդրում եմ դարձիր այսօրվա իմ Տերը»: Դուք կարող եք ձեզ տեսնել կամ կառքում նստած, կամ էլ ղեկը ձեռքներիդ: Ըստ այդմ կլինի ձեր ընտրությունը: Ընտրեք, որպեսզի Աստված լինի ձեր այդ օրվա Տերը:
- Ամեն օր ես նաև պատկերացնում եմ իմ կյանքի ղեկը Աստծուն տալը, ինչպես սրտումս կա մի գահ և մի խաչ: Այս երկու դիրքերն են, որ գոյություն ունեն մեր սրտերում և երկուսն էլ՝ իմ հին մեղավոր էությունը և Սուրբ Հոգին, ցանկանում են նստել գահին: Ամեն առավոտ, երբ ես արթնանում եմ, տեսնում եմ իմ հին մեղավոր էությանը նստած գահին: Հետո պատկերացնում եմ, որ ես իջնում եմ գահից և ասում, «Տե՛ր, այս պահին տալիս եմ իմ այսօրվա կյանքի ղեկը Քեզ, խնդրում եմ այսօր եղիր իմ կյանքի Տերը»: Այդ պահին Սուրբ Հոգին՝ Հիսուսի Հոգին, նստում է իր տեղում, այսինքն գահին: Երբ հոժարակամ զիջում եմ գահը Սուրբ Հոգուն, իմ հին մեղավոր էությանը մնում է միայն մեկ տեղ գնալ, որն է՝ խաչը: Այս անելով ես մերժում եմ իմ անձին ղեկավարելու կյանքս, և հանձնվում եմ Սուրբ Հոգու առաջնորդությանը: Սա է սովորեցնում Ղուկ. 9:23, որտեղ ասում է, «*Եվ ասաց նրանց, եթե մեկը ուզում է հետևել Ինձ, թող* ***ուրանա իր անձը,*** *վերցնի իր խաչը և գա Իմ հետևից*»:

- Այժմ պետք է քննարկել մեկ այլ հարց: Ես սկսեցի իմ օրը՝ տալով կյանքիս ղեկը Աստծուն, բայց ի՞նչ, եթե օրվա ընթացքում մեղանչեմ: **Երբ ես մեղանչում եմ, դա նույնն է, որ Աստծո ձեռքից խլում եմ սանձափոկը և վերադառնում եմ գահին, պահանջելով, որ ես լինեմ իմ կյանքի տերը:** Դրա համար պետք է անել երկու բան՝
    1. **Անմիջապես խոստովանել մեղքերդ:**
    2. **Տալ ղեկը կրկին Աստծուն:**

    - Մենք պետք է հիշենք, որ ոչ միայն պետք է ցանկանալ ներված լինել մեր մեղքերի համար, այլ նաև թույլ տալ, որ մեր կյանքի ամեն օրվա յուրաքանչյուր պահը Աստված ղեկավարի: Նա կանի, եթե միայն մենք ցանկանանք:

Աստվածաշնչյան դասընթացներում խոսված ճշմարտությունների շուրջ խորհելը կօգնի ճանաչել Աստծուն:

8. Կարդալ, քննարկել եւ խորհել **Ամենօրյա Խոստումի Հիշեցում** ճշմարտության շուրջ \էջ 31-32\:

Բացատրություն: 104 էջում մենք կոչ արեցինք կատարել **Ամբողջական Կյանքի Խոստում,** որը կատարվում է Հիսուս Քրիստոսին ձեր կյանքի կենտրոնում պահելով: Սակայն ամեն օր պետք է վերականգնել այդ խոստումը: Դուք կանեք այս կարևոր մասը ձեր ամենօրյա կյանքում, եթե կատարեք հետևյալ երկու բաները՝

1. **Դասարանում Ամենօրյա Խոստումի Հիշեցումը** վերանայելուց հետո տանը մի քանի րոպե տրամադրեք մտորելուն, **խ**որհելուն, **պ**ատկերելուն և Ձեր անձնական **ա**ղոթքով աղոթեք՝ հանձնելով այս ճշմարտությունները Աստծուն:
2. Ամեն օր, հանգիստ ժամանակ երբ կարդաք 31 էջը, այն կհիշեցնի ձեզ Աստծո բարությունը և ամենօրյա հոգատարությունը: Կարդացեք 32-րդ էջը և այն որպես ձեր անձնական աղոթք Աստծուն հանձնեք:

Օրինակ: Դասարանում բարձրաձայն կարդացեք 31 էջը և բացատրեք մեր նկատմամբ Աստծո բարությունն ու հոգատարությունը: Հետո, դասարանի առջև դուք, որպես առաջնորդ աղոթեք՝ 32 էջի ճշմարտությունները հանձնելով Աստծուն:

Այս ճշմարտությունների շուրջ մտորելն օգնում է ճանաչել Աստծուն:

9. Քննարկել **երկրորդ ամսվա համար Ամենօրյա Աստվածաշունչ Ընթերցման Կոչը,** \էջ 50\: Բոլոր 30 օրերի **Առաջին ամսվա Ամենօրյա Աստվածաշնչի Ընթերցման Կոչը** վերջացնելուց հետո Աշակերտներին քաջալերել սկսել այս կոչը:

> **Բացատրություն:** Այս պահից մենք օգնում ենք աշակերտներին, որպեսզի ամեն տարի ամբողջ Աստվածաշունչը կարդան:
>
> *Ամեն օր ամենամյա Աստվածաշունչ կարդալը և կարդացած ճշմարտությունների շուրջ խորհելը կօգնի մեզ ճանաչել Աստծուն:*

10. Քննարկել 51-62 էջերը **«Ամենօրյա Աստվածաշունչ Ընթերցելու Օրացույց»:** Բացատրեք այն օգտագործելու ձևը: Աշակերտները պետք է սկսեն այն ժամանակ, երբ արդեն ավարտել են **առաջին ամսվա Ամենօրյա Աստվածաշնչի Ընթերցումը:**

Բացատրություն.

- Աշակերտների համար այս օրացույցն հանդիսանում է մի գործիք, որը կօգնի նրանց մի տարի շարունակ Աստվածաշունչ կարդալ:
  - Ամեն անգամ կարդալով Աստվածաշնչից մի փոքրիկ հատված, մենք բացում ենք մեր սրտերը և թույլ ենք տալիս, որ Աստված խոսի մեզ հետ:
  - Հաջորդ առավոտ, անհատական աղոթքի ժամանակ, Սաղմոս 119-ը կարդալուց հետո, մենք կսկսենք ընթերցել Աստվածաշունչն ըստ **Ամենօրյա Աստվածաշնչի Ընթերցանության օրացույցի:** Եթե 119-րդ Սաղմոսը 10-րդ օրը վերջացնենք, մենք կսկսենք մեր աստվածաշնչյան ընթերցումն Ամենօրյա Աստվածաշնչի Ընթերցանության օրացույցով 11-րդ օրը:

11. Քննարկել Ամեն Օր Առակացից մեկ գլուխ կարդալու կարևորությունը:

Բացատրություն:

- Առակաց գիրքը լի է աստվածային իմաստությամբ:
- «Առակաց գիրքը մանրամասնորեն ներկայացնում է Աստծո հրահանգները ամենօրյա կյանքի խնդիրների վերաբերյալ: Այն սովորեցնում է ինչպես վերաբերվել Աստծո, ծնողների, երեխաների, բարեկամների և կառավարության հետ» «Քաղված *Բաց Աստվածաշնչից»:*

Ամեն օր Առակաց գրքից մեկ գլուխ ընթերցելը և դրա շուրջ մտորելը կօգնի մեզ ճանաչել Աստծուն:

12. Քաջալերել աշակերտներին, որպեսզի ամեն առիթ օգտագործեն վկայելու մարդկանց այն, ինչ Աստված սովորեցնում է իրենց:

Բացատրություն: Մեր նպատակն է օգնել աշակերտներին, որպեսզի կյանքի տարբեր ասպարեզներում առանց կաշկանդվելու կարողանան խոսել Հիսուսի մասին:

13. Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Հանձնարարություններին\249-250\:**

Կարդալ դասարանում. Բարձրաձայն ընթերցեք 249 էջը և համոզվեք, որ բոլորին հասկանալի էր այն:

- ***Աշակերտներին քաջալերել լինել հավատարիմ առ Աստված և ամեն օր հանգիստ ժամանակ տրամադրել հանդիպելու Նրան:***

14. Դասն ավարտեք աղոթքով:

Օրինակ՝ Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ եւ գոհություն մատուցել Աստծուն, ձեզ միաբանելու և ձեզնից յուրաքանչյուրի հետ առանձին խոսելու համար:

1. Դասն սկսեք Աղոթքով:

Օրինակ՝ Աշակերտներին խնդրեք ծնկի գալ, ձեզ հետ միասին աղոթել եւ հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթել:

2. Պահանջեք այդ օրվա «Տնային հանձնարարությունների ստուգման» թերթիկները: Ապա ստուգեք և ստորագրեք նրանց աշխատանքները: \էջ 277\:

Հաշվետվություն: «Տնային հանձնարարությունների» թերթիկների ամենօրյա ստուգումը աշկերտներին սովորեցնում է հաշվետվության կարևորությունը, ինչպես գրված է Հռովմ. 14:12: Այն նաև օգնում է առաջնորդներին տեսնել. արդյոք աշակերտները՝

- կատարու՞ մ են տնային աշխատանքները, կերտելով նոր ապրելաոճ, թե
- ձեր քաջալերանքի կարիքն ունեն:

3. Կարդալ **«Իմ նպատակն է ճանաչել Նրան»** \էջ 9-10\: Աշակերտներից մեկին թույլ տվեք **պ**ատկերի այդ համարը և **ա**ղոթքով այն հանձնի Աստծուն: **Հիշեցրեք աշակերտներին կենտրոնանալ Հիսուսի վրա** *Եբրայ. 12:2:*

Աշակերտներին խնդրել գրել հետևյալ մտքերը 9-րդ էջի վրա:

- Յերեմիա 9:23-24 --- "…*Բայց նա, ով պարծենում է, թող պարծենա, որ հասկանում և ճանաչում է ինձ…"*
- 2 Տիմոթեոս 1:12 --- "…քանի որ գիտեմ, ում եմ հավատացած…"

Հիշեցում: Ամեն շաբաթ կվերանայենք Փիլիպ. 3:10 երեք գլխավոր պատճառներով՝

1. **Որպեսզի մեր աչքերը կենտրոնանան Հիսուսին և** միայն Նրան, և հիշեցնի, որ **մեր միակ նպատակն է ճանաչել Նրան:**
2. Որպեսզի հիշենք, որ **կարգ ու կանոնը վերջնանպատակ չէ: Դրանք պարզապես Աստծո կողմից տրված միջոցներ են, որով կարող ենք ճանաչել Հիսուսին** խորապես, սերտ և

անձնապես փոխհարաբերությամբ: Կարգ ու կանոնները կիրառում ենք, որպեսզի կարողանանք ճանաչել Նրան:

3. **Որպեսզի մտորենք այս համարի զորավոր ճշմարտությունների շուրջ,** որը կօգնի շարժել այդ խոսքերը թղթից դեպի մեր մտքերը և հետո տեղափոխվի մեր սրտերի մեջ, **և դրա միջոցով կկերպարանափոխվենք Հիսուսի նմանությանը:**

4.Քննարկել **Հանձնարարության կրկնության Հարցեր** \էջ 250\:

Բացատրություն.

- Օգտագործելով 250 էջի 5-րդ հարցը, աշակերտներին հորդորեք, որ խոսեն մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, ինչ Նա սովորեցնում է իրենց:
- Որևէ մեկին առիթ տվեք վկայելու անցյալ շաբաթ ինչպես է վկայել մարդկանց Հիսուսի մասին կամ կիսել նրանց հետ այն, ինչ Աստծուց սովորել են:

5. Քննարկել **Քարոզի կամ Դասերի Նշումների** կիրառումը **\էջ 21-24**

Ինչո՞ւ է կարևոր աստվածաշնչյան դասընթացների և քարոզների ընթացքում նշումներ կատարելը:

Բացատրություն.

- Մեզանից շատերը, լավագույն քրիստոնյաներ դառնալու համար, շատ են լսել Աստծո Խոսքն ու պատգամները Բայց, քանի որ չենք կատարել որոշ գրառումներ դրանց վերաբեյալ և դրանց շուրջ չենք *Խորհել, Պատկերել և այն Աղոթքով Աստծուն չենք հանձնել,* սատանան գողացել է մեզանից այն հոգևոր օրհնությունները, որոնք մենք պետք է ստանայինք հոգևորապես աճելու համար:
- **Պատմություն:** Կորպորացիաներին աջակցող մի խոսնակ պատմում է, որ երբեմն մենք պատրաստ չենք օգտվելու մեզ ընծայված հնարավորություններից: Նա պատմում է, թե ինչպես է մի օր գնում եկեղեցի պատգամ լսելու: Նա նստում է և թուղթն ու գրիչը պատրաստ քարոզ է լսում: Հանկարծ նկատում է, որ իր շուրջ ոչ ոք թուղթ և գրիչ չունեն: Նա հասկանում է, որ *նրանք այնքան էլ ոգևորված չեն պատգամը լսելուն:*
- **Մենք պետք է գնանք եկեղեցի ակնկալելով Աստծուց, որ խոսի մեզ հետ:** Երբ Նա խոսում է, մենք պետք է պատրաստ լինենք գրառելու այն, ինչ Նա ասում է մեզ: Երբ մենք այն գրի առնենք, հետագայում հնարավորություն կունենանք դրանց շուրջ մտորելու: Երբ մենք *խորհում, պատկերում և աղոթում ենք,*

դրանով մենք այդ ճշմարտությունը մեր ուղեղից տեղաշարժում ենք դեպի մեր սիրտ, որտեղ կատարվում է այդ խոսքերի կիրառումը:

Երբ մենք լսելով Աստծո խոսքի պատգամը, գրառումներ ենք կատարում և մտորում ենք այն բաների շուրջ, ինչ Աստված ասաց մեզ, սա ևս օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

6. Կարդալ և քննարկել **Ամենօրյա Աստվածաշնչի Ընթերցման Նշումներ \65-72\,** որոնք կատարվել են նախորդ շաբաթ: Խնդրեք երկու կամ երեք հոգի՝

- **Ընթերցել** դրանցից մեկը:
- **Խորհել համարի շուրջ**:
- **Պատկերել այն**:

Հիշեցրեք աշակերտներին, որ երբ ասում ենք պատկերել ինչ որ բան, ի նկատի չունենք, որ նրանք պետք է այն մեկնաբանեն: Խնդրեք նրանց նկարագրել իրենց պատկերացումները ասելով, «Այս նկարում ես տեսնում եմ»:

- **Աղոթել -** Այն հանձնել Աստծուն՝ **մ**եծարելով, **խ**նդրելով **խ**ոստովանելով և **գ**ոհություն մատուցելով Նրան: Ավարտելուց հետո քաջալերեք աշակերտներին :

Երբ մենք լսում ենք թե Աստված մեզ ինչ է ասում, Աստծո խոսքը կարդալը, նշումներ կատարելը և այդ նշումների մասին խորհելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

7. Կարդալ և մանրամասն քննարկել **Հագեցնել Կյանքս Աստծո Խոսքով** \էջ 107-119\: Ընթերցման և քննարկման ընթացքում պարբերաբար կանգ առեք, աշակերտներին հնարավորություն տալով **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել:

էջ 107.

Աստծո զորությունը **լուսաբանելու** նպատակով 107 էջը կարդալուց հետո պատմեք հետևյալ պատմությունը:

> **Պատմություն 1.** Այս գրքի համահեղինակի հայր Դան Միլանը դպրոցական տարիքում ապստամբ մի անհավատ էր: Մի գիշեր պատրաստվում էր դուրս գնալ խնջույքի: Նրա մայրը մի հրաշալի քրիստոնյա էր: Նա

ծնկի եկած դռան առջև աղաչում էր նրան չմասնակցել մեղքով լի այդ խնջույքին, սակայն Դանը մոր վրայով անցնելով պարզապես շարունակում է իր ճանապարհը: Ճանապարհին տեսնում է մի գրախանութ և նրա աչքը զարնում է ցուցափեղկում դրված մի Աստվածաշնչի: Նա մոտենում է և սկսում կարդալ Առակաց 1:22-33 համարները: *Նշում՝ աշակերտներից մեկին խնդրեք բարձրաձայն ընթերցի այդ հատվածը:* Այդ համարը ընթերցելուց հետո Աստված խոսում է նրա սրտի հետ: Նա արձագանքում է Նրան և ստանում իր փրկությունը ճիշտ այնտեղ, որտեղ կանգնած կարդում էր Աստծո Խոսքը:

Ընկերները մոտենալով նրան ասում են, «Դե արագացրու՛, գնացի՛նք»:

Սակայն նա պատասխանում է, «Ո՛չ, ես տուն եմ գնում»:

Երբ նա վերադառնում է տուն և մտնում է առջևի սենյակ, լսում է ինչպես է մայրն իր առանձնասեյակում ծնկի եկած աղոթում իր համար: Դրանից հետո, շատ շուտ Աստված կանչում է նրան ծառայության, որպես հովիվ և ավետարանիչ:

Ինչպիսի հրաշալի պատմություն Աստծո Խոսքի և աղոթքի վերաբերյալ: Դան Միլանը մահացավ 1995 թ.ին 85 տարեկան հասակում, 65 տարի ծառայելով, որպես հովիվ, ավետարանիչ, իսկ թոշակի անցնելուց հետո, որպես՝ ժամանակավոր հովիվ:

Պատմություն 2. Այս պատմությունը պատմել է Գլորիա անունով մի երիտասարտ կին: Տեխասի և Մեխիկոյի միջև ընկած մի գյուղում ուժեղ ջրհեղեղ էր եղել: Այդտեղ ոչ մի քրիստոնյա չկար, բայց ջրհեղեղից հետո մի փոքրիկ մեքսիկացի տղա մի Աստվածաշունչ գտավ, որը հասել էր այդտեղ ջրհեղեղի հետևանքով: Ոչ ոք չկար, որ նրան բացատրեր, թե ինչ է գրված Աստվածաշնչում, բայց պարզապես այն կարդալով նա ապաշխարիվում է և Հիսուսին ընդունում է իր սրտի մեջ, որպես իր Տերն ու Փրկիչը: Նա ցանկանում է իր ազգի համար դառնալ միսիոներ: Այսպիսով, դպրոցն ավարտելուն պես ընդունվում է համալսարան և ապա մասնակցում սեմինարիաների: Այն ավարտելուց հետո վերադառնում է գյուղ, որպես իր ժողովրդի միսիոներ և իր ծառայությունների միջոցով շատերը ճանաչում են

Քրիստոսին: Գլորիան ասում է, «Այս պատմությունը ճշմարիտ է, քանի որ այդ մարդն իմ հայրն է»: Սա էլ մեկ այլ հրաշալի վկայություն էր Աստծո Խոսքի զորության վերաբերյալ:

Ինչո՞ւ պետք է սնվենք Աստծո Խոսքով: \էջ 108, դաս 2 - էջ 119\

էջ 109.

- Եսայի 40:8 --- «*Խոտը կչորանա, ծաղիկը կթառամի, բայց Աստծո Խոսքը հավիտյան պիտի մնա»:*

  - Այս համարը մի կարևոր հարց է բարձրացնում: Ի՞նչն է հավիտենական և կմնա հավիտյան: Երեք բաներ կան, որ Աստվածաշունչը հիշատակում է՝

    1. Աստծո Խոսքը, որ մնում է հավիտյան:
       - Եսայ. 40:8 - «…Մեր Աստծո Խոսքը կմնա հավիտենական»:
       - 1 Պետրոս 1:25 - «ԲԱՅՑ ԱՍՏՑՈ ԽՈՍՔԸ ԿՄՆԱ ՀԱՎԻՏՅԱՆ: Սա այն Խոսքն է, որ ավետիսի միջոցով քեզ է պատգամվել»:
       - Սաղմ. 119:89 - «Քո Խոսքը, ով Տեր, հավիտյան է…»:

2. Աստված հավիտենական է և կապրի հավիտյան:
   - Երկրորդ Օրինաց 33:27 - «Հավիտենական Աստված քո ապավենն է…»:
   - Սաղմ. 48:14 - «Քանզի այս Աստված մեր Աստվածն է հուր հավիտյան…»:
   - Տիտոս 2:13 - «…մեր մեծ Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոս…»:
   - Եբրայ. 13:8 - «… նույնը երեկ, այսօր և հավիտյան»:
   - Հայտ. 15:7 - «… Աստված, ով ապրում է հավիտյան»:

3. Մարդկանց հոգիներն անմահ են և կապրեն հավիտյան:

- Հովհ. 3:16 - «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ տվեց Իր միածին Որդուն, որպեսզի ով որ Նրան հավատա չկորսվի, այլ հավիտանական կյանք ունենա»:
- Մատթ. 25:46 - «Հետո նրանք կգնան հավիտենապես դատապարտվելու, իսկ արդարները կժառանգեն հավիտենական կյանքը»:

▪ Եսայ. 40:8 համարը նաև նշում է երկրի վրա կյանքի կարճատևությունը:

- Սաղմ. 90:10 - «Մեր կյանքի օրերը ... շուտով կվերջանան և կհեռանանք»:
- Սաղմ. 102:11 - «Օրերս ստվերի նման գնալով անէանում են, և խոտի պես չորանում»:
- Սաղմ. 103:15-16 - «Մարդու կյանքի օրերը նման են դաշտի ծաղկի, որ երբ հովը փչում է նա չորանում է, և նրա տեղը այլևս չի նշմարվում»:
- Հակոբ. 4:14 - «... քանզի, ի՞նչ է քո կյանքը: Մի գոլորշի, որ ինչ որ ժամանակ երևում է, իսկ հետո անհետանում»:

▪ Այպիսով սրանք փաստերն են՝

- Այս երկրի վրա մեր կյանքը արագ է ավարտվում:
- Մենք կամ կապրենք հավիտյան դատապարտությամբ՝ հավիտենապես մեռնելով, բայց երբեք մահացած չլինելով, կամ կունենանք հավիտենական կյանք՝ հավիտենապես մեր Տրիոջ և Ճշմարիտ հավատացյալների հետ երկնքում, որտեղ չի լինի այլևս ոչ տառապանք, ոչ վիշտ:
- Քանի դեռ այս երկրի վրա ենք մենք պետք է մի շատ կարևոր որոշում կայացնենք, որը հավիտենականության հարցում մեծ ազդեցություն կունենա մեր և շատ մարդկանց համար:

1. Մենք պետք է ընտրենք կամ հավիտենական դատապարտությունը, կամ էլ հավիտենական կյանքը: Այս որոշման հետևանքները հավիտյան են մնալու:

2. Մենք մեր կյանքը կարող ենք ներդնել այն բաների համար, որոնք ժամանակավոր են՝ օրինակ մեր սեփական եսակենտրոն ցանկությունները, կամ այն բաների համար, որոնք հավիտանական են: Հիշեք այն ինչ Աստվածաշունչն է ասնում՝ հավիտենանական է:

- **Աստծո Խոսքը հավիտենական է -** Մենք պետք է լցնենք մեր կյանքը Իր Խոսքով:
- **Աստված հավիտենական է -** Մենք պետք է ճանաչենք Աստծուն խորապես, սերտ և անձնապես: Սա պետք է լինի մեր հաստատուն նպատակը:
- **Մարդկանց հոգին հավիտենական է** - Մենք պետք է ավետենք մարդկանց Քրիստոսի մասին՝ դարձնելով նրանց ճշմարիտ աշակերտներ:

Լուսաբանում. Քո կյանքն այս երկրի վրա նման է անծայր գծի վրա նշված մի կետի: Այդ կետը երկրի վրա մեր կյանքի ժամանակահատվածն է: Այդ գիծը հավիտենականությունն է ներկայացնում: Մենք այնքան կարճ ժամանակ ունենք երկրի վրա, բայց նաև կարող ենք փոփոխություն մտցնել հավիտենականության մեջ, եթե կենտրոնանանք՝ տրվելով այն բաներին, ինչ հավիտենական է:

109 էջի ներքևում Գ, տառի աջ կողմում, աղյուսակի ձախ ծայրից դեպի աջ գիծ գծեք և այդ գծի վրա նշեք մի կետ: Ապա պատկերացրեք, որ այդ գիծն այդպես շարունակվում է թղթից դուրս գալով, և չի վերջանում: Այս կետը հավիտենականության հետ համեմատած նման է մի ակնթարթի: Բացահայտ տեսնում ենք, որ երկրի վրա կյանքը պարզապես նախապատրաստումն է հավիտենականության: Երկրի վրա կյանքը շատ կարճ է, դրա համար շատ կարևոր է, որ կենտրոնանանք այն բաների վրա, ինչ հավիտենական է, այլապես չէր կատարվի այն, ինչ Աստված նախատեսել է մեր կյանքի համար:

Նկար.Թղթի վրա այս տեսքն ունի՝

Նշում. Դուք պետք է երկարացնեք գիծը դեպի աջ և պատկերացնեք, որ այն այդպես շարունակվում է:

էջ 112.

- 1 Պետրոս 2:2 --- «*Նորածին մանուկների պես բանական ու անխարդախ կաթին փափագեցեք, որպեսզի նրանով մեծանաք»:*

Պատմություն. Միացյալ Նահանգներում բնիկ ամերիկացիների մեջ ծառայող մի միսիոներ վայրի ցեղի առաջնորդին դեպի Տերն է առաջնորդում: Մոտավորապես մեկ տարի անց միսիոները վերադառնում է ծերունուն այցելելու: Նա խնդրում է նրան պատմել իր մասին: Ծերունին պատասխանում է, «Ներսումս կարծես սև ու սպիտակ շներ անդադար կռվելիս լինեն»:

Միսիոները հարցնում է, «Լավ, իսկ նրանցից ո՞րն է հաղթում»:

Նա պատասխանում է, «Այն, որին ամենաշատն եմ կերակրում»:

- Մեր յուրաքանչյուրի ներսում տիրում է անվերջանալի հոգևոր պատերազմ՝ մեր հին, մեղավոր էության և նորի միջև: Մենք մեր նոր բնությունը պետք է կերակրենք և հագեցնենք Աստծո Խոսքով, այլապես ամենօրյա այս հոգևոր պատերազմում կպարտվենք:

էջ 113.

Բացատրություն. 113 էջի սխեման ցույց է տալիս, թե ինչպես է Աստված օգտագործում Իր Խոսքը մեր կյանքում: Այն ցույց է տալիս, որ եթե նույնիսկ մենք հեռանանք Նրա ճանապարհից, սակայն եթե մնանք Իր Խոսքի մեջ, Նա կխոսի մեզ հետ հանդիմանելով և ուղղելով մեզ, որպեսզի ետ դարձնի մեզ Իր ճանապարհին:

Նշում. Մեր պատասխանատվությունն է ուշադիր լինել, որպեսզի Աստծո ճանապարհից չշեղվենք: Մենք պետք է ամեն օր մնանք Աստծո Խոսքի մեջ, որպեսզի Նա կարողանա հոգալ մեր կարիքները՝ ճշմարտության ուսուցման, հանդիմանության, ուղղման կամ հրահանգների միջոցով, որը կօգնի մեզ հասկանալ ինչպես մնալ Իր ճանապարհին:

- Երբ Աստծո ճանապարհից շեղվում եք, ամենաարագ վերականգնումը կկատարվի, եթե վերադառնաք Իր Խոսքին և կիրառեք 5-րդ դասում սովորած սկզբունքները՝
  - Անմիջապես խոստովանել մեղքերդ:
  - Մեղքդ խոստովանելուց ամնիջապես հետո կյանքիդ ղեկը կրկին Աստծուն հանձնիր:
- Եթե կիրառենք այս պարզ սկզբունքները կտեսնենք, որ Աստծուց հեռացած պահերը, որի պատճառը մեղքն էր, ավելի կքչանան և էլ ավելի հազվադեպ կպատահեն:

Նկար. Թղթի վրա այն ունի այս տեսքը՝



- Թույլ տվեք աշակերտներին 113 էջի վրա 2 Տիմոթեոս 3:16 համարի աջ կողմի նշումների աղյուսակում նկարեն այս վերևի պատկերը: Ապա թույլ տվեք գրեն այս երեք բաները այդ պատկերի տակ:

1. **Ամեն օր մնալ Աստծո Խոսքի մեջ:**
2. **Անմիջապես խոստովանել մեղքերը:**
3. **Մեղքերը խոստովանելուց հետո անմիջապես հանձնել կյանքի ղեկը Աստծուն:**

էջ 116.

Բացատրություն. Հեսու 1:8 համարը հիանալի կերպով ցույց է տալիս, թե ինչպիսի դեր է կատարում մտորումը Աստծո Խոսքը կիրառելու դեպքում: Եթե մենք ցանկանում ենք կիրառել այն, մենք առաջին հերթին պետք է դրանց շուրջ մտորենք: *Մտորել* նշանակում է **խ**որհել այն բանի շուրջ, ինչ Աստված ասում է մեզ, ապա **պ**ատկերել այն և **ա**ղոթել դրա համար՝ մեր սրտի աղոթքի միջոցով հանձնելով այն Աստծուն: Քանի դեռ այդ խոսքերը որպես գիտելիք են, դրանք չեն կարող կիրառվել և այդպիսով փառավորել Աստծուն: Դրանք մեր սրտերում իրենց արդյունքը կտան միայն այն դեպքում, եթե այս ճշմարտությունները մտորման միջոցով հասնեն մեր սրտի մեջ:

էջ 117-118. Հույսով ենք Առակաց 2:1-10 համարը և այդ բանաձևը շատ կօգնեն աշակերտներին: Սա շատերի համար սիրելի հատված է: Այստեղ տեսնում ենք խոստացված օրհնությունները նրանց համար, ովքեր ջանասիրաբար փնտրում են Աստծո Խոսքը, հնազանդվում են Աստծուն և կատարում այն, ինչ ուսուցանում է Նա: Սա պայմանական մի խոստում է: Եթե անենք այն, ինչ Աստված ասում է, կունենանք այն, ինչ Նա խոստանում է:

Բացատրություն. Մենք ամեն օր պետք է լինենք Աստծո Խոսքի մեջ՝ փնտրելով և ակնկալելով, որ Աստված կխոսի մեզ հետ: Մենք պետք է փնտրենք Իր Խոսքն այնպիսի ջանասիրությանբ, ինչպես կորցրած փող կամ մի պահված գանձ ենք փնտրում:

Լուսաբանում. Եթե մենք ունենայինք մի քարտեզ, որտեղ ցույց են տրված պահված գանձերը և մեզանից պահանջվեր պարզապես վերցնել այդ քարտեզը և փնտրել գանձերը այնտեղ, որտեղ պահված է այդ գանձը, վստահ եմ, որ՝

- մենք անմիջապես կսկսեինք փնտրել, որպեսզի գտնեինք այն: Վստահաբար մեզ ոչինչ չէր կանգնեցնի:
- մենք կգնայինք մեծ խանդավառությամբ և ակնկալիքներով:
- մենք ամեն բան կզոհաբերեինք, որպեսզի անմիջապես գտնեինք այդ գանձը, որովհետև այն կլիներ մեր գերագույն նպատակը:
- Եթե այս ամենն ընդունակ ենք անելու երկրային գանձի համար, որը ժամանակավոր է, որքան ավելի պետք է խանդավառված լինել հոգևոր գանձի համար, որը հավիտենական է: Մտածեք այդ մասին:

Սահմանում.

- *Աստվածային իմաստություն*-ը, որը տեսնում ենք 118 էջի #1, Առակաց 4:11 համարը սահմանում է այսպես, «*Աստծո ճանապարհների և նպատակների ներըմբռնումը»:*
- *Հասկանալը- էջ118, #8* – ինչպես Առակաց 4:7 համարն է սահմանում, այստեղ նշանակում է “իմաստությամբ վարվել”, որը նույնն է, թե ինչպես կիրառել աստվածային իմաստությունը: *«Հին կտակարանի Եբրայերեն Բառարան» Ստրոնգի Աստվածաշնչի կատարյալ սիմֆոնիա, 20 էջ, 995 համար:*

Հուզող Լուր.

- Առակաց 2:9 - «Նա՝ Տերը, ցույց է տալիս ինչպես տարբերել ճիշտը սխալից, և ինչպես գտնել ամեն անգամ ճիշտ որոշումը»:
- Սա թվում է չափից շատ լավն է իրական լինելու համար: Ինչպե՞ս է այն հնարավոր: Պատասխանը Առակաց 2:10 –ում է, *«Քանի որ իմաստությունը և ճշմարտությունը մտնելով քո*

էության ամենախորքը կլցնեն կյանքդ ուրախությամբ»: Մտածեք այդ մասին:

- Հիսուս ճշմարտության մարմնացումն է: Հովհ. 14:6 --- *«Հիսուս պատասխանեց, "Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Ոչ ոք առանց ինձ չի կարող գալ Աստծու մոտ»:*

- Հիսուս իմաստության մարմնացումն է: 1 Կորնթ. 1:3 --- *«... Քրիստոս Հիսուս, ով Աստծո իմաստությունը դարձավ մեզ համար...»:*

- Հիսուս ուրախության մարմնացումն է: Սաղմոսերգուի միջոցով Սուրբ Հոգին խոսում է մեզ հետ՝ սովորեցնելով, որ Աստված հենց ինքն ուրախություն է - «*Աստծո խորանը կգնամ, Աստծո, որ իմ ուրախությունը և ցնծությունն է...» Սաղմ. 43:4*

- Այսպիսով, որն է բանալին որով կարող ենք տարբերել ճիշտը սխալից և ամեն անգամ ճիշտ որոշում կայացնել և ապրել ուրախ կյանքով: Պատասխանը շատ պարզ է: Իմաստությունը և ճշմարտությունը պետք է մտնեն քո էության ամենախորքը: Հիսուսն է իմաստության, ճշմարտության և ուրախության մարմնացումը: Դրա համար, երբ կիրառում եք Աստծո Խոսքի ճշմարտությունը և կյանքի ղեկը զիջում եք Հիսուսին, Նա դառնում է ձեր կյանքի կենտրոնը և ամեն բան պտտվում է միայն Նրա շուրջ: Երբ Նա՛ է ձեր կյանքի կենտրոնը, Նա՛ է վերահսկում ձեր կյանքը, դուք կկարողանաք տարբերել ճիշտը սխալից և ամեն անգամ ճիշտ որոշում կկայացնեք և այդպիսով կունենաք ուրախությամբ լեցուն կյանք:

- Մտածեք այդ մասին:

  - Երբ Հիսուս երկրի վրա էր, Նա միշտ կարողանում էր տարբերել ճիշտը սխալից և ամեն անգամ ճիշտ որոշում էր կայացնում: Եթե Նա ղեկավարի մեր կյանքը, նույնը կանի և մեզ համար:

Եզրահանգում. Այն, ինչ պետք է անենք՝ Աստծո Խոսքը ջանասիրաբար փնտրել, լսել Աստծուն, հնազանդվել Նրան և ընդունել մեզ համար պահված օրհնությունները: Արդյունքը

ոչ թե առանց դժվարությունների կյանքն է, այլ ուրախությամբ լցված կյանքը անգամ եթե այն դժվարություններով լի լինի:

Օրինակ. Մենք կարդում ենք Աստծո Խոսքը և բացահայտում ենք այն սկզբունքները, որոնք պատվիրում են մեզ, թույլ տանք Հիսուս Քրիստոս լինի մեր կյանքի կենտրոնում և լինի մեր Տերը, և տանք մեր կյանքի ղեկը Նրան: Մենք հնազանդվում ենք Աստծուն և որպես մեր կամքի դրսևորում սկսում ենք թույլ տալ Նրան, որ վերահսկի մեր կյանքերն ամեն օր: Հետո, երբ տեսնում ենք, որ Աստված է ղեկավարում մեր կյանքը, մենք սկսում ենք տարբերել ճիշտը սխալից և կայացնել ճիշտ որոշումներ: Երբ Նա չի վերահսկում մեր կյանքը, մենք մեղանչում ենք, ձախողվում և ընկնելով կորցնում ենք բոլոր օրհնությունները, որ նախատեսված էր մեզ համար:

- Եթե մեր սրտերի մեջ բնակվի Սուրբ Հոգին և եթե մեր կյանքի ղեկը տանք Աստծուն, մեր կյանքերը կլցվեն ուրախությամբ:
- Սուրբ Հոգու առաջնորդությամբ և ուրախությամբ լի կյանքը չի նշանակում, որ մենք այլևս որևէ խնդիր չենք ունենալու: Հիսուսին հավատալով ստանում ենք ուրախություն, քանի որ Հիսուսն է ուրախության մարմնացումը: Մենք ոչ միայն ուրախությամբ կհամակվենք, այլ նաև կկարողանանք տարբերել ճիշտը սխալից և ամեն անգամ կկարողանանք ճիշտ որոշում կայացնել:

Մենք Աստծուն ավելի ենք ճանաչում, երբ մտորում ենք աստվածաշնչյան դասընթացների ընթացքում սովորած ճշմարտությունների շուրջ:

8.Վերանայել **Կյանքի Գլխավոր Նպատակը** \էջ 12-13\

Բացատրություն Առաջնորդը պետք է վերանայի հեղինակի կողմից առաջնորդների ուղեցույցի 1ին մասում եղած այս թեման: Ապա աշակերտների հետ խոսեք այն հարցերի շուրջ, որոնք գտնում եք կարելի է վերանայել: Դուք շատ ժամանակ չեք ունենա, դրա համար, կարող եք ընտրել մի քանի հարցեր, որոնք կհիշեցնեն նրանց **Կյանքի Գլխավոր Նպատակը,** որը շատ կարևոր է:

9. Վերանայել **Ճշմարիտ Աշակերտի Երեք Կարևոր Բնութագրությունները** \էջ 19\:

Բացատրություն. Առաջնորդը պետք է վերանայի այս թեման առաջնորդների ուղեցույցի 2-րդ դասից: Ապա վերանայի աշակերտների հետ այն, ինչը կարծում եք անհրաժեշտ է շեշտել: Դուք շատ ժամանակ չեք ունենա: Դրա համար կարելի է հարցնել, «Ի՞նչ ցույց տվեց ձեզ Աստված այս բնութագրությունների մասին խոսելիս»:

10. Վերանայեք վերևում քննարկված ամեն բան, ինչ վերաբերվում է այս թեմային: Տեսեք արդյոք աշակերտները որտեղ ձեր օգնության կամ քաջալերանքի կարիքն ունեն:

Բացատրություն. Կարող եք պարզապես հարցնել մինչ այդ անցած որևէ թեմայի շուրջ արդյոք ունեն հարցեր:

11. Աշակերտներին հորդորել, որպեսզի ամեն առիթ օգտագործեն մարդկանց հետ կիսելու այն, ինչ սովորեցին Աստծուց:

Բացատրություն Մենք ցանկանում ենք, որպեսզի աշակերտները Հիսուսի մասին խոսելու համար կյանքի ցանկացած ասպարեզում լինեն ազատ:

12. Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Հանձնարարություններին** \էջ 251-252\

Կարդալ. Բարձրաձայն կարդալ էջ 251-ը դասարանում և համոզվեք, արդյոք բոլորին հասկանալի էր իրենց հանձնարարությունը:

Կարդալ դասարանում. Վաղ առավոտյան հանգիստ ժամանակ տրամադրելու երկու պատճառները՝

1. Հիսուս ցույց տվեց:

Վաղ առավոտյան, երբ դեռևս մութ էր, **Հիսուս արթնանում էր,** թողնում էր տունը, **գնում էր մի մենակյաց վայր, որտեղ և աղոթում էր:** Մարկ.1:35

2. Աստծո խոսքն ընդգծում է այն:

Փնտրել և **վաղ** բառերը Եսայի 26:9-րդ համարում, **վաղ** բառը Սաղմ. 63:1- ում եբրայերենում “**շաքար**” բառն է, որը նշանակում է **«վաղ առավոտյան ջանասիրաբար փնտրել»:**

Ստրոնգի Աստվածաշնչի Լրիվ Սիմֆոնիան, “Եբրայերենի և Չալդիի բառարան”, էջ 114, 7836 համար:

Դրա համար այս համարը կարելի է թարգմանել այսպես՝

… Ես ջանսիրաբար կփնտրեմ Քեզ վաղ առավոտյան… Եսայ.26:9

… Ով Աստված, Դու ես իմ Աստվածը: Ես ջանասիրաբար կփնտրեմ Քեզ վաղ առավոտյան… Սաղմ.63:1

13. Դասն ավարտեք աղոթքով:

Օրինակ՝ Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ և գոհություն մատուցել Աստծուն՝ ձեզ միաբանելու և ձեզանից յուրաքանչյուրի հետ առանձին խոսելու համար:

1. Դասը սկսեք Աղոթքով:

Օրինակ՝ Աշակերտներին խնդրեք ծնկի գալ, ձեզ հետ միասին աղոթել և հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթել:

2. Տվյալ օրվա «Տնային աշխատանքի ստուգման» թերթիկների ներքևում աշակերտները նշեն իրենց աղոթքի ընկերոջ անունը: Ապա ստուգեք և ստորագրեք նրանց աշխատանքները \էջ 278\:

Հաշվետվություն: «Տնային հանձնարարությունների» թերթիկների ամենօրյա ստուգումը աշկերտներին սովորեցնում է հաշվետվության կարևորությունը, ինչպես գրված է Հռովմ. 14:12: Այն նաև օգնում է առաջնորդներին տեսնել արդյոք աշակերտները

1. կատարո՞ւմ են տնային աշխատանքները՝ կերտելով նոր ապրելաոճ, թե
2. ձեր քաջալերանքի կարիքն ունեն:
3. Կարդալ **«Քանզի իմ նպատակն է ճանաչել Նրան»**

Թույլ տվեք աշակերտներից մեկը **պ**ատկերի այդ համարը և **ա**ղոթքով այն հանձնի Աստծուն: **Հիշեցրեք աշակերտներին կենտրոնանալ Հիսուսին** *Եբրայ. 12:2:*

Հիշեցում. Մենք ամեն շաբաթ կվերանայենք այս հատվածը երեք գլխավոր պատճառով՝

1. **Որպեսզի մեր աչքերը հառենք Հիսուսին** և միայն Հիսուսին, և հիշեցնի մեզ, որ **մեր նպատակն է ճանաչել Նրան:**
2. Որպեսզի հիշեցնի, որ **կարգ ու կանոնը վերջնանպատակ չէ: Նրանք պարզապես միջոցներ են, որոնք Աստված տվել է մեզ, որպեսզի ճանաչենք Նրան՝** ունենալով խորը, սերտ և անձնական փոխհարաբերություն: Կարգ ու կանոն պահելու մեր նպատակը Նրան ճանաչելն է:
3. **Որպեսզի խորհենք այս համարի զորավոր ճշմարտությունների շուրջ,** որը կօգնի գրավոր խոսքին ներթափանցել մեր մտքի մեջ և այնտեղից էլ շարժվել

դեպի մեր սրտերը, **որպեսզի կերպարանափոխվենք Հիսուսի նմանությամբ:**

4. Խնդրեք որևէ մեկին խոսել **Քարոզի կամ Դասերի Նշումների** մասին: **Խ**որհի դրանց շուրջ, **Պ**ատկերի, այն իր **Ա**ղոթքով Աստծուն հանձնի **\էջ 21-24**:

Կրկնություն.

- Լավագույն քրիստոնյաներ դառնալու համար մեզնից շատերը, շատ են լսել Աստծո Խոսքն ու պատգամները: Բայց, քանի որ չենք կատարել որոշ գրառումներ դրանց վերաբեյալ և դրանց շուրջ չենք ***Խ**որհել, **Պ**ատկերել և այն **Ա**ղոթքով Աստծուն չենք հանձնել,* սատանան գողացել է մեզանից այն հոգևոր օրհնությունները, որոնք մենք պետք է ստանայինք հոգևորապես աճելու համար:
- **Մենք պետք է գնանք եկեղեցի՝ ակնկալելով Աստծուց, որ կխոսի մեզ հետ:** Երբ Նա խոսում է, մենք պետք է պատրաստ լինենք գրառելու այն, ինչ Նա ասում է մեզ: Երբ մենք այն գրի առնենք, հետագայում հնարավորություն կունենանք դրանց շուրջ մտորելու: Երբ մենք մտորում ենք՝ ***Խ**որհում, **պ**ատկերներում և **ա**ղոթքով Աստծուն հանձնում,* մենք այս ճշմարտությունը մեր ուղեղից տեղաշարժում ենք դեպի մեր սիրտ, որտեղ կատարվում է այդ խոսքերի կիրառումը:

Երբ մենք լսելով Աստծո Խոսքը կատարում ենք գրառումներ և մտորում ենք այն բաների շուրջ, ինչ Աստված ասաց մեզ, այն օգնում է ճանաչել Աստծուն:

5. Կարդալ և քննարկել **Տնային հանձնարարությունների Կրկնության Հարցեր \էջ 252\:**

Բացատրություն:

- Օգտագործելով չորրորդ հարցը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, որ Նա սովորեցնում է նրանց:
- Թող աշակերտներից մեկը վկայի այն մասին, թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ կիսել Աստծուց ստացած ճշմարտությունները մարդկանց հետ:

6. Կարդալ և մանրամասն քննարկել Ինչպե՞ս **Հագեցնել Կյանքս Աստծո Խոսքով** /էջ 120-128/: Ընթերցման և քննարկամն ընթացքում պարբերաբար կանգ առեք՝ աշակերտներին հնարավորություն տալով **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել:

էջ 120.

- Բացատրել Ձեռքի լուսաբանումը - Դա ցույց է տալիս, թե ինչպես կարող ենք ամուր բռնել Աստծո Խոսքը: Դա ցույց է տալիս ինչպես «…ամուր բռնել Նրա պատգամները և ըստ այդմ ապրել»Հովհ.8:31
- Դա ցույց է տալիս այն չորս եղանակները, որով մենք Աստծո Խոսքն ընդունում ենք մեր մտքի մեջ՝ լսելով, կարդալով, ուսումնասիրելով և սերտելով:
- Բուք մատը, որ խորհրդանշում է մտորումը, էական դեր է խաղում Աստծո Խոսքը ամուր բռնելու հարցում, եթե լսենք, կարդանք, ուսումնասիրենք և սերտենք Աստծո Խոսքը առանց մտորման, շատ քիչ կամ ընդհանրապես ոչինչ չեք ըմբռնի Աստծո Խոսքից:
- Երբ ճշմարտությունը մեր մտքի մեջ է թափանցում և ապա մտորման միջոցով այն անցնում է մեր սրտի մեջ, մենք կարող ենք "ըստ այդմ ապրել", այլ կերպ ասած, "կիրառել" տվյալ ճշմարտությունը:
- Ինչպե՞ս ցույց տալ Ձեռքի լուսաբանումը:

1. Աստվածաշունչը պահել աջ ձեռքում: Ձախ ձեռքի ափը վեր պահած բացել: Աստվածաշունչն իր ծանրությամբ դնել ձախ ձեռքի ճկույթի վրա, որը ներկայացնում է լսելը: Ապա Աստվածաշունչը հեռացնելով ցույց տվեք, որ այդ փոքրիկ մատն անկարող էր պահել Աստվածաշունչը:
2. Հետո դնել Աստվածաշունչը այն մատների վրա, որոնք խորհրդանշում են լսելը և կարդալը: Առանց ջանքեր գործադրելու հեռացրեք Աստվածաշունչը ցույց տալով, որ կրկին այդ մատները անկարող են պահել Աստծո Խոսքը:
3. Հետո Աստվածաշունչը դնել, լսել, կարդալ և ուսումնասիրել ներկայացնող մատների վրա և հեռացնելով կրկին ցույց տվեք, որ նրանք անկարող են պահել Աստծո Խոսքը:
4. Հետո Աստվածաշունչը դնել լսել, կարդալ, ուսումնասիրել և սերտել ներկայացնող մատների վրա և դարձյալ հեռացնելով ցույց տվեք, որ նրանք անկարող են պահել Աստծո Խոսքը:
5. Ապա ետ վերադառնալով ճկույթից սկսած մինչև բուք մատը ներառյալ, որը ներկայացնում է մտորումը, ցույց

տվեք՝առանձին աշխատելիս ինչ է կատարվում յուրաքանչյուր մատի հետ:

6. Ապա ցույց տվեք ինչպես են բոլոր մատները միասին պահում Աստծո Խոսքը:

Երբ մենք սնում ենք մեր կյանքերը Աստծո Խոսքով՝ լսելու, կարդալու, ուսումնասիրելու, սերտելու և մտորելու միջոցով, այդ դեպքում կարող ենք ամուր բռնել Աստծո Խոսքը:

էջ 120-127.

- Երբ անցնեք այս էջին, որքան հնարավոր է հաճախ դադարներ առեք, որպեսզի առիթ տաք աշակերտներին մտորել դրանց շուրջ: Յուրաքանչյուր էջի համար թույլ տվեք առնվազն մեկ աշակերտ ընտրի մի համար և ապա դրա շուրջ **խ**որհի, **պ**ատկերի այն և **ա**ղոթի հանձնելով այն Աստծուն իր աղոթքով, քանի դեռ դուք և մնացածները լսում եք նրան:

  Հիշեցրեք աշակերտներին, որ պատկերել չի նշանակում այն մեկնաբանել: Խնդրեք նրանց խոսել իրենց պատկերացումների, մասին ասելով՝ «**Այս նկարում ես տեսնում եմ**»:

էջ 125, երկրորդ մաս.

- Աշակերտներին բացատրեք, թե որքան կարևոր է կյանքի նպատակի մեջ ներառել նաև Աստվածաշնչի լավ տիրապետումը:

  Պատմություն. Մեր շատ սիրելի ընկեր է.Ֆ. "քարոզիչ" Հալոկսը երիտասարդ ժամանակ իր կյանքում նպատակ դրեց տնօրինել Աստվածաշնչին, սակայն շուտով հայտնաբերեց, որ Աստվածաշունչն է տնօրինում իրեն:

  - Երբ Աստծո Խոսքը սկսի տնօրինել մեզ, այն կվերափոխի մեր մտքերը և սրտերը:
  - Աստված Իր խոսքի միջոցով ամբողջովին վերանորոգում է մեր մտքերը:

էջ 125-126, երրորդ մաս.

- **Առանց կարգ ու կանոնի հույս չկա, որ երբևէ մենք կդառնանք Աստծո ցանկացած ճշմարիտ աշակերտները:**
- 1 Կորնթ. 9:24-27-ը խոսում է կանոնավորված քրիստոնեական կյանքի մասին և ճշմարիտ աշակերտության վերաբերյալ որոշ ուղղություններ է տալիս:
  - 24 համարը - «... վազեցեք, որ հաղթեք»: Մենք պետք է մեր էության յուրաքանչյուր մաս վարժեցնենք հնարավորինս

լինել ամենալավ աշակերտը և թույլ չտանք՝ որևէ բան մեզ ետ պահի:

- 25 համար - Դու պետք է ինքդ քեզ շատ բաներում մերժես, որոնք քեզ քո լավագույնն անելուն կխանգարեն: Այն ինչ կարելի է ուրիշներին, մեզ չի կարելի և լավագույն աշակերտներ կարող եք դառնալ միայն Քրիստոսի միջոցով:

- *«…մենք անում ենք երկնային մրցանակի համար, որ երբեք չի կորչում»:*

  - Ի՞նչ պետք է անենք այս երկնային մրցանակները: Մենք դնելու ենք դրանք Հիսուսի ոտքերի առջև: *«Քսանչորս երեցները աթոռի առջև խոնարհվում ու երկրպագում էին հավիտյանս հավիտենից Ապրողին: **Իրենց թագերը աթոռի առջև ձգելով** ասում էին, "Արժանի ես, Տեր, փառք ու պատիվ և զորություն առնելու, քանի որ ամեն բան Դու ստեղծեցիր և Քո կամքով եղան ու ստեղծվեցին»* Հայտն.4:10-11:

  - Սա է հավիտենականության համար ներդնումը:

- 26 համար - «…*Իմ յուրաքանչյուր քայլը ուղղված է դեպի իմ նպատակը: Ես կռվում եմ, որպեսզի հաղթեմ: Ես պարզապես ստվերի հետ չեմ կռվում կամ ուղղակի խաղում»:* Այս ամենը խոսում է կարգ ու կանոնով դաստիարակված աշակերտի կյանքի մասին, որը լի է նպատակներով և բուռն ցանկությամբ ճանաչելու, սիրելու և ծառայելու Աստծուն:

- 27 համար - «…Բայց իմ մարմինս կճնշեմ, որպեսզի չլինի թե անի այն ինչ ուզում է, այլ այն, ինչ պետք է անի…»:

  - Սա պարզապես խոսում է այն մասին, որ Պողոսը թույլ չէր տալիս, որ իր մարմինը կառավարի իր կյանքը: Պողոսը պահել էր այդ գործը Սուրբ Հոգու համար:

    Լուսաբանում. Եթե մեր մարմինները ղեկավարեն մեզ, ուրեմն վաղ առավոտյան չենք արթնանա և ընծայի մեր թանկարժեք ժամանակը Աստծո հետ խաղաղության պահեր ունենալու համար: Ինչո՞ւ: Մեր մարմինները կասեն, «Անջատիր զարթուցիչը, շրջվիր ու նորից քնիր: Ես դեռ էլի կարիք ունեմ հանգստանալու»:

Գրի առեք նշումների աղյուսակում 1 Կորնթ. 9:24-27 համարների վերաբերյալ Յ.Բ.Ֆիլիպսի թարգմանության ընդհանրացումը.

1. **Նպատակադրվեք հաղթել:**
2. **Վարժվեք լրջորեն:**
3. **Եղեք հաստատակամ:**
4. **Կիրառեք կարգ ու կանոնը և ինքնամերժումը:**

էջ 127, չորրորդ մաս

- Սա կարևոր սկզբունքներից մեկն է, որ Աստծո Խոսքն է սովորեցնում: Ապրել այսօրվա կյանքով: Համոզվիր, որ այսօր քո սրտի մեջ Աստծո Խոսքից ինչ որ բան առար:
  - Սատանան մեզ դրդում է անընդհատ հետաձգել: Նա խորոմանկորեն մեզ համոզում է, որ այսօր Աստծո Խոսքը մեր կյանքում ընդունելը հիմարություն է: Նա քաջատեղյակ է, որ մենք նրա առաջարկությանը կառարկենք, դրա համար պարզապես մեր ականջներին նա շշնջում է ասելով, «Դա իրոք հրաշալի գաղափար է, բայց այսօր այնքան բան ունես անելու, և բացի այդ արդեն շատ ուշ է: Ինչո՞ւ չսպասես մինչև վաղը»: Մտածեք այդ մասին:

Աստվածաշնչյան դասընթացների ժամանակ սովորած ճշմարտությունների շուրջ մտորելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

7. Քննարկել **Աստվածաշնչի Ամենօրյա Ընթերցման Նշումներ-ը**, որոնք կատարել են անցյալ շաբաթ \էջ 65-72\: Խնդրեք երկու կամ երեք հոգի՝

- խոսեն իրենց նշումների մասին:
- **խ**որհեն այդ մասին:
- **պ**ատկերեն այն:
- **ա**ղոթեն՝ իրենց սրտի աղոթքով այն հանձնելով Աստծուն: Ավարտելուց հետո նրանց հորդորեք:

Եթե Աստծո Խոսքը կարդալով կատարենք որոշ գրառումներ, և ապա դրանց շուրջ մտորենք, այն կօգնի մեզ ճանաչել Աստծուն:

8. Կարդալ և քննարկել **Կոչ Աստվածաշունչ Սերտելու** \էջ 235\:
Բացատրություն. Եթե աշակերտները սերտեն և մտորեն այս համարների շուրջ, նրանք ավելի կամրապնդվեն հետևյալ ասպարեզներում.

- Վստահել Աստծուն ամեն բանում:
- Մնալ Քրիստոսի մեջ:
- Վկայել:
- Աստծո Խոսքը գնահատել:
- Խոստանալ Աստծուն:
- Քաջալերվել:
- Աստծո կողմից ղեկավարվել:

Եթե մենք մտորենք և սերտենք այս համարները, այն կօգնի ճանաչել Աստծուն:

9. Կարդալ և քննարկել **Սուրբ Գրքի Սերտողության Ծրագիր-ը** \էջ 236\:

Բացատրություն. Եթե գործեք ըստ ծրագրի, ծրագիրը կգործի:

- Սերտելու միջոցով տվյալ համարը մտնում է մեր մտքերի մեջ: Խորհելու միջոցով այն մտնում է մեր սրտերի մեջ և միայն այդ ժամանակ կարող ենք կիրառել մեր կյանքում:

Պատմություն. Անցյալում զարմանում էի, թե ինչու էի համարը սերտելուց մեկ շաբաթ հետո մոռանում այն: Հասկացա, որ բանալին պահված է 236 էջի 2-րդ մասի վեցերորդ հատվածում, որը քաջալերում է մեզ սերտելուց հետո անմիջապես վերանայել տվյալ համարը, մեջբերելով համարը, խոսքը և կրկին անգամ համարը 30 անգամ: Մեկ այլ եղանակ, որ կարող է օգնել, այն է երբ մարդկանց վկայելիս խոսեք համարների մեջբերումներով: Համարները կամ օգտագործում ենք, կամ մոռանում:

10. Քննարկել **Պատճառաբանություններ եւ Սուրբ Գրային Պատասխաններ** \էջ 237\:

Բացատրություն.

- Սրանք կարևոր համարներ են, որոնք պետք է անգիր անել: Այն կարելի է օգտագործել այն ժամանակ, երբ զրուցում եք մի աշխարհիկ մարդու հետ և նա ամեն պատճառաբանություն օգտագործում է, որպեսզի քրիստոնյա չդառնա:
- Դատարկ էջերը թողված են աշակերտների համար, որպեսզի գրի առնեն՝
  - Այնպիսի պատճառաբանումներ, որոնք թվարկված չեն այստեղ, սակայն նրանք լսել են այն անհավատներից, որոնք ամեն պատճառաբանություն օգտագործել են, որպեսզի քրիստոնյա չդառնան:
  - Այնպիսի Սուրբ գրային համարներ, որոնք տվյալ դեպքերին բնորոշ են:

- Այնպիսի Սուրբ գրային համար, պատասխան, որ հարմար է նմանատիպ յուրաքանչյուր պատճառաբանությունների համար, որ մարդը կբերի քրիստոնյա չդառնալու համար:
  - Ծովագնացության ծառայության հիմնադիր Դոուսն Թրոթմանը խոստացել է Աստծուն, որ միևնույն պատճառաբանումը չի լսի երկու անգամ: Երբ մեկ անգամ լսի տվյալ պատճառաբանումը, պատրաստ կլինի պատասխանել Աստծո Խոսքով և այն անգիր անել, որպեսզի մյուս անգամ այդ պատճառաբանմանը տա այդ Սուրբ գրային պատասխանը:

11. Քննարկել **Աստվածաշնչյան Համարների Սերտելու Ցանկը** \էջ 238\:

Բացատրություն.

- Երբ ավարտեն աստվածաշնչյան տվյալ հատվածը, 30 անգամ համարը խոսքը, և կրկին անգամ համարը մեջբերելը, խնդրեք աշակերտներին «Սերտողության Ամսաթիվ» –ի աղյուսակում գրել տվյալ օրվա ամսաթիվը:
- Դրա համար կպահանջվի ընդհամենը հինգից ութ րոպե, այդ համարը անգիր անելուց հետո 30 անգամ տվյալ հատվածն իր համարներով և խոսքերով կրկնելու համար:
  - Այս անելով մենք ներդնում ենք մեր ժամանակը, որով Աստված կարող է հետագայում օրհնել մեզ և ուրիշներին:
  - Այս համարներից մեկը կարող է օգնել ձեզ կամ ձեր ընկերներից մեկին, իրենց նեղության ժամանակ:

12. Աշակերտներին ցույց տալ Հովհ.5:24 և Հովհ.10:28 համարներն ինչպես գրել համարների համար նախատեսված քարտերի վրա:

Բացատրություն.

- Վերցնել աստվածաշնչյան համարների սերտողության համար նախատեսված մի մաքուր քարտ: Յուրաքանչյուր համար գրել առանձին քարտի վրա:
- Մի քարտի մի կողմում, մեջտեղի մասում գրել Հովհ.5:24 համարը:
  - Այս համարը նման է հասցեի:
- Վերցրեք քարտը, շրջեք այն հակառակ կողմը և գրեք այդ համարի խոսքերը քարտի հակառակ կողմի վրա:

- Դուք պետք է աստվածաշնչյան համարը գրեք քարտի մի կողմում, իսկ խոսքերը քարտի մյուս կողմում, որպեսզի երբ նայեք համարին, տեսնեք արդյոք կարող եք հիշել խոսքերը, և խոսքերին նայելով տեսնեք հիշու՞մ եք արդյոք տվյալ համարը:
- Կրկնել նույն հերթականությամբ, այս անգամ օգտագործելով Հովի.10:28 համարը:
- Անգիր անելուց հետո, երբ ավարտեք 30 անգամ տվյալ համարն իր խոսքերով կրկնելը, աստվածաշնչյան տվյալ համարի քարտի ներքևի մասում գրեք այդ օրվա ամսաթիվը:

Կարևոր է.

- Այս աստվածաշնչյան խոսքերը սերտելու և քարտերի վրա գրանցելու համար բավարար ժամանակ տրամադրեք, որպեսզի աշակերտները կարողանան ամբողջ շաբաթվա ընթացքում անգիր անել, երբ նրանք սպասում են ինչ որ մեկին, ավտոխցանման ժամանակ կամ ընդմիջման ընթացքում և այլն: Եթե չանեք այն դասերի ժամանակ, ապա սատանան աշակերտների համար բազմաթիվ արգելքներ կառաջացնի, և մինչ հաջորդ հանդիպում կդժվարացնի նրանց համար այն անգիր անելը:
- Հիշեք, որ անգիր անելով մենք այն հասցնում ենք մեր մտքերի մեջ, իսկ մտորելով այն անցնում է մեր սրտերի մեջ: Դրա համար, որքան հնարավոր է փորձեք շաբաթվա սկզբում այն անգիր անել, որպեսզի մինչ հաջորդ հանդիպում ժամանակ լինի դրա շուրջ մտորելու: Ինչո՞ւ է հարկավոր մտորել դրանց շուրջ: Որովհետև Աստված ցանկանում է դրանց միջոցով մեզ փոխի Իր նմանությանը:

Աստվածաշնչյան համարներ սերտելը և մտորելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

13.Աշակերտներին հորդորել ամեն առիթ օգտագործել, որպեսզի պատմեն մարդկանց այն, ինչ սովորել են Աստծուց:

Բացատրություն. Մենք ցանկանում ենք, որպեսզի աշակերտները Հիսուսի մասին վկայելու հարցում կյանքի ցանկացած ասպարեզում լինեն անկաշկանդ:

14.Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Տնային հանձնարարություններին:** \էջ 253-254\:

Կարդալ: Բարձրաձայն կարդացեք էջ 253 –ը դասարանում եւ համոզվեք, որ բոլորին հասկանալի էր:

- ***Աշակերտներին հորդորել, որպեսզի լինեն հավատարիմ Աստծուն և ամեն օր հանգիստ ժամանակ տրամադրեն Նրա:***

15. Դասն ավարտեք աղոթքով:

Օրինակ՝ Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ եւ գոհություն մատուցել Աստծուն, որպեսզի ձեզ միաբանի և ձեզնից յուրաքանչյուրի հետ առանձին խոսի:

1. Դասն սկսեք Աղոթքով:

Օրինակ՝ Աշակերտներին խնդրեք ծնկի գալ ձեզ հետ միասին աղոթել և հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթել:

2. Վերցրեք բոլորից տվյալ օրվա «Տնային աշխատանքի ստուգման» թերթիկները, ապա ստուգեք և ստորագրեք նրանց աշխատանքները: \էջ 279\:

Հաշվետվություն: «Տնային հանձնարարությունների» թերթիկների յուրաքանչյուր շաբաթվա ստուգումն աշկերտներին սովորեցնում է հաշվետվության կարևորությունը, ինչպես գրված է Հռովմ. 14:12 համարում գրված հաշվետվությունների սկզբունքներին:

3. Կարդալ **«Իմ նպատակն է ճանաչել Նրան»** /էջ 9/: Աշակերտներից մեկին թույլ տվեք **պ**ատկերի այդ համարը և **ա**ղոթքով այն հանձնի Աստծուն: **Հիշեցրեք աշակերտներին կենտրոնանալ Հիսուսի վրա** */Եբրայ. 12:2/:*

Հիշեցում. Ամեն շաբաթ Փիլիպ. 3:10 համարի վերանայման գլխավոր պատճառն է՝

- **Որպեսզի մեր աչքերը նայեն Հիսուսին** և միայն Հիսուսին: Եւ հիշեցնի մեզ, որ **մեր կյանքի նպատակն է ճանաչել Նրան:**

4. Խնդրել աշակերտներից մեկին **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել Աստծուն հանձնելով **Քարոզի կամ Դասերի Նշումների** իր գրառումները \էջ 21-24\:

Կրկնություն.

- **Մենք պետք է գնանք փառաբանության ծառայության՝ ակնկալելով Աստծուց խոսել մեզ հետ:** Երբ Նա խոսում է, մենք պետք է պատրաստ լինենք գրառելու այն, ինչ Նա ասում է մեզ: Երբ մենք այն գրի առնենք, հետագայում հնարավորություն կունենանք դրանց շուրջ մտորելու: Երբ մենք մտորում ենք՝ ***խ**որհում, **պ**ատկերում և **ա**ղոթում,* մենք այս ճշմարտությունը մեր գլխից տեղաշարժում ենք դեպի մեր սիրտ, որտեղ կատարվում է այդ խոսքերի կիրառումը:

Երբ մենք լսելով Աստծո Խոսքը կատարում ենք գրառումներ և մտորում ենք այն բաների շուրջ, ինչ Աստված ասաց մեզ այն օգնում է մեզ ավելի լավ ճանաչել Աստծուն:

5. Քննարկել **Տնային Աշխատանքների Կրկնության Հարցեր-ը** \էջ 254\:
Բացատրություն:

- Օգտագործելով 254 էջի չորրորդ հարցը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, որ Նա սովորեցնում է նրանց:
  - Թույլ տվեք աշակերտներից մեկը վկայի այն մասին, թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ կիսել Աստծուց ստացած ճշմարտությունները մարդկանց հետ:

6. Կարդալ և մանրամասն քննարկել **Կյանքս Հագեցնել Աղոթքով** \էջ 129-135\: Ընթերցման և քննարկման ժամանակ պարբերաբար դադար առեք և աշակերտներին առիթ տվեք, որպեսզի **խ**որհեն, **պ**ատկերեն և **ա**ղոթեն դրանց շուրջ:
Ինչո՞ւ հագեցնեմ կյանքս աղոթքով \էջ 130\, մաս 2-րդ:

էջ 130.

- Երեմիա 33:3 համարն ասում է, «Կանչիր ինձ և Ես կպատասխանեմ քեզ, և ցույց կտամ մեծ ու զորավոր բաներ, որոնք դու չես տեսել»:

> **Պատմություն.** Ես աշակերտում էի մի հովվի և Ռումինիայում իր եկեղեցու մի փոքր խումբ տղամարդկանց: Մի օր հովիվը հարցրեց ինձ, կցանկանա՞մ լսել, թե ինչպես է Աստված մի մարդու միջոցով, որին կանվանենք Ջոյ, սկսել նոր եկեղեցի հիմնել: Ես անհամբեր ուզում էի լսել նրա մասին և նա սկսեց պատմել այս պատմությունը:
>
> Մի օր Ջոյի ընկերներից մեկը հուսահատ զանգահարում է նրան: Այդ աթեիստ ընկերոջը կանվանենք Մայք: Անցյալում Մայքն Աստծո հետ ոչ մի առնչություն չուներ և միշտ ծաղրում էր Ջոյին իր հավատքի համար: Բայց այդ օրը նա հուսահատված էր: Մայքը կորցրել է իր պայուսակը, որի մեջ պարունակում է այնպիսի անհատների տվյալներ, որոնք եթե բացահայտվեին ապա լուրջ խնդրի առջև կկանգներ: Նա ողջ օրը փնտրել էր և չէր գտել: Վերջապես որոշեց զանգահարել Ջոյին, որպեսզի միասին փնտրեն այն վայրերում, որտեղ նա քայլել էր այդ օրը: Շուտով մթնեց և նրանք դադարեցին փնտրել: Մայքը հուսահատ խնդրեց Ջոյին մինչ հրաժեշտ տալը աղոթի Աստծուն, որպեսզի գտնեն

իր պայուսակը: Ջոյն ասաց, «կաղոթեմ եթե խոստանաս, որ ինձ հետ կգաս եկեղեցի, եթե Աստված ետ վերադարձնի քո պայուսակը»: Մայքը համաձայնվում է և գնում է տուն: Իր տունը Բուխարեստից, որտեղ կորցրել էր իր պայուսակը, մոտ մեկ ժամ հեռավորության ճանապարհ էր:

Ջոյն աղոթեց այդ գիշեր, որ Աստված թույլ տա Մայքին գտնելու իր պայուսակը: Հաջորդ առավոտ մի կին, ձեռքին մի պայուսակ թակում է Մայքի տան դուռը: Նա ասում է, որ վաղ առավոտյան փողոցի մարդաշատ մի մասում գտել է այս պայուսակը: Բուխարեստի բնակչությունը կազմում է երեք միլիոն: Փողոցները լի են հազարավոր մարդկանցով և գնչուները հայտնի են իրենց գողությամբ: Ջոյը և Մայքն անցյալ գիշեր այդ նույն վայրում եղել էին, սակայն ոչինչ չէին գտել: Աստված հրաշքով վերադարձնում է պայուսակը Մայքին:

Մայքը կատարեց իր խոստումը և Ջոյի հետ հաճախեց եկեղեցի: Մայքը գտավ իր փրկությունը և իր քաղաքի մարդկանց սկսեց եկեղեցի առաջնորդել: Նա շարունակ մարդկանց առաջնորդեց եկեղեցի, միչև մի օր նա ասաց, «Հովի՛վ, ես չգիտեմ ինչ անել: Մեր քաղաքից երկու մեքենա լի մարդկանցով գալիս ենք եկեղեցի և դեռ մեկ այլ մեքենայի կարիք էլ ունենք»: Հովիվն ասում է Մայքին, որ նրանց եկեղեցին արդեն պատրաստ է մեկ այլ եկեղեցի հիմնելու և արդեն որոշել էին որտեղ է լինելու այն, սակայն նրանք կհետաձգեն այդ եկեղեցու հիմնումը և մի նոր եկեղեցի կհիմնեն իր քաղաքում: Նրանք փոխում են իրենց պլանները և հիմնում են եկեղեցի այնտեղ, որտեղ Աստված արդեն պատրաստել էր: Երբ գնացինք Ռումինիա, այդ նոր եկեղեցին արդեն մեկ տարի էր ինչ գործում էր: Նրանք մկրտել էին տասնչորս մարդու և մոտավորապես հիսուն մարդ հաճախում էր եկեղեցի:

Ինչո՞ւ հագեցնել մեր կյանքերը աղոթքով: Որովհետև, երբ մենք աղոթում ենք Աստված զորավոր բաներ է անում:

էջ 130.

Բացատրություն. Հովհ.14:14 համարն ասում է, «Եթե իմ անունով որևէ բան խնդրեք Ես կկատարեմ»:

- Ի՞նչ է նշանակում *իմ անունով:*
  - Աղոթել Հիսուսի անունով չի նշանակում աղոթքը վերջացնել ասելով, “Հիսուսի անունով”, չնայած ոչ մի սխալ բան չկա դրա մեջ, եթե այն սրտանց եք ասում: Ես կարծում եմ, մենք աղոթում ենք Հիսուսի անունով, երբ գիտակցում ենք, որ արժանի չենք անմիջապես Աստծուց ստանալու, բայց արտոնություն ունենք Հիսուսի միջոցով, քանի որ Նա մահացավ մեր մեղքերի համար: Դրա համար կարող ենք Աստծո ներկայության մեջ մտնել քաջությամբ և միևնույն ժամանակ խոնարհությամբ: Մենք չենք ներկայանում մեր անունից, այլ Նրա Որդու անունից, հիշելով այն, ինչ արեց մեզ համար խաչի վրա:

Լուսաբանում. Այս երկու օրինակից, որո՞վ ավելի հետաքրքրված կլինեք օգնելու:

1 Օրինակ - Եթե մեկը փողոցում մոտենա ձեզ և խնդրի ձեզանից հսկայական գումար:

2 Օրինակ - Մեկ այլ մարդ մոտենա ձեզ և ասի, «Ես ձեր որդու ընկերն եմ: Ես լուրջ խնդիր ունեմ և այդ մասին արդեն ասել եմ ձեր որդուն: Նա ասել է, որ եթե ձեզ դիմեմ և բացատրեմ իմ խնդիրը դուք ինձ կօգնեք»:

Այս երկուսից ո՞ւմ շահագրգռված կլինեք օգնելու: Այն մեկին, ով եկել էր ձեր որդու անունից:

էջ 131.
Բացատրություն. Փիլիպ. 4:6 համարն ասում է, «**Ոչ մի բանի համար մի մտահոգվեք,** այլ ամեն բանի մեջ աղոթքով ու աղաչանքով, գոհությունով մեկտեղ ձեր խնդրանքը հայտնեցեք Աստծուն»:

- Այստեղ տեսնում ենք մի շատ կարևոր սկզբունք - **Մի մտահոգվեք որևէ բանի համար: Աղոթեցեք ամեն բանի համար:**
  - Մտահոգությունը մեղք է, քանի որ այն ցույց է տալիս Հիսուսի հանդեպ մեր հավատքի և վստահության պակասը:
  - Շատ դեպքերում, մտահոգությունները գալիս են մեր սխալ ըմբռնումից:

Պատմություն. Հաճախ գարնանը մի զույգ տատրակ մեր այգում գալիս և բույն են դնում: Երբեմն տատրակ

թռչունը, որը չափազանց տերիտորյալ է, պատուհանի ապակու մեջ սեփական արտացոլումը տեսնելով՝ անդադար հարձակվում է պատուհանին, փորձելով իր տարածքից դուրս հանել իր իսկ արտացոլանքը: Մի տարի նա այնքան էր մտահոգված և վախեցած, որ նա սպանեց ինքն իրեն պատուհանի վրա անվերջ հարձակվելով: դեռ լույսը չբացված նա սկսում է հարձակվել պատուհանի վրա: Հետո վերադառնալով վերսկսում է իր հարձակումն ամբողջ օրվա ընթացքում, այնուհետև հեռանում է և մինչ մութն ընկնելը կրկին վերադառնում է վերջին անգամ հարձակվելու նպատակով: Այս մտահոգությունը գալիս էր իր սխալ ըմբռնումից, որն իրականում վերջացավ իր մահով: Գարուն էր և նա ուներ հրաշալի հնարավորություն վայելելու Աստծո տված հրաշալի աշխարհը: Մեր մտահոգությունների մեծամասնությունը գալիս է մեր սխալ ըմբռնումից: **Թույլ մի տվեք, որպեսզի հոգսերը կործանեն ձեր կյանքը: Մի մտահոգվեք որևէ բանի համար, փոխարենը աղոթեցեք ամեն ինչի համար:** Աստված սիրում է քեզ և Նա է ղեկավարում քո կյանքը:

Բացատրություն. 1 Թեսաղ. 5:18-ը ասում է, «Ամեն բանի մեջ գոհություն մատուցեք, քանի որ այս է Աստծո կամքը Հիսուս Քրիստոսում ձեր վերաբերյալ»:

- Այժմ ուշադրություն դարձրեք գրեթե նույն մտքին, որը տեսնում ենք 132 էջի վրա:

էջ 132.

- Եփես. 5:20 համարն ասում է. «Ամեն անգամ և ամեն բանի համար գոհություն հայտնեք մեր Տեր Հիսուս Քրիստոսին, մեր Հայր Աստծուն»:

  Ընդգծում. 131 էջում 1 Թեսաղ. 5:18 համարն ասում է, «ամեն բանի **մեջ**», և 132 էջում Եփես. 5:20 համարն ասում է, որ «ամեն բանի **համար**» գոհություն մատուցեք:

  - Մենք կարող ենք հիշել մեր կյանքում բոլոր այն իրավիճակները, որտեղ դժվարացել ենք այս հարցում: Այսպիսով, ինչո՞ւ է Աստված սա մեզնից պահանջում:

  - 1 Թեսաղ. 5:18- ասում է, «… քանի որ սա է Աստծո կամքը»:

- 1 Պետրոս 1:6-7 համարն ասում է, *Դուք դրանով եք ուրախանում, որ այժմ դեպքերի բերումով այլ և այլ փորձություններով փոքր ինչ տրտմած եք, որպեսզի ձեր հավատի փորձը, որ առավել արժեքավոր է, քան կորստյան ենթակա ոսկին, որ կրակով է փորձված դառնա գովքի փառքի ու պատվի առարկա, Հիսուս Քրիստոսի հայտնության ժամանակ»:*
- Ճշմարիտ աշակերտները երբեք չեն կորցնում ՀՈՒՅՍԸ, քանի որ մեր հույսը Հիսուսն է *Սաղմ. 71:5,* և Նա խոստացել է, որ երբեք մեզ չի լքի կամ չի թողնի *Եբրայ. 13:5:* Մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով մենք նույնիսկ հաղթություն ունենք մահվան վրա *1 Կորնթ.15:55-57:*
- 1 Թեսաղ. 4:13-14, 17-18 համարն ասում է, «*Չենք ուզում, եղբայրներ, որ որևէ կասկած ունենաք ննջեցյալների վերաբերյալ, որպեսզի չտրտմեք ինչպես ուրիշները, որոնք հույս չունեն: Քանզի եթե հավատում ենք, որ Հիսուս մեռավ ու հարություն առավ, նույնպես էլ պետք է հավատանք, որ Աստված Հիսուսի հետ կուղարկի նրանց, ովքեր "ննջում են" Նրա մեջ… Եվ դրանից հետո հավիտյան կլինենք Նրա հետ: Ուստի մեկզմեկ մխիթարեցեք այս խոսքերով»:*

էջ 133.

- Հակոբ. 5:16- այս էջում ասում է. «… Արդարի ազդեցիկ, ջերմեռանդ աղոթքը շատ օգտակար է»: Ի՞նչ է ջերմեռանդ աղոթքը:

Երկու իրարից տարբեր ջերմեռանդ աղոթքներ.

Պատմություն 1. Երբ մեր որդի Սթիվը մոտ հինգ տարեկան էր, մեր հովիվը մեջքի հետ կապված ժամանակավոր խնդիրներ ուներ: Մոտ երեք շաբաթ չէր կարողանում ուղիղ կանգնել և քայլում էր ձեռնափայտով: Մի շաբաթ օր, երբ գիշերը ծնկի եկած աղոթում էինք Ստիվի սենյակում, նա խնդրեց Աստծուն, որ բժշկի իր հովվին: Դա մի պարզ, հանգիստ աղոթք էր, առանց զգացմունքի: Հաջորդ առավոտ, երբ անցնում էինք մեր եկեղեցու սրահով, տեսանք մեր հովվին առանց ձեռնափայտի, մեջքն ուղիղ քայլում էր: Սթիվը պարզապես մի բառ ասաց, «Տեսա՞ք»: Սթիվը լուրջ և անկեղծ մի աղոթք էր արել, որը բխել էր իր սրտից և հավատացել էր, որ Աստված կպատասխանի, դրա համար չզարմացավ, երբ տեսավ Աստված պատասխանել է իր աղոթքին: Մենք հավատում ենք, որ Սթիվի աղոթքը ջերմեռանդ աղոթք էր:

Պատմություն 2 --- Մի քանի տարի հետո, մեր կրտսեր որդի Դանը մոտ հինգ կամ վեց տարեկան էր: Նա ուներ մի սիրելի ձկնիկ: Ձկան գավաթի ջուրը պետք է փոխվեր և քանի որ Մարիլինը շտապում էր, որոշեց շտապ մաքրել ջուրը: Այսպիսով նա գավաթը պահեց ծորակի տակ և թողեց ջուրն անմիջապես լցվի գավաթի մեջ: Գավաթից հին ջուրը դուրս գալով թափվում և հոսում էր լվացարանի մեջ: Ամեն բան կարգին էր մինչ ձուկը դուրս չեկավ և չընկավ լվացարանի մեջ: Մարիլինը արագ փորձեց փակել լվացարանի անցքը, բայց այդ ընթացքում ձուկը վնասվեց և փորի վրա շրջվելով անկենդան դիրք ընդունեց::

Այդ ժամանակ Դանը մտավ լոգարան, տեսնելով կատարվածը, սկսեց բարձրաձայն լաց լինել և բղավել, «Դուք սպանեցիք իմ ձկնիկին»: Նա իրավացի էր: Նա շարունակում էր լաց լինել և աղաչել Աստծուն, որպեսզի թույլ չտա, որ իր ձուկը սատկի: Նա շարունակ աղոթում էր, «Աստվա՛ծ, խնդրում եմ թույլ մի տուր, որ նա սատկի»:

Վերջապես, քնելու ժամանակը եկավ: Մարիլինը ձուկը դրեց իր գավաթի մեջ՝ փորձելով հանգստացնել Դանին: Դանը խելագարի պես շարունակ լաց էր լինում և աղաչում Աստծուն, «Խնդրում եմ, թույլ մի տուր, որ նա սատկի»: Բայց ձուկը փորի վրա պառկած, ջրի երեսին դես ու դեն էր գնում, որը անկենդանության նշան էր: Մենք բոլորս գնացինք քնելու, բայց Դանը դեռ լացում էր և աղաչում Աստծուն:

Հաջորդ առավոտ, երբ արթնացանք, Դանի փոքրիկ ձուկն այլևս անշարժ չէր: Նա այնպես էր լողում, կարծես ոչինչ էլ պատահած չլիներ: Դանի սրտից բխած այդ աղոթքը բարցրաձայն, զգացմունքներով լի մի աղոթք էր: Մենք հավատում ենք,որ Դանի աղոթքը նույնպես կարելի է համարել ջերմեռանդ աղոթք:

> **Համեմատություն.** Մի աղոթքը շատ զգացմունքային էր, իսկ մյուսը՝ ոչ: Սակայն երկուսն էլ լուրջ, անկեղծ աղոթքներ էին, որոնք բխում էին նրանց սրտերից: Նրանք հավատում էին, որ Աստված կլսի իրենց աղոթքը և կպատասխանի: Դրա համար, երկուսի աղոթքն էլ ջերմեռանդ էին Աստծո առջև:

Աստվածաշնչյան դասընթացներից սովորած ճշմարտությունների շուրջ խորհելը կօգնի ճանաչել Աստծուն:

7. Դուք, որպես առաջնորդ խոսեք ձեր **Ամենօրյա Աստվածաշնչյան Ընթերցումների Նշումների** մասին, որոնք կատարել եք անցյալ շաբաթ \էջ 65-72\:

- **Խոսեք** մեկ կամ երկու նշումներից:
- **Խ**որհրդածեք այդ մասին:
- **Պատկերեք** այն:

  Հիշեք, որ պատկերել չի նշանակում այն մեկնաբանել: Դրա համար, երբ սկսեք պատկերել այն, սկսեք ասելով, «**Այս նկարում ես տեսնում եմ**»:

- **Ա**ղոթեք Աստծուն հանձնելով ձեր նշումները, ձեր սրտի աղոթքով:

  Աղոթեցեք - Աշակերտներին առիթ տալով լսել ձեր աղոթքն առ Աստված, **մ**եծարելով, **խ**ոստովանելով, **գ**ոհություն մատուցանելով և **խ**նդրելով Նրան:

Բացատրություն.
- Ձեր **ԱԱԸ** նշումների տետրը բերեք դասարան և կարդացեք մեկ կամ երկու գրառումներից:
- Աշակերտներին ցույց տվեք ձեր կյանքի օրինակով, ինչպես եք դրանք կիրառում, որպեսզի նրանց համար ավելի հասկանալի լինի:

Վկայություն. Սա հրաշալի առիթ է առաջնորդների համար կիսելու ձեր հուզմունքը նրանց հետ, Աստծո Խոսքն ամեն օր ընթերցելու, նշումներ կատարելու և դրանց շուրջ մտորելու վերաբերյալ, որը փոխել է ձեր կյանքը:

Նշումներ կատարելը դեռ բավարար պայման չէ: Մեր նպատակն է հիշել այն, ինչ Աստված խոսում է մեզ, որպեսզի կարողանանք մտորել դրանց շուրջ և ճանաչենք Նրան:

7. Խնդրել յուրաքանչյուրին **ԽՊԱ՝ խորհեն, պատկերեն, աղոթեն** Հովհ. 5:24 համարը:
8. Խնդրել յուրաքանչյուրին **ԽՊԱ՝ խորհեն, պատկերեն, աղոթեն** Հովհ. 10:28 համարը:
9. Վերանայել **Աստվածաշնչյան Սերտողության Ծրագիր-ը** \էջ 236\:

Կրկնություն. Եթե գործենք ըստ ծրագրի, ծրագիրը կգործի:

- Համարը սերտելով այն մտնում է մեր ուղեղի մեջ: Համարը մտորելով այն անցնում է մեր սրտերի մեջ և երբ հասնում է այն մեր սրտի մեջ, այդ ժամանակ միայն կարող ենք կիրառել մեր կյանքերում:

Պատմություն. Անցյալում զարմանում էի, թե ինչու էի համարը սերտելուց մեկ շաբաթ հետո մոռանում այն: Հասկացա, որ բանալին պահված է 236 էջի 2-րդ մասի վեցերորդ հատվածում, որը քաջալերում է մեզ սերտելուց հետո անմիջապես վերանայել տվյալ համարը, մեջբերելով համարը, խոսքը և կրկին անգամ համարը 30 անգամ: Մեկ այլ եղանակ, որ կարող է օգնել այն է, երբ մարդկանց վկայելիս խոսեք համարների մեջբերումներով: Համարները կամ օգտագործում ենք, կամ՝ մոռանում:

Սուրբ Գրքի սերտողությունն օգնում է հասկանալ Աստծո Խոսքը, եւ դրանց շուրջ մտորելն օգնում է ճանաչել Աստծուն:

11. Քննարկել **Աստվածաշնչյան Համարների Սերտելու Ցանկը** \էջ 238\:

Կրկնություն.

- Երբ ավարտեն աստվածաշնչյան տվյալ համարի խոսքերն իր համարներով միասին 30 անգամ կրկնելը, խնդրեք աշակերտներին “Սերտողության Ամսաթիվ” աղյուսակում գրել տվյալ օրվա ամսաթիվը:
- Տվյալ համարն անգիր անելու, 30 անգամ տվյալ համարի խոսքերն իր համարներով կրկնելու համար կպահանջվի ընդամենը հինգից ութ րոպե:
  - Այս անելով մենք ներդնում ենք մեր ժամանակը, որով Աստված կարող է հետագայում օրհնել մեզ և այլ մարդկանց:
  - Այս համարներից մեկը կարող է օգնել ձեզ կամ ձեր ընկերներից մեկին, իրենց նեղության ժամանակ:

12. Աշակերտներին ցույց տալ Հովհ. 5:24 և Հովհ. 10:28 համարներն ինչպես գրել համարների համար նախատեսված քարտերի վրա \էջ 235\:

Կրկնություն.

- Վերցնել աստվածաշնչյան համարների սերտողության համար նախատեսված մի մաքուր քարտ: Յուրաքանչյուր համար գրել առանձին թղթի վրա:
- Մի քարտի մեջտեղում գրել 1 Կորնթ. 10:13 համարը:

- Այս համարը նման է հասցեի:

- Վերցրեք քարտը, շրջեք այն հակառակ կողմն ու գրեք այդ համարի խոսքերը քարտի մյուս կողմում:

- Դուք պետք է աստվածաշնչյան համարը գրեք քարտի մի կողմում, իսկ խոսքերը քարտի մյուս կողմում, որպեսզի երբ նայեք համարին, տեսնեք արդյոք կարող եք հիշել խոսքերը, և խոսքերին նայելով տեսնեք հիշու՞մ եք արդյոք տվյալ համարը:

- Կրկնել նման հերթականությամբ, այս անգամ օգտագործելով 2 Կորնթ. 12:9 համարը:

- Անգիր անելուց և 30 անգամ տվյալ համարն իր խոսքերով կրկնելուց հետո, աստվածաշնչյան տվյալ համարի քարտի ներքևի մասում գրել այդ օրվա ամսաթիվը:

Կարևոր է.

- Բավարար ժամանակ տրամադրեք քարտերի վրա համարները գրանցելուն և սերտելուն, որպեսզի աշակերտները կարողանան ամբողջ շաբաթվա ընթացքում անգիր անել, երբ նրանք սպասում են ինչ որ մեկին, ավտոխցանման ժամանակ կամ ընդմիջման ընթացքում և այլն: Եթե չանեք այն դասերի ժամանակ, ապա սատանան աշակերտների համար բազմաթիվ արգելքներ կառաջացնի, և մինչ հաջորդ հանդիպում կդժվարացնի նրանց համար այն անգիր անելը:
- Հիշեք, որ անգիր անելով մենք այն հասցնում ենք մեր մտքերի մեջ, իսկ մտորելով այն անցնում է մեր սրտերի մեջ: Դրա համար, որքան հնարավոր է փորձեք շաբաթվա սկզբում այն անգիր անել, որպեսզի մինչ հաջորդ հանդիպում ժամանակ ունենաք դրա շուրջ մտորելու: Ինչո՞ւ է հարկավոր մտորել դրանց շուրջ: Մենք ցանկանում ենք, որպեսզի Աստված դրանց միջոցով Իր նմանությամբ մեզ կերպարանափոխի:

Աստվածաշնչյան համարներ սերտելը և մտորելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

13. Աշակերտներին քաջալերեք, որպեսզի այս շաբաթ արթուն ժամանակ յուրաքանչյուր ժամվա ընթացքում երեք անգամ արտահայտեն իրենց սերն առ Աստված ասելով՝ «Ես սիրում եմ Քեզ, Դու ես իմ Տերը և իմ Զորությունը» *Սաղմ.18:1*

Բացատրություն.

- «Տեր ես քեզ սիրում եմ» ասելով մենք մեծարում ենք Աստծուն:

- Մենք ցանկանում ենք մշակել մեր սերն առ Աստված արտահայտելու մի ձև, որը կանենք ամեն օր ամբողջ օրվա ընթացքում: Այս կիրառումը կարևոր դեր է խաղում մեր կյանքն ըստ աստվածաշնչյան սկզբունքների ապրելու հարցում, որը կսովորենք այս երկու շաբաթների ընթացքում:

Հիշեցում. Աշակերտները, հավանաբար, կարիք կունենան որևէ բանի, որ կհիշեցնի իրենց ասել, «Տեր, ես քեզ սիրում եմ» ամբողջ օրվա ընթացքում:

- Եթե հնարավոր է, յուրաքանչյուր աշակերտի մի ինչ որ հիշեցնող բան տվեք, որ կկարողանան փակցնել իրենց ժամացույցի, հայելիի, համակարգչի, կամ որևէ բանի վրա, որ կարող է ծառայել նրանց, որպես հիշեցնող մի միջոց ասելու Տիրոջը, «ես սիրում եմ քեզ» ամբողջ օրվա ընթացքում:

14. Քաջալերել աշակերտներին ամեն առիթ օգտագործել վկայելու մարդկանց այն, ինչ Աստված սովորեցնում է նրանց:

Բացատրություն. Մեր նպատակն է օգնել աշակերտներին, որպեսզի կյանքի տարբեր ասպարեզներում առանց կաշկանդվելու կարողանան խոսել Հիսուսի մասին:

15.Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Հանձնարարություններին\էջ 255-256\:**

Կարդալ դասարանում. Բարձրաձայն ընթերցեք 255 էջը եւ համոզվեք, որ բոլորը հասկանում են հանձնարարությունը:

- ***Աշակերտներին քաջալերել լինել հավատարիմ առ Աստված եւ ամեն օր հանգիստ ժամանակ տրամադրեն Նրան հանդիպելու համար:***

16. Դասն ավարտել աղոթքով:

Օրինակ՝ Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ և գոհություն մատուցել Աստծուն, ձեզ միաբանելու և ձեզանից յուրաքանչյուրի հետ առանձին խոսելու համար:

1. Դասն սկսեք Աղոթքով:

Օրինակ՝ Աշակերտներին խնդրեք ծնկի գալ ձեզ հետ միասին աղոթել և հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթել:

2. Պահանջեք տվյալ օրվա «Տնային աշխատանքի ստուգման» թերթիկները, ապա ստուգեք եւ ստորագրեք նրանց աշխատանքները \էջ 280\:

Հաշվետվություն: «Տնային հանձնարարությունների» թերթիկների ամենօրյա ստուգումն աշկերտներին սովորեցնում է հաշվետվության կարևորությունը, ինչպես գրված է Հռովմ. 14:12 համարում գրված հաշվետվությունների սկզբունքներին:

3. Կարդալ **«Իմ նպատակն է ճանաչել Նրան»** էջ 9: Աշակերտներից մեկին թույլ տվեք **պ**ատկերի այդ համարը և **ա**ղոթքով այն հանձնի Աստծուն: **Հիշեցրեք աշակերտներին կենտրոնանալ Հիսուսի վրա** *Եբրայ. 12:2:*

Հիշեցում. Ամեն շաբաթ Փիլիպ. 3:10 համարի վերանայման գլխավոր պատճառն է՝

- **Որպեսզի մեր աչքերը նայեն Հիսուսին** և միայն Հիսուսին: Եւ հիշեցնի մեզ, որ **մեր կյանքի նպատակն է ճանաչել Նրան:**

4. Խնդրել աշակերտներից մեկին **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել հանձնելով Աստծուն **Քարոզի կամ Դասերի Նշումների** իր գրառումները **\էջ 21-24\:**

5. Կարդալ և քննարկել **Տնային Աշխատանքների Կրկնության Հարցեր \էջ 256\:**

Բացատրություն.

- Օգտագործելով 256 էջի հինգերորդ հարցը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, որ Նա սովորեցնում է նրանց:
- Թույլ տվեք աշակերտներից մեկը վկայի այն մասին, թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ կիսել Աստծուց ստացած ճշմարտությունները մարդկանց հետ:

6. Կարդալ և մանրամասն քննարկել **Ինչպե՞ս Հագեցնել Կյանքս Աղոթքով** դասը \էջ 136-147\: Կարդալու ընթացքում պարբերաբար դադար առեք, առիթ տալով աշակերտներին **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել այն հանձնելով Աստծուն:

էջ 138-140. Այս հատվածում «Ինչպե՞ս հագեցնել կյանքս աղոթքով» կան աղոթքի վերաբերյալ վեց թաքնված որակավորումներ:

- Ճշմարիտ է, որ Աստված կարող է անել ինչ ցանկանում է: Դրա համար, Նա կարող է պատասխանել մեր յուրաքանչյուր աղոթքի ամեն ժամանակ, եթե նույնիսկ Նրա պայմանները չենք բավարարում: Նա կարող է անել ամեն բան, քանի որ Նա պարզապես Աստված է:
- Կա՞ որևէ բան, որ այդ անելով Աստված կարող է լսել և պատասխանել մեր աղոթքներն այնպես, ինչպես կուզենայինք պատասխանվեր:
  - Սուրբ Գրքում տեսնում ենք **աղոթքին պատասխանելու վերաբերյալ վեց որակավորումներ:**

1. Մարկ.11:25 համարը, էջ 138 --- **<u>Ներել մարդկանց:</u>**
   - Եթե ցանկանում ենք ներվել, ապա պետք է մենք ներենք ուրիշներին: *Ներել* նշանակում է “թողնել, մոռանալ և հանձնվել”: Եթե մեր մեջ կա չարակամություն, մենք վստահ չենք լինի, որ Աստված կլսի և մեր աղոթքներին պատասխան կտա:

2. 1 Հովհ. 1:9 համարը, էջ 138 --- **<u>Խոստովանել մեր մեղքերը</u>**
   - Աստված հավատարիմ է ներել և մաքրել մեզ, եթե խոստավանենք մեր մեղքերը: Նախորդ համարում Եսայ. 59:2-ում, բացատրում է, որ մենք ներման կարիք ունենք, քանի որ մեղքը բաժանում է մեզ Աստծուց և զրկում է մեզ Աստծո հետ ջերմ ընկերությունից, որի համար մենք ստեղծված ենք:

     Կրկնություն Սա հարմար պահ է բացատրելու Աստծո հետ փոխհարաբերության և Աստծո հետ ընկերության միջև տարբերությունը:

     - Երբ մենք ընդունում ենք Հիսուս Քրիստոսին, որպես մեր Տեր և Փրկիչ, Աստված իր ապահով ձեռքերի մեջ պահում է մեզ, որտեղից ոչ ոք չի կարող մեզ խլել *Հովհ.10:28:* Մենք հավիտյան պատկանում ենք Աստծուն *Հովհ.1:12:* Աշխարհում ոչ մի

զորություն չունի այդքան ուժ, որ կարողանա խլել մեզ Նրա ձեռքերից, քանի որ Աստված ամենազոր է երկնքում և երկրի վրա *Մատթ. 28:18:* Այսպիսով, **փոխհարաբերության մեջ Աստված է պահպանում մեզ** մեր փրկության պահից *Հովհ. 5:24:*

Ընկերության մեջ, մենք Աստծուց ենք բռնված Երբ մենք մեղանչում ենք, դրանով խզում ենք Աստծո հետ մեր ընկերությունը *Եսայ. 59:2:* Հիշեք, որ Աստված է, «կանչել քեզ "մեզ" Իր Որդու, մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետ ընկերության...» *1Կորնթ. 1:9:* Նա չի ցանկանում, որ այդ ընկերությունը խզվի: Դրա համար, երբ մեղանչում ենք, պետք է **անմիջապես խոստովանել այդ մեղքը** *1Հովհ. 1:9 և* նորից տանք մեր կյանքի ղեկը Աստծուն *Հռովմ. 6:13:*

Լուսաբանում: Պատկերեք Աստծուն ձեռքերը առաջ պարզած: Աջ ձեռքը խորհրդանշում է մեր փոխ-հարաբերությունն Աստծո հետ, իսկ ձախը՝ Աստծո հետ ընկերությունը: Իր աջ ձեռքում տեսնում ենք մեզ խաղաղ և ապահով հենված, քանի որ գիտենք, որ ոչ ոք չի խլի մեզ Նրա ձեռքից: **Մեր փոխհարաբերությունը ապահով է, քանի որ Նա է պահպանում մեզ:** Ընկերության մեջ Աստծո ձեռքը դուրս պարզած և մենք իբրև երեխաներ բռնել ենք Նրա մատները: Երբ մենք մեղանչում ենք, այդպիսով բաց ենք թողնում Նրա ձեռքը և կորցնում մեր ընկերությունը: **Աստծո հետ մեր ընկերությունը ապահով չէ, այնպես ինչպես Աստծո հետ մեր փոխհարաբերությունը, քանզի մենք ենք պատասխանատու ընկերության համար և երբեմն ձախողվում ենք:**

Օրինակ.

- Մենք ունենք երկու որդի: Նրանք կարող են հրաժարվել իմ հայրությունից, և դիմեն դատարան, որպեսզի փոխեն իրենց անունները: Կամ կարող են ասել, որ ես նրանց հայրը չեմ: Սակայն *ես* չեմ դադարում նրանց հայրը լինելուց, և ոչ ոք չի կարող փոխել այդ փաստը: Նույնիսկ անառակ որդին դեռ իր հոր որդին էր *Ղուկ.15:11-32:* Նմանապես, երբ մենք **դարձանք Աստծո որդիներ, մենք ընդմիշտ Նրա որդիներն ենք** *Հովհ. 5:24:* **Սա փոխհարաբերության օրինակն է:**

- Իմ և իմ որդիների միջև **փոխհարաբերությունը** չի կարող խզվել, բայց երբ նրանք ապստամբում են, դրանից մեր ընկերությունն է տուժում: Այնուամենայնիվ, խոստովանությանը հաջորդում է ներումը *1Հովհ 1:9:* Ինձ համար, որպես նրանց հայր, եթե նույնիսկ նրանց մեղքերը լինեն մուգ սև, եթե նրանք խոստովանեն, ապա կներվեն, դառնալով ձյունի պես ճերմակ *Եսայ. 1:8:* Մեր ընկերությունը, այսպիսով, վերականգնվում է: **Սա ընկերության օրինակն է:**

3. Հովհ.14:13 համար, էջ 139 --- <u>**Աղոթել Հիսուսի Անունով**</u>

Կրկնություն. Աղոթել Հիսուսի անունով չի նշանակում աղոթքը վերջացնել ասելով, “Հիսուսի անունով”, չնայած ոչ մի սխալ բան չկա դրա մեջ, եթե այն սրտանց եք ասում: Ես կարծում եմ, մենք աղոթում ենք Հիսուսի անունով, երբ գիտակցում ենք, որ արժանի չենք անմիջապես Աստծուց ստանալու, բայց արտոնություն ունենք Հիսուսի միջոցով, քանի որ Նա մեռավ մեր մեղքերի համար: Դրա համար կարող ենք Աստծո ներկայության մեջ մտնել քաջությամբ և միևնույն ժամանակ խոնարհությամբ: Մենք չենք ներկայանում մեր անունից, այլ Նրա Որդու

անունից, հիշելով այն, ինչ արեց մեզ համար խաչի վրա:

Լուսաբանում. Այս երկու օրինակից որի՞ն ավելի կցանկանաք օգնել:

1 Օրինակ - Եթե մեկը փողոցում մոտենա ձեզ և խնդրի ձեզանից հսկայական մի գումար:

2 Օրինակ - Մեկ այլ մարդ մոտենա ձեզ և ասի, «Ես ձեր որդու ընկերն եմ: Ես լուրջ խնդիր ունեմ և այդ մասին արդեն տեղեկացրել եմ ձեր որդուն: Նա ասաց, որ եթե ձեզ դիմեմ և բացատրեմ իմ խնդիրը դուք ինձ կօգնեք»:

Այս երկուսից ո՞ւմ շահագրգռված կլինեք օգնել: Նրան, ով եկել էր ձեր որդու անունից:

4. Հովհ.1:6-7 համար, էջ 139 --- **<u>Խնդրել Հավատքով: Հավատացեք, որ կստանաք</u>**

- Մեկը, եթե կասկածի Աստծուց պատասխան ստանալու համար, հավանաբար այն չի ստանա: Մինչ Հիսուս դիվահարին բժշկելը Նա ասաց նրա հորը, «*Ամեն բան հնարավոր է նրան, ով հավատում է»:* Հայրը անմիջապես բացականչեց, «*Ես հավատում եմ, օգնիր հաղթահարեմ իմ անհավատությունը»* Մարկ. 9:23-24: «*Եթե հավատաք կստանաք ամեն բան ինչ որ խնդրեք աղոթքով»* Մատթ. 21:22: «Մինչև հիմա Իմ անունով ոչինչ չեք խնդրել: Խնդրեցեք և կտրվի ձեզ, և ձեր ուրախությունը ամբողջական կդառնա» Հովհ.16:24:

Քաղվածք.«Եթե հավատանք, որ Տերը կլսի մեր աղոթքը, դրանով պատվում ենք Նրա ճշմարտալիությունը, զորությունը, սերը, առատաձեռնությունը և Նրա իմաստությունը»:
--- Չարլզ Հադոն Շպուրգեոն

5. Մատթ.26:39 համար, էջ 139-140

<u>Խնդրեցեք Աստծո Կամքը կատարվի</u>

- Սա ամենակարևոր բանն է, որ մենք պետք է անենք, եթե ուզում ենք համոզվել, որ Աստված լսում է մեզ և մեր աղոթքին կպատասխանի: Չկա ավելի մեծ վստահություն առ Աստված, քան այն, որ ցանկանանք Նրա կամքը մեր կամքից ավելի: Դա ցույց է տալիս, որ մենք հասկանում ենք, որ այս երկրի վրա կանչված ենք ապրելու այնպես, ինչպես Նա է ցանկանում:

Կրկնություն.

Երբ մեր վստահությունն առ Աստված հասնում է այնտեղ, որ մենք ցանկանում ենք Նրա կամքն ավելի, քան մերը, ապա Նրա կամքը որդեգրում ենք որպես թե մեր սեփականը:

- Մատթ. 26:39 համարում տեսնում ենք մի հիանալի պատկեր, երբ Հիսուսն աղոթում է, ասելով. «…եթե հնարավոր է հեռացրու այս բաժակն ինձանից, բայց ոչ թե իմ, այլ թող Քո կամքը լինի»:
  - Սա հավանաբար Հիսուսի ամենադժվար որոշումն էր, որ նա պետք է կայացներ: Քանի որ “այս բաժակը” ներկայացնում էր մեր մեղքերը: Եվ դա նշանակում է՝
    - Որ Նա պետք է վերցներ մեր բոլոր մեղքերն Իր վրա և վճարեր մեր փոխարեն: Մտածեք այդ մասին: Նա երբեք չճաշակեց մեղքը, կամ դրա ամոթը:
    - Հիսուս հնազանդվեց վերցնել մեր մեղքերն Իր վրա: Եվ մեր մեղքերը բաժանման պատճառ եղան Իր և Աստծո միջև: Մտածեք այդ մասին: Հիսուս երբեք Հայր Աստծուց բաժանված չի եղել:

- Երբ Հիսուս ասաց, “…բայց ոչ թե իմ, այլ թող Քո կամքը լինի”, Իր օրինակով մեզ ցույց է տալիս, որ ամեն բանից վեր պետք է փնտրենք Աստծո կամքը, ինչ էլ որ պահանջվի:

6. 1 Հովի. 3:22 համար, էջ 140 -

<u>Ունենալ Հնազանդ Վերաբերմունք</u>

- Հնազանդությունն օրհնություններ է բերում, և հատկապես հնազանդության սովորությունը հաճելի է Աստծուն: Հնազանդության սովորություն կարող ենք ձեռք բերել, եթե հնազանդության վերաբերմունքը կիրառենք: **Հնազանդության վերաբերմունքն այն վերաբերմունքն է, որ ասում է «Տե՛ր, կհնազանդվեմ, միայն թե խոսիր»:** Մինչ Աստծո կամքն իմանալը, մենք պետք է նախորոք որոշում կայացնենք հնազանդվել Նրա կամքին:
- **Օրինակ:** Պետրոսը **հնազանդության վերաբերմունքի** հրաշալի մի օրինակ ցույց տվեց ասելով՝ «*Վարդապե՛տ, մենք ամբողջ գիշեր չարչարվեցինք և ոչինչ չբռնեցինք, սակայն Քո խոսքի համար ուռկանը ծովը կնետեմ»* /Ղուկաս 5:5/: Այն պահին, երբ Պետրոսն ասաց, “Քո խոսքի համար ես կանեմ”, ապացուցում է, որ նա արդեն պատրաստ էր անել այն, ինչ Հիսուս կհրամայեր անել: Նա ցույց տվեց **հնազանդության վերաբերմունք:**

Որպես ընդհանրացում այս ամենի, այստեղ նշված են պատասխանված աղոթքների վեց որակավորումները, որոնք վերցված են Սուրբ Գրքից:

1.Ներել մարդկանց:

2.Մեղքերը խոստովանել:

3.Աղոթել Հիսուսի անունով:

4.Աղոթել հավատքով, որպեսզի տրվի:

5.Խնդրել Աստծո կամքը կատարվի:

6.Ունենալ հնազանդության վերաբերմունք:

էջ 143, երկրորդ մաս

Աստծո հետ աղոթքի միջոցով սերտ անձնական ընկերություն մշակելու գործընթացը կատարվում է ամբողջ կյանքի ընթացքում:

էջ 144-145, երրորդ մաս

Առանց կարգ ու կանոնի կյանքն անիմաստ և անհնազանդ կյանք է: Կարգ ու կանոնը հնազանդության մեծ մասն է կազմում և հնազանդությունը հոգևոր աճի և հասունության բանալին է: Առանց կարգ ու կանոնի չակնկալեք լուրջ հոգևոր աճ:

էջ 145-146, չորրորդ մաս

Կենտրոնացեք տվյալ օրվա վրա:

Կրկնություն.

- Սա կարևոր սկզբունքներից մեկն է, որ Աստծո Խոսքը սովորեցնում է: Ապրել այսօրվա կյանքով: Համոզվիր, որ այսօր քո սրտի մեջ առար ինչ որ բան Աստծո Խոսքից:
- Սատանան մեզ դրդում է անընդհատ հետաձգել: Նա խորամանկորեն մեզ համոզում է, որ այսօր Աստծո Խոսքը մեր կյանքում ընդունելը հիմարություն է: Նա քաջատեղյակ է, որ մենք նրա առաջարկությանը կդիմադրենք, դրա համար պարզապես մեր ականջներին նա շշնջում է ասելով՝ «Դա իրոք հրաշալի գաղափար է, բայց այսօր այնքան բան ունես անելու, և բացի այդ արդեն շատ ուշ է: Ինչո՞ւ չսպասես մինչև վաղը»: Մտածեք այդ մասին:
- Ամեն անգամ, երբ մեզ մտահոգող բաների շուրջ հրաժարվում ենք խոսել Աստծո հետ, Սատանան հաղթում է:

Աստվածաշնչյան դասընթացների ժամանակ սովորած ճշմարտությունների շուրջ մտորելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն.

7. Քննարկել **Աստվածաշնչի Ամենօրյա Ընթերցման Նշումներ-ը**, որոնք կատարել են անցյալ շաբաթ \էջ 65-72\: Խնդրեք երկու կամ երեք հոգի՝

- **խ**ոսեն իրենց նշումների մասին:
- **խ**որհեն այդ մասին:
- **պ**ատկերեն այն:
- **ա**ղոթեն՝ այն հանձնելով Աստծուն իրենց սրտի աղոթքով: Ավարտելուց հետո նրանց հորդորեք:

Եթե Աստծո Խոսքը կարդալով կատարենք որոշ գրառումներ, և ապա դրանց շուրջ մտորենք, այն կօգնի մեզ ճանաչել Աստծուն:

8. Խնդրեք յուրաքանչյուրին արտասանել հետևյալ համարը, և ապա մեկ հոգի **ԽՊԱ** այս համարի շուրջ:

- 1 Կորնթ. 10:13

9. Խնդրեք յուրաքանչյուրին արտասանել հետևյալ համարը, և ապա մեկ հոգի **ԽՊԱ** այս համարի շուրջ:

- 2 Կորնթ.12:9

10. Կարդալ, քննարկել և մտորել **"Նախազգուշացում... Նախազգուշացում... Նախազգուշացում"** ճշմարտությունների վերաբերյալ: էջ 25-27

էջ 25.

- «Նախազգուշացում...Նախազգուշացում...Նախազգուշացում» –ից, մենք սովորում ենք ունենալ ճիշտ սրտի դիրք, որով կկարողանանք տեսնել կյանքն Աստծո տեսանկյունից:

  Լուսաբանում. Սուրֆինգը լողորդի համար խրթին մի բան է, սակայն սուրֆինգով զբաղվողի համար մի հաճույք է: Դա կախված է ձեր տեսանկյունից:

- Ձեր տետրերի մեջ գրեք հետևյալ համարն այս վերնագրով՝ «Նախազգուշացում...Նախազգուշացում...Նախազգուշացում»:

  «*Սիրելինե՛րս, մի՛ զարմացեք, երբ զորավոր փորձությունների հանդիպեք, ինչպես թե ինչ որ տարօրինակ բան է կատարվում ձեզ հետ»* 1 Պետրոս 4:12:

  Օրինակ. Եթե մենք կյանքին Աստծո տեսանկյունից չնայենք և ճիշտ չվերաբերվենք, հնարավոր է ծանր փորձությունների բախվելիս կորցնենք մեզ տալով միևնույն հարցը, ինչ Գեդեոնը տվեց *Դատավոր. 6:13-ում,* «Օհ, տեր իմ, եթե Տերը մեզ հետ է, ինչո՞ւ համար այս բոլոր բաները մեր գլխին եկավ: Ո՞ւր են Նրա հրաշքները...»

- Ուշադրություն դարձրեք Հռովմ. 5:3-4 համարում եղած հերթականությանը՝
  - Դժվարություններ և փորձություններ:
  - Սովորել համբերություն:
  - Ուժեղ բնավորություն:
  - Աստծուն վստահել:

- Հույսի և հավատքի մեջ ուժեղ և պատրաստ հասունանալու:

էջ 26.

- Ուշադրություն դարձրեք Հակոբ. 1:2-4 համարում եղած հերթականությանը՝
  - Փորձություններ կգան:
  - Հավատքը կփորձվի:
  - Համբերությունը կավելանա:
  - Ուժեղ բնավորություն:
  - Պատրաստ ամեն բանի, հոգևորապես հասունանալու համար:

էջ 26-27.

- Ուշադրություն դարձրեք, որ Հակոբ.1:13-14-ում Աստված երբեք որևէ մեկին չի փորձում:

«Նախազգուշացում…Նախազգուշացում…Նախազգուշացում» թեմայի ընդհանրացում | էջ 25-27\:

Քրիստոնյայի կյանքում տառապանքներ պետք է ակնկալել: Դա բնական է: 1 Պետրոս 4:12

Այս հատվածներում մենք տեսանք մեր կյանքում պատահած փորձությունները, դժվարությունները, անախորժություններն ու ծանր իրավիճակները Աստծո տեսանկյունից: **Նա տեսնում է դրանք, որպես ոգևոր աճի և հասունության միջոց:** Եթե մենք ցանկանում ենք հաջողակ քրիստոնեական կյանք ունենալ, մենք պետք է զարգացնենք ճիշտ վերաբերմունք և դիտենք այս բաները ոչ թե սեփական՝ այլ Աստծո տեսանկյունից:

Լուսաբանում. Մեքենայով սարն եմ բարձրանում: Առջևիցս մի բեռնատար մեքենա է գնում, որը շարժվում է ժամում 18 կմ արագությամբ: Այսպիսով, որոշում եմ առաջ անցնել իրենից և սարի հակառակ կողմը չեմ տեսնում: Երբ արդեն անցնում եմ, հանկարծ հարվածում եմ առջևի մասից եկող մեկ այլ բեռնատար մեքենայի: Ո՞րն էր իմ խնդիրը: Բնականաբար, իմ անհամբերությունը և դրան այլ տեսանկյունից չնայելը: Իմ տեսանկյունից ամեն բան ապահով էր, բայց Աստված վերևից տեսնավ, որ վտանգավոր է: Եթե ես Նրան խնդրեի և սպասեի Իր պատասխանին, ապահով կլինեի: Նեղության, դժվարության և ծանր փորձությունների ժամանակ միշտ փորձեք նայել Աստծո տեսանկյունից: Իր տեսանկյունից Աստված ասում է, որ մեզ համար բարի է: Այսպիսով, ընդունեք Աստծո ասածները հավատքով, քանի որ Աստված չի կարող ստել:

Տեսողական. Գիրքը կիսաբաց հորիզոնական դիրքով կանգնեցրեք սեղանի վրա կամ պահեք ձեր ձեռքում, այնպես որ եռանկյունու կամ սարի նմանվի: Այժմ պատկերացրեք գիրքը մի սար է, իսկ դուք ավտոմեքենայով բարձրանում եք վեր և չեք կարող տեսնել սարի մյուս կողմը: Պատկերացրեք Աստծուն, որ սարի վերևից տեսնում է սարի երկու կողմերը: Ո՞ւմ կողմից է ավելի լավ երևում – մե՞ր, թե Աստծո:

- Մեր կյանքում պատահած որոշ բաների մեջ, որոնք վնասել են մեզ, կա մի բարի նշույլ, որ տվյալ ապրումները մեզ ավելի են մոտեցրել Հիսուսի գրկին, մեզ սիրող Տեր և Փրկչին:

- Այս հատվածում մեր կարդացած համարների մեջ տեսնում ենք, որ դրանց հետևանքը բերում է հոգևոր հասունության: **Առանց փորձությունների, դժվարությունների, նեղությունների և ծանր փորձությունների և առանց սովորելու դրանց պատշաճ կերպով արձագանքելու, չկա հոգևոր աճ ձեռք բերելու որևէ հույս:**
- Մենք պետք է սովորենք "*Իսկ դու նեղությունները կրիր ինչպես Հիսուս Քրիստոսի բարի զինվոր» 2* Տիմոթ. 2:3:
- Եթե մենք պահենք մեր աչքերը Հիսուսին հառած և վստահենք Նրան, ապա մեր տկարությունները կդառնան մեր զորությունը --- "*…Իմ շնորհքը բավարար է քեզ, քանի որ Իմ զորությունը տկարության մեջ կատարյալ է դառնում…" 2 Կորնթ. 12:9:* Հաճախ քրիստոնյաների կյանքում, հատկապես նրանց, ովքեր երկար տարիներ քայլել են Աստծո հետ, տեսնում ենք տարօրինակ մի ուժ և չենք գիտակցում, որ անցյալում այդ ուժն իր կյանքում եղել է իր տկարությունը: Բայց, քանի որ նա ամեն օր հանձնել է իր կյանքի ղեկն Աստծուն և ապրել է Աստծո առաջնորդությամբ, Աստված նրա տկարությունը փոխարինել է Իր զորությամբ:
- Երբեմն զարմանում ենք, ինչու է համբերությունն այսքան կարևոր Աստծո համար: Հնարավոր է, այն կարևոր է, քանի որ երբ համբերությամբ սպասում ենք Աստծուն, ապա Նա և մարդիկ տեսնում են մեր վստահությունն առ Աստված և մեր հավատքի գործը:
- Մեզ համար դժվար է հասկանալ, ինչպես էր Հիսուս սովորում այս ամենը, որովհետև որպես Աստված Նա գիտեր ամեն բան, բայց որպես մարդ, «*Նա սովորեց հնազանդությունն իր տառապանքի միջոցով»* Եբր. 5:8: Այսպիսով տեսնում ենք, որ տառապանքները կարող են օգնել մեզ լինել Աստծուն հնազանդ:

- Աստված երբեք ոչ ոքի չի փորձում:
- Գայթակղությունը մեղք չէ, սակայն գայթակղությանը տրվելն է մեղք:

Մենք պետք է տեսնենք ամեն բան այնպես, ինչպես Աստված է տեսնում "պետք է նայել Աստծո տեսանկյունից", և հասկանանք այնպես, ինչպես Աստված է ըմբռնում: Աստծո տեսանկյունից մենք տեսնում ենք՝

Սատանան ԳԱՅԹԱԿՂՈՒՄ է մեզ կործանելու նպատակով: Սա Սատանայի գործելակերպն է Աստծուն վերադարձնելու համար: Նա դուրս չեկավ մեզ վնասելու համար, այլ մեզ կործանելու համար:

Աստված թույլ է տալիս ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ մեր կյանքում, որպեսզի մեզ ավելի զորացնի: Աստված մեր մեջ ցանկանում է կերտել աստվածային բնավորություն, որպեսզի հոգևորապես հասունանանք, պատրաստ լինենք ամեն բանի, լինենք զորավոր և կանգուն հույսի և հավատքի մեջ:

Աստված թույլ է տալիս մեզ ՓՈՐՁՎԵԼ, որպեսզի տեսնի համապատասխանո՞ւմ ենք արդյոք Իր չափանիշներին: Ո՞րն է այն չափանիշը, որով քրիստոնյաները որոշում են իրենց հոգևոր հասունության աճը: Աստծո գրավոր Խոսքը՝ Աստվածաշունչը, և մարմնավոր դրսևորումը՝ Հիսուսը: Երկուսն էլ Աստծո Խոսքն են և այն չափանիշը, որով որոշում ենք մեր կենսակերպը: Փորձության ժամանակ, ես հոգևորապես աճում եմ, տեսնելով ինչպես է իմ միտքը, վերաբերմունքը և գործողությունները հնազանդվում Աստծո Խոսքի սկզբունքներին, կամ հետևում Հիսուսի օրինակին, որը երկրի վրա ապրած ժամանակ ցուցաբերեց քրիստոնեական կյանքի մոդելը:

Երեք կետեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է Աստված մեր կյանքում մեր իսկ բարօրության համար օգտագործում փորձությունները, դժվարությունները և ծանր իրավիճակները:

1. Տրորող իրավիճակներ – Կա որոշակի օծանելիք, որը պատրաստում են վարդի պսակաթերթիկները տրորելով: Երբ պսակաթերթերը տրորում են, մի հրաշալի հոտ է արձակում:

Կիրառում. Երբ քրիստոնյան որոշ իրավիճակներում կարծես տրորվում է, բայց չնայած դրան իր աչքերը պահում է Հիսուսին հառած և շարունակում է վստահել Աստծուն, դրանով նա անուշահոտ բուրմունք է արձակում, որը վեր բարձրանալով օրհնում է Աստծուն և տարածելով իր շուրջը օրհնում է մարդկանց */2 Կորնթ. 2:14-16/:*

- Հաճախ, այս հարվածների ժամանակ մեզ թվում է այլևս չենք կարող դիմանալ, սակայն հիշեք. «*Արդարի նեղությունները շատ են, բայց Տերը կազատի նրան բոլորից»* Սաղմ. 34:19:

- Աստծո տեսանկյունից, այս փորձության հարվածները մեզ համար հնարավորություն են հոգևորապես հասունանալու և Նրան փառավորելու:

- Հիշեք, որ այս հարվածների միջոցով

  - Սատանայի նպատակն է կործանել մեզ:

  - Իսկ Աստծո նպատակը, հասնենք հոգևոր հասունության և փառավորենք Նրան:

2. Ճնշող Իրավիճակներ - Ադամանդը ծնվում է մի կտոր քարածուխից: Սակայն տարիների ընթացքում ենթարկվելով բարձր ճնշմանը, դառնում է հիանալի ադամանդ:

Կիրառում – Հաճախ մեր կյանքում ճնշումներն այնքան շատ են լինում, որ թվում է, թե այլևս չես դիմանա հաջորդ պահին, բայց հիշեք *"…ամեն բան բարիի գործակից են նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն, ովքեր կանչված են Իր նպատակի համեմատ"* Հռովմ. 8:28: Դրա համար, ոչինչ չի կարող դիպչել մեր կյանքին, եթե Աստված դա թույլ չտա: Եվ եթե Նա թույլ է տալիս որոշ ճնշումներ, ապա Իր տեսանկյունից Նա տեսնում է, որ այն գործում է մեր բարօրության համար, որպեսզի փառավորենք Նրան:

- Մենք գիտենք, որ Հիսուսն է «…աշխարհի լույս» Հովհ. 9:5 և որ ադամանդն իր լույսը ճառագայթում է բոլոր ուղղություններով: Այսպիսով, երբ Աստված թույլ է տալիս մեզ որոշ ճնշումներ, դրանով Նա տալիս է մեզ հնարավորություն կերպարանափոխվելու Իր նմանությանը: Հետո որպես ադամանդներ, մենք կարող ենք արտացոլել Նրան բոլոր նրանց, ում հետ առնչվում ենք:

- Հիշեք, որ ճնշող իրավիճակներում

  - Սատանայի նպատակը մեզ կործանելն է:

- Իսկ Աստծո նպատակը, որպեսզի հոգևորապես հասունանանք և կարողանանք փառավորել Նրան:

3. “Կրակի միջով անցնելու” իրավիճակ – Մաքուր արծաթը ստանում են բարձր աստիճանի տաքության միջով անց կացնելով, այնուհետև այն հալվում է և անպիտան մասերից մաքրվում:

Կիրառում – Մեղքը մեր կյանքի կարծես այդ արծաթի անմաքուր մասն է: Դրա համար, Աստված թույլ է տալիս անցնել այսպես կոչված “կրակի միջով”, որպեսզի տեսնենք մեր մեղքը, այդ անմաքրությունը, որը պետք է խոստովանել և ձերբազատվել:

Մաքրող Կրակ
-անհայտ հեղինակ

Տարիներ առաջ, մի քանի կանայք հավաքվում են մի քաղաքում, որպեսզի Աստծո Խոսքն ընթերցեն և այդ մասին զրուցեն: Մազաքի երրորդ գլուխը կարդալու ընթացքում երրորդ համարում նրանք հանդիպում են մի արտասովոր արտահայտության. «*Նա կնստի, որպես արծաթ զտող և մաքրող»:*

Նրանցից մեկի կարծիքով, դա ցույց է տալիս Քրիստոսի շնորհքի ազդեցության սրբագործումը: Կանանցից մեկը առաջարկեց, որ ինքը արծաթագործի մոտ գնա, որպեսզի հետո պատմի իր ընկերուհիներին նրա ասածները: Նա գնում է և առանց բացատրելու իր նպատակը, խնդրում է արծաթագործին բացատրել արծաթի զտման գործընթացը: Վարպետն ամբողջությամբ բացատրում է:

“Բայց պարո՛ն, զտման աշխատանքի ընթացքում դուք նստո՞ւմ եք”, հարցնում է կինը:
“Օ, անշուշտ, տիկին”, պատասխանում է նա: “**Ես պետք է նստեմ աչքերս հառած կրակին, քանի որ եթե զտման համար պահանջվող ժամանակն անցնի, արծաթը կվնասվի”:**
Տիկինն անմիջապես հասկանում է այդ խոսքերի գեղեցկությունը, որն ասում է, «*Նա կնստի որպես արծաթ թրծող և մաքրող»:* Քրիստոսը հարկ է

համարում, որպեսզի իր զավակները կրակի միջով անցնեն: Նրա աչքերը լարված դիտում են զտման գործընթացը, որում տեսնում ենք Նրա իմաստությունն ու սերը: Փորձությունները պատահական չեն, քանի որ "*Քո գլխի յուրաքանչյուր մազը հաշված է"* /Մատթ.10:30/:

Երբ կինն արդեն դուրս էր գալիս խանութից, արծաթագործը կանչում է նրան և ավելացնում: **Միայն արծաթագործը գիտի, երբ է արծաթի զտման գործընթացն ավարտված: Քանի որ այն ավարտվում է, երբ վարպետն իր պատկերի արտացոլումն է տեսնում արծաթի վրա:** Ինչ հրաշալի օրինակ: Երբ Քրիստոս տեսնի իր պատկերն իր ժողովրդի մեջ, Նրա զտման աշխատանքն ավարտված կլինի:

- Մենք "*...կրակի մեջ փորձվում ենք"* / Եսայ. 48:10-11/, հանուն իրեն: Եթե փորձության ժամանակ մենք *"մեր աչքերը հառենք Հիսուսին"* Եբր.12:2, մենք "*շարունակաբար կկերպարանափոխվենք Նրա նմանությանը..."* Փիլիպ.3:10:
- Հիշիր, որ երբ անցնում եք "կրակի միջով" իրավիճակներով,
  - Սատանայի նպատակը մեզ կործանելն է:
  - Իսկ Աստծո նպատակը, որպեսզի հոգևորապես հասունանանք և կարողանանք փառավորել Իրեն:

Հիշիր – Որ Աստված փորձությունների միջոցով ոչ միայն ցանկանում է, որ մենք հնարավորություն ունենանք հոգևոր հասունություն ձեռք բերելու, այլ Նա սիրում է մեզ և ցանկանում է արտահայտել Իր սերը դեպի մեզ: Երբ մենք կանգնում ենք մեր **իմաստության գագաթնակետին** և կանչում ենք Նրան հավատքով, Նա կհանդիպի մեզ **մեր իմաստության գագաթնակետի անկյունում** և կհանդարտեցնի ալիքները և կառաջնորդի մեզ:

"Երկինք կելնեն ու անդունդը կիջնեն: Նրանց անձերը նեղությունից կհալի: Գինով մարդու պես կդողան ու կերերան և նրանց ամբողջ իմաստությունը կհատի: Այն ժամանակ Տիրոջը կաղաղակեն իրենց նեղության մեջ, և Նա կփրկի նրանց իրենց տառապանքներից: Մրրիկը կհանդարտացնի ու ալիքները կդադարեն ... և

կառաջնորդի նրանց իրենց ուզած նավահանգիստը: Թող գոհանան Տիրոջից իր ողորմության համար, Իր կատարած հրաշքների համար, որ մարդկանց որդիների համար արեց” Սաղմ.107:26-31:

Երազած Վայրը – Թող որ բոլոր փորձությունները, դժվարությունները, ծանր և անելանելի իրավիճակները քեզ *Աստծո գիրկը նետեն:* Նա սիրում է ձեզ և Նա հավատարիմ և ամենակարող Աստված է:

11. Կարդալ և քննարկել **Սուրբ Գրքի Սերտողության Ծրագիր-ը** \էջ 236\:

Բացատրություն. Եթե գործեք ըստ ծրագրի, ծրագիրը կգործի:

- Սերտելու միջոցով տվյալ համարը մտնում է մեր մտքերի մեջ: Խորհելու միջոցով այն մտնում է մեր սրտերի մեջ և միայն այդ ժամանակ նրանց կարող ենք կիրառել մեր կյանքերում:

12. Վերանայել **Աստվածաշնչյան Համարների Սերտողության Ցանկը** \էջ 238\:

- Երբ ավարտեն աստվածաշնչյան տվյալ խոսքը, իր համարներով միասին 30 անգամ մեջբերելը, խնդրեք աշակերտներին 238-րդ էջի վրա գտնվող “Սերտողության Ամսաթիվ” –ի աղյուսակում գրել տվյալ օրվա ամսաթիվը:

13. Խնդրել աշակերտներին սերտողության քարտերի վրա գրել հետևյալ համարները /*էջ 235/*

1 Պետր.5:7Փիլիպ.4:19

Կրկնություն.

- Վերցնել աստվածաշնչյան համարների սերտողության համար նախատեսված մի մաքուր քարտ: Յուրաքանչյուր համար գրել առանձին թղթի վրա:

- Անգիր անելուց հետո, երբ ավարտեք 30 անգամ տվյալ համարն իր խոսքերով կրկնելը, աստվածաշնչյան տվյալ քարտի համարի ներքևի մասում գրել այդ օրվա ամսաթիվը:

Սուրբ Գիրք Սերտելը և դրանց շուրջ մտորելը օգնում է ճանաչել Աստծուն:

14. Քննարկել **Ամենօրյա Աստվածաշնչյան Ընթերցման Կոչը** երրորդ ամսվա համար *էջ 50:* Աշակերտներին հորդորել կարդալ այն սկսած վաղն առավոտից:

Բացատրություն

- Սա միջոց է, որպեսզի աշակերտները տարին մեկ անգամ Աստվածաշունչ կարդան իրենց ամբողջ կյանքի ընթացքում:

Ամեն տարի ամբողջ Աստվածաշունչ կարդալը և կարդացած ճշմարտությունների շուրջ խորհելը կօգնի մեզ ճանաչել Աստծուն:

15. Աշակերտներին քաջալերել արթուն ժամանակ, ժամը երեք անգամ արտահայտեն իրենց սերն առ Աստված ասելով. «Ես սիրում եմ Քեզ, ով Տեր, իմ զորություն» /Սաղմ.18:1/:

Բացատրություն.

- «Տեր ես քեզ սիրում եմ» ասելով մենք մեծարում ենք Աստծուն:
- Մենք ցանկանում ենք մշակել մեր սերն առ Աստված արտահայտելու մի ձև, որ կանենք ամեն օր ամբողջ օրվա ընթացքում: Այս կիրառումը կարևոր դեր է խաղում մեր կյանքն ըստ աստվածաշնչյան սկզբունքների ապրելու հարցում, որը կսովորենք հաջորդ երկու շաբաթների ընթացքում:

16. Քաջալերել աշակերտներին ամեն առիթ օգտագործել վկայելու մարդկանց այն, ինչ Աստված սովորեցնում է նրանց:

Բացատրություն: Մեր նպատակն է օգնել աշակերտներին, որպեսզի կյանքի տարբեր ասպարեզներում առանց կաշկանդվելու կարողանան խոսել Հիսուսի մասին:

17. Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Հանձնարարություններին /էջ 257-258/:**

Կարդալ դասարանում. Բարձրաձայն ընթերցեք 249 էջը եւ համոզվեք, որ բոլորը հասկանում են հանձնարարությունը:

- ***Աշակերտներին քաջալերել լինել հավատարիմ առ Աստված և ամեն օր հանգիստ ժամանակ հանդիպել Նրան:***

18. Դասն ավարտել աղոթքով:

Օրինակ՝ Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ և գոհություն մատուցել Աստծուն, ձեզ միաբանելու և ձեզնից յուրաքանչյուրի հետ առանձին խոսելու համար:

1. Դասն սկսեք Աղոթքով:

Օրինակ՝ Աշակերտներին խնդրեք ծնկի գալ ձեզ հետ միասին աղոթել և հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթել:

2. Բացեք տվյալ օրվա «Տնային աշխատանքի ստուգման» թերթիկները: Ապա ստուգեք և ստորագրեք նրանց աշխատանքները: \էջ 281\:

Հաշվետվություն: «Տնային հանձնարարությունների» թերթիկների ամենօրյա ստուգումն աշկերտներին սովորեցնում է հաշվետվության կարևորությունը, ինչպես գրված է Հռովմ. 14:12: Այն նաեւ օգնում է առաջնորդներին տեսնել արդյոք աշակերտները կատարո՞ւմ են

1.տնային աշխատանքները կերտելով նոր ապրելաոճ, թե

2.ձեր քաջալերանքի կարիքն ունեն:

3. Կարդալ **«Քանզի իմ նպատակն է ճանաչել Նրան» էջ 9:** Աշակերտներից մեկը թույլ տվեք **պ**ատկերի այդ համարը և **ա**ղոթքով այն հանձնի Աստծուն: **Հիշեցրեք աշակերտներին կենտրոնանալ Հիսուսին** /*Եբրայ. 12:2/:*

Հիշեցում. Մենք ամեն շաբաթ կվերանայենք այս հատվածը երեք գլխավոր պատճառով՝

1. Որպեսզի մեր աչքերը հառենք Հիսուսին *և միայն Հիսուսին, և հիշեցնի մեզ, որ* ***մեր նպատակն է ճանաչել Նրան:***

2.Որպեսզի հիշեցնի, որ ***կարգ ու կանոնը վերջնանպատակ չէ: Նրանք պարզապես միջոցներ են, որոնք Աստված տվել է մեզ, որպեսզի ճանաչենք Նրան*** *ունենալով խորը, սերտ և անձնական փոխհարաբերություն: Կարգ ու կանոն պահելու մեր նպատակը Նրան ճանաչելն է:*

3.Որպեսզի խորհենք այս համարի զորավոր ճշմարտությունների շուրջ, *որը կօգնի գրավոր խոսքին ներթափանցել մեր մտքի մեջ և այնտեղից էլ շարժվել դեպի մեր սրտերը,* ***որպեսզի կերպարանափոխվենք Հիսուսի նմանությամբ:***

4.Խնդրեք որևէ մեկին որպեսզի նա կիսվի **Քարոզի** կամ **Դասերի** նշումների մասին, խորհի պատկերի և իր աղոթքով այն Աստծուն հանձնի /էջ 21-24/

Կրկնություն.

- **Մենք պետք է գնանք եկեղեցի՝ ակնկալելով Աստծուց, որ խոսի մեզ հետ:** Երբ Նա խոսում է, մենք պետք է պատրաստ լինենք գրառելու այն, ինչ Նա ասում է մեզ: Երբ մենք այն գրի առնենք, հետագայում հնարավորություն կունենանք դրանց շուրջ մտորելու: Երբ մենք մտորում ենք՝ ***խորհել, պատկերել և աղոթել,*** այս ճշմարտությունը մեր գլխից տեղաշարժում ենք դեպի մեր սիրտ, որտեղ կատարվում է այդ խոսքերի կիրառումը:

Երբ մենք լսելով Աստծո խոսքը կատարում ենք գրառումներ և մտորում ենք այն բաների շուրջ, ինչ Աստված խոսեց մեզ, օգնում է ճանաչել Աստծուն:

5. Կարդալ և քննարկել **Տնային Աշխատանքների Կրկնության Հարցեր** \էջ 258\:

Բացատրություն.

- Օգտագործելով 258 էջի հինգերորդ հարցը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, որ Նա սովորեցնում է նրանց:
  - Թույլ տվեք աշակերտներից մեկը վկայի այն մասին, թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ բաժնեկցել Աստծուց ստացած ճշմարտությունները մարդկանց հետ:

6.Հարցրեք, արդյոք. **Նախազգուշացում… Նախազգուշացում… Նախազգուշացում** էջը օգտակա՞ր էր, թե ոչ: Ինչո՞ւ \էջ 25-27\:

Նախազգուշացում…Նախազգուշացում…Նախազգուշացում թեմայի ընդհանրացում:

- Տառապանքները քրիստոնյայի կյանքում անակնկալ չեն: Դա բնական է *1 Պետրոս 4:12:*
  - **Քաղվածք -** Երբ Դան Միլանը դեռ յոթանասուն տարեկան էր, նրան հարցրին. «Եթե քեզ հնարավորություն տրվեր կրկին ապրել կյանքդ, ի՞նչ կխնդրեիր Աստծուց, որ տար քեզ»: Նա պատասխանում է, «Ես կխնդրեի Աստծուց, որ **կրկնապատկեր իմ փորձությունները,** քանզի կյանքի նեղություններն ինձ Աստծո գիրկը տարան: Այդ ընթացքում ես հասկացա, որ
    - Միայն Աստված կարող է հոգալ իմ կարիքները:

- Ոչինչ չի կարող բաժանել ինձ Նրա սիրուց:
- Ոչինչ չի կարող խլել ինձ Նրա ձեռքից:
- Նախ Նա խաչվեց, և հետո թաղադրվեց:
- Նախ Գեթսեմանի պարտեզն էր, և հետո Պենտեկոստեն:
- Նախ չարչարանքն է, և հետո զվարճանքը:

Եթե ուրիշներն ապրում են իրենց հինգ զգայարաններով՝ տեսողական, շոշափելիք, լսողական, համի և հոտի – մենք ապրում ենք հավատքով: Եվ հավատքի փորձությունը ոսկուց էլ թանկ է, քանի որ Աստված իր մասին է հայտնում այս փորձությունների միջոցով:

Կրակով անցած այս հավատքի շնորհիվ, մենք վստահում ենք Աստծուն և երբ Նա խոսում է Աստվածաշնչի միջոցով, մենք հավատում ենք դրան և գործում ըստ այդմ:

- Այս հատվածներում մենք տեսանք Աստծո տեսանկյունը մեր կյանքում պատահած փորձությունների, դժվարությունների, անախորժությունների և ծանր իրավիճակների վերաբերյալ: Նա դրանք տեսնում է, որպես հոգևոր աճի և հասունության միջոց: Եթե մենք ցանկանում ենք հաջողակ քրիստոնեական կյանք ունենալ, մենք պետք է մշակենք ճիշտ վերաբերմունք և դիտենք այս բաները, ոչ մեր, այլ Աստծո տեսանկյունից:

- Այս հատվածում մեր կարդացած համարների մեջ տեսնում ենք, որ դրանց հետևանքը բերում է հոգևոր հասունության: Առանց փորձությունների, դժվարությունների, նեղությունների և ծանր փորձությունների և առանց սովորելու դրանց պատշաճ կերպով արձագանքելու, չկա հոգևոր աճ ձեռք բերելու հույս:

- Մենք պետք է սովորենք "*նեղությունները կրել…ինչպես Հիսուս Քրիստոսի բարի զինվորներ»* 2 Տիմոթ. 2:3:
- Եթե մենք պահենք մեր աչքերը Հիսուսին հառած և վստահենք Նրան, ապա մեր տկարությունները կդառնան մեր զորությունը - "…*Իմ շնորհքը բավարար է քեզ, քանի որ Իմ զորությունը տկարության մեջ կատարյալ է դառնում…" 2 Կորնթ. 12:9:* Հաճախ քրիստոնյաների կյանքում, հատկապես նրանց, ովքեր երկար տարիներ քայլել են Աստծո հետ, տեսնում ենք տարօրինակ մի ուժ և չեն գիտակցում, որ անցյալում այդ ուժը իրենց կյանքի տկարությունն է եղել: Բայց, քանի որ նա ամեն օր հանձնել է իր կյանքի ղեկն

Աստծուն և ապրել է Աստծո առաջնորդությամբ, Աստված նրա տկարությունը փոխարինել է Իր զորությամբ:

- Երբեմն զարմանում ենք, ինչու է համբերությունն այսքան կարևոր Աստծո համար: Հնարավոր է, այն կարևոր է, քանի որ երբ համբերությամբ սպասում ենք Աստծուն, ապա Նա և մարդիկ տեսնում են մեր վստահությունն առ Աստված և մեր հավատքի գործը:
- Մեզ համար դժվար է հասկանալ, ինչպես էր Հիսուս սովորում այս ամենը, որովհետև որպես Աստված Նա գիտեր ամեն բան, բայց որպես մարդ, «*Նա սովորեց հնազանդությունն իր տառապանքների միջոցով»* Եբր.5:8: Այսպիսով տեսնում ենք, որ տառապանքները կարող են օգնել մեզ լինել Աստծուն հնազանդ:
- Աստված երբեք ոչ ոքի չի փորձում:
- Փորձությունը մեղք չէ, սակայն փորձությանը տրվելը մեղք է:

7. Կարդալ և մանրամասն քննարկել **Հագեցնել Կյանքս Սիրով** \էջ 148-154\: Ընթերցման և քննարկմանն ընթացքում պարբերաբար դադար առեք, աշակերտներին հնարավորություն տալով **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել:

էջ 148.

- Հաշվի առեք այն փաստը, որ Հիսուսն է մեր կյանքի անիվի կենտրոնը: Հիսուս պետք է լինի մեր կյանքի կենտրոնը, որը խորհրդանշում է մեր կյանքի անիվը և մնացած ամեն բան պետք է Նրա շուրջ պտտվի: Երբ սա մեր կայնքում դառնում է իրականություն, մեր իսկ վկայության շնորհիվ մեր սերը աղոթքներով բարձրանում է վեր դեպի Աստված, և տարածվում մեր ընկերների և կորսված հոգիների վրա:

էջ 149.

- Ուշադրություն դարձրեք այս էջի առաջին պարբերության առաջին նախադասությանը, «Մեր կշռադատ ընտրության միջոցով մենք թույլ ենք տալիս Սուրբ Հոգուն մեր մեջ այնպիսի պտուղ բերել: Դա այն սերն է, որ երբեք այդքան մաքուր չի կարող լինել, եթե այն Սուրբ Հոգուց չլինի»:
  - **«Կշռադատ ընտրություն»-ը այս պարբերության մեջ նշանակում է, արդյոք մեր կամքո՞վ ենք ընտրում, ուզում ենք, որ Սուրբ Հոգին մեր մեջ սեր ձևավորի, թե ոչ:** Սա հնարավոր է այն ժամանակ, երբ Աստված ղեկավարի մեր կյանքերը: Դրա համար, ամեն օր

մեր կամքով Աստծուն պետք է հանձնել մեր կյանքի ղեկը և հռչակենք Նրան այդ օրվա մեր կյանքի Տերը: Ապա Նրա անկեղծ սերը մեր մեջ կերևա և կարտացոլի քո միջոցով:

Ինչո՞ւ հագեցնել կյանքս Աստծո սիրով \էջ 149, երկրորդ մասի առաջին կետ - էջ 154\:

էջ 152. Հիսուս ասաց նրանց, «*Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, և քո ամբողջ մտքով*» Մատթ.22:37:

- Ինչպե՞ս եք ցուցաբերում ձեր ամբողջ սրտով սերն առ Աստված: Տարբեր եղանակներ կան արտահայտելու մեր մեծ սերն առ Աստված և շատ դեպքերում այն դրսևորվում է զոհաբերության միջոցով:

Պատմություն 1.Մեր եկեղեցու զոհաբերության մասին մի վկայություն ունենք: Երբ հրդեհի պատճառով մենք կորցրեցինք եկեղեցու շենքի գրեթե ամբողջ շինությունը, Աստված գործեց եկեղեցու մարդկանց սրտերում և նրանց զոհաբերությունների շնորհիվ վերակառուցվեց եկեղեցին:

Պատմություն 2. Ռումինիայում ականատես եղանք, թե ինչպես էին մարդիկ ցույց տալիս իրենց ամբողջ սրտի սերն առ Աստված: Մի անձրևոտ կիրակի առավոտ էր: Հովիվը և մոտավորապես վաթսուն հոգի հավաքվել էին երկրպագելու և տալու իրենց զոհաբերությունները, որի համար աղոթել էին արդեն մի քանի շաբաթ: Նրանք փորձում էին կառուցել մի եկեղեցու շենք, այն ժամանակ, երբ ծնողներն անգամ դժվարանում էին իրենց դպրոցական երեխաների համար տետր ու գրիչ գնել: Այդ հավաքաժողովին, որտեղ հավաքված էին աղքատ մարդիկ, նրանք զոհաբերեցին մոտ 3000 ամերիկյան դոլլար կանխիկ գումար, չորս հարսանյաց մատանի, մի զույգ հեռադիտակ և մեկ ավտոմեքենա: Այդ երկու տարվա ավտոմեքենան տրվեց հովվի և նրա կնոջ կողմից: Այդ ծանր սոցիալական պայմանների և ծայրահեղ աղքատության ժամանակ մենք ականատես եղանք մարդկանց տված զոհաբերություններին:

8. Խումբը բաժանեք զույգերի՝ աղջիկները աղջիկների հետ, տղաները տղաների հետ: Նրանցից յուրաքանչյուրը թող կիսվեն և **ԽՊԱ** հետևյալ թեմաների շուրջ, իսկ նրա զույգը թող ունկնդրի նրան:

ա\ Անցած շաբաթվա **Սերտած համարները:**

- 1 Պետրոս 5:7
- Փիլիպ.4:19

բ\ Այս շաբաթվա **ԱԱԸ նշումները** \էջ 65-72\:

- Մենք խումբը բաժանում ենք զույգերի, որպեսզի յուրաքանչյուրը հնարավորություն ունենա խոսելու **ԱԱԸ նշումների** և այդ շաբաթվա սերտած համարների վերաբերյալ, և ապա **խ**որհի, **պ**ատկերի և **ա**ղոթի այդ համարների շուրջ և աղոթքով այդ ամենը Աստծուն հանձնի:
- Աշակերտներին հորդորել, որպեսզի այդ պահը օգտագործեն պատշաճ և ուրիշ բաներից չխոսեն: Սա լավ առիթ է կիրառելու մտորման սկզբունքները:

9.Աշակերտները վերադառնան իրենց մեծ խմբին և գրեն հետևյալ համարներն աստվածաշնչյան համարների քարտի վրա: \էջ 235\

Առակաց 3:5-6 Ա Հովհ.1:9

Կրկնություն.

- Վերցնել աստվածաշնչյան համարների սերտողության համար նախատեսված մի մաքուր քարտ: Յուրաքանչյուր համար գրել առանձին թղթի վրա:

Կարևոր է.

- Այս համարների սերտելու և քարտերի վրա գրանցելու համար բավարար ժամանակ տրամադրեք, որպեսզի աշակերտները կարողանան ամբողջ շաբաթվա ընթացքում անգիր անել, երբ նրանք սպասում են ինչ որ մեկին, ավտոխցանման ժամանակ կամ ընդմիջման ընթացքում և այլն: Եթե չանեք այն դասերի ժամանակ, ապա սատանան աշակերտների համար բազմաթիվ արգելքներ կբարձրացնի, և մինչ հաջորդ հանդիպում կդժվարացնի նրանց համար այն անգիր անելը:
- Հիշեք, որ անգիր անելով մենք այն հասցնում ենք մեր մտքերի մեջ, իսկ մտորելով այն անցնում է մեր սրտերի մեջ: Դրա համար, որքան հնարավոր է փորձեք շաբաթվա սկզբում այն անգիր անել, որպեսզի մինչ հաջորդ հանդիպում ժամանակ լինի դրա շուրջ մտորելու համար: Ինչո՞ւ է հարկավոր մտորել նրանց շուրջ: Որովհետև Աստված ցանկանում է դրանց միջոցով մեզ Իր նմանությամբ փոխել:

Աստվածաշնչյան համարներ սերտելը և մտորելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

10. Կարդալ, քննարկել և մտորել **Փոխարինման Սկզբունքներ** ճշմարտության շուրջ \էջ 28-29\: Աշակերտներին հորդորել, որպեսզի այս շաբաթ, ամբողջ օրվա ընթացքում, արթուն ժամանակ, ժամը

երեք անգամ արտահայտելով իրենց սերն առ Աստված պարզապես ասեն՝ «Տե՛ր, ես իրոք սիրում եմ քեզ» Սաղմ. 18:1:

Բացատրություն. Շատերի համար Փոխարինման Սկզբունքը եղել է դինամիկ, կյանք փոխող սկզբունք, որը օգնել է Սատանայի հետ մարտի ժամանակ հաղթել մտքին, վերաբերմունքին և գործողություններին:

- Ընդգծել 28 էջի վերևում նշված **սկզբունքի սահմանումը – որը Աստծուց տրված ճշմարտություն է, որ հիմք կամ պատճառ է հանդիսանում ձեռք բերել հավատքի վերաբերմունք և գործողություն:**
  - **Սա կարևոր է, քանի որ մեթոդները հաճախ են ենթարկվում փոփոխությունների, սակայն սկզբունքները երբեք չեն փոխվում: Այս սկզբունքները, որոնք վերցնում ենք Աստծո խոսքից, կիրառելով մեր կյանքում, Սուրբ Հոգին օգտագործում է դրանք վերանորոգելու մեր մտքերը, վերաբերմունքը և գործողությունները:**
    - Մեր կյանքը աստվածաշնչյան սկզբունքների վրա հիմնելու լավ կողմերից մեկն այն է, որ մի սկզբունքը կարելի է կիրառել տարբեր իրավիճակների համար:
  - Մենք պետք է հասկանանք, որ այս սկզբունքը հարձակվողական է, այլ ոչ պաշտպանողական: Յուրքանչյուր սպորտաձևում, խումբը կամ անհատը հաճախակի պարտություններ է ունենում, եթե մշտապես զբաղեցնում է պաշտպանողական դիրք:
    - **Հաճախ քրիստոնյաներս պարտվում ենք, քանի որ խաղում ենք պաշտպանության գոտում և հազվադեպ կամ ընդհանրապես չենք խաղում, որպես հարձակվողներ:**

    Օրինակ. Մենք հաճախ սպասում ենք մինչև Սատանան հարձակվի և հետո որոշում ենք ինչպես պատասխանել նրան: Սատանան միշտ հարձակվողական դիրք է զբաղեցնում, և մենք մեխանիկորեն դառնում ենք պաշտպանվողներ:
- **Փոխարինման սկզբունքը** կարող է կտրուկ փոփոխություններ մտցնել մեր կյանքում: Այն ցույց կտա պաշտպանվողներ լինելու փոխարեն ինչպես ապրել հարձակվողական դիրքով:

  Պատմություն. Տարիներ շարունակ փորձություններին դեմ առնելով պարտություն էի կրում, քանի որ իմ ամբողջ ուշադրությունը կենտրոնացած էր փորձության վրա և խնդրում էի Աստծուն, որ օգնի ինձ, փոխանակ հանձնվեյի Նրան: Մի տարի, երբ կարդում էի Աստվածաշունչը, Աստված խոսեց ինձ հետ Փիլպ. 4:8 համարի միջոցով և ցույց տվեց, որ ես հաճախ ընկնում եմ Սատանայի ծուղակը: Ես գրավել էի պաշտպանության դիրք և պատասխանում էի սխալ կերպով: Սատանան էլ ավելի էր ուրախանում:

- Մինչ փորձությունների գալը, ես պետք է հնազանդ լինեմ Տիրոջը, երբ Նա ասում է, “*Մտածեք այս բաների շուրջ”:*
  - Որո՞նք են այդ բաները:
    - “*այն, ինչ **ճշմարիտ է**”*
    - *“այն, ինչ **ազնիվ է**”*
    - *“այն, ինչ **արդար է**”*
    - *“այն, ինչ **մաքուր է**”*
    - *“այն, ինչ **սիրելի է**”*
    - *“այն, ինչ **բարի է**”*
    - այն ինչ, ***առաքինի է,*** եւ
    - ***Արժանի Փառքի:***

  - Ինչո՞ւ պետք է կիրառել այս սկզբունքները, որպեսզի «*մտածեմ այս բաների շուրջ»:*
    - Այս սկզբունքը, ինչպես մնացած սկզբունքներն «Աստծո անմիջական Խոսքն է մեզ ուղղված»:
    - Առակաց 23:7-ը ասում է «*Ինչպես սրտիդ մեջ մտածում ես, այնպիսի՛նն ես դու»:* Այս համարը սովորեցնում է, որ **մենք մեր մտքերի արդյունքն ենք:** Դրա համար, ինչպիսին ցանկանում ենք լինել, այնպես պետք է մտածենք:

- Այս մասին խորհելիս հասկացա, որ այս ամենը Հիսուսի կատարյալ նկարագրումն է: Կյանքում կարող ենք հանդիպել մարդկանց կամ որոշ բաների, որոնք արժանի են փառքի, քանի որ նրանց մեջ կտեսնենք որոշ այսպիսի որակներ: Սակայն ոչ ոք իր արժանիքներով չի կարող հասնել Հիսուսին՝ Կենդանի Խոսքին *Հովհ. 1:1:* Հիսուսը ճշմարտության և ազնվության մարմնացումն է: Նա արդարության, մաքրության, անկեղծության և բարության մարմնացումն է: Նա մարմնացումն է առաքինության և արժանի է ամբողջ փառքերի:

- Իրականում Փիլիպ. 4:8 համարի «*մտածեք այս բաների շուրջ»* հատվածի ճշմարտություններն ի՞նչ դեր խաղացին իմ կյանքում:

- Ես սկսեցի լցնել օրս Աստծո նկատմամբ սիրո արտահայտություններով: Դրանք մեծարման աղոթքներ են:

- Ամբողջ օրվա ընթացքում սկսեցի արտահայտել իմ սերն առ Աստված պարզապես ասելով, «Տեր, ես սիրում եմ քեզ, քանի որ Դու *սուրբ ես* (կամ բարի ես, կամ ճշմարիտ ես, կամ սեր ես, կամ հավատարիմ ես)»:

- Ես սկսեցի լցնել օրս գոհություն մատուցելով Աստծուն ամեն բանի համար, որ Նա արել է ու անում է ինձ և ուրիշների համար:
- Ես սկսեցի փառաբանել Աստծուն Իր ողորմածության և շնորհի համար:

- Երբ սկսեցի ապրել այսպես, նկատեցի որ
  - Ավելի եմ գիտակցում իմ սերն առ Աստված:
  - Ավելի եմ գիտակցում Աստծո ներկայությունը:
  - Ավելի եմ գիտակցում Աստծո բարությունը, ողորմածությունը և շնորհը իմ կյանքում:

Բացատրություն. Երբ կարդում էի Փիլիպ. 4:8-ը, մենք այդ ժամանակ կառավարության հետ պայմանագիր էինք կնքել փոխել օդանավակայանի թռիչքի դաշտի բետոնե սալիկները: Մենք աշխատում էինք մի մեծ սարքավորմամբ, որը գործում էր ներթափանցման և վերափոխման սկզբունքով: Երբ այս սարքի կտորի ծայրը ներթափանցում էր բետոնե սալիկի մեջ, վերջինս տեղ չունենալու պատճառով դուրս էր գալիս:

Կիրառում. Այս սարքը օգտագործելու ընթացքում Աստված ցույց տվեց ինչպես կիրառել Փիլպ. 4:8 համարը մեր կյանքում: **Մենք պետք է վերահսկենք մեր միտքը և թույլ տանք մեր մտքերը լցվեն Աստծո Խոսքով, սիրո արտահայտություններով, գոհունակությունով, փառաբանությունով և մնացած ամեն բան կփոխվի մեր մտքում:**

- Այն պահին, երբ գիտակցում եք փորձության մեջ եք, անմիջապես պետք է շրջվել և նայել Հիսուսին *Եբր. 12:2:*

Խաղացեք որպես հարձակվող: Լցրեք ձեր մտքերը սիրով, շնորհակալությամբ և փառաբանեք Աստծուն:

- Իհարկե մենք չպետք է սպասենք այս սկզբունքները կիրառել փորձության վրա հասնելուց հետո: Մենք այս ամենը պետք է կիրառենք ամեն օր և երբ փորձությունը գալիս է, մենք հաղթողներ ենք, քանի որ օգտագործում ենք Աստծո ծրագրած պատասխանները:
  - Երբ սկսենք կիրառել այս սկզբունքները, շուտով կտեսնենք, որ փորձության ժամանակ այնքան ենք ներգրավված Հիսուսին նայելով, Աստծուն փառաբանելով և մեր սերն ու գոհունակությունը արտահայտելով, որ մոռանում ենք այդ բոլոր փորձությունները:

- Սատանան այլևս չի կարող վատ գաղափարներով մեր միտքը պղտոտել, քանի որ մեր միտքն արդեն լի կլինի Աստծո Խոսքով, սիրով, գոհունակությամբ և փառաբանությամբ:
- Կա՞ որևէ բնագավառ որտեղ մշտապես պարտություններ ես կրում: Այդ բնագավառում կիրառեք այս սկզբունքները և հաղթանակը ձերը կլինի:

Խոստում. Այս սկզբունքն ունի նաև խոստում: Այն կիրառողների համար Աստված խոստանում է, «խաղաղության Աստվածը քո հետ կլինի» Փիլիպ. 4:9:

- *«Դու կպահես նրան կատարյալ խաղաղության մեջ, նրանց, ում մտքերը մանում են Քո վրա, քանի որ վստահում են Քեզ»* Եսայ. 26:3:
  - Որպեսզի պահենք «կառչենք, ամուր բռնենք» մեր մտքերը Աստծո վրա, ապա պետք է «*մտածել այս բաների շուրջ»:*
- Որպեսզի Սատանայի դեմ մարտում հաղթողներ լինենք մեր մտքերի, վերաբերմունքի և գործողությունների առումով, ապա պետք է կիրառել այս սկզբունքները:
- **Նա, ով կիրառում է այս սկզբունքները կունենա և՛ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆ , և՛ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ:**

11. Քաջալերել աշակերտներին, ամեն առիթ օգտագործել վկայելու մարդկանց այն, ինչ Աստված սովորեցնում է նրանց:

Բացատրություն: Մեր նպատակն է օգնել աշակերտներին, որպեսզի կյանքի տարբեր ասպարեզներում առանց կաշկանդվելու կարողանան խոսել Հիսուսի մասին:

12. Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Հանձնարարություններին** \էջ 259-260\:

Կարդալ դասարանում. Բարձրաձայն ընթերցեք 259-րդ էջը եւ համոզվեք, որ բոլորը հասկանում են հանձնարարությունը:

Աշակերտներին քաջալերեք վաղ առավոտյան հանգիստ ժամանակ տրամադրել Աստծո հետ հաղորդակցվելուն:

> **...Օ Աստված, Դու ես իմ Աստվածը: Ես կփնտրեմ Քեզ վաղ առավոտյան, ջանասիրաբար...** *Սաղմ. 63:1*

13. Դասն ավարտել աղոթքով:

> **Օրինակ՝** Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ և գոհություն մատուցել Աստծուն, ձեզ միաբանելու և ձեզնից յուրաքանչյուրի հետ առանձին խոսելու համար:

Առաջնորդի Ուղեցույց

հեղինակի նկատողություններով .....ԴԱՍ 11

1. Դասն սկսեք Աղոթքով:

Օրինակ՝ Աշակերտներին խնդրեք ծնկի գալ ձեզ հետ միասին աղոթել և հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթել:

2. Բացեք տվյալ օրվա «Տնային աշխատանքի ստուգման» թերթիկները: Ապա ստուգեք և ստորագրեք նրանց աշխատանքները: \էջ 282\:

Հաշվետվություն: «Տնային հանձնարարությունների» թերթիկների ամենօրյա ստուգումն աշկերտներին սովորեցնում է հաշվետվության կարևորությունը, ինչպես գրված է Հռովմ. 14:12: Այն նաև օգնում է առաջնորդներին տեսնել, արդյոք աշակերտները

1. կատարո՞ւմ են տնային աշխատանքները կերտելով նոր ապրելաոճ, թե
2. ձեր քաջալերանքի կարիքն ունեն:

3. Կարդալ **«Քանզի իմ նպատակն է ճանաչել Նրան» /էջ 9/:** Թույլ տվեք աշակերտներից մեկը պատկերի այդ համարը և աղոթքով այն հանձնի Աստծուն: **Հիշեցրեք աշակերտներին կենտրոնանալ Հիսուսին** /*Եբրայ. 12:2/:*

Հիշեցում. Մենք ամեն շաբաթ կվերանայենք այս հատվածը երեք գլխավոր պատճառով՝

1. Որպեսզի մեր աչքերը հառենք Հիսուսին և միայն Հիսուսին, և հիշեցնի մեզ, որ **մեր նպատակն է ճանաչել Նրան:**

2.Որպեսզի հիշեցնի, որ **կարգ ու կանոնը վերջնանպատակ չէ: Նրանք պարզապես միջոցներ են, որոնք Աստված տվել է մեզ, որպեսզի ճանաչենք Նրան՝** ունենալով խորը, սերտ և անձնական փոխհարաբերություն: Կարգ ու կանոն պահելու մեր նպատակը Նրան ճանաչելն է:

3.Որպեսզի խորհենք այս համարի զորավոր ճշմարտությունների շուրջ, որը կօգնի գրավոր խոսքին ներթափանցել մեր միտք և այնտեղից էլ շարժվել դեպի

մեր սրտերը, **որպեսզի Հիսուսի նմանությամբ կերպարանափոխվենք:**

4.Խնդրեք որևէ մեկին, որպեսզի նա խոսի **Քարոզի** կան **Դասերի** նշումների մասին, խորհի պատկերի և իր աղոթքով այն Աստծուն հանձնի /էջ 21-24/

Քարոզի ընթացքում Աստծո սաածների վերաբերյալ մեր նշումների շուրջ մտորելը օգնում է ճանաչել Աստծուն:

5. Կարդալ և քննարկել **Տնային Աշխատանքների Կրկնության Հարցեր** \էջ 260\:

Բացատրություն.

- Օգտագործելով 260 էջի վեցերորդ հարցը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, որ Նա սովորեցնում է իրենց:
  - Թույլ տվեք աշակերտներից մեկը վկայի այն մասին, թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ մարդկանց հետ կիսել Աստծուց ստացած ճշմարտությունները:

6. Կարդալ և մանրամասն քննարկել **Հագեցնել Կյանքս Սիրով** \էջ 155-164\: Կարդալու ընթացքում պարբերաբար դադար առեք, հնարավորություն տալով աշակերտներին **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել դրանց շուրջ:

Ինչո՞ւ կյանքս հագեցնեմ քրիստոնյաների նկատմամբ սիրով: \էջ 155-159\

էջ 155.

- Աստված այս պատվերը տվեց մեզ, «*Հավատացյալ ժողովրդի նկատմամբ քո սերը թող հարատևի և հաստատվի քո մեջ, առանց ծախողման»* Եբր.13:1:

Պատմություն. Ռումինիայում ականատես եղանք քրիստոնյա եղբայրների հանդեպ ցուցաբերած սիրո տարբեր դեպքերի: Սակայն դրանցից մեկը, որ հիմա ուզում եմ պատմել, դա մի երիտասարդ ինժեների պատմությունն է: Կոմունիստական ռեժիմի ճնշման տակ նա կորցրեց իր աշխատանքը, որովհետև իր սեղանի վրա Աստվածաշունչ կար: Այդ ժամանակաշրջանում բոլորն աշխատում էին կառավարության համար, և եթե մեկը աշխատանքից զրկվեր, ապա հնարավոր է էլ աշխատանք չունենար: Կառավարությունը ստուգում էր մարդուն և եթե նա չէր աշխատում, ապա նրան բանտ էին նետում: Այս եղանակով

կոմունիստները հոգևոր ճնշումների էին ենթարկում քրիստոնյաներին: Նրանք քրիստոնյայից վերցնում էին աշխատանքը, և բանտ ուղարկում, պատճառաբանելով, որ նա չի ուզում աշխատել: Այս երիտասարդ ինժեներն ուներ ընտանիք և Բուխարեստում իր եկեղեցու ակտիվ ծառայողներից էր: Ինքը տարի շարունակ ամեն օր իր եկեղեցու հավատացյալ մարդիկ կերակուր էին բերում նրա և նրա ընտանիքի համար: Կոմունիսնական ժամանակաշրջանում երբեք ուտելիքը բավարար չէր, քանի որ յուրաքանչյուրին այն հազիվ էր բավարարում: Ամեն օր նա մի քիչ պահում էր իր ընտանիքի համար, իսկ մնացածը բաժանում կարիքավորներին: Այդ երիտասարդ ինժեները դառնում է այդ հավաքաժողովի հովիվը և այսօր Ռումինիայում նա համարվում է հարգարժան հովիվներից մեկը: **Հոգևոր եղբայրների սերը առկա էր ամեն օր: Դա մի հաստատուն ապրելակերպ էր, որը երբեք չփոխվեց:**

Ինչո՞ւ կորուսյալների հանդեպ կյանքս սիրով լցնեմ: \էջ 160-164\

էջ160.

- Աստված մեզ պատվիրեց, «*Նա, ով չի սիրում, չի սիրում նաև Աստծուն, քանի որ Աստված սեր է»* 1 Հովհ. 4:8:
  - Եթե մենք չենք սիրում կորուսյալներին, որպեսզի վկայենք նրանց այդ ավետիսը, ապա Աստված ասում է, որ մենք չենք ճանաչում Նրան:

Պատմություն. Մենք միսիոներ ընկերներ ունենք, ովքեր ծառայում են Արևմտյան Եվրոպայում: Նրանց պարտականություններից մեկն այն էր, որպեսզի Արևմտյան Եվրոպայի դպրոցներում թույլտվություն ստանային յուրաքանչյուր երեխայի Սուրբ Գրային համարների գիրք նվիրել: Այն խոսում էր Քրիստոսի կյանքի մասին, քաջալերելով կարդացողներին ընդունել Քրիստոսին, որպես իրենց կյանքի Տեր և Փրկիչ: Մեր ընկերները դպրոցներից մեկում մի երիտասարդ տղայի Սուրբ Գրային համարների գիրք նվիրեցին, և արդյունքում նա դարձավ քրիստոնյա: Տղայի ընկերներից մեկը հիվանդության պատճառով մի քանի օր բացակայում էր դասերից: Նա իր գիրքը թողեց ընկերոջ ծնողների մոտ և խնդրեց նրանց, որպեսզի ընթերցեն այն իրենց տղայի համար: Հիվանդ տղան և նրա ծնողները անհավատներ էին, բայց երբ ծնողները բարձրաձայն կարդացին Սուրբ Գրային համարների գիրքը հիվանդի համար, նրանք բոլորն էլ ապաշխարեցին: Մի քանի օր հետո տղան մահացավ, և նրան թաղեցին գիրքը ձեռքին: Նրա

ծնողները վկայեցին Հիսուսի բարի լուրը բոլոր իրենց ընկերներին և հարևաններին, և արդյունքում մի քանի ամիս հետո մոտավորապես հարյուր մարդկանց առաջնորդեցին դեպի Քրիստոսը:

- Ամենամեծ սերը, որ կարող եք տալ կորսված մարդկանց՝ Հիսուսի մասին վկայելն է:

7. Խումբը բաժանեք զույգերի՝ աղջիկներն աղջիկների հետ, տղաները՝ տղաների: Յուրաքանչյուրը թող խոսի և **ԽՊԱ** հետևյալ թեմաների շուրջ:

ա\Այս շաբաթվա **Սերտած համարները:**
Առակաց 3:5-6 1 Հովհ.1:9

բ\Այս շաբաթվա **ԱԱԸ նշումները** \էջ 65-72\:

- Մենք խումբը բաժանում ենք զույգերի, որպեսզի յուրաքանչյուրը հնարավորություն ունենա խոսելու **ԱԱԸ նշումների** և այդ շաբաթվա սերտած համարների վերաբերյալ, և ապա **խ**որհի, **պ**ատկերի և **ա**ղոթի այդ համարների շուրջ և աղոթքով այդ ամենը Աստծուն հանձնի:
- Աշակերտներին հորդորել, որպեսզի այդ պահը օգտագործեն պատշաճ և ուրիշ բաներից չխոսեն: Սա լավ առիթ է կիրառելու մտորման սկզբունքները:

8. Աշակերտները վերադառնան իրենց մեծ խմբին և գրեն հետևյալ համարներն աստվածաշնչյան համարների քարտի վրա: էջ 235

Հռովմ.3:23 Հռովմ.6:23 Հովհ.3:16

Կրկնություն.

- Վերցնել աստվածաշնչյան համարների սերտողության համար նախատեսված մի մաքուր քարտ: Յուրաքանչյուր համար գրել առանձին թղթի վրա:

- Անգիր անելուց հետո, երբ ավարտեք 30 անգամ տվյալ համարն իր խոսքերով կրկնելը աստվածաշնչյան համարի քարտի ներքևի մասում գրեք այդ օրվա ամսաթիվը:

Կարևոր է

- Այս համարները սերտելու և քարտերի վրա գրանցելու համար բավարար ժամանակ տրամադրեք, որպեսզի աշակերտները

կարողանան ամբողջ շաբաթվա ընթացքում անգիր անել, երբ նրանք սպասում են ինչ որ մեկին, ավտոխցանման ժամանակ կամ ընդմիջման ընթացքում և այլն: Եթե չանեք այն դասերի ժամանակ, ապա սատանան աշակերտների համար բազմաթիվ արգելքներ կառաջացնի, ինչը մինչ հաջորդ հանդիպում կդժվարացնի նրանց համար այն անգիր անելը:

- Հիշեք, որ անգիր անելով մենք այն մեր միտք ենք հասցնում, իսկ մտորելով այն անցնում է մեր սրտերի մեջ: Դրա համար, որքան հնարավոր է փորձեք շաբաթվա սկզբում այն անգիր անել, որպեսզի մինչ հաջորդ հանդիպում դրա շուրջ մտորելու ժամանակ լինի: Ինչո՞ւ է հարկավոր մտորել նրանց շուրջ: Որովհետև Աստված ցանկանում է դրանց միջոցով մեզ փոխել Իր նմանությամբ:

Աստվածաշնչյան համարներ սերտելը և մտորելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

9. Կարդալ, քննարկել և մտորել **...Արյունը մեր ձեռքե՞րին:** \էջ 37-43\: Աշակերտներին հորդորել, որպեսզի հաճախակի վերանայեն և **ԽՊԱ** այս հատվածը:

Բացատրություն.

- «...Արյունը մեր ձեռքերի՞ն»:
  - Կոչ է անում, որպեսզի
    - Մեր ամենօրյա խոսակցությունների ընթացքում առանց ամաչելու խոսենք Հիսուսի մասին:
    - Կոչ անել մարդկանց ընդունելու Հիսուսին որպես իրենց կյանքի Տեր և Փրկիչ:
- Հույսով եմ, դա մեզ մշտապես կհիշեցնի վկայելու կարևորության և հրատապության մասին:
- Այն տալիս է մեզ որոշ կարևոր հարցերի պատասխաններ, ինչպիսիք են՝
  - Ինչո՞ւ է Աստծո խոսքը վկայելն այդքան հրատապ:
  - Ի՞նչ է Նրա պատգամը:
  - Ովքե՞ր են Նրա պատգամաբերները:
  - Ո՞րն է Իր մեթոդը:
  - Ո՞րն է մեր և Սուրբ Հոգու պարտականությունները:

- Ո՞րն է մեր դրդապատճառը:
- Ինչպե՞ս կարող ենք լինել ավելի արդյունավետ Իր պատգամը տարածելու հարցում:
- Այն եզրափակվում է ամեն օր ավետարանչություն անելու կոչով:
- **Պատմություն:** Աներոջս հետ երեսուն օրով միսիոներական նպատակով ճամփորդության էի մեկնել Աֆրիկա: Մենք շատ բաներ տեսանք այնտեղ, բայց այս դեպքը երբեք չեմ մոռանա: Մի օր հանդիպեցինք մի աղջկա, ով բժշկվում էր գյուղից հեռու գտնվող բացօթյա հիվանդանոցում: Մեր այցելությունից առաջ, նա ծանծաղուտ գետից փորձել էր ջուր խմել և այդ պահին մի կոկորդիլոս բռնել էր նրա ոտքը և դեպի ջրի խորքերն էր քաշել: Բնիկների համար, դա սովորական բան էր, քանի որ շատերն էին այդպես կորել, սակայն այս դեպքը մնացածների նման սովորական կերպով չավարտվեց: Աղջկա մորաքույրը նրա աղաղակը լսելով, և տեսնելով թե ինչ է կատարվում, անմիջապես վազեց դեպի գետը և աղջկան փրկեց կոկորդիլոսի երախից: Նա աղջկան ապահով հասցրեց դեպի ափ: Գյուղի ժողովուրդը չգիտեին ինչ անել, նրանք փորձում են վերքերի վրա միջատասպան դեղեր դնել, դրանով իսկ ցավերն ավելի վատթարացնելով: Գյուղից մեկն իր հեծանիվով մի քանի ժամից աղջկան հիվանդանոց է հասցնում: Բժիշկը կարողանում է փրկել նրա ոտքը և երբ աղջիկն արդեն հիվանդանոցում էր, միսիոներներն աղջկան դեպի Քրիստոսն են առաջնորդում և մինչ նա կապաքինվեր սովորեցնում են կարել: Ես չգիտեմ այդ պատմության այլ մանրամասները, սակայն գիտեմ, որ աղջիկն իր գյուղ է վերադառնում, որտեղ լինելով միակ քրիստոնյան և կար անողը, սովորեցնում է մարդկանց իր հմտությունները ու վկայում Հիսուսի մասին:
  - Իր մորաքույրը կարող էր մնացածների նման պարզապես դիտել ինչպես է իր մեկ այլ ընկերը կամ բարեկամը մեռնում կոկորդիլոսի պատճառով: Սակայն նա թույլ չի տալիս, որ այդ պատահի: Նրա սերը, կարեկցանքը և հոգատարությունն այնքան մեծ էր, որ կինը կարողանում է հաղթահարել այդ վախը: Կարծում եմ այսօր Զիմբաբվե գյուղում կան մի քանիսը, ովքեր ճանաչում են Հիսուսին և կարողանում են կար անել: Այդ ամենն աղջկա մորաքրոջ հոգատարության շնորհիվ է, որ կարողացավ անել մի բան, որն ուրիշներն անկարող էին անել:

էջ 38, մաս երրորդ.

- Գործք. Առաքելոց 1:8 համարի երկրորդ պարբերությունում ասվում է, «… *դուք Իմ վկաներն անպատճառ կլինեք*…»:

- Միացյալ Նահանգների օրենքում *պետք է* բառը նշանակում է «առանց հայեցողության»:

էջ 39.

- 39 էջի հիգերորդ մասի երկրորդ կետի “Մեր պարտականությունները” հատվածը վերաբերվում է յուրաքանչյուր քրիստոնյային:
- Հոգատարությունը դառնում է մեր առաջնային դրդապատճառներից մեկը: Տես մաս վեցերորդ, երկրորդ կետ: Հիսուս Հով. 10:10-ում ասաց. «*Ես եկա, որ կյանք ունենաք և այն էլ լիարժեք* »:

Պատմություն. Հավանաբար ես քսան տարեկան էի, երբ մի յոթանասունին մոտ տիկին եկեղեցում ինձ մոտեցավ և խնդրեց, որպեսզի նրա փոխարեն մի մարդու այցելեմ: Նա ասաց, որ այդ մարդը բնակվում է մի գյուղում, որին ճանաչում էր իր մանկության տարիներից և զգուշացրեց, որ այդ մարդն իր կյանքում հանդիպած ամենադաժան և ամենակոպիտ անհավատ մարդն է: Այժմ նա գտնվում էր ծանր առողջական վիճակում, և Աստված նրան ևս մեկ հնարավորություն էր տվել, որպեսզի նա մտածի իր հոգևոր վիճակի մասին: Այդ կինը վախենում էր, որ կարող է մահանա առանց Քրիստոսի և հավիտյան հեռու լինի Աստծուց: Ես խոստացա գնալ և խոսել նրա հետ:

Քիչ անցած գնացի այցելելու նրան: Նա ապրում էր մի հին շենքում, որը ծերանոց էր դարձել: Այդ ժամանակ ծերանոցները սովորաբար կեղտոտ էին և սարսափելի հոտ էր գալիս: Ես ներս մտա և հարցրեցի որտեղ է ապրում այդ մարդը: Աշխատողներն ինձ տարան նրա սենյակը:

Այդ մարդուն խնամողներն աշխատում էին հեռու մնալ նրանից, քանզի նա շարունակ դաժան էր ու կոպիտ: Ես նստեցի և սկսեցի զրուցել նրա հետ: Շուտով մեր խոսակցությունը շրջվեց դեպի Հիսուսը: Մի քիչ նրա հետ խոսելուց հետո կարդացինք Հովհ.10:10 համարը և ասացի, որ Հիսուս եկավ, մահացավ խաչի վրա մեր մեղքերի համար, որպեսզի կյանք ունենանք: Ապա ասացի, «Քանի դեռ մարդը Հիսուսին չի վստահում, նա անգամ չի էլ ապրում և պարզապես քայլող դիակ է»:

Հետո նա խոնարհեց իր գլուխը և սկսեց առատորեն լաց լինել: Հետո նայեց իմ աչքերին և ասաց. «Ես նույնիսկ չեմ էլ քայլում»: Այդ պահին հասկացա, որ նա այլևս չի կարող

քայլել: Ես նրան առաջնորդեցի, թե ինչպես կարող է Աստծուց ներում ստանալ, և լինել փրկված և ինչպես ընդունել Հիսուսին, որպես իր կյանքի Տեր և Փրկիչ: Նա ներում խնդրեց Աստծուց և Հիսուսին իր սրտի մեջ ընդունեց:

Ես մի քանի անգամ գնացի նրան այցելելու և տեսա մի նոր մարդու: Աստված նրան մի նոր բնություն էր տվել, և նույնիսկ նրան խնամողները վկայում էին, թե ինչպես է նա փոխվել:

- Բոլորն էլ արժանի են հնարավորություն ստանալ ճանաչելու Հիսուսին, եթե նույնիսկ նա մեր իմացած ամենադաժան և ամենակոպիտ մարդը լինի: Եթե սա ճիշտ է, ի՞նչ կասեք ձեր ընկերների, բարեկամների և հարևանների մասին:

էջ 43.

- Մինչ «Ամեն օր Ավետարանի Կոչին» անցնելը հետևյալ վկայությունը կարելի է պատմել:

Պատմություն. Մի տարի առաջ մի ավետարանիչ պատմում էր Նոր Օրլեանում սեմինարներին մասնակցելու ժամանակ պատահած մի դեպք: Մի օր եկեղեցում արթնության ծառայություն անց կացնելուց հետո տուն վերադառնալու համար ավտոմեքենայով երկար ճանապարհ պետք է գնար: Կեսգիշեր էր և նա էլ շատ էր հոգնած: Երբ պետք է անցներ Նոր Օրլեանի Փոնթչերթյան երկար կամուրջը, հանկարծ հեռվից տեսնում է մի մարդու, որը ճանապարհի մեջտեղում կանգնած գոռում էր ձեռքը թափահարելով: Ուսանողը հոգնած էր և մտածում է, որ ուղղակի կանցնի այդ մարդու կողքով: Բայց ամեն անգամ փողոցը փոխելով մարդը գալիս էր և կանգնում նրա առջև՝ բաձրաձայն բղավելով և ձեռքերը թափահարելով: Վերջապես նրան մոտենալով ուսանողը տեսավ, որ մարդը իր վերնաշապիկն էր թափահարում, դրանով իսկ փորձելով կանգնեցնել իրեն: Ուսանողը կանգնեց, դուրս եկավ ավտոմեքենայից և մոտեցավ այդ մարդուն տեսնելու, թե ինչ է պատահել: Մարդը սարսափելի ջղաձիգ վիճակում չէր կարողանում խոսել: Երբ սկսեց խոսել, ասաց, որ մի մեծ նավ քանդել է կամուրջի մեծ մասը և այն ավտոբուսը, որի մեջ գտնվում էր ինքը, ընկղմվել է ջրի հատակը: Ավտոբուսի մեջ եղողներից շատերը մահացել էին, բայց նա կարողացել էր դուրս գալ ավտոբուսից, հասնել գլխավոր փողոց, որպեսզի թույլ չտա, որ մարդիկ կամրջից շրջվեն և մահանան: Ավետարանիչը մեզ ասաց, «Ես գրկեցի նրան և շարունակ շնորհակալություն էի հայտնում»: Ամբողջ

գիշեր այդ մարդու հետ կանգնած փողոցի մեջտեղում բղավում էին, «Կանգնե՛ք, կանգնե՛ք, այլապես կկործանվեք»:

- Եթե մենք լինեինք այդ մարդու փոխարեն, ով դուրս էր եկել ավտոբուսից, ի՞նչ կանեինք:
- Տարօրինակ չէ, որ մենք կարծես ավելի հաճախ մտահոգվում ենք մարդկանց Ֆիզիկական կյանքերի համար ավելի, քան նրանց հոգիներ համար:
- «Աստված տվել է մեզ հատուկ կարեկցանք մարդկանց հոգիների համար»:

10. Աշակերտներին հորդորել, որպեսզի այս շաբաթ, ամբողջ օրվա ընթացքում, արթուն ժամանակ, ժամը երեք անգամ արտահայտելով իրենց սերն առ Աստված պարզապես ասեն, «*Տե՛ր, ես սիրում եմ քեզ, իմ Զորությունը»* /Սաղմ.18:1/:

Բացատրություն.

- «Տեր ես քեզ սիրում եմ» ասելով մենք մեծարում ենք Աստծուն:
- Մենք ցանկանում ենք մշակել մեր սերն առ Աստված արտահայտելու ձև, որ կանենք ամեն օր ամբողջ օրվա ընթացքում: Սա Փոխատեղման Սկզբունքի ձևերից մեկն է, որ պետք է կիրառել:
- Մենք ցանկանում ենք կիրառել այս այնքան ժամանակ, երբ տեսնենք, որ այն դարձել է մեզ համար բնական մի բան:

11. Քաջալերել աշակերտներին ամեն առիթ օգտագործել վկայելու մարդկանց այն, ինչ Աստված սովորեցնում է նրանց:

Բացատրություն: Մեր նպատակն է օգնել աշակերտներին, որպեսզի կյանքի տարբեր ասպարեզներում առանց կաշկանդվելու կարողանան խոսել Հիսուսի մասին:

12. Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Հանձնարարություններին** էջ 261-262**:**

Կարդալ դասարանում. Բարձրաձայն ընթերցեք 249 էջը և համոզվեք, որ բոլորը հասկանում են հանձնարարությունը:

- ***Աշակերտներին քաջալերել լինել հավատարիմ առ Աստված և ամեն օր հանգիստ ժամանակ հանդիպել Նրան:***

13. Դասն ավարտել աղոթքով:

Օրինակ՝ Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ եւ գոհություն մատուցել Աստծուն, ձեզ միաբանելու և ձեզնից յուրաքանչյուրի հետ առանձին խոսելու համար:

Առաջնորդի Ուղեցույց

հեղինակի նկատողություններով .....ԴԱՍ 12

1.Դասն սկսեք Աղոթքով:

Օրինակ՝ Աշակերտներին խնդրեք ծնկի գալ ձեզ հետ միասին աղոթել և հանձնել այդ դասաժամն Աստծուն: Մի քանի շաբաթ հետո կարող եք խնդրել նրանց աղոթել աչքերը բաց, երբ քայլում են, կանգնած են կամ ավտոմեքենա են վարում, սակայն ցանկալի է, եթե հնարավոր է ծնկի եկած աղոթել:

2. Պահանջեք տվյալ օրվա «Տնային աշխատանքի ստուգման» թերթիկները: Ապա ստուգեք և ստորագրեք նրանց աշխատանքները: \էջ 283\:

Հաշվետվություն: «Տնային հանձնարարությունների» թերթիկների ամենօրյա ստուգումն աշկերտներին սովորեցնում է հաշվետվության կարևորությունը, ինչպես գրված է Հռովմ. 14:12: Այն նաև օգնում է առաջնորդներին տեսնել արդյոք աշակերտները

1. կատարո՞ւմ են տնային աշխատանքները կերտելով նոր ապրելաոճ, թե
2.ձեր քաջալերանքի կարիքն ունեն:

3.Կարդալ **«Քանզի իմ նպատակն է ճանաչել Նրան» էջ 9-10:** Թույլ տվեք աշակերտներից մեկը պատկերի այդ համարը եւ աղոթքով այն հանձնի Աստծուն: **Հիշեցրեք աշակերտներին կենտրոնանալ Հիսուսին** /*Եբրայ. 12:2/:*

Հիշեցում. Մենք ամեն շաբաթ կվերանայենք այս հատվածը երեք գլխավոր պատճառով՝

1. Որպեսզի մեր աչքերը հառենք Հիսուսին և միայն Հիսուսին, և հիշեցնի մեզ, որ **մեր նպատակն է ճանաչել Նրան:**

2.Որպեսզի հիշեցնի, որ **կարգ ու կանոնը վերջնանպատակ չէ: Նրանք պարզապես միջոցներ են, որոնք Աստված տվել է մեզ, որպեսզի ճանաչենք Նրան** ունենալով խորը, սերտ և անձնական փոխհարաբերություն: Կարգ ու կանոն պահելու մեր նպատակը Նրան ճանաչելն է:

3.Որպեսզի խորհենք այս համարի զորավոր ճշմարտությունների շուրջ, որը կօգնի գրավոր խոսքին ներթափանցել մեր մտքի մեջ և այնտեղից էլ շարժվել դեպի մեր սրտերը, **որպեսզի կերպարանափոխվենք Հիսուսի նմանությամբ:**

4.Խնդրեք որևէ մեկին որպեսզի նա խոսի **Քարոզի** կամ **Դասերի** նշումների մասին, խորհի պատկերի և իր աղոթքով այն Աստծուն հանձնի /էջ 21-24/:

Քարոզի ընթացքում Աստծո ասածների վերաբերյալ մեր նշումների շուրջ մտորելը օգնում է ճանաչել Աստծուն:

5. Կարդալ և քննարկել **Տնային Հանձնարարությունների Կրկնության Հարցեր** \էջ 262\:

Բացատրություն.

- Օգտագործելով 262 էջի չորրորդ, հինգերորդ և վեցերորդ հարցերը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, որ Նա սովորեցնում է նրանց:
  - Թույլ տվեք, աշակերտներից մեկը վկայի այն մասին, թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ բաժնեկցել Աստծուց ստացած ճշմարտությունները մարդկանց հետ:

6. Կարդալ և մանրամասն քննարկել **Հագեցնել Կյանքս Սիրով** \էջ 165-170\: Կարդալու ընթացքում պարբերաբար դադար առեք, հնարավորություն տալով աշակերտներին **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել դրանց շուրջ:

Ինչպես կյանքս հագեցնեմ Աստծո նկատմամբ սիրով: \էջ 165-170\

էջ 166-167, մաս երրորդ. Սրանք դասագրքի ամենակարևոր էջերը կարելի է համարել: Իրենց նշանակությունն այնքան կարևոր է, որ հաջորդ շաբաթվա դասի 172-173 էջերի, երրորդ մասում նրանց կրկին կհադիպենք: Ինչո՞ւ են հետևյալ էջերն այդքան կարևոր:

- **Կարևոր է, քանի որ այստեղ հիշատակված աստվածաշնչյան համարները սովորեցնում են ամեն օր մեր կյանքի ղեկը Սուրբ Հոգուն հանձնելու և Նրան մեր կյանքի Տերը հռչակելու կարևորության մասին: Սա է միակ հաղթական քրիստոնեական կյանքի բանալին:** Երբ Նա դեռ երկրի վրա էր:
  - Հիսուս չմեղանչեց, և եթե Նա վերահսկի մեր կյանքը, մենք ևս չենք մեղանչի:
  - Հիսուս ամեն անգամ ճիշտ որոշում էր կայացնում, և եթե Նա վերահսկի մեր կյանքը, մենք ևս ճիշտ որոշում կկայացնենք:
  - Հիսուս հասավ իր նպատակին, կատարելով իրեն հանձնարարված գործը, որի համար Հայրը ուղարկել էր Նրան: Եթե Նա վերահսկի մեզ, նույնը և մենք կանենք:
  - Հիսուս կյանքի ամեն ճգնաժամային իրավիճակներում անգամ Աստծո կամքի համաձայն էր գործում: Եթե Նա վերահսկի մեր կյանքը, մենք ևս այդ կանենք:

- Հիսուսի մեջ տեսանք Սուրբ Հոգու պտուղները՝ սեր, ուրախություն, խաղաղություն, բարություն, բարյացակամություն, հավատարմություն, հեզություն և ժուժկալություն: Եթե Նա կառավարի մեր կյանքը, մենք ևս այդպիսին կլինենք:

- **Եթե մենք հետևենք բոլոր կարգ ու կանոններին, սակայն միևնույն ժամանակ մեր կյանքի ղեկը չտանք Աստծուն, ապա պարզապես օրենսգետներ կլինենք:**

- Եկեք ավելի մոտիկից ծանոթանանք 166-167 էջերի, երրորդ մասին:
  - *Հանձնվել* բառը 166 էջի երրորդ մասի առաջին պարբերությունում, վերցված է Հռովմ. 6:13-ից, որն ասում է, «*...հանձնիր ինքդ քեզ Աստծուն»:* Մեկ այլ թարգմանության մեջ ասվում է, «*...դիր ինքդ քեզ Աստծո ձեռքերի մեջ»:* Մեկ ուրիշում ասվում է, «*...դիր ինքդ քեզ Աստծո տրամադրության տակ...»:* Ակնհայտ է, որ Աստված ցանկանում է, որ մենք հռչակենք Նրան մեր կյանքի Տերը՝ հանձնելով մեր կյանքի ղեկը Նրան:
    - Հովհ. 15:4-ը մեզ համար մի քանի բաներ է ընդգծում.

    - *«բնակվիր Իմ մեջ և Ես քո մեջ»* արտահայտությունը իրապես խոսում է, որ մենք մեր տները պետք է Հիսուսի մեջ կառուցենք, ճիշտ այնպես, ինչպես Նա է իր տունը մեր մեջ կառուցել: Այն պարունակում է Նրա հետ մեր կյանքը կիսելու, Նրա մեջ մեր հանգիստը գտնելու և ջերմ ընկերություն ունենալու գաղափարը:
    - Այս համարի շարունակությունը, որ ասում է, «*քանի որ ճյուղն ինքնին չի կարող պտուղ տալ, եթե այն որթի վրա հաստատված չէ, նմանապես և դուք չեք կարող, եթե Իմ մեջ չբնակվեք»:* Սա մի զգուշացում է, որ մենք պետք է հաղորդակցվենք Նրա հետ: Մենք պետք է անմիջապես խոստովանենք մեր մեղքերը Նրան և կրկին հանձնենք մեր կյանքի ղեկը Հիսուսին, եթե ցանկանում ենք Աստծո համար պտղաբեր լինենք:
    - **Հիսուսի մեջ *բնակվելու*** ապացույցը մեր հնազանդությունն է Հիսուսի և Նրա ուղարկած Սուրբ Հոգու հանդեպ:

> ***Նրանք, ովքեր կհնազանդվեն*** *Իր պատվերներին բնակվում են Նրա մեջ և Նա իրենց մեջ: Եվ սրա միջոցով իմանում ենք, որ Նա բնակվում է մեր մեջ: Մենք իմանում ենք* ***Իր ուղարկած Սուրբ Հոգու միջոցով*** /1 Հովհ.3:24/:

- Փիլիպ. 2:13-ն ընդգծում է:
  - Մենք չենք փորձում Աստծո գործն անել մեր ուժերով: Եթե փորձենք, ապա կձախողենք:
- Եթե բնակվենք Աստծո հսկողության ներքո
  - Աստված կգործի մեր միջոցով
    - Նա կտա մեզ զորություն:
    - Նա կտա մեզ զորություն և ցանկություն:
      - որպեսզի գործենք Իր համար:
      - գործենք Իր հաճության, բավարարվածության և բերկրանքի համար:
  - Եթե մենք ցանկություն չունենք ծառայել Աստծուն կամ Նրան գոհունակություն և բերկրանք պարգևել, ուստի ապացուցում ենք, որ մենք չենք ապրում Նրա հսկողության ներքո:
- Գաղատ. 5:22-25 համարներն ընդգծում են:
  - 22-23 համարներում ոչ մի կասկած չկա, որ «*...երբ Սուրբ Հոգին **ղեկավարում է** մեր կյանքերը, ապա **Նա մեր մեջ հետևյալ պտուղները կտա»***
    - Սեր, ուրախություն, խաղաղություն, բարություն, բարյացակամություն, հավատարմություն, հեզություն և ինքնակառավորում:
    - Սա է Սուրբ Հոգու պտուղները և **միայն Նա կարող է այս պտուղները տալ մեր մեջ, իր իրական տեսքով:**
    - Մենք երաշխավորված ենք, որ եթե Սուրբ Հոգին բնակվի մեր մեջ, ապա այս պտուղները մեր մեջ կունենանք:
      - Եվ մարդիկ տեսնելով այս պտուղները մեր մեջ կիմանան, որ Սուրբ Հոգին է ղեկավարում մեզ և մենք թույլ ենք տվել, որ Նա լինի մեր կյանքի Տերը:
      - Եթե Նա չէ մեր կյանքի ղեկավարը, չի լինի որևէ

Սուրբ Հոգու իրական պտուղ:

- 24 համարն ասում է, «*Նրանք, ովքեր պատկանում են Քրիստոսին, իրենց չար ցանկություններով լի բնությունը գամել են Իր խաչին»:*
- Ինչպե՞ս ենք մեր բնությունը իր չար ցանկություններով հանդերձ գամում Նրա խաչին:
  - Երբ մենք հանձնում ենք մեր կյանքի ղեկը և մեր սրտի գահն Աստծուն, մենք մեխանիկորեն խաչում ենք մեր հին մեղավոր բնությունը, քանի մեր սրտերում կան երկու դիրքեր՝ գահը և խաչը: Եթե մեր հին մեղավոր բնությունը գահին չէ, ապա պետք է խաչի վրա լինի:

Լուսաբանում.

Ճիշտ **Սխալ**





ՍՀ = Սուրբ Հոգի
ՀՄԷ = Հին Մեղավոր Էություն

- 25 համարն ասում է, «Եթե մենք ապրում ենք Սուրբ Հոգու զորությամբ, ուրեմն եկեք հետևենք Սուրբ Հոգու առաջնորդությանը մեր կյանքի բոլոր ասպարեզներում»:
- Սրանք մեր պարտականություններն են՝
  - Հանձնվել Սուրբ Հոգուն:
  - Մնալ Սուրբ Հոգու առաջնորդության ներքո:
  - Համոզվել, որ մեր կյանքի բոլոր ասպարեզները

հանձնված են Սուրբ Հոգուն և ոչինչ Նրա հսկողությունից դուրս չի:

- Մեր սրտերում չլինի որևէ գաղտնի կամ ծածուկ սենյակ, որի վրա փակցված լինի «Անձնական» կամ «Մուտքն արգելված է»:

- Սուրբ Հոգին մեր կյանքերը վերահսկելու արտոնությունը Աստծո սիրո, ողորմության և շնորհքի լավագույն դրսևորումն է:

- **Մեր աղոթքը պետք է լինի այսպես,** «Տե՛ր, ես կգնամ ամեն տեղ, որտեղ Դու ես ուզում, և կանեմ ամեն բան, ինչ Դու ես ցանկանում: Իմ նպատակն է քայլել Քո կամքի կենտրոնում և Քեզ փառք, պատիվ և բերկրանք բերել Քո առաջնորդությամբ»:

- Մեկ այլ բան, որ ապացուցում է, որ սիրում ենք Աստծուն այն է, որ «*…Նրա պատվիրանները ծանր չեն մեզ համար»* 1Հովհ.5:3:

7. Խումբը բաժանեք զույգերի՝ աղջիկները աղջիկների հետ, տղաները տղաների հետ: Նրանցից յուրաքանչյուրը թող կիսվեն և **ԽՊԱ** հետևյալ թեմաների շուրջ, իսկ նրա զույգը թող ունկնդրի նրան:

ա\ Այս շաբաթվա **Սերտած համարները:**
Հռովմ. 3:23 Հռովմ. 6:23 Հովհ. 3:16

բ\ Այս շաբաթվա **ԱԱԸ նշումները**:

- Աշակերտներին հորդորել այդ պահը օգտագործել պատշաճ և ուրիշ բաներից չխոսեն: Սա լավ առիթ է կիրառելու մտորման սկզբունքները:

8. Աշակերտները վերադառնան իրենց մեծ խմբին և գրեն հետևյալ համարներն աստվածաշնչյան համարների քարտի վրա \էջ 235\
Հովհ.1:12 Եփես.2:8-9

Կրկնություն.

- Վերցնել աստվածաշնչյան համարների սերտողության համար նախատեսված մի մաքուր քարտ: Յուրաքանչյուր համար գրել առանձին թղթի վրա:

Կարևոր է .

- Այս համարները սերտելու և քարտերի վրա գրանցելու համար բավարար ժամանակ տրամադրեք, որպեսզի աշակերտները կարողանան ամբողջ շաբաթվա ընթացքում անգիր անել, երբ նրանք սպասում են ինչ որ մեկին, ավտոխցանման ժամանակ կամ ընդմիջման ընթացքում և այլն: Եթե չանեք այն դասերի ժամանակ, ապա սատանան աշակերտների համար բազմաթիվ արգելքներ կառաջացնի, և մինչ հաջորդ հանդիպում կդժվարացնի նրանց համար այն անգիր անելը:
- Հիշեք, որ անգիր անելով մենք այն հասցնում ենք մեր մտքերի մեջ, իսկ մտորելով այն անցնում է մեր սրտերի մեջ: Դրա համար, որքան հնարավոր է փորձեք շաբաթվա սկզբում այն անգիր անել, որպեսզի մինչ հաջորդ հանդիպում ժամանակ լինի դրա շուրջ մտորելու համար: Ինչո՞ւ է հարկավոր մտորել նրանց շուրջ: Որովհետև Աստված ցանկանում է դրանց միջոցով մեզ փոխի Իր նմանությանը:

Աստվածաշնչյան համարներ սերտելը և մտորելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

9. Աշակերտներին քաջալերեք, որպեսզի այս շաբաթ արթուն ժամանակ յուրաքանչյուր ժամը երեք անգամ արտահայտեն իրենց սերն առ Աստված, ասելով. «Ես սիրում եմ Քեզ, Դու ես իմ Տերը և իմ Զորությունը» *Սաղմ.18:1*

Բացատրություն.

- «Տեր ես քեզ սիրում եմ» ասելով մենք մեծարում ենք Աստծուն:
- Մենք ցանկանում ենք մշակել մեր սերն առ Աստված արտահայտելու ձև, որ կանենք ամեն օր ամբողջ օրվա ընթացքում: Սա Փոխարինման սկզբունքի կիրառման դրսևորումներից մեկն է:
- Մենք կշարունակենք այնքան ժամանակ մինչև այն մեզ համար դառնա բնական մի բան:

10. Քաջալերել աշակերտներին ամեն առիթ օգտագործել վկայելու մարդկանց այն, ինչ Աստված սովորեցնում է նրանց:

Բացատրություն: Մեր նպատակն է օգնել աշակերտներին, որպեսզի կյանքի տարբեր ասպարեզներում առանց կաշկանդվելու կարողանան խոսել Հիսուսի մասին:

11. Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Հանձնարարություններին** \էջ 263-264\:

Կարդալ դասարանում. Բարձրաձայն ընթերցեք 263 էջը եւ համոզվեք, որ բոլորը հասկանում են հանձնարարությունը:

Աշակերտներին քաջալերել ամեն օր հանգիստ ժամանակ տրամադրել հանդիպելու Աստծուն:

12. Դասն ավարտել աղոթքով:

Օրինակ՝ Խնդրեք աշակերտներին ձեզ հետ միասին ծնկի գալ և գոհություն մատուցել Աստծուն, ձեզ միաբանելու և ձեզնից յուրաքանչյուրի հետ առանձին խոսելու համար:

1. Դասը Սկսել աղոթքով:

Օրինակ. Աշակերտներին խնդրեք ծնկի գալ ձեզ հետ և միասին աղոթեք հանձնելով ձեր ժամանակն Աստծուն:

2.Բացել այդ օրվա **Տնային Աշխատանքների Ստուգման Թերթիկները** /էջ 283/: Ստուգեք և ստորագրեք:

Հաշվետվություն. Ամեն օր աշակերտների տնային աշխատանքների ստուգումը վարժեցնում է նրանց Հռոմ. 14:12 համարում սովորեցնող հաշվետվության սկզբունքներին: Այդ նաև սովորեցնում է, որպես առաջնորդներ հետևելու ձեր աշակերտներին արդյոք՝

1. Կատարո՞ւմ են տնային աշխատանքները եւ զարգացնո՞ւմ են այդ ապրելաոճը, թե
2. Կարիք ունեն ձեր քաջալերման:

3. Կարդալ **«Իմ նպատակն է ճանաչել Նրան»** \էջ 9-10\: Աշակերտներից մեկին թույլ տվեք **պ**ատկերի այդ համարը և **ա**ղոթքով այն հանձնի Աստծուն: **Հիշեցրեք աշակերտներին կենտրոնանալ Հիսուսին** /*Եբրայ. 12:2/:*

Հիշեցում. Մենք ամեն շաբաթ կվերանայենք այս հատվածը երեք գլխավոր պատճառով՝

1. **Որպեսզի մեր աչքերը դիտեն Հիսուսին և** միայն Հիսուսին, և հիշեցնի մեզ, որ **մեր նպատակն է ճանաչել Նրան:**
2. Որպեսզի հիշեցնի, որ **կարգ ու կանոնը վերջնանպատակ չէ: Նրանք պարզապես միջոցներ են, որոնք Աստված տվել է մեզ, որպեսզի ճանաչենք Նրան՝** ունենալով խորը, սերտ և անձնական փոխհարաբերություն: Կարգ ու կանոն պահելու մեր նպատակը Նրան ճանաչելն է:
3. **Որպեսզի խորհենք այս համարի զորավոր ճշմարտությունների շուրջ,** որը կօգնի գրավոր խոսքին ներթափանցել մեր միտք և այնտեղից էլ շարժվել դեպի մեր սիրտը, **որպեսզի կերպարանափոխվենք Հիսուսի կերպարի համաձայն, դառնանք մի հայելի, որը կարտացոլի Տիրոջ փառքը:**

4. Խնդրեք որևէ մեկին կիսվել **Քարոզի կամ Դասերի Նշումների** մասին և կատարել **ԽՊԱ՝** այն հանձնելով Աստծուն **էջ 21-24** \

Կրկնություն.

- **Մենք պետք է գնանք եկեղեցի ակնկալելով Աստծուց, որ Նա կխոսի մեզ հետ:** Երբ Նա խոսում է, մենք պետք է պատրաստ լինենք գրառելու այն, ինչ Նա ասում է մեզ: Երբ մենք այն գրի առնենք, հետագայում հնարավորություն կունենանք դրանց շուրջ մտորելու: Երբ մենք մտորում ենք՝ ***խ**որհել, **պ**ատկերել և **աղ**ոթել,* մենք այս ճշմարտությունը մեր գլխից տեղաշարժում ենք դեպի մեր սիրտ, որտեղ կատարվում է այդ խոսքերի կիրառումը:

Երբ մենք լսելով Աստծո Խոսքը կատարում ենք գրառումներ և մտորում ենք այն բաների շուրջ, ինչ Աստված խոսեց մեզ, օգնում է ճանաչել Աստծուն:

5. Կարդալ և քննարկել **Տնային Աշխատանքների Կրկնության Հարցեր** \էջ 264\:

Բացատրություն.

- Օգտագործելով 264 էջի չորրորդ, հինգերորդ և վեցերորդ հարցերը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, որ Նա սովորեցնում է նրանց:
  - Թույլ տվեք աշակերտներից մեկը վկայի այն մասին, թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ բաժնեկցել Աստծուց ստացած ճշմարտությունները մարդկանց հետ:

6. Կարդալ և մանրամասն քննարկել **Ինչպե՞ս կարող եմ Կյանքս Մարդկանց նկատմամբ Սիրով Հագեցնել** \էջ 171-178\: Կարդալու ընթացքում պարբերաբար դադար առեք՝ հնարավորություն տալով աշակերտներին **խ**որհել, **պ**ատկերել և **աղ**ոթել դրանց շուրջ:

էջ 171, մաս երկրորդ, առաջին կետի առաջին հատված: Մենք կարող ենք կորսվածների հանդեպ մեր մեջ սիրո կարեկցանք մշակել, ունենալով Աստծո աչքերը, ինչպես որ Նա է տեսնում նրանց կորսված վիճակը:

- Ինչպիսի՞ն է տեսնում Աստված կորսված մարդուն:
  - «… *Քրիստոսից հեռու… Աստծո ժողովրդից հեռացած…առանց Աստծո և առանց հույսի»* Եփեսաց.2:12:

- Ինչպե՞ս կարող ենք անտարբեր լինել այդպիսի մարդու նկատմամբ:

էջ 172-1783, մաս երրորդ, 1- 4. Տես անցյալ շաբաթվա դասընթացների մեր բոլոր նշումները 166-167 էջի, մաս երրորդում:

- Վերընդգծել անցյալ շաբաթվա դասերից որոշ կարևոր կետեր:
  - Ինչո՞ւ: Քանի որ այդ քննարկված ճշմարտությունները էական դեր են խաղում հաղթական քրիստոնեական կյանքի հարցում:

էջ 178.
Գրել այս էջի վրա հետևյալ երկու բաները, որոնք վերաբերվում են ճշմարիտ սիրուն՝

1.Դա ավելի շատ արտացոլում է, քան իրագործում:
2.Դա ընտրություն է: Ես պետք է իմ ընտրությամբ հանձնվեմ Սուրբ Հոգու ղեկավարությանը՝ թույլ տալով իմ մեջ ճշմարիտ սեր դնելու:

7. Խումբը բաժանեք զույգերի՝ աղջիկները աղջիկների հետ, տղաները տղաների հետ: Նրանցից յուրաքանչյուրը թող կիսվեն և **ԽՊԱ** հետևյալ թեմաների շուրջ, իսկ նրա զույգը թող ունկնդրի նրան:

1. Այս շաբաթվա **Սերտած համարները:**

- 1 Հովհ.1:12
- Եփես.2:8-9

2. Անցյալ շաբաթվա **ԱԱԸ նշումները** \էջ 65-72\:

- Աշակերտների հորդորել, որպեսզի այդ պահն օգտագործեն պատշաճ և ուրիշ բաներից չխոսեն: Սա լավ առիթ է կիրառելու մտորման սկզբունքները:

8. Աշակերտները վերադառնան իրենց մեծ խմբին և գրեն հետևյալ համարներն աստվածաշնչյան համարների քարտի վրա: \էջ 235\
Ղուկաս 9:23 Հռովմ.6:13 Հովհ.15:4

Կրկնություն.

- Վերցնել աստվածաշնչյան համարների սերտողության համար

նախատեսված մի մաքուր քարտ: Յուրաքանչյուր համար գրել առանձին թղթի վրա:

Կարևոր հանգամանք.

- Այս համարների սերտելու և քարտերի վրա գրանցելու համար բավարար ժամանակ տրամադրեք, որպեսզի աշակերտները կարողանան ամբողջ շաբաթվա ընթացքում անգիր անել, երբ նրանք սպասում են ինչ որ մեկին, ավտոխցանման ժամանակ կամ ընդմիջման ընթացքում և այլն: Եթե չանեք այն դասերի ժամանակ, ապա սատանան աշակերտների համար բազմաթիվ արգելքներ կառաջացնի, և մինչ հաջորդ հանդիպում կդժվարացնի նրանց համար այն անգիր անելը:
- Հիշեք, որ անգիր անելով մենք այն հասցնում ենք մեր մտքերի մեջ, իսկ մտորելով այն անցնում է մեր սրտերի մեջ: Դրա համար, որքան հնարավոր է փորձեք շաբաթվա սկզբում այն անգիր անել, որպեսզի մինչ հաջորդ հանդիպում դրա շուրջ մտորելու ժամանակ լինի: Ինչո՞ւ է հարկավոր մտորել նրանց շուրջ: Որովհետև Աստված ցանկանում է դրանց միջոցով մեզ փոխի Իր նմանությանը:

Աստվածաշնչյան համարներ սերտելը և մտորելն օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

9. Աշակերտներին հանձնարարեք ստուգողական աշխատանք **Ինչպես Որոշել Իմ Սիրո Որակը** թեմային շուրջ \էջ 30\: Նրանց թույլ տվեք գումարել իրենց միավորները և բաժանել այդ գումարը 1,40 – ի վրա, որպեսզի որոշվի ամբողջ հնարավոր միավորների տոկոսը: Խնդրեք նրանց մտորել այն բանի շուրջ, թե ինչպես կարելի զորացնել նրանց թույլ կողմերը ամեն օր հանձնելով դրանք Սուրբ Հոգու հսկողությանը:

Բացատրություն. Սրանով մենք ստուգում ենք մեր սիրո որակը:

- Հուսով ենք այս ստուգումը՝
  - Ցույց կտա մեր թույլ տեղերը, որտեղ զգացվում է Աստծո սիրո արտացոլման պակասը:
  - Կհիշեցնի մեզ, որ մեր սիրո միակ չափորոշիչն Աստծո Խոսքն է, որն է Հիսուսը՝ կենդանի Խոսքը և Աստվածաշունչը՝ գրավոր Խոսքը:
  - Կօգնի մեզ հասկանալ, թե որքան անկարող ենք մենք մեր ուժերով սիրել այնպես, ինչպես Աստված է սիրում: Եվ կհասկանանք, թե որքան է Աստված ցանկանում արտացոլել իր սերը մեր միջոցով, եթե միայն հանձնվենք Իր ղեկավարությանը և թույլ տանք, որ Նա լինի մեր կյանքի Տերը:
- Աշակերտներին խնդրել՝ յուրաքանչյուրը վերցնի մի թերթիկ և վրան այսպես պատկերի՝

	Ա	Բ
1.		
2.		
3.		
412 {		
13.		
14.		
Ընդհամենը		
	÷	÷
	1.40	1.40
	=	=
	%	%

- Անուններ մի գրեք ձեր թերթիկի վրա, սակայն *Ա* տառը թող ներկայացնի նրանց, որոնց դուք իրոք սիրում եք, և *Բ* տառը՝ նրանց, որոնց դժվարանում եք սիրել:
- էջի ձախ կողմի ներքևում նշեք 1-ից մինչև 14 թվերը:
- *Ա* և *Բ* մարդիկ ձեր մտքում պահած, կատարեք 30 էջի թեսթը և գնահատեք ինքներդ ձեզ օգտագործելով 1-ից 10 միավորները: 10 թվանիշը երկու *Ա* և *Բ* աղյուսակների համար էլ սիրո ամենաբարձր որակավորումն է:
- Յուրաքանչյուր աղյուսակի միավորները գումարել և յուրաքանչյուր աղյուսակի անբողջ միավորները բաժանել 1,40 –ի, որպեսզի ստանանք ամբողջ հնարավոր միավորների տոկոսը:
  - Դուք միգուցե դասարանի համար վերցնեք մի փոքրիկ հաշվիչ և փոխանցեք դասարանով:
- Հետո խմբին հրավիրեք քննարկման: Դուք հավանաբար աշակերտներին տաք այսպիսի հարցեր, ինչպիսիք են՝
  - Ձեր թեսթի արդյունքներից ի՞նչն է ամենաշատը ձեզ զարմացրել: Բացատրեք խնդրեմ:

- Աստված բացահայտե՞ց ձեր տկար կողմերը, որում կարիք ունեք բարելավվելու: Կիսվեք դրա մասին:

- Քանի որ աստվածաշնչյան սկզբունքները *Աստծո կողմից տրված ճշմարտություն է, որը հիմք է հանդիսանում ձևավորել մեր մեջ հավատքի դիրք և վարմունք*, ինչպե՞ս կարող ենք մեր բառերով արտահայտել առաջին հարցը, որպես մի սկզբունք: *1 Կորնթ.13:4*

  - Պատասխան՝ Սերը համբերող է:

    - Այժմ ինչպե՞ս պետք է հավատքի միջոցով թույլ տանք, որ Աստծո կողմից տրված այս ճշմարտությունը փոխի մեր սխալ դիրքը և վերաբերմունքը:

1. **Պատասխանատու լինել** մեր սխալ դիրքի և վերաբերմունքների համար, և հնազանդվել Աստծուն:

2. **Գիտակցել, որ** «*Ոչ թե ձեր սեփական ուժով, այլ Աստված է, որ ներգործում է ձեր մեջ կամենալը և անելը, երկուսն էլ Իր բարի հաճության, հագեցման և բերկրանքի համար»* Փիլիպ.2:13

   - Առանց Աստծո **չենք կարող** ունենալ Սուրբ Հոգու պտուղները մեր մեջ, ոչ էլ կատարել հոգևոր ծառայություններ:

     - Քանի դեռ Աստված մեր կյանքի ղեկավարը չէ, **Նա չի կարող** մեր մեջ Սուրբ Հոգու պտուղներ տալ: Գաղատ.5:22

     - Նաև գիտենք, որ շատ ժամանակ **Աստված չի կարող** կատարել իր ծառայությունն առանց մեզ, քանի որ Նա ընտրեց մեզ, որպես միջոց:

- Մենք Քրիստոսի մեջ ստեղծվեցինք բարին գործելու համար *Եփես. 2:10, և* Սուրբ Հոգու պարգևները ստացանք «*Սրբերի* Ամենակալ ժողովրդի» *կատարելության* «սպառազինման» *համար, պաշտոնի գործի «*ծառայության գործի» *համար, Քրիստոսի մարմնի խրատելու* «շինության» համար» Եփես.4:12:

  - Դրա համար, **Աստված ի սկզբանե ընտրեց մեզ Իր գործի համար:**

  - Եսայի մարգարեն ասում էր, *«...Ես լսեցի Տիրոջ ձայնը, որ ասում էր "Ո՞ւմ ուղարկեմ և մեզ համար ո՞վ կգնա": Հետո ասացի ես, "Ահավասիկ ես, ինձ ուղարկիր": Եվ Նա ասաց, "Գնա..."»* Եսայ.6:8-9:

    - Մի կողմից հետաքրքիր է, որ **Աստված Եսային միայն ուզում էր ասել, որ Նա կարիք ունի, և մյուս կողմից՝ Եսային իր կամքով թույլ տվեց, որ Աստված Իր կարիքը հոգա իր միջոցով:**

3. **Վստահել Աստծուն** Իր գործը մեր մեջ ձևավորելու և Իր նմանությանը կերպարանփոխելու համար:

4. **Համագործակցել Աստծո հետ** հնազանդությամբ հետևելով հոգևոր կարգ ու կանոնները, որը հնարավոր է դարձնում մեր կյանքերը լեցուն Աստծո Խոսքով և

աղոթքով: Այս անելով, Աստված մեզ պատրաստելով կօգտագործի Իր փառքի համար:

- Մեր պարտականությունն է, *«Իր խոսքը պարզապես լսողներ չլինենք ինքներս մեզ խաբելով: Այլ լինենք կատարողներ»* Հակոբ.1:22:

5. **Մտորել** "**Խ**որհել, **Պ**ատկերել և **Ա**ղոքել" այս ճշմարտությունները մեր սրտերում, քանի որ մտորելու միջոցով կարող ենք կիրառել այդ ճշմարտությունները:

6. **Հանձնել** կյանքի ղեկը Հիսուսին, քանի որ երբ Նա է ղեկավարում, Նա կարող է արտացոլել մեր միջոցով և' Իր սերը, և' Իր ճշմարտությունը:

- Եթե Հիսուս լիներ մեր կյանքի ղեկավարը, ապա այս թեսթում մենք միշտ կհավաքեինք 100 % միավոր:

- Նշված տասնչորս աստվածաշնչյան սկզբունքների շուրջ մտորելը ինչո՞վ կարող է օգնել մեզ այս թեսթում: Ինչո՞ւ:
- Ի՞նչ եք կարծում, Աստծո ղեկավարության ներքո կյանքը կօգնի՞ մեզ ավելի սիրենք մեզ շրջապատող մարդկանց: Ինչո՞ւ:

- **Աշակերտներին հորդորել, որպեսզի հաճախ կատարեն այս թեսթ ստուգելու իրենց սերը մարդկանց հետ իրենց փոխհարաբերությունների մեջ:**

10. Քննարկել **Ամենօրյա Աստվածաշնչյան Ընթերցման Կոչը** երրորդ և մնացած ամիսների համար *\էջ 50\:* Աշակերտներին հորդորել կարդալ սա սկսած վաղը առավոտից:

Բացատրություն. Սա գումարվում է Ամենօրյա Աստվածաշնչի Ընթերցման Օրացույցի վերջին մասին, որը նախատեսված է,

որպեսզի աշակերտներն իրենց ամբողջ կյանքի ընթացքում տարին մեկ անգամ Աստվածաշունչ կարդան:

- Ինչո՞ւ ենք կարևորում մեր ամբողջ կյանքում Աստվածաշնչի ամբողջ ընթերցանությունը:

- **Որպեսզի հասկանանք ճշմարտության ամբողջական պատկերը, Աստված ցանկանում է հաղորդակցվել մեզ հետ Աստվածաշնչի ամբողջական ընթերցման միջոցով:** Մեկ այլ միջոց Աստծո Խոսքը մեր մտքերը հասնելու համար կարող ենք ունենալ, երբ լսենք Խոսքի քարոզչությունը, սովորենք Խոսքը և սերտենք այն: Սովորաբար Սուրբ Գրքի համարների մի փոքր հատվածի վրա ուշադրություն դարձնելով կամ կենտրոնանալով դրանց վրա: Մյուս կողմից, Աստվածաշնչի ամբողջ ընթերցումը մեկ տարում տալիս է այն ամբողջ պատկերը, որի կարիքը մենք ունենք: Աստվածաշունչ կարդալու այս չորս եղանակներն էլ կարևոր են, քանի որ մենք պետք է դիտենք Աստծո Խոսքը և՛ խոշորացույցով, և՛ հեռադիտակով:

- **Որքան հաճախ ենք կարդում Աստվածաշունչ, այնքան ավելի ենք հաստատվում այս ճշմարտությունների վրա:**

- Աստված հաճախ ցույց է տալիս մի ճշմարտություն Իր խոսքից, և այն հավասարակշռելու համար Իր Խոսքի մեկ այլ հատվածից բացահայտում է մի այլ ճշմարտություն: **Մեկ տարում ամբողջ Աստվածաշնչի ընթերցումը հնարավոր է դարձնում հասկանալ Աստծո ամբողջ խորհուրդը այնպես, որ մենք կարող ենք քայլ առ քայլ հավասարակշռության բերել մեր կյանքում պակասող այդ ճշմարտությունները:** Սա կարող է մեզ ետ պահել մեր ժամանակն անիմաստ բաների վրա վատնելուց կամ ճշմարտությունից դուրս՝ անհավասարակշիռ կյանք ապրելուց:

- Մենք պետք է հետևողական լինենք մեր հետագա կյանքում ամբողջ տարին Աստվածաշունչի ընթերցմանը: Կանոնավոր կերպով լսենք Աստծո Խոսքի քարոզչությունը: Հարատև ուսուցանել և սերտել Աստծո Խոսքը, քանի որ սրա միջոցով ենք ճշմարտությունը հասցնում մեր մտքերի մեջ: Ապա մտորելու միջոցով հասցնում այն մեր սրտերի մեջ, որտեղ Աստված օգտագործելով նրանց կերպարանափոխում է մեզ Իր նմանությանը:

11. Աշակերտներին քաջալերեք, որպեսզի այս շաբաթ յուրաքանչյուր ժամը երեք անգամ արթուն ժամանակ արտահայտեն իրենց սերն առ Աստված ասելով՝ «Ես սիրում եմ Քեզ, Դու ես իմ Տերը և իմ Զորությունը» *Սաղմ.18:1*

12. Քաջալերել աշակերտներին, ամեն առիթ օգտագործել վկայելու մարդկանց այն, ինչ Աստված սովորեցնում է նրանց:

Բացատրություն: Մեր նպատակն է օգնել աշակերտներին, որպեսզի կյանքի տարբեր ասպարեզներում առանց կաշկանդվելու կարողանան խոսել Հիսուսի մասին:

13. Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Հանձնարարություններին** \էջ 265-266**:**

Կարդալ դասարանում. Բարձրաձայն ընթերցեք 265 էջը և համոզվեք, որ բոլորը հասկանում են հանձնարարությունը:

- ***Աշակերտներին քաջալերել լինել հավատարիմ առ Աստված և ամեն օր հանգիստ ժամանակ հանդիպել Նրան:***

14. Դասն ավարտել աղոթքով:

Օրինակ: Խնդրեք աշակերտներին ծնկի գալ ձեզ հետ և միասին աղոթեցեք շնորհակալություն հայտնելով Աստծուն, որ Նա խոսեց ձեզնից յուրաքանչյուրի հետ:

Առաջնորդների Ուղեցույց

Հեղինակի կողմից..... Դաս 14

1. Դասը Սկսել աղոթքով:

Օրինակ.
Աշակերտներին խնդրեք ծնկի գալ ձեզ հետ և միասին աղոթեք հանձնելով ձեր ժամանակն Աստծուն:

2. Բացել այդ օրվա **Տնային Աշխատանքների Ստուգման Թերթիկները** \էջ 285\: Ստուգեք և ստորագրեք:

Հաշվետվություն. Ամեն օր աշակերտների տնային աշխատանքների ստուգումը վարժեցնում է նրանց Հռոմ. 14:12 համարում սովորեցնող հաշվետվության սկզբունքներին: Այդ նաև սովորեցնում է, որպես առաջնորդներ հետևելու ձեր աշակերտներին արդյոք՝

- Կատարո՞ւմ են նրանք տնային աշխատանքները և զարգացնո՞ւմ են այդ ապրելաոճը, թե
- Քաջալերման կարիք ունեն:

3. Կարդալ **«Իմ նպատակն է ճանաչել Նրան»** \էջ 9\: Աշակերտներից մեկին թույլ տվեք **պ**ատկերի այդ համարը և **ա**ղոթքով այն հանձնի Աստծուն: **Հիշեցրեք աշակերտներին կենտրոնանալ Հիսուսին** *Եբրայ. 12:2*\:
Հիշեցում. Մենք ամեն շաբաթ կվերանայենք այս հատվածը երեք գլխավոր պատճառով՝

1. **Որպեսզի մեր աչքերը դիտեն Հիսուսին և** միայն Հիսուսին, և հիշեցնի մեզ, որ **մեր նպատակն է ճանաչել Նրան:**
2. Որպեսզի հիշեցնի, որ **կարգ ու կանոնը վերջնանպատակ չէ: Նրանք պարզապես միջոցներ են, որոնք Աստված տվել է մեզ, որպեսզի ճանաչենք Նրան** ունենալով խորը, սերտ և անձնական փոխհարաբերություն: Կարգ ու կանոն պահելու մեր նպատակը Նրան ճանաչելն է:
3. **Որպեսզի խորհենք այս համարի զորավոր ճշմարտությունների շուրջ,** որը կօգնի գրավոր խոսքին ներթափանցել մեր միտք և այնտեղից էլ շարժվել դեպի մեր սիրտը, **որպեսզի կերպարանափոխվենք Հիսուսի կերպարի համաձայն, դառնանք մի հայելի, որը կարտացոլի Տիրոջ փառքը:**

4. Խնդրեք որևէ մեկին, որպեսզի կիսվի **Քարոզի կամ Դասերի Նշումների** մասին և կատարի **ԽՊԱ՝** այն հանձնելով Աստծուն \ **էջ 21-24**\:

Երբ մենք լսելով Աստծո Խոսքը կատարում ենք գրառումներ և մտորում ենք այն բաների շուրջ, ինչ Աստված խոսեց մեզ, օգնում է ճանաչել Աստծուն:

5. Կարդալ և քննարկել **Տնային Աշխատանքների Կրկնության Հարցեր** \էջ 266\:

Բացատրություն.

- Օգտագործելով 266 էջի վեցերորդ, յոթերորդ և ութերորդ հարցերը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի մասին և այն բաների մասին, որ Նա սովորեցնում է իրենց:
  - Թույլ տվեք աշակերտներից մեկը վկայի այն մասին, թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ բաժնեկցել Աստծուց ստացած ճշմարտությունները մարդկանց հետ:

6. Կարդալ և մանրամասն քննարկել **Ինչպե՞ս կարող եմ Հագեցնել Կյանքս Մարդկանց "քրիստոնյա հավատացյալների և կորսվածների" նկատմամբ Սիրով** \էջ 179-186\: Կարդալու ընթացքում պարբերաբար դադար առեք, հնարավորություն տալով աշակերտներին **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել դրանց շուրջ:

էջ 179-180.

- Այս էջում թվարկված են տասչորս սկզբունքներ, որոնք վերցված են 1Կորնթ.13 գլխից ցույց տալու մեզ, ինչպես ցուցաբերել մեր սերը մարդկանց "քրիստոնյաների և կորսվածների " նկատմամբ:
  - Այն ցույց կտա մեզ ինչպես այդ սկզբունքները թղթից հասցնենք մեր սրտի մեջ: Տես վերջին շաբաթվա ուսուցման մեջ:

էջ 180-182.

- Մեզնից յուրաքանչյուրը պատասխանատու է այլ քրիստոնյա հավատացյալների և մեր եկեղեցու քրիստոնյա հավատացյալների հետ մեր փոխարաբերության համար: **Այստեղ նշված են չորս բաներ, որոնք կարող ենք կատարել, եթե մնանք սիրո փոխհարաբերության մեջ:**

1. **Ներդաշնակություն**

2. **Ընկերություն**
3. **Բաժնեկցում**
4. **Միաբանություն**

էջ 183, մաս երրորդ, կետ 1.

- *«Ուր, որ գնանք խոսենք Քրիստոսի մասին բոլորին, ովքեր կլսեն...»* Գաղատ.1:28: Սա ամբողջ Աստծո Խոսքի ամենամեծ կոչն է ճշմարիտ հավատացյաներին:

  - Այս խոսքը մեզ սովորեցնում է, որ մենք պետք է պատրաստ լինենք խոսելու Քրիստոսի մասին բոլորին, ովքեր կլսեն այն:

Պատմություն 1. Սա մի ողբերգական պատմություն է, որը պատահել է վկայելու պատրաստ չլինելու պատճառով: Երկրորդ Համաշխարհային Պատերազմի սկզբներին, Նյումենը համալսարանի ուսանող էր: Տարիներ հետո նա դարձավ մեր եկեղեցու հովիվը: Իր ուսանողական տարիների ընթացքում նա ուներ մի մոտիկ ընկեր: Նրանք ամեն բան միասին էին անում: Միասին գնում էին համալսարան, ազատ ժամանակը միասին էին անցկացնում: Նրանք լավագույն ընկերներ էին: Երբ պատերազմը սկսվեց, հաջորդ օրը բոլոր ուսանողները գնացին զորահավաքի միանալու բանակին: Նյումենը գնաց իր լավագույն ընկերոջ հետ: Բայց այնտեղ նրանք բաժանվեցին, քանի որ նրանց ուղարկեցին տարբեր նախապատրաստական ճամբարներ: Այսպիսով, Նյումենը երկար տարիներ չտեսավ իր ընկերոջը:

Նյումենը կռվում է Եվրոպայում գեներալ Պատոնի հրամանատարության ներքո: Նա միշտ պատերազմի ամենաթեժ գծերում էր: Նրան տալիս են առաջին գծի լավագույն հրամանատարի աստիճան: Իր 100 հոգանոց զորախմբի մարդիկանցից միայն նա և երեք այլ մարդիկ են ողջ մնում, նրան տեղափոխում են այսպես երեք անգամ: Դա նշանակում է, որ մոտավորապես 500 հոգի իր հրամանատարության ժամանակ զոհվում են:

Մի օր Նյումենի և Ամերիկայի այլ զորախմբեր ներգրավվում են քաղաքի գրավման մեջ: Նյումենը կանգնած էր մի շինության անկյունում, երբ մի ամերիկացի զինվոր վազում է դեպի ազատ տարածություն և այդ ժամանակ թշնամին մի քանի անգամ զենքի հարվածներ է հասցնում այդ զինվորին:

Նյումենը տեսնելով կատարվածը, շտապում է դեպի զինվորը, որպեսզի եթե հնարավոր է փրկի նրան: Զինվորը երեսը գետնին պառկած էր: Նյումենը բարձրացնելով նրան անակնկալի է գալիս: Նա իր ուսանողական տարիների լավագույն ընկերն էր:

Ձեռքերի մեջ նրան պահած, ընկերն ասում է, «Օգնի՛ր ինձ: Օգնի՛ր»:

«Մի փոքր էլ համբերիր բժիշկները ճանապարհին են: Օգնությունը գալիս է», պատասխանում է Նյումենը:

«Ո՛չ», ասում է ընկերը: «Խոսիր ինձ հետ Հիսուսի մասին»:

Նյումենը հետագայում հիշելով ասում է, «Ես այնպիսի քրիստոնյա էի, որ նրա հետ երբեք Հիսուսի մասին չէի խոսել, և չգիտեի ինչ ասել նրան»: Դժբախտաբար, մի քանի րոպե անցած, նրա լավագույն ընկերը մահանում է և միանում հավերժությանն առանց Քրիստոսի, որովհետև պարզապես Նյումենը պատրաստ չէր տալու Հիսուսի բարի լուրը:
Պատմություն 2. Ի հակադրում, այս պատմությունը վկայելու պատրաստ մարդու մի պատմություն է, որը ծառայում էր Նյումենի զորախմբում: Սերժանտ Բեքը պատմում էր Հիսուսի մասին բոլորին, ովքեր ցանկանում էին լսել: Նա Քրիստոսի ճշմարիտ վկան էր: Մի օր շտաբից հրաման է գալիս Նյումենին, որ մի պահակախումբ ուղարկի թշնամու ետևի գծից: Այսպիսով նա կարդում է իր զինվորների ցուցակը և կանչում նրանց անունները, ովքեր պետք է գնային:
Ցուցակը կարդալուց հետո Սերժանտ Բեքը մոտենում է Նյումենին և ասում, «Պարո՛ն, կարո՞ղ եմ խոսել ձեզ հետ որպես քրիստոնյան քրիստոնյայի, քան սերժանտը կապիտանի»:

«Այո՛», պատասխանում է Նյումենը:

Նա ասում է, «Պարո՛ն, դուք մեկի անունը տվեցիք, ով պետք է առաջնորդի այդ պահակախումբը: Սակայն նա քրիստոնյա չէ և դուք գիտեք, որ նա կզոհվի այնտեղ և ետ չի վերադառնա պահակախմբի հետ: Նա իր հավիտենականությունը կանցկացնի դժոխքում: Ես վկայել եմ այդ մարդուն և նա շատ մոտ է Քիստոսին իր Տերը և Փրկիչը ընդունելուն: Դրա համար, խնդրում եմ, որ նրա փոխարեն մեկ այլ մարդու ուղարկեք»:

Նյումենը պատասխանում է, «Ցավում եմ, սակայն չեմ կարող մի այլ մոր որդու ուղարկել նրա փոխարեն: Սերժա՛նտ, դուք գիտեք, որ մենք պահակախումբ ուղարկելու համար օգտագործում ենք հերթափոխության համակարգը, և եթե քո անունն է տրվում, ապա պետք է գնաս»:

Սերժանտը պատասխանում է, «Բայց պարոն, նա կգնա դժոխք»:
«Ցավում եմ, բայց այլընտրանք չունեմ», կտրուկ պատասխանում է Նա:

«Ո՛չ, դուք ունեք այլընտրանք», պատասխանում է, «Ես կգնամ իր փոխարեն առաջնորդելու պահակախումբը»:

Նա ասում է սերժանտին, որ նա կմտածի իր առաջարկության համար: Նա երբեք չէր հանդիպել այսպիսի քրիստոնյայի, ինչպիսին էր սերժանտ Բեքը: Այսպիսով նա գնում է վրանի ետևը, ծնկի է գալիս և հարցնում Աստծուն ինչ անել: Հետո վերադառնալով սերժանտին ասում է, որ նա թույլ կտա իրեն առաջնորդելու պահակախումբը:
Այդ գիշեր պահակախումբը մեկնում է: Երբ նրանք հասնում են գետի մեջտեղները, օդում երևում են թշնամու լույսերը: Նրանք դեռ գետի խորը մասերն էին, երբ թշնամին սկսեց կրակոցները:

Քիչ անց, շտաբից հրաման է գալիս, որ Նյումենը պետք է առաջնորդի իր խումբը հարձակվելու թշնամու ետևից: Նյումենը զանգում է շտաբ և ասում, որ նրանք չեն կարող հարձակվել, քանի որ իր մարդկանցից մի քանիսը հիմա գտնվում են թշնամու և իր խմբի միջև պահակախմբի մեջ: Շտաբը պատասխանում է, «Դա կախված չէ ձեր որոշումից: Անմիջապես հարձակվեք»:

Նյումենը հնազանդվում է հրամանին և իր զորախումբը երեք օր, երեք գիշեր շարունակ կռվում է: Երբ կրակոցներն ավարտվում են, Նյումենը սկսում է կարդալ զորախմբի անվանացուցակը: Երբ կարդաց Սերժանտ Բեքի անունը, ոչ մի պատասխան չկար: Նա մի քանի անգամ կրկնում է նրա անունը, բայց փոխարենը լռություն է:
Վերջապես, մի ամերիկացի զինվոր սառած ոտքով կանգնում է և ասում, «Պարո՛ն, Սերժանտ Բեքը մահացել է սնայպերի հարվածից 317 բազայում»:

Անուններն ընթերցելուց հետո, Նյումենը գնաց և գտավ Սերժանտ Բեքի մարմինը: Նա վերցնում է իր հրացանը, սվին խրում գետնին և գցում իր սաղավարտը վրան, որպեսզի գտնելով Սերժանտ Բեքի մարմինը պատշաճ հուղարկավորության հանձնեն:

Հետագայում Նյումենն ասում է, «Սերժանտ Բեքն իմ կյանքում հանդիպած առաջին նվիրված քրիստոնյան էր, որ պատրաստ էր ոչ միայն վկայելու, այլ կյանքը տալու մի կորսվածի համար, որպեսզի նա կարողանա մի այլ հնարավորություն ունենա ընդունելու Հիսուսին, որպես Տեր և Փրկիչ»:

- Նաև 183 էջի, երրորդ մասի 2 կետում, մենք կարդում ենք Մատթ. 28:19 համարը, որտեղ պատվիրում է մեզ, «…*գնացե՛ք և աշակերտեցե՛ք…»*: **Աշակերտ պատրաստելու համար նշված են երեք կետեր:**
  1. **Գնա -** Մենք չպետք է նստենք և սպասենք, թե երբ մարդիկ կմոտենան մեզ: Մենք պետք է գնանք և գնանք հատուկ նպատակով:
  2. **Ավետարանել – Տալ կորսվածներին բարի լուրը, որ** «…*Քրիստոս մահացավ մեր մեղքերի համար, ինչպես ասում է Սուրբ Գիրքը: Նա թաղվեց և երրորդ օրը հարություն առավ Սուրբ Գրքի համաձայն»* 1 Կորնթացիս 15:3-4:

     - Հետո բացատրեք ինչպես կարող են ստանալ Աստծուց ներում, հավիտենական կյանք, դրախտ և Հիսուս Քրիստոսին, որպես իրենց Տեր և Փրկիչ:
       - Շատ միջոցներ և ծրագրեր կան, որոնք օգնում են մարդկանց ավելի ազդեցիկ լինել Քրիստոսի համար վկաներ լինելու համար: Եւ մենք քաջալերում ենք բոլոր ձևերը միայն կարողանան վկայել, սակայն վկայելը այդքան էլ դժվար չէ: Պարզապես պետք է ասել մեկին այն, ինչ գիտես Հիսուսի մասին: Վերանայել **«Ինչպե՞ս կարող եմ ավելի ազդեցիկ լինել Նրա պատգամը հաղորդելու համար»** \ էջ 41-42, մաս յոթերորդ\:
         - Երբ գիտակցում ենք, որ առանց Հիսուսի մարդիկ հույս չունեն, ապա մեր վկայելու կարևորությունը շտապողականություն է ձեռք բերում: «…*Աստծուց հեռացած…Աստծո ժողովրդից հեռու…առանց Աստծո և առանց հույսի»* Եփես.2:12:

- *Աստծո հետ Դեմ առ Դեմը* նախատեսված է կոչ անելու և քաջալերելու աշակերտներին, որպեսզի լինեն ակտիվ վկաներ Քրիստոսի համար:

3. **Մկրտել** – Մեր պարտքն է նորահավատների համար ընդգծել մկրտության կարևորությունը: Որքան հնարավոր է շուտ, որպես Տիրոջը հնազանդվելու քայլ մկրտվեն: Ջրի մեջ ընկղմվելը խորհրդաշնում է Հիսուսի մահը, թաղումը և

հարությունը: Մկրտությամբ մենք վկայում ենք, որ ես փրկված եմ և Հիսուսի հնազանդ հետևորդն եմ:

4. **Վարժեցնել** – Սովորեցրեք և վարժեցրեք նորահավատներին ինչպես ճանաչել Աստծուն, ինչպես ունենալ Նրա հետ մոտ փոխհարաբերություն և ինչպես ունենալ լիարժեք կյանքը, որ Հիսուս ասում է Հովհ.10:10-ում:
5. **Բազմացեք** – Պատրաստել աշակերտներ, որոնք էլ կկարողանան աշակերտ պատրաստել:

- *Աստծո հետ Դեմ առ Դեմը* "ճկուն" ձեռնարկ է, որը օգտագործելու համար շատ պարզ գիրք է, սակայն լի խորը ճշմարտություններով, որով յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալ կարող է աշակերտ պատրաստել: Այս ձեռնարկը հավասարապես օգտակար է և' նորադարձ հավատացյալներին, և' երկար տարիների հավատացյալներին աշակերտելու համար:

էջ 184, մաս 5.

- *«…Միշտ պատրաստ եղեք հեզությամբ և երկյուղածությամբ պատասխան տալու ամենին, որոնք ձեր ունեցած հույսի մասին կհարցնեն»* 1 Պետրոս 3:15:
  - Եթե հասկանանք, որ Աստվածաշունչն ինքն իրեն մեկնաբանող լավագույն գիրքն է, մենք կգիտակցենք, որ այս համարը մեզ չի ասում նստենք մեր տներում և սպասենք, թե երբ մարդիկ կմոտենան մեզ, որպեսզի մենք Հիսուսի մասին խոսենք նրանց: Այդպես կարող է երբեմն պատահել, սակայն Աստծո պատվերն է մեզ **ԳՆԱԼ և ԱՍԵԼ:** Մատթ.22:9 և 28:19, Մարկոս 15:4-7, Հովհ.15:16, և շատ այլ համարներ:
  - 1 Պետրոս 3:15 համարը մեզ սովորեցնում է, որ մենք պետք է պատրաստ լինենք մարդկանց պատմելու մեր հույսի մասին: Մենք մեզ հասանելի պետք է դարձնենք գնալով մարդկանց և փորձենք հարցերի միջոցով այնպիսի մթնոլորտ ստեղծել, որ մարդիկ հետաքրքրվեն մեր հույսի մասին, կամ գոնե բաց լինեն մեր վկայության առջև:

    Պատմություն. Տարիներ առաջ մեր եկեղեցում մեկ շաբաթով գիշերայի արթնության պաշտամունքներ ունեինք: Ես այցելում էի մեր տարածքում մի քանի տներ՝ հրավիրելու մարդկանց այդ ծառայություններին: Ես թակեցի մի դուռ, և թեև դռան պատուհանը փակ էր և ոչ ոք չմոտեցավ դռանը, կրկին

սկսեցի թակել: Ես լսեցի որոշ իրարանցում ներսից և ինչ որ մեկը կոպիտ ձայնով ասաց, «Ի՞նչ ես ուզում»: Ես ներկայացա և ասացի մեր եկեղեցու անունը և, որ եկել եմ պարզապես այցելելու նրան:

Երբ նա բացեց դուռը ակնհայտ երևում էր, որ նա հարբած վիճակում է: Ես զրուցեցի նրա հետ մի քանի րոպե և հարցրեցի, թե կուզենա ինձ հետ հաջորդ շաբաթ մասնակցել արթնության ծառայությանը: Նա մի րոպե կանգ առավ, իսկ հետո ասաց, «Ես չեմ կարող, անդրավարտիքներս կեղտոտ են»:

«Գնա և բեր», ասացի ես, «ես կտանեմ լվացքատուն և ժամանակին կվերադարձնեմ, որպեսզի վաղը գնանք միասին»:

Նա անակնկալի եկավ և ավելի զգաստացավ: Նա հարցրեց, «Կանե՞ս»:

«Այո՛», ասացի ես:

Այսպիսով, նա բացեց դուռը և ներս հրավիրեց: Երկուսով մտանք սենյակ, որտեղից դուրս հանեց մի հին արկղ և սկսեց փնտրել իր անդրավարտիքները: Վերջապես, գտավ և ես տարա:

Այդ երեկո, երբ ծառայությունից տուն էի վերադառնում, մեր Կրթության Նախարարը կանչեց ինձ և հարցրեց, արդյոք ճանաչում եմ Ջոն անունով մարդու: Նա այն մարդն էր, ում քիչ առաջ այցելել էի: Նա շարունակեց ասելով, թե ինչպես է Ջոնը ծառայությունից հետո մոտեցել և ասել, «Ես ուզում եմ փրկություն ստանալ»: Ավետարանիչ էդի Մարթինը տարել էր նրան հովվի սենյակ և բացատրել, թե ինչպես են դառնում քրիստոնյա: Ջոնը աղոթել էր և ընդունել Քրիստոսին: Ես հուզվել էի:

Ջոնի մաքուր անդրավարտիքները ձեռքիս գնացի, որ միասին գնանք հաջորդ երեկոյան ծառայության: Դռան վրա մի գրություն կար, որ ասում էր, «Թող անդրավարտիքներս: Ես չեմ կարող գալ»: Առջևի պատուհանը փակ էր, բայց շարունակեցի թակել դուռը մինչև վերջապես մոտեցավ դռանը: Նա

ամաչում էր: Նրա ընկերներից մեկը օրվա ընթացքում եկել էր և խմելու բան էր առաջարկել: Ջոնը չէր մերժել: Ես նրան սուրճ առաջարկեցի և հաջորդ երեկոյան նա եկավ արթնության ծառայությանը, այն մտադրությամբ, որ նա իր որոշումը դարձնելու է բացահայտ: Երբ հրավերի պահը եկավ, ես աղոթում էի, «Տե՛ր, ես չգիտեմ արդյոք Ջոնի որոշումը ճշմարիտ է, թե ոչ, սակայն եթե այդպես է և Դու ուզում ես, որ նա հրավերի ժամանակ առաջ գնա, ուրեմն, թող նա մոտենա և հարցնի ինձ, երբ գնա առաջ»:

Ես դեռ չէի վերջացրել աղոթքս, երբ Ջոնը կանգնեց կողքս և ասաց, «Հիմա՞ պետք է գնանք»:

«Ջո՛ն», ասացի ես, «ուզո՞ւմ ես այս եկեղեցում բոլորն իմանան, որ դու հավատում ես Քրիստոսին, որպես քո կյանքի Տեր և Փրկիչ»:

Ջոնը բարկացած նայեց ինձ և ասաց, «Դրա համար չենք եկե՞լ»:

«Այո՛, Ջո՛ն», ասացի նրան, «Դրա համար ենք եկել»:

Մենք գնացինք առաջ և Ջոնը հրապարակայնորեն կայացրեց իր որոշումը: Ջոնը մկրտվեց, որպես նշան, որ նա Հիսուսի հետևորդն է և քիչ անց եկեղեցում ծառայում էր, որպես խնամակալ: Այդ տարիներն իր կյանքի ամենաերջանիկ տարիներն էին: Մի քանի տարի հետո նա մահանում է: Հավանաբար երկար տարիների խմելու արդյունք էր: Նա քառասունին մոտ էր, երբ մահացավ: Սակայն ուրախանում եմ, երբ գիտեմ, որ մի օր հանդիպելու եմ նրան երկնքում:

- **Ինչո՞ւ պատմեցի այս երկար պատմությունը:**
  - **Որովհետև, Ջոնի նման շատերը կան, որոնք չեն գա մինչև մենք չգնանք և հրավիրենք նրանց:**
  - **Երբեմն գուցե կարիք ունենաք վերցնել նրանց կեղտոտ անդրավարտիքները և տանենք լվանալու, դրանով ցույց տալու, որ հոգում ենք նրանց մասին:**
  - **Եթե մենք վկայելով չցուցաբերենք մեր սերը Ջոնի նկատմամբ և նրա նման շատ այլ մարդկանց նկատմամբ, ապա ո՞վ պետք է անի:**

▪**Արդյոք ո՞չ բոլորն են արժանի Հիսուսին, որպես Տեր և Փրկիչ ունենալու հանրավորությունին:**

Պատմություն. Երբ մի անգամ այցելում էի անհավտներին և

մարդականց, ովքեր եկեղեցում չէին, մի մարդ ապաշխարհության աղոթք անելուց հետո, ասաց ինձ, «Շնորհակալ եմ: Ես հույս ունեի, որ մի օր ինչ որ մեկը կգա և կպատմի ինձ Հիսուսի մասին ավելի»:

էջ 185.

- Ե՞րբ պետք է քրիստոնյաների և կորսվածների հանդեպ լցվենք սիրով, և ցույց տանք մեր սերը նրանց նկատմամբ:
  - Պատասխան - ԱՅՍՕՐ:
- Ինչպե՞ս կարող եմ քրիստոնյաների և կորսվածների նկատմամբ լցվել սիրով և հավատարմորեն ցուցաբերել այդ սերը նրանց:
  - Պատասխան – ԿՅԱՆՔԻԴ ՂԵԿԸ ՀԱՆՁՆԻՐ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ: Երբ Նա լինի կյանքիդ ղեկավարը, Նա կկարողանա արտացոլել Իր սերը մեր միջոցով:

7. Խումբը բաժանեք զուգերի՝ աղջիկները աղջիկների հետ, տղաները՝ տղաների: Նրանցից յուրաքանչյուրը թող կիսվեն և **ԽՊԱ** հետևյալ թեմաների շուրջ, իսկ նրա զույգը թող ունկնդրի նրան:

1. Այս շաբաթվա **Սերտած համարները:**

- Ղուկաս 9:23
- Հռովմ.6:13
- Հովհ.15:4

2. Անցյալ շաբաթվա **ԱԱԸ նշումները** էջ 65-72:

- Մենք խումբը բաժանում ենք զույգերի, որպեսզի յուրաքանչյուրը հնարավորություն ունենա խոսելու **ԱԱԸ նշումների** և այդ շաբաթվա սերտած համարների վերաբերյալ, և ապա **խ**որհի, **պ**ատկերի և **ա**ղոթի այդ համարների շուրջ և աղոթքով այդ ամենը Աստծուն հանձնի:
- Աշակերտներին հորդորել, որպեսզի այդ պահը օգտագործեն պատշաճ և ուրիշ բաներից չխոսեն: Սա լավ առիթ է կիրառելու մտորման սկզբունքները:

8. Աշակերտները վերադառնան իրենց մեծ խմբին և գրեն հետևյալ համարներն աստվածաշնչյան համարների քարտի վրա: էջ 235

- 2 Տիմոթ. 3:16:17
- Եբրայ.4:12

Կարևոր հանգամանք

- Հիշեք, որ անգիր անելով մենք այն հասցնում ենք մեր մտքերի մեջ, իսկ մտորելով այն անցնում է մեր սրտերի մեջ: Դրա համար որքան հնարավոր է փորձեք շաբաթվա սկզբում այն

անգիր անել, որպեսզի մինչ հաջորդ հանդիպում ժամանակ լինի դրա շուրջ մտորելու: Ինչո՞ւ է հարկավոր մտորել նրանց շուրջ: Որովհետև Աստված ցանկանում է դրանց միջոցով մեզ փոխի Իր նմանությանը:

Աստվածաշնչյան համարներ սերտելը և մտորելը օգնում է մեզ ճանաչել Աստծուն:

9. Աշակերտներին քաջալերեք, որպեսզի այս շաբաթ յուրաքանչյուր ժամը երեք անգամ, արթուն ժամանակ արտահայտեն իրենց սերն առ Աստված ասելով՝ «Ես սիրում եմ Քեզ, Դու ես իմ Տերը և իմ Զորությունը» *Սաղմ.18:1*

- Մենք ցանկանում ենք կիրառել այս այնքան ժամանակ, երբ տեսնենք, որ այն դարձել է մեզ համար բնական մի բան:

10.Աշակերտներին հորդորել ամեն առիթ օգտագործել, որպեսզի բաժնեկցեն մարդկանց հետ, այն ինչ սովորել են Աստծուց:

Բացատրություն
Մենք ցանկանում ենք, որպեսզի աշակերտները կյանքի ցանկացած ասպարեզում լինեն ազատ Հիսուսի մասին վկայելու հարցում:

11.Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Տնային Աշխատանքներին** էջ 267-268**:**

Կարդալ դասարանում: Բարձրաձայն կարդալ էջ 267 –ը դասարանում եւ համոզվեք, որ բոլորին հասկանալի էր:

- ***Աշակերտներին հորդորել, որպեսզի ամեն օր հանգիստ ժամանակ տրամադրեն Նրան հանդիպելու համար:***

… Ով Աստված, Դու ես իմ Աստվածը: Ես ջանասիրաբար կփնտրեմ Քեզ վաղ առավոտյան… Սաղմ.63:1

12. Դասն ավարտել աղոթքով:

Օրինակ՝ Աշակերտներին խնդրեք ծնկի գալ քեզ հետ միասին եւ շնորհակալություն հայտնել Աստծուն անհատապես խոսելու եւ ձեր հետ ունեցած ժամանակի համար:

1. Դասը Սկսել աղոթքով:

Օրինակ.
Աշակերտներին խնդրեք ծնկի գալ ձեզ հետ և միասին աղոթեք հանձնելով ձեր ժամանակն Աստծուն:

2. Բացել այդ օրվա **Տնային Աշխատանքների Ստուգման Թերթիկները** էջ 286:

3. Քննարկել հետևյալ հարցը: **Ինչո՞ւ պետք է մեր կյանքերը ներդնենք աշակերտելու համար:**

Քաջալերել - Աշակերտներին օգնեք տեսնել իրենց կյանքերը ներդնելու գինը: Մենք թույլ ենք տալիս Աստծուն մեր միջոցով աշակերտներ-պատրաստողներ բարձրացնի, որովհետև՝

1. **Դա Հիսուսի պատվերն է,** որ մենք «*Գնանք և աշակերտ պատրաստենք»* Մատթ.28:19
2. **Դա այն է, ինչ Հիսուս ցույց տվեց մեզ,** և մենք պետք է նմանվենք Նրան:
3. **Մենք տեսնում ենք այդ Պողոսի կյանքում,** ինչպես նա հետևելով Հիսուսի օրինակին, աշակերտում էր: Պողոսը աշակերտեց Տիմեթեոսին, և կոչ արեց Տիմոթեոսին նմանապես այլ մարդկանց աշակերտի, որոնք էլ այդպես շարունակ աշակերտեն մարդկանց: *«Եւ այն բաները, որոնք ինձնից լսեցիր՝ շատ վկաների ներկայությամբ, հավատարիմ մարդկանց հանձնիր, որպեսզի նրանք էլ կարողանան ուրիշներին սովորեցնել»* 2 Տիմոթ.2:2:
4. **Աշակերտներ պատրաստելը ցույց է տալիս, թե ինչպես ենք բազմացնում մեր ծառայությունը,** քանի որ հավիտենականության մեջ այն վճարվում է դիվիդենդով «շահաբաժին»: Աշակերտ պատրաստելով մենք հնազանդվում ենք և կատարում ենք այն,

ինչի համար Աստված մեզ կյանք է տվել: Այն ծառայությունը, որ Նա հանձնել է մեզ, կշարունակվի մնալ հավատարիմ մարդկանց կյանքերում, որոնց մենք աշակերտել ենք, եթե նրանք էլ շարունակեն աշակերտ պատրաստել: Հոգևոր բազմացումը շարունակվում է սերունդ առ սերունդ, նույնիսկ եթե մենք էլ անցնենք: **Եթե մենք հավատարմորեն աշակերտ պատրաստենք և Հիսուս Իր գալը հետաձգի, ապա մեզնից յուրաքանչյուրի պարտականությունն է, որպեսզի հոգևոր բազմացման սկզբունքի համաձայն միլիոնից ավելի մարդիկ փրկվեն և աշակերտվեն մինչ Հիսուսի գալը:**

Բացատրություն.

1. Հիսուսի ներկայացրած ծրագիրը աշակերտության վերաբերյալ, ցույց է տալիս, որ ճշմարիտ հավատացյալը, աշակերտը պետք է հնազանդ լինի Հիսուսին և աշակերտ պատրաստի:
2. Այս տեսանելի պատկերով ենթադրում ենք, որ յուրաքանչյուր աշակերտված անձ եթե աշակերտի ամեն տարի երկու մարդկանց, մինչև աշխարհում բոլորը լինեն աշակերտված:

Հարց – Որքա՞ն ժամանակ կպահանջվի, որպեսզի աշխարհում ամեն մեկը՝ մոտավորապես 6.08 միլիարդ մարդ դառնան աշակերտներ, սովորողներ և Հիսուսի հնազանդ հետևորդներ, եթե սկսենք քեզնից:
Պատասխան – 16 տարուց մի փոքր շատ:

Տեսանելի Պատկերը

Այժմ	1 - **Դուք**
0.5 տարի	2 աշակերտ
1 տարի	4 աշակերտ
1.5 տարի	8 աշակերտ
2 տարի	16 աշակերտ
2.5 տարի	32 աշակերտ
3 տարի	64 աշակերտ

3.5 տարի	128 աշակերտ
4 տարի	256 աշակերտ
4.5 տարի	512 աշակերտ
5 տարի	1,024 աշակերտ
5.5 տարի	2,048 աշակերտ
6 տարի	4,096 աշակերտ
6.5 տարի	8,192 աշակերտ
7 տարի	16,384 աշակերտ
7.5 տարի	32,768 աշակերտ
8 տարի	65,536 աշակերտ
8.5 տարի	131,072 աշակերտ
9 տարի	262,144 աշակերտ
9.5 տարի	524,288 աշակերտ
10 տարի	1,048,576 աշակերտ
10.5 տարի	2,097,152 աշակերտ
11 տարի	4,194,304 աշակերտ
11.5 տարի	8,388,608 աշակերտ
12 տարի	16,777,216 աշակերտ
12.5 տարի	33,554,432 աշակերտ
13 տարի	67,108,864 աշակերտ
13.5 տարի	134,217,728 աշակերտ
14 տարի	268,435,456 աշակերտ
14.5 տարի	536,870,912 աշակերտ
15 տարի	1,073,741,824 աշակերտ
15.5 տարի	2,147,483,648 աշակերտ
16 տարի	4,294,967,296 աշակերտ
16.5 տարի	8,589,934,592 աշակերտ
17 տարի	17,179,869,184

աշակերտ

Աշակերտելու վերաբերյալ մեզ ուղված Հիսուսի պատվերի **հնարավոր պատասխանները՝**

1. Բոլորը չէ, որ կատարում են, ինչո՞ւ ապա ես:
2. Ես ժամանակ չունեմ, թող ուրիշ մեկը գնա:
3. Շատ գումար է հարկավոր:
4. Եսային պատասխանում է Տիրոջն ասելով, «Ահավասիկ ես, Տե՛ր: Ուղարկի՛ր ինձ, օգտագործիր ինձ, ներգրավվիր ինձ մի բանում, որ ինձնից վեր է: Տեր, ուզում եմ կյանքս կշիռ ունենա Քեզ համար» *Եսայ.6:8*

4. Խնդրեք որևէ մեկը խոսի **Քարոզի կամ Դասերի Նշումների** մասին և կատարի **ԽՊԱ** այն հանձնելով Աստծուն: **էջ 21-24**

Քաջալերում - Երբ աշակերտներից մեկը դասի ժամանակ ավարտի

քարոզի իր նշումների մասին խոսելը և մտորումը, հորդորեք բոլոր աշակերտներին այսպես շարունակել քարոզների ընթացքում նշումներ կատարելը: Եթե դադարենք նշումներ կատարել, ապա կնշանակի, որ մենք չենք հասկացել մտորելու կարևորությունը:

5. Կարդալ եւ քննարկել **Տնային Աշխատանքների Կրկնության Հարցեր** \էջ 268\:

Բացատրություն.

- Օգտագործելով 268 էջի հինգերորդ, վեցերորդ, և յոթերորդ հարցերը, քաջալերեք աշակերտներին խոսել մարդկանց հետ Հիսուսի եւ այն բաների մասին, որ Նա սովորեցնում է իրենց:
- Թույլ տվեք աշակերտներից մեկը վկայի այն մասին թե ինչպես է անցյալ շաբաթ ինչ որ մեկի հետ զրուցել Հիսուսի մասին կամ բաժնեկցել Աստծուց ստացած ճշմարտությունները մարդկանց հետ:

6. Կարդալ և մանրամասն քննարկել **Ինչպե՞ս կարող եմ Հագեցնել Կյանքս Աստծո և այլ մարդկանց հանդեպ Սիրով** \էջ 187-191\: Կարդալու ընթացքում պարբերաբար դադար առեք՝ հնարավորություն տալով աշակերտներին **խ**որհել, **պ**ատկերել և **ա**ղոթել դրանց շուրջ:

էջ 187-191.

Բացատրություն. «Ինձ համար լավ է ունենալ Քրիստոսին կենտրոնացած սեր և ընդունել ինքս ինձ այնպիսին, ինչպիսին որ եմ»: Այս սկզբունքը շատ կարևոր է, քանի որ Սատանան մշտապես հարձակվում է մեզ վրա: Նրա նպատակն է կործանել մեզ, դրդելով մեզ կամ հպարտության, կամ էլ չափից դուրս ինքնախղճահարման մեր ձախողումների կամ զգացմունքների վերաբերյալ:

- Մենք կարող ենք Սատանայի հարձակումներին դիմակայել՝ հիշելով Աստծո խոստումները և Նրա բարությունը: Մենք կարող ենք պաշտպանության դիրքից տեղափոխվել հարձակման, եթե կիրառենք Տեղափոխման Սկզբունքը էջ (28-29), և անդադար արտահայտենք մեր սերն առ Աստված, գոհություն մատուցելով Նրան Իր բոլոր խոստումների համար, որ սովորեցինք այս դասերի ընթացքում: Այս անելով՝
  - Մենք հանում ենք Սատանայի բացասական մտքերը մեր ուղեղից և փոխարենը սկսում ենք փառաբանել և գոհություն մատուցել Աստծուն:
  - Մենք սկսում ենք նայել ինքներս մեզ Աստծո տեսանկյունից:

- Մենք տեսնում ենք ինչպես է Աստված գնահատում մեզ:
- Մեկն ասում էր, «Ես ունեի սեփական անլիարժեքության զգացում, սակայն այժմ գիտակցում եմ, որ դա պարզապես մի զգացում չէ: Ես իրոք *լիարժեք* չեմ, դրա համար ես հանձնվում եմ Իր վերահսկողությանը և համագործակցելով Նրա հետ, Նա փոխում է ինձ՝ դարձնելով այնպիսին, ինչպիսին Նա է ցանկանում»:

Քաջալերել.

- Միգուցե տվյալ անձը, որին աշակերտում եք կամ խմբից որևէ մեկը դժգոհ է Աստծուց իր արտաքին տվյալների համար: Հնարավոր է նա ինքն իրեն տեսնում է անհրապուրիչ, կամ ապրում է մի տան մեջ, որտեղ նրան չարաշահում են, կամ իրեն չսիրված և չհարգված է զգում, կամ գուցե անառողջ է: Հավանական է, որ նա նույնիսկ չիմանա, թե ինչու է դժգոհ Աստծուց:
- Այս դասի ընթացքում, խնդրեք *բոլորին* լուռ մտորել յուրաքանչյուր համարի շուրջ: Կանգ առեք առիթ տալով տարբեր աշակերտների բարձրաձայն յուրաքանչյուր համարի շուրջ մտորել: Նրանց լսելու ընթացքում հնարավոր է տեսնեք հրաշքներ, թե ինչպես են յուրաքանչյուր համարի շուրջ **խ**որհում, **պ**ատկերում և այն **ա**ղոթքով հանձնում Աստծուն:
  - Դժվար է մտորել այս համարների շուրջ և չտեսնել, որ՝
    - **Աստված սիրում է մեզ առատապես:**
    - **Աստված հրաշալի ծրագիր ունի մեր կյանքերի համար** անտեսելով հանգամանքները կամ անցյալը:
      - **Երբեք ուշ չէ:** Մենք կարող ենք սկսել մեր կյանքի մնացած տարիների Աստծո ծրագիրը այսօրվանից:
      - **Քրիստոնյաի կյանքը սկսում է այս կետից և գնում առաջ:** Հիսուսի հետ կյանքը նման է մի ճամփորդության: Կատարեք ձեր քայլը:
    - **Աստված հոգում է** և մտահոգված է ձեր կյանքի յուրաքանչյուր մանրուքի համար:
    - **Աստված մեզ կյանք է շնորհել հատուկ նպատակով:** Մենք Աստծո կողմից հատուկ առաքելությամբ ենք եկել երկիր:

7. Խումբը բաժանեք զուգերի՝ աղջիկները աղջիկների հետ, տղաները՝ տղաների: Նրանցից յուրաքանչյուրը թող կիսվեն և **ԽՊԱ** հետևյալ թեմաների շուրջ, իսկ նրա զույգը թող ունկնդրի նրան:

ա\ Այս շաբաթվա **Սերտած համարները:**

- 2 Տիմոթեոս 3:16-17
- Եբրայեց.4:12

բ\ Անցյալ շաբաթ կատարած **ԱԱԸ նշումները** \էջ 65-72\:

- Աշակերտների հորդորել, որպեսզի այդ պահը օգտագործեն պատշաճ և ուրիշ բաներից չխոսեն: Սա լավ առիթ է կիրառելու մտորման սկզբունքները:

8. Աշակերտները վերադառնան իրենց մեծ խմբին և գրեն հետևյալ համարներն աստվածաշնչյան համարների քարտի վրա: էջ 235

- Եսայ. 41:10
- Երեմ.29:11 տես 188 էջ

Քաջալերում.

- Խնդրեք նրանց կիսվել ձեզ հետ, թե ինչպիսի օրհություն է տալիս աստվածաշնչյան համարների սերտողությունը:
- Հորդորեք աշակերտների, որ շարունակեն աստվածաշնչյան սերտողությունները իրենց ամբողջ կյանքի ընթացքում:

9. Քննարկել **Ամենօրյա Աստվածաշնչի Ընթերցման Կոչը 15-րդ Դասից հետո** \էջ 192\:

Քաջալերել աշակերտներին շարունակել Աստվածաշնչյան ուսուցումը իրենք իրենցով: Հորդորել նրանց որոշ նպատակներ դնել և շարժվել ըստ իրենց քայլերի:

10. Քննարկել **Աստվածաշնչյան Ուսուցման Մեթոդները** \էջ 193\:

Քաջալերում – Ոչինչ չի կարող համեմատվել Աստծո Խոսքի "աստվածաշնչյան դասընթացների" խորը ուսումնասիրման և այնտեղից անգին մարգարտե ճշմարտությունների հայտնաբերման հետ, որոնք մեզ համար են:

11. Քննարկել **Աստվածաշնչյան Ուսուցման Մեթոդները** \էջ 194-227\:

- Ըստ գլուխների
- Ըստ պարբերությունների
- Ըստ համարների
- Ըստ գրքերի
- Ըստ խոսքերի
- Ըստ թեմաների
- Ըստ կենսագրության

Քաջալերել

- Երբ դասարանում խոսեք աստվածաշնչյան դասընթացների վերոհիշյալ մեթոդների մասին, աշակերտներին հորդորեք, որպեսզի սկսեն այս ուսուցումները իրենց նախընտրած կերպով և շարունակեն սովորել Աստծո Խոսքն իրենց ամբողջ կյանքի ընթացքում: Ասացեք նրանց, որ
- Պարտադիր չէ գրանցել պահանջվող յուրաքանչյուր տողը:
- Խնդրեցեք, որպեսզի Աստված օգնի ձեզ և արեք այն, ինչ կարող եք անել:
- Նախ սովորեք այն դասերը, որոնք ամենահեշտն են ձեզ համար:
- Որոշ նպատակներ դրեք ձեր առջև և շարժվեք ձեր քայլերով:
- Հիշեք, որ աստվածաշնչի ուսումնասիրման մեր նպատակը Հիսուսին ավելի խորը, մոտիկից և անձնապես ճանաչելն է:

12. Քննարկել **Աստվածաշնչի Ուսումնասիրման Օգտակար Գործիքներ** \էջ 228-232\:

Բացատրություն.

- Այս էջում դուք կգտնեք որոշ տեղեկություններ՝
  - Առաջադրված աստվածաշնչյան ուսուցումը:
  - Առաջադրված աղբյուրները:
  - Աստվածաշնչի մեկնաբանության ընդհանրացումները:
  - Աստվածաշնչի ուսումնասիրման համար անվճար ինտերնետային աղբյուրներ:

13. Աշակերտներին քաջալերեք, որպեսզի այս շաբաթ յուրաքանչյուր ժամը երեք անգամ, արթուն ժամանակ արտահայտեն իրենց սերն առ Աստված ասելով՝ «*Ես սիրում եմ Քեզ, Դու ես իմ Տերը և իմ Զորությունը» Սաղմ.18:1*

- Աշակերտների քաջալերել, որ այսպես շարունակեն իրենց ամբողջ կյանքերի ընթացքում:

14. Աշակերտներին հորդորել ամեն առիթ օգտագործել, որպեսզի վկայեն մարդկանց այն, ինչ սովորել են Աստծուց:

Բացատրություն.

- Մենք ցանկանում ենք, որպեսզի աշակերտները կյանքի ցանկացած ասպարեզում լինեն ազատ Հիսուսի մասին վկայելու հարցում:
- Քաջալերեք նրանց, որպեսզի կատարեն այն իրենց ամբողջ կյանքերի ընթացքում:

15.Աշակերտների ուշադրությունը հրավիրեք իրենց **Տնային Աշխատանքներին** \էջ 269-271\:

Կարդալ դասարանում: Բարձրաձայն կարդալ էջ 269-270 –ը դասարանում եւ համոզվեք, որ բոլորին հասկանալի էր:

- Աշակերտներին քաջալերել, որպեսզի այն ինչ սովորեցին այս տասնհինգ շաբաթների ընթացքում, շարունակեն կատարել իրենց անբողջ կյանքի ընթացքում:
- Քաջալերել նրանց հավատարիմ մնալ Աստծուն և ամեն օր իրենց ամբողջ կյանքի ընթացքում հանգիստ ժամանակ տրամադրեն Աստծուն հանդիպելու համար:
- Քննարկեք 270 էջի 9-ը կետը: Տեսեք արդյոք համաձա՞յն են նրանք ամիսը մեկ անգամ հաջորդ յոթ ամիսների ընթացքում հանդիպել, մեկզմեկ հաշվետվություն տալու և քաջալերելու համար:

16. Դասն ավարտել աղոթքով:

Վերջին պատմությունը

Քարոզիչ Հալոքսը սովորություն ուներ արծիվների օրինակը բերել: Արծիվները կառուցում են իրենց բները և ձագուկներին մեծացնում բարձր լեռների փոքրիկ ժայռերի վրա: Երբ ձագուկներն արդեն մեծանում են և ժամանակն է լինում թռչելու, ծնողները պարզապես քանդում են նրանց բույնը: Պատգամը պարզ, բայց և ուղղակի է: Ժամանակն է թռչելու:

- Հույս ունենք, որ ձեր խումբը կշարունակի հաջորդ յոթ ամիսների ընթացքում ամիսը մեկ անգամ հանդիպել: Մեկզմեկ քաջալերեք և մեկզմեկ հաշվետու եղեք այս տասնհինգ շաբաթների ընթացքում սովորած հոգևոր

կարգ ու կանոնների կիրառման հարցում: Միևնույն ժամանակ հույս ունենք, որ դուք, «*…կգնաք և կաշակերտեք…»:* Ժամանակն է թռչելու:

17. Յուրաքանչյուրին բաժանեք մի մաքուր թուղթ և թույլ տվեք նրանց գրել հետևյալ հարցի իրենց պատասխանները՝ **Աստված ինչպե՞ս էր տեսնում քեզ տասնհինգ շաբաթ առաջ, և ինչպե՞ս է տեսնում քեզ այսօր:**

Բացատրություն

- Սա աշակերտներին առիթ է տալիս մտածել անցյալ տասնհինգ շաբաթների մասին, թե ինչ է Աստված արել իրենց կյանքում:
- Դրանով կօրհնվեն նրանք և կքաջալերվեք դուք:
- Հիշեք, որ միայն Աստված է, որ կարող է փոխել կյանքերը, իսկ մենք միայն պատգամաբերներ ենք: Երբեք մի հուսահատվեք, եթե որևէ մեկը մերժի պատգամը:
- Աշակերտներին թուղթ տվեք, որպեսզի գրեն իրենց կարծիքները: Երբ վերջացնեն հավաքեք թղթերը:
- Աշակերտներին կարող եք քաջալերել՝ բարձրաձայն կարդալով իրենց կարծիքները: